

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՆ

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

(հոդվածների ժողովածու)

**2/2011**

**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**JOURNAL FOR ARMENIAN STUDIES**

---

*Տպագրվում է ԱրՊՀ գիտական  
խորհրդի որոշմամբ*

*Ստեփանակերտ 2011*

**Խմբագրական խորհուրդ**

- Դադայան Ս. Վ. - Խմբագրական խորհրդի նախագահ, ԱրՊՀ ռեկտոր,  
պ.գ.թ, պրոֆեսոր
- Բալայան Վ. Ռ. - գլխավոր խմբագիր, ԱրՊՀ պրոռեկտոր, պ.գ.թ.,  
պրոֆեսոր
- Սաֆարյան Վ. Ա. - պատասխանատու քարտուղար, ԱրՊՀ  
պատմության
- ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ
- Մելքոնյան Ա. Ա. - ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,  
պ.գ.դ.,
- ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հովհաննիսյան Լ. Շ. - «ՀԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր,

«ՀԱԱ թղթակից անդամ

Պետրոսյան Հ. Լ. - ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ.գ.դ.

Մուսայելյան Հ. Գ. - ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆեսոր

Սարգսյան Ա. Յ. - ԱրՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ

Կարապետյան Ս. - ՀՃՈՒԿ կազմակերպության տնօրեն

ԳՄԴ 63.3(24) + 81.24 + 83.3 (24)  
Հ 24

ՀՏԴ 908/941(479.25)+809.181.1+891.981.1

### **Редакционная коллегия:**

Дадаян С.В. - председатель редакционной коллегии, ректор АрГУ, к.и.н., профессор

Балаян В.Р. - главный редактор, проректор АрГУ, к.и.н., профессор

Сафарян В.А.- ответственный секретарь, зав. кафедрой истории АрГУ, к.и.н., доцент

Мелконян А.А. - директор Института Пր8ՏՈՈՆ ՀԱՀ ՊԱ, д.и.ն., член корр.  
ՀԱՀ ՊԱ

Оганесян Л.Ш. - директор Института языка ՀԱՀ ՊԱ, д.ֆ.ն., член корр.  
ՀԱՀ ՊԱ

Петросян Г.Լ. - зав. кафедрой культурологии ЕրГУ, д.и.н.

Мусаелян О.Г. - декан филологического факультета АрГУ, д.ф.ն., профессор

Саркисян А.Ю.- ученый секретарь АрГУ, к.ф.н., доцент

Карапетян С. - председатель общественной организации по изучению армянской архитектуры.

### ***Editorial Board:***

Dadayan S.V. -	Chairman of the Editorial Board, rector of ASU, Ph.D. in History, Professor
Balayan V.R. -	Editor in Chief, vice-rector of ASU, Ph.D. in History, Professor
Safaryan V.A. -	Executive Secretary, Head of the History Department of ASU, Ph. D. in History, Associate Professor
Melqonyan A.A. -	Director of the Institute of History of NAS in RA, Ph. D. in History, a member of NAS in RA
Hovhannisyan L. Sh. -	Director of the Institute of Linguistics of NAS in RA, Ph. D. in Philology, member of NAS in RA
Petrosyan H. L -	Head of the Cultural Studies Department of YSU, Ph. D. in History,
Musaelyan O.G. -	the Dean of the Philological Faculty of ASU, PhD in Philology, Professor
Sargsyan A. Y. - Associate	Scientific Secretary of ASU, Ph. D. in Philolody, Professor
Karapetyan S. - Study of	Chairman of the Social Organization for the Armenian Architecture

# ԲԱՆԱՀԵՎԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԺԱՆՐԵՐԻ ԱՊԱՆՉԱՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ Արմեն Սարգսյան

# Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ ԱրՊԿ

Արցախի բանահյուսությունը հայ ժողովրդական բանահյուսության բաղկացուցիչ մասն է կազմում: Բանահյուսական ժանրերը բազմազան են, որոնց մեջ հիենց դիպուկ արտահայտությամբ առանձնանում են առած-ասացվածքները, անեծք-օրինանքները և հանելուկները:

Առաջները փոխաբերական իմաստ ունեցող կարծ ու պատկերավոր ասույթներ ու դատողություններ են, որոնցում կյանքի տարրեր երևոյթներ բնութագրվուն են սրամտորեն ու կատարյալ ամբողջականությամբ:

Դրանք փաստորեն հայ ժողովրդի դարավոր կենսափորձի և հայացքների խտացումներն են՝ գեղարվեստական մեծ ընդհանրացման հասած բանաձևումների մեջ: Իրենց ժանրային հատկանիշով առածներին գրեթե համընկնում են ասացվածքները, այն տարբերությամբ, որ սովորաբար գործածվում են առանց փոխաբերական իմաստի: Խոր են առած-ասացվածքների արմատները, դրանք զալիս են պատմության խորթերից և շատ դժվար, եթե ոչ անհնարի բացահայտել, թե կոնկրետ որ դարաշրջանում է ստեղծվել դրանցից յուրաքանչյուրը:

Արցախյան առած-ասացվածքների մեջ արտահայտված են բազմաթիվ ու բազմաբնույթ երևույթներ: Առանձին խումբ են կազմում այն ստեղծագործությունները, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի արցախյան հատվածի ապրած միջավայրը, բնավորության գծերը, կենսական պայմանները, քաղաքական կյանքը պատմական տարբեր ժամանակաշրջաններում: Դարեր շարունակ արցախահայությունը կենաց ու մահվան պայքար է մղել օտար զավթիչների դեմ՝ հաճախ ստիպված լինելով դիմելու հարկադրական տեղաշարժերի: Դրա վառ արտահայտությունն է «Ալին քը՞ցավ, Վալին յը՞կավ»<sup>1</sup> առածը, որի ուղղակի իմաստը արտահայտում է օտար նվազողների՝ իրար փոխարինելը: Բազում դարերի կենսափորձով արցախցին հանգել է մի հետևողական թշնամությունը կեղծ է և ցանկացած պահի կարող է վնասել, պետք է զգույշ լինել. «Թօրքն նըհըտ հընգըրօթուն ըրա՛, մըհակը ծը՞րքատ վէ՛ր մէ տիմիլ»: Թշնամին անողոք է, բայց և վախկոտ, նրան պետք է պատժել, միայն այդ դեպքում նա կարող է հաշվի նստել քեզ հետ. «Թօրքեն չըքէրանը թակիս վէչ, աշնա չի տը՞հնալ»:

Սոցիալ-քաղաքական կյանքն արտացոլող առած-ասացվածքների մեջ առանձնանում են պանդխտության վերաբերյալ եղած ստեղծագործությունները, որտեղ ներկայացվում է հայրենիքից ու ընտանիքից հեռացած պանդուխտի ծանր ողբերգությունը. «Ղարիբը օրիշին վը՞ղումը մինակ ըրտասունք կըթօղնէ», «Ղարիբին հացը լըդ յա, ձուրը՝ աղու», «Ղարիբին հը՞տէ մին օրը մին տարէ յա», «Ղարիբին օշը

<sup>1</sup> Այս և հոդվածում բերված մյուս բոլոր օրինակաների համար տես՝ *Ա.Սարգսյան, Արցախի բանաձևային բանահյուսություն, Ստեղանակերտ, 2009:*

միշտ դըբէտ կինի», «Ղարիբ մարթին վէզը ծօթ կինի», «Ղարիբին հանգիստը առանց քար կինի»: Սակայն, չնայած կյանքի ծանր պայմաններին, արցախցին հոռետես չէ, չկորցնելով պայծառ ապագայի հեռանկարն ու հոլյար՝ նա պայքարում է իր անկախության ու ազատության համար, անդադրում աշխատում. «Հայը ումէդավ ապրում», «Հայը մինչընկ նըղանա վէչ, յըն չի տընկնալ»:

Մի շարք առած-ասացվածքներում ներկայացվում է պատմական Արցախի բնաշխարհը՝ լեռներն ու ձորերը, գետերն ու առուները, դաշտն ու արոտը, քարն ու հողը. «Սարէն սըվէր կավը սարումը կըծընէ», «Սարերը ըրուտալին տընդ ծօրէրըն ըն ըրուտում», «Սարը հիշկան պէցուր ինի, կըլիսէ ծունը էնքան շատ կինի», «Հանդերը շօթ ածած հացը քախծըր կինի», «Ըրասիսէն դըրադէն վէր էշ թափիլ տա, մօխէրը ինձանավ կըտա», «Ք՛ուրըն էլ ա մարդ իլալ, մըհէնգ՝ ա նըմըրդացալ», «Ք՛ուրէն դարդը Ք՛ուրան Վարար ա»:

Հատկանշական է, որ առած-ասացվածքներում տեղ են գտել հիմնականում այն բույսերն ու կենդանիները, որոնք աճում ու ապրում են Արցախի հողում և արցախցու կյանքում կարևոր դեր ունեն. «Խաղուն վէր հըսավ, ծընէրուկէն մըհալ քըցօղ չինիլ», «Ղարաբաղցուն օթըն ա, թօթը, թիյին կօթը», «Ճընդպօրէ ծառէն քարավ տըվող շատ կինի», «Արտը վէր նըմըրդօթուն անէ, կավը տօնը կըպահէ», «Էշը վէր կա, վընկէ յա թըրքում», «Յընգնանը քաշածը մինակ ուրան կաշին ա գ՛ուրում», «Ճօնը վէր շօն ա, ուրան թըզնըլատընդ թամուզ ա պահում», «Կուլը ընգավ վըխճարէն սուրուն, վաշ մինատար», «Օխծան էլ ըն ձար շինում»:

Առած-ասացվածքները հստակորեն ներկայացնում են արցախցու կյանքի պատկերը, հասարակական կենցաղը, սովորույթներն ու հայացքները: Ղարեր շարունակ աշխատավոր գյուղացին ձնշվել ու հարստահարվել է ոչ միայն օտար զավթիչների կողմից, այլև իր ազգային տերերից՝ քաջ գիտակցելով հարուստների և աղքատների անհավասարությունը. «Ապրէլ կա՝ յընդ ա, ապրէլ էլ կա՝ լըդէ յա», «Ապրէլ կա՝ արծաթ ա, ապրէլ կա՝ արկաթ ա», «Ապրէլ կա՝ մըռնէլա փիս ա», «Հարուստը ջուբէն ա թըխում, ք'ասիբը՝ ծույնանը», «Հարուստը ք'ըսիբին աշխադանքավը կապըրէ՝ ք'ըսիբին միննաթու տակէ թուղէլավ, ընդըրա վիզին կօտ տինիլավ»:

Բազմաթիվ ստեղծագործություններում արտացոլված են կենցաղային հարաբերությունները: Հատկապես ակնառու են արյունակցական-ագ-

գակցական և ընտանեկան հարաբերություններն ու դրանց հետ առնչվող երևոյթները ներկայացնող առած-ասացվածքները, որտեղ ժողովուրդը տվել է ծնողի ու զավակի, եղբոր ու քրոջ, ամուսնու ու կնոջ, հարսի ու սկեսրոջ բնութագիրը՝ բացահայտելով նրանց միջև եղած փոխհարաբերությունը. «Մօրը աշկէն խօսան մըծանալ չի», «Մօրը անէսկը փըռնէլ չի, ծըծէն կաթնէն տէն կըդնէ», «Մօրը մին օրթնանքը օխտը վըրթքէդու անէսկ կը քանդի», «Մօրը բախտը ըխճըկանը կ'օտկումը կինի», «Հօրնօրան կըման ըշխարթումը ամճէն իինչ կըքթէնվա», «Հօրն-օրը ղադիրը չըգիդողը Ըստուծէն ղադիրը գ'իդալ չի», «Ախճիգ՛ը տուսի պատա», «Տըղան տանը սըթունըն ա, ախճիգ՛ը՝ նըխշընգ'արը», «Քուրըն ասում ա՝ ախատէր օնիմ, ախատէրն ասում ա՝ քուր չօնիմ», «Ախատէրը ախատօրը մը՞ռնէլը օգ'ի չի, փիս ապրէլը կօգ'ի», «Կընգանը պադէվը մարթը կըպահէ, մարթինը՝ կընէգ՛ը», «Մարթինը կընէգ՛ըն ա, կընգանէնը՝ մարթը», «Հարթնը պըլօթուն ըրավ, ըսկէսվօրը քը՞թը դըդէցէն», «Ըսկէտուրը ընգուշէն մինը քառ կըպահէ» և այլն:

Արցախյան առած-ասացվածքներում մեծ տեղ ունեն մարդու անձնական ու հասարակական հատկություններին, բնավորությանն ու խառնվածքին նվիրված բանաձևումները: Դրանցում ամենից առաջ վեր են հանվում մարդու դրական հատկանիշները: Ժողովուրդը խորհուրդ է տալիս գործ ունենալ բանիմաց, խելոք, անշահախնդիր մարդկանց հետ. «Խելունք մարթին նըհը՞տ քար կըրէ, Վիժին նըհը՞տ փըլավ մէլ օտէլ», «Խելունք դուշմանը կէս պարիկամ ա»: Այլ ստեղծագործություններում ներկայացվում են մարդու բացասական հատկությունները՝ ազահությունը, շահամոլությունը, անբարոյականությունը, գողությունը և այլն. «Տանձը՝ ինձ, խընձօրը՝ ինձ, շըվթալու վէլ ա ըշտահը տամ», «Մինին տօնը նի կացավ, էն մինը կըրակէն յըրա խըրաված ըրավ», «Ղըխպին օխտը լուզու կինի», «Վօղը ասից՝ հուրը օնէ, իմըն ա»:

Իմաստուն ու խորն են արցախցու հայացքները աշխատանքի ու հասարակության՝ ժողովրդի մասին: Պետք է գնահատել աշխատանքը («Ծշխըդանքէն կ'ինը գ'իդողը մարթինըն էլ կըգ'իդա»), որը պահանջում է մեծ դժվարություններ («Աշխադանքը էն ա շանը վը՞ռումը, իու տըղա յա, կըծէ, տուս օնէ»): Աշխատանքը ժողովրդի զբաղմունքն է, ժողովուրդն է աշխարհի բոլոր բարիքների ստեղծողը, և մարդը միայն հասարակության մեջ կարող է հաջողության հասնել. «Ժըղուվուրթան տուս կ'ըվողէն յա վէզը կըկօտըրէ, յա՝ պօգ'ը»:

Մի շարք ստեղծագործություններում արտացոլված է Աստծո կերպարը: Ժողովուրդը հավատում է ամենակարողի զորությանը, ապավիճում նրա արդարադատությանը, բարին ընդունելու ու չարք պատժելու հատկությանը. «Աստուծ ընօդէն ա տամ», «Աստուծ հաց տրվողէն հացը բօլբօլ ա անում», «Աստուծ իջոսող կըվէն պօգէր չի տամ», «Աստուծ էրկու ծը՞րքավ ա տամ», «Աստուծ դարդը տրվալ ա, դարմանըն էլ նըհը՞տը»: Սակայն ոչ միշտ է Աստված արդար, և երեմն նա էլ է թույլ տալիս անարդարություններ. «Աստուծ վէր Աստուծ ա, էլիա դաթումը ծօռ պէնէր ա անում», «Աստուծ լ'ավէն տանում ա, փիսին՝ թօղում», «Աստուծ մինին յը՞հում ա, մինին՝ դաղում»: Ահա թե ինչու արցախցին խորհուրդ է տալիս երկնային տիրոջը. «Աստուծ, թա կարում չըս մը՞զ պահիս, քըշաց՝ մունք քը՞զ ձըղպօրու մաչու նըման պահինք»:

Մրանով չեն սպառվում արցախյան առած-ասացվածքներում արտահայտված գաղափարները, իրականում գրեթե չկա առօրյա ու հասարակական կյանքի, մարդկային հարաբերությունների մի բնագավառ, որ արձարձված չինի այդ ժամրի ստեղծագործություններում:

Համար ու արդար է Ղարաբաղցին, Կողքահաստ, խոսքը երեսին ասող, նա չի սիրում շողոքորեն, ասում է այն, ինչ մտածում է, անկախ նրանից՝ դա Վիրավորական, թե՝ հաճելի կլինի դիմացինին. «Ղարաբաղցէն ըստըղավ-ընդըղավ չի ըղնըմ, խոսկը քասմա յա ասում»: Ահա թե ինչու նրա խոսքը հաճախ է համեմվում անեծք-օրինանքով:

Անեծքների և օրինանքների ամենահին և տարածված ըմբռնումը դրանց գերբնական ուժի հավատն է, որի համաձայն անպայման իրագործվում են դրանցում արտահայտված ցանկությունները: Այդ են վկայում առայսօր պատմվող ավանդությունների, գրույցների, հեքիաթների և այլ ժամրերի ստեղծագործություններում տեղ գտած դիպվածները:

Արցախյան ժողովրդական այդ ստեղծագործություններում առանձնապես շեշտվում է Աստծո անեծքի և օրինանքի ազդեցության զորությունը: Այսպես, Երիտասարդ կինը, երեխան գրկին, քարանում է, քանի որ ընդվզել է Աստծո գոյության դեմ, հովիվը, հրաժարվելով քրիստոսին մի բաժակ կաթ տալուց, նրա անեծքով իր ոչխաների հոտի հետ վեր է ածվուն քարակույտի: Այլ դեպքերում Աստծո օրինությամբ չոր ծառը դալարում է, կենդանանում է հյուրասեր ու աստվածավախ ծնողների մահացած որդին: Իրականություն են դառնում նաև հոր, մոր, կեսուրի, հարսի, աղքատ

մարդու անեծքներն ու օրինանքները: Իսկ չբեր կանանց անեծքներից գգուշանում են բոլորը. «Սօնգազը կընգանը անէսկը փղոնօղ կիմի»:

Ընդհանուր առմամբ անեծքն ու օրինանքը յուրաքանչյուրիս սեփականությունն են. ամեն ոք կարող է օրինել և անիծել, ինչպես նաև Ենթարկվել դրանց: Եվ ամեն ոք ոչ միայն սոսկ անիծել ու անիծվել, օրինել ու օրինվել է, այլև հավատացել դրանց գորությանն ու իրականացմանը: Այլ բան է, որ, ըստ ժողովորի ըմբռնման, դրանք պետք է լինեն տեղին ու արդարացի, այլապես իրականություն չեն դարձնած:

Անեծքներն ու օրինանքները ուղղակի խոսքեր են, որոնք ուղղված են խոսակցին: Սակայն դրանք ամենից առաջ ոչ թե Երկխոսություններ, այլ մենախոսություններ են, որոնք արտահայտվում են խոսողի կողմից, և որտեղ խոսակցի ներկայությունն ու խոսքը ամենակին էլ պարտադիր չէ: Դրանց մեջ պարզապես խոսողը իր ցանկությունն է ուղղում խոսակցին՝ լավ թե վատ, բարի թե չար, և այդ ցանկությունը, կախված լինելով խոսողի կամքից, ի վերջո արդյունք է արտաքին որոշ դրդապատճառների: Տվյալ դեպքում խոսակիցը, նախքան անեծքի կամ օրինանքի Ենթարկվելը, խոսողի հանդեպ կատարում է որևէ վատ կամ լավ արարք, որից ելնելով էլ՝ խոսողը նրան է ուղղում իր անեծքը կամ օրինանքը:

Կախված այն հանգամանքից, թե հոգեկան ինչպիսի գրգռվածության է հասցրել խոսողին խոսակցի արարքը, նույնքան չարությամբ կամ բարությամբ է նա արտահայտում իր անեծքներն ու օրինանքները:

Համեմատության դեպքում դժվար չէ որոշել «Աղու օտիս», «Գյավուր մընաս», «Աշկըս հըկա», «Ապըրիս տու», «Պէրանըս քախծըր կէնա», «Շուքըվէր ինիս» և «Բալատ թաղիմ», «Ազգավ-ծուպավ ձինջվիք», «Մագ'էրըս տըխտակէն սանդըրիմ», «Ծառըս ծաղկէ ասթխէր յօր օնէ», «Օխտը հարթնավ սուփրա-սէղան նըստիս», «Աստուծ ք'ը՞գ թէվէր տա, թըռչըցընէ» անեծքների ու օրինանքների հեղինակների գրգռվածության աստիճանը:

Այսպես, երբ մեկը հակածառում է կամ ցուցաբերում իր խստասրտությունը, դիմելով նրան՝ երեմն նույնիսկ ընկերաբար հանդիմանում են «Հաստ կօխկըս կըտըրվէ», «Աստուծ կըտըրցընէ շան խասյաթըտ» և այլ անեծքներով, որոնք կարելի է որակել նաև խրատական հանդիմանություններ, մինչեւ նենգ ու խարդախ արարքը արժանանում է բոլոր սահմաններն անցնող՝ «օխտը ըտըժանէ» հայիոյանքների ու անեծքների, որոնց հեղինակները ամեն կերպ ձգտում են տալ արարքին համապա-

տասխան և նույնիսկ գերազանցող պատասխաններ. «Ըօնըճիճը՝ տը՞ռնաս», «Մէջիտ յըրա պըազը՝ պապալ՝ անիմ», «Մադարըտ տափումը տի-նիմ», «Տըփէրան փուշի հըվաքիս» և այլն: Ասել է թե՝ յուրաքանչյուր անեծք իր իմաստով պայմանավորված է անիծվողի՝ տվյալ պահի որոշակի վարքագծով, խոսքով, արարքով, վերաբերմունքով:

Ըստ էության լինելով պատժի ցանկություններ՝ անեծքները իմաստային տիպաբաժանման դեպքում վերածվում են պատժի ցանկության տեսակների: Ըստ Ս.Հարությունյանի դրանք չորսն են՝ մարմնական պատիժների ցանկություն, սոցիալ-քաղաքացիական պատիժների ցանկություն, բարոյամարմնական պատիժների ցանկություն, հոգեկան պատիժների ցանկություն:<sup>1</sup>

Արցախյան անեծքներում ավելի հաճախ արտահայտվում է մարմնական պատիժների ցանկությունը: Ինչ խոսք, որ ամենախիստ պատիժը անիծվողին մահվան դատապարտելն է: Անիծողը փափագում է անիծվողի բնական մահով մեռնելը («Քօն ինիս, յէր չի կէնաս»), սպանվելը («Գուլլուխարավ տը՞ռնաս»), մանուկ կամ ծաղկուն հասակում մեռնելը («Վէ՛չ մըծանաս, վէ՛չ ծաղկիս»), հարազատների մահը («Մադարըտ թաղիմ», «Ազիզըտ մը՞ռնէ», «Բալալարըտ կըտօրվին»):

Բազմաթիվ անեծքներում արտահայտվում է անիծվողին իիվանդությանք, մարմնական ցավերով, կուրացած, անդամալուծված, մարմնական տանջանքների և փորձանքների ենթարկված տեսնելու տենչը. («Չառը պըկէտ վէր կա», «Քուռանաս, չուլխանաս, քըռանաս», «Ցաքը շըլակիս, շէմբաշէն շօր կ'աս», «Օխճը կըծէ քը՞զ»):

Սոցիալ-քաղաքացիական անեծքներում ներկայացվում են հակառակորդի ունեցրկման և ծայրահեղ աղքատացման, ինչպես նաև անտեր, անընտանիք, անսերունդ մնալու գաղափարները, որոնք կարևոր նախապայմաններ են մարդկության գոյաւուման համար («Տօնըտ էրկի, պըրիշակ տը՞ռնա», «Տանըտ խէրըն ու բարաք'աթը կըտօրէ», «Մինըտ էրկու չի տը՞ռնա», «Սը՞րմըտ կըտօրվէ», «Պէժինք'ըտ կապած մընա», «Օգ'օղ տը՞ռնաս, ըղնիս տըռները, մին կուտուր հաց չի քըթէնաս», «Անդար մընաս», «Մըրթամը՞ո մընաս», «Խուլխու իրը՞ս չի տը՞սնաս»):

<sup>1</sup> Հարությունյան Ս., Անեծքը և օրինանքը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 199:

Բարոյանարմնական պատիժներ ակնկալող անեծքների նպատակն է անիծվողին ենթարկել բարոյական և մարմնական պատիժների: Անիծվող փափագում է տեսնել նրան աստվածային պատժի ենթարկված՝ անհիշատակ ու աննորդազ, անպատված, հարազատների հիշատակը պղծված («Աստուծ քու դուվանըտ անէ», «Յէրնայինը քը՝ պատժի», «Աստուծ անընըտ կըտըրէ», «Բեյմուրազ մընաս», «Մը՝ ռալըտ շըները քաշ-քաշ անին», «Մը՝ վը՝ դէ՛նէն արժան չի տը՛ռնաս», «Խագ-խայտառակ տը՛ռնաս»):

Հոգեկան պատժի անեծքները ընդգրկում են անիծվողին կամեցվող հոգեկան տանջանքների, տառապանքների ցանկություններ՝ հոգու կորսույան և տանջանքի, տիրության և վշտի, սգու և սգավորության («Զըհանդամը քինիս», «Հուքիս օրքիսավըտ տուս կ'ա», «Օրախո օր չի տը՛սնաս», «Աշը տը՛ռնաս, ըղնիս չօլերը», «Շուվանը ըղնէ տօնըտ»):

Օրինանքներն իրենց արծարծած գաղափարներով բաժանվում են երկու խմբի՝ ապահովության և պահպանության:<sup>1</sup>

Առաջին խմբի օրինանքներում հիմնականը օրինվող անձի կամ նրա մերձավորների վիճակը մեկ այլով՝ ավելի լավով փոփոխելու ապահովության փափագն է, իսկ երկրորդ խմբի օրինանքներում՝ տվյալ վիճակի պահպանության ապահովության:

Արցախահայ բանահյուսության մեջ և քանակով, և բազմազանությամբ աչքի են ընկնում ապահովության բնածները, որտեղ խոսողը խոսակցին ցանկանում է երկար ու ապահով, բարեկեցիկ կյանք, հաջողություն, հրչակ, իղձերի իրականացում, բարեհաջող ամուսնություն, երջանկություն ու սեր, ողորմածություն, հոգեկան հանգիստ, օջախի շենացում, բազմազավակ ընտանիք («Ումբըրըտ էրկան ինի», «Ծը՝ ռքըտ սպիտակ մըրքավըտ անց կըցընիս», «Տաշտըտ միշտ լիգը ինի», «Անիս՝ օտիս, անիս վէչ՝ օտիս», «Մինըտ հըզգար տը՛ռնա», «Տօնըտ շէն կէնա», «Ընընավէր տը՛ռնաս», «Ըշտը՛ղ կօխիս՝ կընանչի», «Աստուծ մուրազըտ կըդարէ», «Պարավ կընընչ-կարմուրըտ կապիս», «Մին պերցու ծըրանաք», «Ըղօրմի քա հօր», «Աստուծ հափերութուն տա», «Օջաղըտ շէն կէնա», «Թուռնատար, ծուռնատար տը՛ռնաս»):

Պահպանության օրինանքների մեջ օրինվող անձի կամ նրա հարազատների կյանքի, ունեցվածքի պահպաննան գործի, չարից ու փորձանքից ազատ լինելու, Աստուծո, սրբերի, Քրիստոսի, իրեշտակների հովանա-

<sup>1</sup> նույնը, էջ 249:

Վորությունը վայելելու գաղափարների արտահայտումն է («Աստուծ պահէ թըկ», «Աստուծ պահէ մադարըտ», «Ըստընու ծըկրքը տանըտ յըրան ինի», «Շառա, փուրցանքա հըկ ինիս», «Վըկնըտ քարու նի չի կ'ա», «Աստուծ Եզզանան կօխսկէտ ինի», «Նըհատակը դրվումըտ ինի»):

Բանաձևային բանահյուսության տարրերից են նաև հանելուկները: Հանելուկի ժանրը Ենթադրում է ավարտուն ու պարզ բանաձևեր, կուռ, հակիրճ շարադրանք, փոքր ծավալ՝ սեղմ ծևակերպումներով ներկայացնելով ժողովրդի զարգացման ընթացքը, նրա կացութածեր, աշխարհայացքը, բարոյահոգեբանական առանձնահատկությունները:

Հանելուկների ծագումը շատ հին է և լիովին չբացահայտված: Գիտնականների մեծ մասը կարծում է, որ այդ ժանրի ստեղծագործությունները սկզբնապես հանդես են եկել որպես նախնական մտածողության արտահայտության ձևերից մեկը, և դրանց ծագումը կապում է նախամարդու պայմանական խոսքի հետ: Հնագույն ցեղերի անդամները համոզված էին, որ շրջապատող բուսական և կենդանական աշխարհը ապրում է գիտակից կյանքով և հասկանում է մարդկային լեզուն, ուստի, խուսափելով որոշ առարկաների անունը տպաւուց, նրանց նասին խոսելիս գործածում էին այլևայլ արտահայտություններ, ինչը և, հավանական է, հիմք է հանդիսացել բանահյուսական այդ ժանրի ստեղծմանը:

Հանելուկ բառը ծագում է հանել բայից, որ գրաբարում նշանակում էր «ի ներքուստ արտաքս, կամ ի խորոց ի վեր ձգել, արտաքսել, ի բաց տանել, ի դուրս տալ»,<sup>1</sup> ասել է թե՝ բացահայտել, գուշակել, վեր հանել խոր թաքնված ներքին ինաստը: Արցախահայ բարբառում այն ներկայանում է պընգըլ, պունգըլ ձևերով, որոնք հնչյունափոխված տարբերակներն են հին հայերենի բանկն կամ բանգն բառի և ունեն «այլարանական, առասպեկտական ստահող պատմություն»<sup>2</sup> ինաստը՝ պընգըլ պէն ա, ըսրծնէն սաղ պունգըլ ա և այլն:

Հանելուկները, չնայած իրենց տարբեր դրսերումներին, համամբվում են որոշակի ոճական ձևի մեջ, որի պարզագույն տարբերակը

<sup>1</sup> Սոր բարագիրք հայկագեան լեզուի, հ II, Երևան, 1981, էջ 45:

<sup>2</sup> Առաջնակ, հ I, Երևան, 1979, էջ 437:

հարցն է, որը պահանջում է պատասխան: Պատահական չէ, որ գերմանացի գիտնական Ֆրիդրիխը այն անվանել է հարցհանելուկ: Արցախյան յուրաքանչյուր հանելուկ պահպանել է հարցադրման եղանակը, որը դրսելորվում է մի շարք հարցական բանաձևումների ձևով՝ *Էն հինչըն ա՝, Էն հինչ պէն ա՝, Էն հու վա՝* և այլն:

Հանելուկներն աչքի են ընկնում իրենց առանձնահատկություններով, որոնցից ամենաընդհանուրը նրանց կառուցվածքն է: Ամեն մի հանելուկ բաղկացած է հանելուկի բուն նշանակությունից և արտաքին պատկերից, որոնք որոշակիության իմաստով տարբերվում են իրարից, չնայած ունեն նաև ներքին ինչ-որ կապ: Գուշակողի խնդիրն է բացահայտել իրենից անկախ գոյություն ունեցող նմանությունները, ինչը հենց հանելուկի լուծումն է: Հանելուկային բուն նշանակության և արտաքին պատկերի կերպավորման ամենատարածված եղանակը այսպանությունն է, որը Ս.Հարությունյանը բաժանել է հետևյալ տեսակների.<sup>1</sup>

ա) *Այլաբանություն ըստ արտաքին նմանության*, երբ արտաքին պատկերի և բուն նշանակության միջև նկատվում է արտաքին որևէ ընդհանուր գիծ: «Ծին քինաց, թամքը մընաց» (գետ և կամուրջ): Այստեղ այդ արտաքին նմանությունը շարժման հանգամանքն է, և գետի հոսելու հատկանիշը փոխարերվել է գնալու հետ:

բ) *Այլաբանություն ըստ գործառական նմանողության*, երբ հանելուկային և այլաբանական առարկաները համընկնում են որևէ հատկությամբ, գործառությամբ, ինչպես՝ «Ա՛յլքնը, չա՛յլքնը, հիշքան պէռնիմ՝ տար յլքնը» (գդալ), որտեղ գդալը այլաբանվել է եզան հետ իր մի բան կրելու, տանելու հատկության պատճառով:

գ) *Այլաբանություն ըստ հատկանիշների հակաբնական գուգորդման*: Սա այն դեպքն է, երբ արտաքին աշխարհի առարկաների գծերն ու հատկանիշները դասավորվում են այնպես, որ այլաբանական պատկերը վեր է ածվում անիրական, արտասովոր, ոչ տրամաբանական երևոյթի կամ հակացողության «Մըսէ շամկիուր, ըրկաթէ խըրաված» (մատ և մատանի) «Ծիք ըմ տամ, ծիք՝ կըրծանըմ ա» (ծխախոտ):

Մրանից էապես տարբերվում է հանելուկների մի շարք, որտեղ բուն նշանակության և արտաքին պատկերի միջև որևէ տարբերություն չկա, և

<sup>1</sup> Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960, էջ 16:

հանելուկի երևոյթն ու էռպյունը համընկնում են իրար: Դրանք իրենք անվանում են իրենց լուծումը. «Կա՛ թէս, կա՛ թէս, անըմք տամ՝ գիղաս վէչ» (բահ, թի), «Տիյը՛ր քաշ ա, տիվէր քաշ ա» (ագռավ (քաշ)), «Ակազ, փալազ, անըմք տամ՝ չոփիղաս» (փալաս):

Ընդհանուր առմամբ, հանելուկներում առարկաների բազմակողմանի բնութագրումներ չեն տրվում, և հաշվի է առնվում առարկայի ոչ էական, երկրորդական նշանակություն ունեցող որևէ կողմը կամ հատկանիշը: Հենց դա է պատճառը, որ նույն առարկայի վերաբերյալ կազմվել են տարբեր հանելուկներ, որոնցից յուրաքանչյուրում հիմք է ընդունվել այս կամ այն հատկությունը. օրինակ՝ «Մին պօլիգ՝ մաշին էրկու ջուռա Ճուր», «Հովոր ա, պովոր ա, մազ օնէ, ծակ չօնէ», «Մին տօն օնինք՝ պատէրը արծաթ, մազը վը՛սկէ, վէր քընդէցէլ, էլ շինվիլ չի» ստեղծագործությունները բնութագրում են ձուն, ընդ որում՝ առաջինի մեջ նկատի է առնվել սպիտակուցի և դեղնուցի առկայությունը, երկրորդի մեջ՝ ձվի՝ անցը չունենալը, բայց նրանից մազավորի՝ ճտի առաջանալը, երրորդի մեջ՝ ձվի կեղևի արծաթագույն, իսկ դեղնուցի ոսկեգույն լինելու երևոյթը: Դրան հակառակ՝ արցախցին ստեղծել է հանելուկներ, որոնք կարող են ասվել տարբեր, նույնիսկ սեռով, տեսակով իրարից հեռու առարկաների վերաբերյալ: Դրանք այնուամենայնիվ ունեն ինչ որ ընդհանուր գիծ. «Տուսը վը՛սկըր, մազը մէս» (կրիա, ընկույզ), «Ակալա, բալալա, տար խառ ըրա, պէր կախ ըրա» (սազ, թառ, մաղ):

Սակայն արցախահայ բանահյուսության մեջ հանդիպում են նաև երկակի, երակի, բազմակի լուծման առարկաներ ունեցողներ, ինչպես. «Մին թումբ տը՛ղ, թումբէն տակէն մին դուզ տը՛ղ, դուզին տակէն էրկու ծառ, ծառէն տակէն էրկու գօլ, գօլէն տակէն էրկու նօվ, նօվէն տակէն մին Ճեղաց, Ճըղացէն տակէն մին թումբ» (գլուխ, ճակատ, հոնքեր, աչքեր, քիթ, բերան, դունչ):

Բազմազան ու բազմաբնույթ է արցախյան հանելուկների թեման: Հանելուկային առարկաների և բանաձևերի մեջ արծարծվել են արցախցուն շրջապատող բուսական և կենդանական աշխարհը, տնտեսական գբաղմունքները, երկրային ու երկնային մարմիններն ու երևույթները, այն, ինչ հնարավոր է տեսնել, լսել, զգալ: Պատահական չէ, որ այս ժանրում առաջին հերթին արտացոլվել են գյուղատնտեսության տարբեր բնագավառներ՝ կապված երկրի տնտեսական բնույթի հետ: Արցախցու համար կարևոր բնագավառ է երկրագործությունը, որ հնուց ի վեր հանդիսացել է

հիմնական գբաղմունքներից առաջնայինը: Այսպես՝ «Մին արտ օնիմ, վարվել չի, մաչի քարերը հըմքարվէլ չի» (Երկինք և աստղեր) հանելուկի մեջ ժողովուրդը երկնքի անծայրածիր լինելը կապել է մեծ հողատարածության, իսկ աստղերի առատությունը՝ արցախյան հողերում այնքան տարածված քարերի հետ: Կամի և եզների նկարագրությունն է տրված «Կոլոխը փառ, տակը քար, օր վըննանէ էրկու սար» ստեղծագործությունում: Ստվար թիվ են կազմում հողագործական տարբեր գործիքների նվիրված հանելուկները. «Հիլի տամ, հիլի-միլի տամ, տափէն տակավը ժիլի-միլի տամ» (գութան), «Մին կութանէ, հարուր ըրխանէ, կօտէ, կօտէ, էլիա լըղար» (մանգաղ), «Մին ջանավար կա՛ հիշքան ըռ՛խըն ընք տամ, քուշտանըմ չի» (ջրաղաց):

Տարածված են նաև այգեգործությանը և բանջարագործությանը նվիրված ստեղծագործությունները, որտեղ բնութագրվում են բազմաթիվ մրգեր, պտուղներ, բանջարեղեններ, ինչպիսիք են ընկույզը, նուռը, մասուրը, մոշը, մորին, հոնը, թութը, խաղողը, դրումը, ծմերուկը, բողկը, գազարը, սոխը, եգիպտացորենը. «Տուսը աղու, մաչը քախծըր» (ընկույզ), «Ծորերը հանիմ, նըստիմ, լաց ինիմ» (սոխ), «Քօսուտ թուլա՛ լըկաշակ պէռնած» (եգիպտացորեն), «Հարը դիք, մարը կը՛ռ, խօխան խէլումք, թօնը պը՛ր» (խեչմար, վազ, խաղող, գինի) և այլն:

Երկրագործությանը գուգընթաց արցախցին գբաղվել է անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ, շերամապահությամբ՝ ստեղծելով տասնյակ հանելուկներ, որտեղ որպես հանելուկային առարկա կամ արտաքին պատկեր հանդես են գալիս եզզ, կովը, գոմեշը, էշը, ոչխարը, այծը, ուղտը, հավը, շերամորդը, մեղուն. «Սը՛վ յը՛զնը լուխէցէն, խօխէնքը ուրխացէն» (բուկ և հաց), «Հնքը սարէն յըրա, սարը մաշկէն յըրա» (ուղտը), «Մըրէիս ինքը ուրան հանգիստը կըտղողմ ա» (շերամորդ)...

Որոշ գործերում արձագանք են գտել Արցախում տարածված արհեստները: Օրինակ՝ «Կանանց իինիմ, սպիտակ թիլ տամ, Վարմուր Վօրծիմ, թօխն կըտղորիմ» (մոշ), «Հէնգ ախապէր՝ մինը քար ա կըրըմ, մը՛կայը պատ ըն շարըմ» (գուլպայի ճաղեր) հանելուկներից առաջնում տրվում է ոստայնագործության, իսկ Երկրորդում՝ որմնադրության ընդհանուր նկարագրությունը: Առավել հաճախակի են հանդիպուն կենցաղում գործածվող տարբեր առարկաներ՝ բով, մաղ, շերեփ, գրաւ, ճախարակ. կուժ, ասեղ, գուլպա, սանդերք, փափախ և այլն:

Հանելուկային առարկա են դարձել նաև երկինքը, երկնային մարմինները, բնության տարբեր երևույթները՝ աստղերը, ամպը, որոտը, անձրևը, կարկուտը, կայծակը, ծիածանը, ձյունը, քամին: Առավել ընդգծվում են արևն ու լուսինը, որոնք ներկայանում են մերթ քոյզ ու եղբոր, մերթ հով ու տաք բովի, մերթ անծայրածիր արտում վազվաղ երկու կաքավների, մերթ էլ՝ պղնձե կաթսայի մեջ դրված ծվերի տեսքով. Որոշ ստեղծագործություններում հանդես են զալիս ժամանակի միավորները. «Մին ժառ օնիմ տըսնըերկու ճըղնանէ, ամմէն ճըղնանը ուրօսուն տիրը՝ կէսը սիպտակ, կէսը սը՝ վ» (տարի, ամիսներ, օրեր), «Ծըմը՞ռն ա՝ Վարունքը պատէն, ամը՞ռն ա՝ Վարունքը պատէն» (գորգ), «Սը՝ վ կըծէգը հուրթըն ի վէր քըցիմ, քա մօր պօրտըն ի վէր քըցիմ» (գիշեր):

Արցախյան հանելուկները աչքի են ընկնում նաև իրենց ինքնատիպ ու բարդ արվեստով, կառուցվածքային բազմազանությամբ, գեղարվեստական արտահայտամիջոցների լայնակի դրսերմանբ, տեղաշափությամբ:

Թերևս բանաձևային բանահյուսության ժամր պետք է համարել նաև գյուղերի մականունները: Դրանք Արցախի այս կամ այն գյուղին և նրա բնակիչներին հարևան գյուղացիների կողմից տրված մականուններ են, որոնք ուղղակի կամ փոխաբերական իմաստով արտացոլում են նրանց հետ կապված զանազան հանգամանքներ: Մի շարք մականուններում ներկայացվում է տվյալ գյուղի դիրքը. «Ծըմակում ապօրող իրկուկվը՝ ցէք», «Ծօրում ապրող պիլթընը՝ ցէք», «Քարում կօրած ըռչընըրը՝ ցէք», «Դիքում տըրօտող խիրխընը՝ ցէք»: Հաղորութի շրջանի Մելիքաշեն (Մինիշվալու) գյուղը տեղադրված է բարձունքի վրա, և տարվա բոլոր եղանակներին քամին անպակաս է այդ տեղանքից, ինչը և իինք է հանդիսացել «Քամէ կօլ տըրօղ միրիշվուկվը՝ ցէք» մականվան համար: Նոյն շրջանի Սարէն շէն (Շաղախ) գյուղը սարի վրա է՝ այնքան բարձր, որ գյուղացիները վերևում են տեսնում ագռավի (քաշ) թռիչքը («Քաշէն փօրէն հասըրաթ սարէնշինը՝ ցէք»), իսկ Թաղասեռ գյուղը, ընդհակառակը, տեղակայված է սարի ստորոտում (Քաշէն մաշկէն հասըրաթ թըխսըրը՝ ցէք):

Առանձին խումբ են կազմում այն բանաձևները, որտեղ ներկայացվում է տվյալ գյուղում տարածված արհեստը՝ «Դարզի սըղնըխը՝ ցէք», «Կը՝ վաթ շինօղ հիլըսը՝ ցէք», «Պուրուտ կապող ոլըվըխընը՝ ցէք», «Մազ կիզօղ հիրիըրը՝ ցէք», տնայնագործական կամ երկրագործական զբաղմունքը՝ «Քօմուր շինօղ մը՝ ծթըղլըրը՝ ցէք»,

«Թըխմըչար բիջարող գիշըցէք», «Մօթալ կապօղ խըծըպըրթէցէք», «Կըծօ տախտընդ վարօղ ք'ութըկըցէք», «Լ'ավ կ'ումաշ լըծօղ սէյդիշինացէք»:

Բազմաթիվ մականունների համար հիմք են հանդիսացել գյուղացիների բացասական հատկանիշները. անհյուրընկալ լինելը՝ «Հացում քօռ քըրհունջըցէք», «Ղօնաղ խըռէգ' տըփօղ կըսպըտըցէք», «Հալամ օր կա, յը՛ո ընցէր սէյդիշինացէք», Ժատություն՝ «Ըսկըպօյ նօրշինացէք», «Յօրէնը ծախօղ, կ'արի օտօղ նուրուկըդըցէք», Խենթություն՝ «Դալի կալխօզաշինացէք», «Պօ՛լ հըզումըցէք», «Պըլըհուշտըրի խընսկըցէք», զազրախսություն՝ «Լակ-լակ խօսօղ խընըքըդըցէք», «Վիրահաչ տըփօղ խընըծըխըցէք», անլրջություն՝ «Սահիկգ' սուսըցէք», միամտություն՝ «Ղօնգի նինգ'ըցէք», «Ք'ուիի խընուշինըկըցէք», հայինյասիրություն՝ «Ուշունցատու ըշընըցէք», կրվարար լինելը՝ «Կըօվարար ձիրըկուրըցէք» և այլն:

Որոշ մականուններում էլ ծաղրվում են խոսվածքային առանձնահատկությունները՝ «Նա՝ ասօղ ուզուխըցէք», «Ուսովուր խօսօղ կ'ուլըթդըցէք», այս կամ այն ուտելիքի հանդեպ հակում ունենալը՝ «Շիլօր օտօղ չայլուկըցէք», «Գ'ուլաս օտօղ թըղըվըթըցէք», «Մատաղ օտօղ վընքըցէք», մարմնական թերությունները՝ «Փուրընէն տըռօզ մըղըվուրըցէք», իսկ «Խօյլու մէհտիշինացէք» մականունը վկայում է Ասկերանի շրջանի Մէհտիշեն գյուղի բնակիչների նախնիների՝ Պարսկաստանի Խոյի գավառից գաղթած լինելը:

Մրանցով չեն սպառվում արցախյան բանաձևային բանահյուսության ժանրերն ու այդ ժանրերի ստեղծագործություններում արծարծված թեմաներն ու հանգանանքները: Իրականում դրանք բազմաթիվ են ու բազմազան: Սակայն ամենակուլ ժամանակը իր բացասական ազդեցությունն է ունեցել նաև այս բնագավառում, և պատահական չէ, որ բանահյուսական այլ ժանրերի հետ աստիճանաբար պատմության գիրկն են նետվում նաև բանաձևային բանահյուսության գոհարները, ինչը և ավելի իրատապ է դարձնում դրանց հավաքագրումը:

ОСОБЕННОСТИ НЕКОТОРЫХ ЖАНРОВ АРЦАХСКОГО  
ФОРМУЛЬНОГО ФОЛЬКЛОРА

Армен Саргсян

Резюме

В статье представлены жанровые и смысловые особенности некоторых жанров арцахского формульного фольклора – пословиц-поговорок, анафем, благословлений, загадок, прозвищ сёл; а также приводятся соответствующие примеры.

SPECIFIC FEATURES OF SOME FORMULA FOLKLORE'S  
GENRES IN ARTSAKHIAN FOLKLORE.

Armen Sargsyan

Summary

The article represents genre and semantic peculiarities of some genres of Artsakh formular folklore – proverbs and sayings, curses, blessings, enigmas, village nicknames. There are also corresponding examples in the article

ՊՂՏՈՐԱԳԵՏԸ ԵՎ ԻՐ ԱՎԱԶԱՆԸ  
Սիլվա Մինասյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ԱրԴՀ

Պղտորագետն Արցախի հորդահոս Տրտուի՝ Թարթառի միջին հոսանքի երկրորդ վարար վտակն է՝ թրդեից հետո և ունի պղտորավուն զուր ու մեծ ավագան՝ իրար փոխհաջորդող բարձունքներով, անդմնախոր ձորերով, տանելի թեքույթներ ունեցող լանջերով ու սակավ հարթույթներով։ Պղտոր գետը հայերենում հայտնի է նաև ՏՂՄՈՒՏ անվանք։ Մեր նպատակն է պատմական, լեզվաբանական և աշխարհագրական մի շարք տեղեկություններով ներկայացնել Պղտորագետի մեծ ավագանը, որովհետև առ այսօր այդ գետի մասին

հրապարակված ոչ մի տեղեկություն և նկարագրություն չկան, բացի տողերիս հեղինակի «Չափար՝ Հակառակաբերդ» գրքում եղած սուլ գրառումից:<sup>1</sup>

Պղտորագետը (արցախյան խոսվածքով՝ Պղտուրակյետ) ունի նաև Գյարաք երկրորդ անվանումը, որը վերջին հարյուրամյակում ավելի հաճախակի են գործածել տեղացիները, իբր ի հակադրություն Հաթերքի Պղտորագետի: Վերջինս նաև Պղտուրաձյուր՝ Պղտորաջուր էին կոչում՝ բարակ լինելու պատճառով: Խնդրո առարկա գետի նշանակած երկու անուններն էլ հայերեն բաղադրիչներով կազմված բառեր են: Պարզ, ընկալելի Պղտորագետը կազմված է պղտոր բաղադրյալ և գետ պարզ բառերից, որի պիղտ// պիղծ բաղադրիչը հնչյունափոխված արմատ է (հնչյունափոխություններն են՝ շեշտի հետ կապված՝ ի-ը և հնչյունի պարզեցում կամ բարդեցում՝ ժ-տ, ս.):<sup>2</sup> իսկ –ՈՌ-ը վերջածանց է: Այդ ջուրը պղտոր է, որով հետև Մռով սարի հալվող ծյունից շատ է սնվում (ակունքի մոտ էլ վճիտ չէ): Հոսքի ժամանակ Մանանասարի՝ Աղբաբանի հյուսիսային մասի բարձրադիր Նժույգասարի ստորոտում, մոխրանման հումքից ավելի պղտորվելով, տիղմահամ է դառնում: Գյարաք անվանումը կազմված է զար՝ զայռ (ցեխ) չստուգաբանված արմատից<sup>3</sup> (որի ուրարտական՝ նաիրյան լինելը շատ լեզվաբանների կողմից հավանական է համարվում) և -ք մասնիկից (վերջին ա-ն բարեհնչյունության համար նախորդի համաբանությամբ ստեղծված ծայնավոր է): Արմատում հայերենին յուրահատուկ մի քանի հնչյունափոխություն է կատարվել՝ Գ-Գ (Գ՝ Կ-Գ՝ Արցախյան բանավոր խոսքում խլացած Գ՝ ծայնեղը վերականգնվել է գրավոր խոսքի շնորհիվ), ԱՅ-Ա, Ո-Ր (հազար-զար՝ հնչյունափոխված արաք բարի հետ կապը քիչ հավանականություն ունի, որովհետև որևէ այլ առնչակից իրողություն, կապված այդ լեզվի հետ, պարզաբանված չէ և ոչ էլ զարա՝ մեծ, սև ու նրան հաջորդող հնչյունափոխված ք-ով սկսվող կամ պարունակող որևէ ձևութով բաղադրության հետ կապ ունի): Պղտորագետի այս անվանումն իր ձախափնյա պատմական թրահունց գյուղի Գյառավանդ (այրմ-քուրո-

<sup>1</sup> Մինայյան Ս., Չափար (Հակառակաբերդ), Ստեփանակերտ, 2010, էջ 73:

<sup>2</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV (վերահրատարակություն), Երևան, 1979, էջ 81, 91:

<sup>3</sup> Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. I (վերահրատարակություն), Երևան, 1971, էջ 513:

թուրք-ադրբեջանցի ազերիների կոչումով՝ Քերեվենդ, Իմերեթ-Քերեվենը) անվամբ փոխարկվելուց հետո է ստացվել: Այդ նույն անվանումը նաև Դաշտային Արցախում կա, որտեղ իհնա այլադավան-երն են բնակվում և երևակայում, թե իրենց ստեղծած անուններն են: Գյառավանդ անվան բաղադրիչները ևս ընկալելի են՝ նույն գայլ արմատը և իրանական ւանդ/ՎԱՆԴ-կապ մասնիկը<sup>1</sup>, այսինքն՝ ցեխի, տիղմի հետ կապված, կապ ունեցող (Քրահունջի տեղանքում, ի հակադրություն Զափարի, հարթ տարածքները համեմատաբար շատ են և աղբյուրների ջրերը մնում են կանգնած՝ ձահճուտ ու լճակներ կազմած. իհնա էլ դեռ խողովակով քիչ ջրեր են տեղափոխված ու էլի մնում են նույն վիճակում):

Պղտորագետը Հակառակաբերդի՝ Զափարի շրջակայքի մեծ գետակն է: Թրղեն սկզբնավորվում է Մօռվի բարձրադիր գագաթների հարավ-արևելյան, իսկ սա՝ արևմտյան ժայռերից ու այդ գետերի ավագանի ջրաժաման սըռը ձևավորվում է Հաբերդի հյուսիս արևմուտքից ու ձգվում մինչև Մօռվի ժայռուտը՝ Մանանասարից դեպի արևելք ձգվող բազուկի կտրուկ իջվածքի ուղղությամբ: Մօռվի արևմտյան թևի ժայռաշարքերի երկու կողմերում ձևավորվում են ենթավտակներ՝ Ճուխտկակյետ՝ Զուխտակագետ՝ զուգահեռ գետակ նաև Ճուխտկաճյուր (գետ-ը բնիկ հայերեն արմատ,<sup>2</sup> ջուր-ը՝<sup>3</sup>, իսկ զուխտակի ջուխտ՝ զույգ արմատը պահլավերեն, -ԱԿ-ը՝ ածանց)<sup>4</sup>, որը հետագայում այրմ-քուրդ-թուրք-ադրբեջանցի ազերիները Զայդոշա էին անվանում (Զայդոշա՝ թուրք՝ չայ -գետ, երկի նաև հեղուկ, տեղում չմնացող նյութ. Երևի ծագում է չինական չայ՝ աստծո խոտ, որից էլ նրա թուրմը՝ բոլորիս հանրածանոթ նույնարմատ թէյ ըմպելիքը<sup>5</sup>. իսկ ղոշա՝ զուգահեռ): Գետակները Մօռվից քիչ հարավ իջնելով, միանում են ու պահպանելով այդ անունը՝ ալպյան մարգագետիններից թեքվում են քիչ վար՝ հարավ-արևելք ուղղությամբ ու, սրբնթաց մտնելով անդնդախոր մթնածորը, վեր են ածվում Պղտորագետի: Մանանասարի բարձրագագաթ Նժույգասարի հյուսիսային ստորոտների անդնդախոր ձորերով դեպի արևելք հոսելով՝ այնուհետև ծունկ է տալիս՝ ոլորվում ու Գյարաք անունը մի ժամանակ «վաստակած»՝ Մանանասարից արևելք

<sup>1</sup> Աճայշան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 394, 635-636:

<sup>2</sup> Նոյն տեղում, հ. I, էջ 537

<sup>3</sup> Նոյն տեղում, հ. IV, էջ 134:

<sup>4</sup> Նոյն տեղում, հ. I, էջ 134:

<sup>5</sup> Աճայշան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. II (Վերահրատարակություն), Երևան, 1973, էջ 180:

ձգվող բազուկի կտրուկ իջվածքի ստորոտով դեպի հարավ բացվող հովտով շարունակում է Չափարի արդի բնակելի թաղամասով: Նորից ծունկ է տախս Մեծ Բլուրից՝ Սաղունց թումբից արևելք ձգվող ու Քաջալ՝ Բուսազուրկ թումբով վերջավորվող անդնդախոր ծորում (քիչ տեղ գրավող քայլայվող ավագուտ այդ գետավեժ բլուրը ժայռուտ է, և նրանով է Չափարի ճանապարհը ոլորվում քիլաննան բազուկից Տրտուի հովիտը փոխարկելով Մանանասարի հովտով: Արցախյան գոյապայքարի ժամանակ այդ տեղանքն ահավոր կրակակետ է եղել շրջակայքի համար, իսկ Չափարն ազատագրելիս՝ 1993 թ. փետրվար, այդտեղ նահատակվել են երեք տանկիստներ՝ երկուսը Վաղուհասից, մեկը՝ Չափարից՝ Դանիելյան Ռուբիկ Արամայիսի): Պղտորագետն այդտեղից դեպի հարավ առաջանալով, Գետավանի արևելյան մասում՝ Մեծ կամուրջից ներքև, լցվում է Տրտուն: Այդ գետաբերանն առաջ լայն տարածք էր զբաղեցնում՝ միշտ քանդելով իրենով անցնող ճանապարհը: Գետի հունը, հիմա Գետավանին կից լինելով, քիչ բարեկարգված է, ճանապարհի համար կամուրջ պատրաստված: Այդ ճանապարհը հնամենի ուղի է, որն առ այսօր էլ ձգվում էր դեպի Քրահունջը՝ Գյառավանդ, Զարդախաչ ու Հաթերք (դա Հաթերքից դեպի Դադի վանք, Ծար, Քարավաճառ, Արքայական բաղնիքները՝ Տաք ջրերը ձգվող թարթառի՝ Տրտուի աջակինյա հնամենի տերունական մեծ ուղու մի հատվածն էր, որը խորհրդային կարգերում ձախափնյա էր դարձել՝ Մարտակերտ-Գետավան): Այդ փոքր կամուրջից (ի հակադրություն հինգ հարյուր մետր դեպի հարավ-արևմուտք գտնվող՝ Տրտուի վրայի Մեծ կամուրջի) հինգ հարյուր մետր դեպի Հաթերք, իին ու նեղ այդ տերունական ճանապարհի մոտ, Պղտորագետի ու Տրտուի անկյունագծի աննշան բարձունքի վրա Մովսեսի՝ Մյասունց վանքը, իշկանատունն էին, որն իսպառ քանդել են XX դ. 70-ականների սկզբին, իբր այդ ճանապարհը վերջնականապես բարեկարգելու համար, իսկ մնացորդ ամենափոքր քարն անգամ գործածվել է մի քանի գետավանցիների կողմից՝ շինարարության համար:

Պղտորագետին խառնվող աջակողմյան մեծ վտակը պաղպաջուն Արիքուն է, որին նաև Չափարի գետակ են կոչում: Այն սկիզբ է առնուն Մանանասարի վերին բարձրավանդակից՝ Նժույգասարի բյուրակնյա ստորոտից, որը նաև Բյուրակն՝ Բինգոյլ է կոչվում: Այս գետակը երկարությամբ թեև կարծ է՝ հազիվ չորս կիլոմետր, բայց բազմաթիվ պատվական

աղբյուրներով է սնվում, կամ նրանցից ծևավորված առվակներով, ուստի իր պարզ, սարնորակ ու քաղցրահամ ջրերով միշտ զարմացնում է անցորդին: Նրա մեջ համեղ կարմրախայտ ծուկ էր լինում, որն անգամ տեսանելի էր հեռվից (այդ գետակի ավազանի աղբյուրների մի մասը չափարշիների կողմից խողովակներով տներ տանելու, իսկ ամռանն էլ գետաջրով բանջարանոցները ոռոգելու պատճառով մի փոքր հատված երթեմն ցամաք է լինում, ուստի կես դար է, ինչ ծուկ հազվագյուտ է լինում): Իր հերթին Մանանասարի բարձրավանդակից ցած մասուն այս գետակն ունի չորս փոքր ենթավտակ: 1. Չախակողմյանը՝ Մանանասարի՝ արևելք ձգվող բազուկի գոգաննան լանջերի աղբյուրներից գոյացող ու ա) Գլուցող աղբյուրով ծևավորվող և Մանանասարի բարձրավանդակի առաջին զարիվերի՝ Աստանբեյի դիքի աղբյուրովն ամբողջացողը, բ) Օջախից քիչ վեր, Ճանձանոցի՝ Մեղվանոցի հարթությունից դեպի Գետակի հջածքը գտնվող վարար աղբյուրը, գ) Գյուրզիաթից ծևավորվող դեպի գյուղը ձգվող և Քուրախսար՝ Փայայերի՝ Մեծ Գոմատեղերի ու գյուղի հյուսիսային մասի՝ Քարտաշի աղբյուրներովն ամբողջացողը, գ) գյուղամիջյան ներքեկի ձորակի առավիճայ վարար աղբյուրները: 2. Աջակողմյա վտակը. ա) Սղսղանի հարավային, արևելյան և արևամտյան, Հակառակաբերդի հյուսիսային լանջերից ծևավորվող ու Մեծ Խազազդարայի՝ հնամենի Սոխանանց տեղամասի աղբյուրներով ամբողջացող վտակ, բ) գյուղից վեր՝ Եթի Վանուն աղբյուրով ու այլ ջրերով առու, որը հիմա կիսացամաք է, գ) ներքեկի վերջին հարթ տարածքուն Տանձուն տակի առվաննան վարար աղբյուրը (որպանք հունին շատ են կից, ուստի խառնվում են գետին ու վարարած ժամանակ էլ տակին մնում, ուստի անգործածական են, ճանաչողները միայն ամռանն են դրանից ջուր խնում, որովհետև պաղպաջուն ու քաղցրահամ են): Չափարի գետակը պարզ, քաղցրահամ ու բանջարանոցները վերին ու վարի առուներով ոռոգող գետակ է: Քանի որ ավազանը մեծ է՝ Մանանասար, նրանից արևելք ձգվող հարավահայաց Երկար լանջ, Մանանասարի՝ Սղսղանով վերջավորվող հարավային բարձունք՝ Սոխանանց՝ Խազազի ձորահովտով (Խազազդարա), Հակառակաբերդի հյուսիսային լայնավեց լանջերը, ուստի հեղեղումների ժամանակ շատ է վարարում, մարդաբոյից ավելի քարեր գլորում: Արիքլվի գետակն առաջ ջաղաց էր աշխատեցնում նաև վերևում՝ Երե Ճեղաց՝ Սղսղանի ստորոտից քիչ վեր: XX դ. սկզբից բանջարանոց ոռոգելու պատճառով ամռանը բարակում էր, ուստի

Պղտորագետից առու էին միացնում ու դրանով Զափարի Ներքե Գետամիջի ջաղացներն աշխատեցնում (հիմա միայն մեկ ջաղացի քար է երբեմն պտտեցնում): Ուներ մեկ բանուկ կամուրջ՝ դպրոցի ուղղությամբ գետամիջյան առաջին թաղամասը երկրորդի հետ կապող: Հիմա քանդված է, մի փոքր կամրջակ է քիչ վերևում դրված: Տարվա մեծ մասը, առանց կամուրջի, անցանելի է:

Արիթլու անվանումը երկու ձևով է մեկնաբանվում. 1. *արյամ* գնով ձեռք բերած տեղանքը՝ արյուն+ք+լի, 2. *արիներով*, քաջերի աշխատանքով լի տեղանք (պարսիկ՝ արի, անվան հետ կապ չունի): Այդ անվանումը միջին դարերում է ստացվել՝ XII դ.: Գետակից բացի՝ տեղանքը ևս այդպես է կոչվել այդտեղ մղված արյունահեղ ձակատամարտերի պատճառով՝ Սղաղանի ստորոտից՝ Սղխունանց տեղանքից մինչև Օջախը՝ հին Կրակատեղին՝ Թուխ մանկան, Վանատուրի, Նանեի սրբատեղին (Հակառակաբերդի հյուսիսային կողմով, Հինաս -Խազագի ծորակի հնամենի բանուկ ու մեծ, հիմա սակավ գործածվող ուղին և Մանանասարի ձանապարհը այդ սրբատեղից են ձյուղավորվում): Արիթլվի գետակին գուգահեռ բարձրանում է Մանանասարի ձանապարհը: Արցախյան գոյապայքարի ընթացքում մասնակի ընդհարումներ են եղել այդ գետակի ափերին: Գետի աջ կողմի ափամերձ ներքեկի տան բակում՝ մեծ ձանապարհի եզրին, թշնամու գնդակից զոհվել է Գասպարյան Արտոն՝ 1941-45թ.թ. ֆաշիզմի դեմ կռվում մարտիրոսված Մանգասար Սափարիի Գասպարյանի որդին:

Պղտորագետի հաջորդ աջակողմյան պարզ, բայց սակավազոր վտակը Ակնաջուրն է (աղբյուրների ջրերի մեծ մասը խողովակներով տներն է տարված, որոշ բանջարանոցներ դրանով են ոռոգում):

Ակնաջուրը՝ Ըկնածուրը//Դիմակեն Ճուրը, սկիզբ է առնում Հակառակաբերդի և Պողոս Ճգնավորի բարձունքների՝ իրար մոտեցող լանջերի անկյունահատման գոգից և թեք ծորակով իջնելով, Մեծ Բլուրի՝ Սաղունց թումբի հյուսիսային ստորոտով, գյուղի հին ու նոր մեծ թաղամասերը իրարից խոր ծորով բաժանելով, թափվում է Պղտորագետը՝ ամենահին ու բանուկ ջաղացի մոտ, երեք Տնօրու ուղղությամբ՝ դպրոցից հարավարևելք գտնվող ծորաբերանի հովտում: Երկարությունը հազիվ երկու կմ է, թեև բարակ, բայց գյուղի հին թաղամասի կողմից առաջ շատ օգտագործվող ջուրն է եղել ու երկու փոքրիկ ջրվեժ ունի: Առաջինը հին թաղամասից նոր թաղամաս եկող վերին ձանապարհի տակին է՝ մեծ ընկույզե-

նու մոտ՝ Կրովաց թախտի ժայռաստորոտում, իսկ երկրորդ ջրվեժը Շորշոր աղբյուրից քիչ վերև է. Երեք մետրանոց ժայռից գեղեցիկ շիթերով ու անուշ ձայնով թափվում է ստվերախտ ծառերով եզերված ձորում (հիմա ամռանը շատ քիչ ջուր է այդ ջրվեժներից թափվում, որովհետև աղբյուրների մեծ մասը, ինչպես նշել ենք, ստորգետնյա խողովակներով տեղափոխված է տները): Լեռնային այս վճիտ ջրի տասից ավելի աղբյուրները ծառայում էին և են չափարշիներին: Զախ կողմի բարձրադիր թամբանի ժայռաբուխ աղբյուրն ամենից վարարը, պաղպաջունն ու պատվականն է: Հնուց թունգերով, իսկ հիմա երկաթե խողովակներով (կարծ ժամկետներով՝ նաև փայտե բարակ նովերով) ջրերը տարվել ու տարվում են տները, բանջարանոցները, այգիները: Ամենահին ժամանակներից Ակնաջրի աջ կողմից՝ գյուղի հին թաղամասի վերին ուղղության աղբյուրից, թունգերով՝ կավե խողովակներով, ջուր է տարվել Մեծ բլուրի՝ Սաղունց թումբի հյուսիսային մասի՝ ներկա թաղամասի դպրոցի դիմահայաց տեղի բրուտանոցը, որից հիմա ոչինչ չի պահպանվել՝ վարելահող դառնալու պատճառով (թունգերի վերջին մնացորդներից հանել էին նախորդ դարի հիսունականներին՝ վար անելիս. հիմա՝ տեխնիկայի դարում, այդ թեք լանջերն այլևս չեն մշակվում): Այդ առվին չափարշիները ջուր են կոչում՝ ի հակադրություն մոտակա գետակների ու Տրտու՝ Թարթառ վարար գետի: Անձրևների ու հեղեղումների ժամանակ Դահնակի ջուրը՝ Ակնաջուրը, վարարում է և վերին մասից՝ Հակառակաբերդի ստորոտից մինչև Հին շենի՝ հին թաղամասի հյուսիսային լանջերն ու ժայռութը, խոշոր ու շատ քարեր է պոկում, գլորում ներքև: Թամբանի աղբյուրից եկող ջրերի խառնման տեղում, ուր բանուկ ճանապարհ էր, միշտ կամուրջ էր կառուցվում, որովհետև ուժեղ վարարումների ժամանակ անսպասելիորեն քանդվում էր, իսկ ճանապարհը շատ էր բանուկ. այդտեղով էին անցնում դպրոցականները, հարեւան գյուղից՝ կոլտնտեսության գրասենյակային հարցերով պահանջներ ունեցողները և այլն (հիմա կամուրջ չի վերակառուցվում, որովհետև գյուղացիները վարչական գրասենյակներով հին թաղամասից տեղափոխվել են դպրոցի շրջակա նոր թաղամասը): Ակնաջուրը կազմված է հայերեն ակն<sup>1</sup> և ջուր<sup>2</sup> արմատներից: Ակն բառի երկրորդ իմաստն է արտահայտված՝ ակունք՝ սկիզբ, աղբյուր, այսինքն՝ ջուր, որի ակունք-

<sup>1</sup> Ածառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. I, էջ 106-108:

<sup>2</sup> Ածառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 134

Աերը լրիվ մոտ են և քարերից բխող աղբյուրի ջրեր են, իսկ դահնակը պարսկերեն բառ է, որն էլի նշանակում է ակունք, սկիզբ (բարբառում գործածական է՝ *առվի*, մրի դահնակը. մրին դահնակը քանդվալ ա և այլն):

Պղտորագետի մեջ աջ կողմից լցվող հաջորդ ջուրը գյուղի մուտքի (Գետավանից Եկող Ճանապարհով) Քյլմիու թաղամասի Տկդնոտու աղբյուրի բարակ ջրերն են: Քյլմիու բառը իհմա հասկանալի չէ, մթագնված է: Այն բնութագրում է տվյալ տեղանքը, այն է՝ Մեծ Բլուրից՝ Սաղունց թումբից դեպի Քաջալ թումբը՝ Պղտորագետի ձորակը, ձգվող բազուկը գյուղի նոր թաղամասի մուտքի կողմից ննան է մարդու ձեռքի՝ բութ մատի և ցուցամատի բացվածքի: Այդ բացվածքը հայերենում կոչվում է քիլ և չափի միավոր է ճանաչվել<sup>1</sup> (Երևի ուրարտական բառ է. ձեռքի չռած մատները մեկին ջղայնացած ուղղելով և Ե-ն շեշտելով՝ իբր ամիջում են առ իրամայականի հետ սաստկացնելով՝ քել է, առ է, այսինքն՝ բոլոր զգայարանները կողցնես՝ կուրանաս, խլանաս, համրանաս և այլն. յուրաքանչյուր մատ խորհրդանշում է այդ զգայարանից մեկը և կարելի է առ է ձնը հասկանալ Աստծո մոտ դատի գնաս, այսինքն՝ Երկրից, իրական կյանքից վերանաս):

Զախ կողմից Պղտորագետը թափվող ջրերը քիչ և բարակ առուներ են, որոնք Մռովի ժայռանիստ ստորոտների հարավահայաց լանջերից ծևավորվում, իրար միանում և Կվենքի՝ Երե Քղքատընեղի՝ Սև քաղաքի աղբյուրներով քիչ հորդանալով, արևմտյան ու արևելյան երեք առվակներով լցվում են գետը (3-4 կմ Երևանությամբ. արևմտյանը՝ կարճավուն): Քրահունջի գետաեզր բարձունքից և Երեք տնջրու կողմից մեկական աղբյուրների ջրեր և մի առվակ՝ ճահճուտների ջրերից գոյացած, քիչ ներքելի ձորակում է խառնվում: Ակամերձ աղբյուրները աջ ու ձախ կողմերուն բազմաթիվ են:

Պղտորագետի միջին հոսանքից քիչ ցած, աջ ափի բնակելի տարածքում իհմա Զափարի նոր թաղամասն է՝ իր թեքույթներով ու քիչ առաջ ձգվող լեզվականման սանդղահարթակներով (Զափարի նոր Ենթաթաղամասերը, ջաղացի ջուրը վերականգնելիս, չորս գետակներով են կտրվում, իսկ այնպես՝ Երեք, ուստի Գետամեջեր անվան գործածությունը սովորական է):

<sup>1</sup> Աճայան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV (Վերահրատարակություն), Երևան, 1977, էջ 578.

Պղտորագետի վրայի բարվոք միակ կամուրջը դպրոցից ներքև է՝ միակ ջաղացի ուղղությամբ, որով կարող է մեքենա անցնել: Գետի այդ ձախ կողմի բարձունքին քրահունչի հնամենի գերեզմանոցն է, որտեղով անցնում է ձանապարհը և ուր հիմա ապրում են չափարշիներ:

Չափարի երեք սոսիները՝ տնօրիները (չինարի, որոնց տարիքը հզիվ հինգ հարյուր կին) այդ կամուրջից քիչ ներքև են, աղբյուրի մոտ: Այդտեղ է նաև ջաղացներից մեկի փլվածքը (այդտեղով էր անցնում նաև ինը ձանապարհներից մեկը, որի կամուրջը վաղուց էր գետը տարել):

Պղտորագետի միջին ավագանի ձախ ափին՝ Մռովի ստորոտից ձգվող լանջին հնամենի Կվենք// Փիրփայա` // Երե Քղքատըեղը// Սև քաղաքն էր: Այս տեղանքը գտնվում է Մռովի ալայան մարգագետիններից դեպի Պղտորագետը՝ Գյարաքը, իջնող լանջի մեծատարածք, երկարավուն սարավանդում և ընդգրկում էր նաև նշված գետի նույն ուղղության հարթավուն հովիտը: Այդտեղ՝ գետի վրա, եղել են ջաղացներ, ումեցել են հանդամասեր, այգիներ, որոնց մեծ մասը նույնիսկ խորհրդային կարգերում մշակվում էր, տեխնիկայի զարգացման պատճառով մեքենայացվել են դաշտային աշխատանքները, ուստի այդ թեք լանջային հանդամասերը դուրս են մնացել, իսկ հիմա՝ բարձիթողի են: Այդտեղի տանձենիներին չափարշիք մեղրատանձի են կոչում (այդպիսի տանձ կա նաև Սաղունց տանձուտում՝ Մեծ բլուրի արևելյան ստորոտում): Մանր, երկար կոթերով, հասնելիս վառ դեղին գույնի ու զգլիսիչ բույրով պտուղներ են (ավանդաբար ասում են՝ *Հենց էտ տանձը հսկը ա՛ Տրտուի կոյսկեն կորած հեյվանն էլ տղեղ կքթենաս*): Այդ տեղանքում՝ հատկապես գետամերձ սարավանդում, զենքի արտադրությամբ զբաղվող դարբնոց կար՝ իր գինանոցով, իջևանատնով, տիրոջ դյակով, որից հիմա միայն մեծ սալաքարեր, հիմնամասեր, պեկեր՝ փոսեր ու տիրոջ՝ օրիսական պայքարում գոկվելու ու առանց գրի՝ միայն վերևի կոկ հարթված տեղում գծանկարով՝ երկսայրի սուր, գորշ-սևակաղուն կարծր գլաքարից տապանաքար է մնացած (ըստ ավանդության՝ նվիրյալ, բայց անգրագետ հուժկու դարբնի ձեռքի աշխատանքն էր՝ նվիրված շատ աշխատած, բայց չվայելած տիրոջը): Այդ վայրի անունը Կվենք էր (չպետք է շփոթել Մեծ Կվենքի հետ. շատ սովորական երևոյթ է տարբեր տեղերում միևնույն անվան կիրառությունը, բայց անվան ծագումը ժողովուրդը կապել է կիկիների, կուների թռչնաշխարհի հետ): Այս տեղանքը հայտնի էր իր հրաշք-բուժիչ աղբյու-

րով, որը օրգանիզմում գոյացած քարերը քայլայում է: Գերեզմանոցն ինչքան քարուքանդ է արվել, բայց էլի բավականին տարածք է ընդգրկում: Այն իհմնական բնակատեղին մոտ է՝ գետից բավականին վեր՝ տարբեր թաղամասերով: Ըստ ավանդության՝ այստեղ նույնիսկ եռահարկ տներ են եղել (առաջին հարկը՝ նկուղը՝ բավականին գետնախոր՝ ձմռան պաշար շատ ամբարելու համար. այստեղի տանձի ու սալորի համան ու բույրն այլ էր, իսկ բանջարեղենները մարդարոյի էին հասնում): Այստեղ ծաղկում էր քարամշակումը, մետաղամշակումն ու առևտուրը, և Պղտորագետի հանրահայտ «արագապտույտ» ջաղացները, որոնք երբեմն տուժում էին գետի ահարկու վարարումներից, բայց միշտ առավել լավով վերակառուցվելով: Այդտեղի Եկեղեցին շատ մեծ ու շքեղ է եղել, որից էլ ստացվել է օտարների տված անվանումը՝ արցախյան արտասանվածքով՝ Փիրփայա: Փիր պարսկերեն նշանակում է՝ 1. մեծ, 2. ծեր, 3. սուրբ, իսկ փայա կովկասյան լեզուներից՝ գոմ, ծածկ: Ուրեմն՝ Եկեղեցու պատճառով տեղանքը կոչել են մեծ սրբաւելի կառուցվածք: Վերին մասում սրբաւեղին՝ Մոմատուն //Մեղսաւեղին (իհմա Սչանլու անվամբ) իր գեղատեսիլ տափարակով, կենարար օդով անասնապահական ամառանոց է ծառայում:

Կվենքի զինագործական գետամերձ մասը՝ Սև դրյակով, կոչում էին նաև Սև քաղաք, որը սովորական գյուղից տարբերվող բնակատեղի էր, դրյակի, ամրոցի քարերը մեծ չափերով էին, որոնցից հիմա քիչ է պահպանված: Այն ավերվել ու հայաթափվել է շահաբասյան շրջանում և հետագայում: Եկեղեցին իհմնահատակ ավերված էր, իսկ խորհրդային կարգերում խաչքարերի փշրանքներից էլ է գրկվել: Հուշողական սակավ նշխարներ են մնացել: Այս տեղանքի սրբաւեղիների ահարկու ջարդը 19-րդ դ. էր՝ քոչվոր, աղքատ՝ սովորական հացի կարոտ, բայց «ազնվազարմ» բեկ-հորջորջվածների կողմից: Պղնձե կթիչներով ոսկի ու արծաթ էին փնտրում (ավանդաբար ասում էին՝ Երե քղթեցուց գյանցի դուքանմը յա բզարմը քթիր):

Պղտորագետի ձախափնյա հաջորդ բնակատեղին Քրահունջն է՝ Գյառավանդը՝ Իմարաթ Քարվենդ //Գրավենդ (կեղծված տեղեկությամբ նշվում է՝ Ելիզավետպոլի նահանգ, Զևանշիրի գավառ, 1908 թ., 701 բնակիչ.<sup>1</sup> մինչդեռ նրանց գերեզմանոցում նախորդ դարի հիսունականներին մի քանի շիրմաթմբեր էին, որ մանկուց հազար

<sup>1</sup>Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան 1988, էջ 519:

անգամ տեսել ու իշխում եմ ես՝ տողերիս հեղինակը, իսկ այդքան բնակիչներով զյուղը կես դար հետո մի քանի շիրմաթումբ չի ունենա, այլ մի քանի գերեզմանոցներ կունենար. Նրանք՝ որպես քոչվոր անասնապահներ, մինչև խորհրդային կարգերը, միայն ամառներն էին լինում Պղտորագետի ավագանում. նշված թվականին նրանց ուսունականացների դեմ արյունահեղ պայքար է եղել. խորհրդային կարգերի ժամանակ են նստակյաց դարձել այդ տեղանքում): Այս գյուղատեղին գտնվում է մօռվալանջ թարթառահայաց տեղանք՝ Թրղեկ ակունքամուտ հովտի ջրբաժան բարձունքի հարավարևմտյան ստորոտում, Պղտորագետի՝ Գյարաքի ձախ ափին՝ Չափարին մերձ (Գետամիջով, ջաղացներով, նոր թաղով կապակցված էին): Հաթերքի հետ վերևով կարճ ձանապարհ կա, որն անցնում է Ենգինջայով, Սպիտակ Ցից քարի մոտով (հայկական հին ու փոքր բնակատեղի), իսկ ներքևի ձանապարհը դեպի Հաթերք Չարդախսչով է անցնում: Այս տեղանքից Գետավանի ուղղությամբ երկու ձանապարհ կա՝ հարավարևմտյան կողմով ջաղացների մոտ միանում է Չափարի ուղղում, իսկ հարավարևելյան կողմով դեպի Բռուշը՝ Փռուշնուտը՝ Բռնչենիները, այնտեղից էլ Գետավան: XIX դարի վերջին ու XX դ. սկզբին Չափարի Գետամիջյան վերին տեղանքում մի քանի քոչվոր քրդեր և այլ խառնաժիններ էին տեղակայվել՝ լեզգի, այրմ, թուրք, արաբ և մեծ մասամբ ծննանք տեղափոխվում էին Ղաշտային Արցախ: Խորհրդային կարգերում քոչվոր թուրքերից էլ մի քիչ ավելացան արևելյան մասում, որը կոչում էին Քյարամլու: Ըստ իրենց՝ իբր վերջիններս իսկական թուրքեր են: Բոլորն էլ մահմեդականներ էին, բայց մի մասը շիաների, իսկ մյուսը սյունիների ուղղությանն էին հարում: Այս տեղանքում զգալի տեղ էին գրավում Ճահճանման Ճիլկոտ տարածքները, որոնք ցանաքեցվեցին դարակեսում՝ խորհրդային կարգերում:

Աղբյուրների ջրերը քաղցրահամ չեն՝ հողային, Ճահճային ու կրաքարային են: Այդ ջրերը ոռոգման համար օտարազգիները սկզբում չէին գործածում, հետո մասնակի գործածեցին: Արևելյան մասերում շատ փոքր, տիղմախառն, տղրուկով հարուստ լճակ կա, ուր գոմեշներն էին շատ հանգստանում: Ճահճուտի ներքևի լճակը Շիրալի՝ հյութեղ էին կոչում: Այն տիղմախառը և կրաքարային էր, որը թեկուզ չորացվեց մոժակների ու վարակիչ հիվանդությունների առաջն առնելու համար, բայց հետո էլի կիսալճակի վերածվեց:

Որպես խմելու ջուր՝ բնական չորս աղբյուր կա այս տեղանքում: Երկուսը վերև՝ արևելյան և արևմտյան կողմերում, երկուսը՝ ներքև՝ Պղտորագետի՝ Գյարաքի ծախ կողմում: Մեկը բարձրադիր փլվածքի մոտ է, մյուսը՝ ցածրադիր: Մի քանի տեղ ջուրը աղբյուր չէր դառնում՝ ճիշկոտ էր մնում, որը երաշտ տարներին մեծ մասամբ, իսկ սովորական տարիներին՝ մասամբ ամռանը ցամաքում էր:

Այդ եկվորներն անասնապահությամբ, հետո այգեգործությամբ, իսկ 50-ականներից հետո սակավ հողագործությամբ էին զբաղվում: Բնական է, բանջարանոցաբուտանային կուլտուրաներ ու հացահատիկ խորհրդային կարգերում հայերի հետ են մշակել: Քարահունջի հին շինությունների՝ եկեղեցի, մատուռ, տներ, մնացորդ սպիտակավուն սալաքարերն ու կանաչակապտավուն անկյունաքարերը XX դ. 30-ականներից անխնա գործածել են բուժկետ, պահեստ, վարչական գրասենյակ ու սեփական տներ կառուցելու համար՝ հայ ղեկավարների ու որմնադիրների միջոցով: Խաչքարերն ու գրավոր շիրմաքարերը նրանցից առաջ՝ հրոսակ այլադավան զինվորների կողմից հիմնահատակ ջարդված, ավերված, ոչնչացված էին: Միայն ներքեւի հին գերեզմանոցի սահմանափակ առանց գրի շիրմաքարեր, դամբարան ու մի խաչքար էր մնացել: Վերջինս էլ Արցախյան գոյապայքարի ժամանակ անհետացավ: Այդ գերեզմանոցը երեք տնօրուց քիչ վերև է: Ներկա ժամանակում կամուրջից վեր բարձրացող ճանապարհի բլրագագաթն է: XX դարի 60-ականներից այդտեղի քուրդ-թուրքերը այդ խաչքարը հաշվում էին իբր իրենց քրիստոնյա նախնիների՝ ալբան-աղվանների հիշատակ, որոնց հետ իրականում ոչ մի կապ չունեին (այդ խաչքարը ֆիզիկայի ուսուցիչ Սայյան Սուրենը ցանկացավ տեղադրել Քլումփի ճանապարհի Տկողնուտի աղբյուրի մոտ, որպես իր տղայի՝ 1974թ. խորհրդային բանակում նահատակված Ռազմիկի/Փ/ֆարադեյի հուշաղբյուրի խաչքար. այդ այրմ-քուրդ-թուրքերը զարմանալի վայնասուն բարձրացրին, որ իբր իրենց սեփականությունն է): Այդտեղի գերեզմանոցը չափարցիք կոչում էին ճղցտերերի գերեզմանուտը, իսկ ջաղացատերերը Պղտորագետին մերձ Չափարի ու Քրահունջի թաղամասերի կիսաւոնկորներն էին: Արցախյան գոյապայքարի ընթացքում, ինչպես նշեցինք, այդ խաչքարը, որի բոլորքում նաև երկարագիր կցագրությամբ հայատառ գրություն կա, անհետացել է: Հիմա այդ տեղանքը հայկական թաղամաս է:

Խորհրդային կարգերում՝ XX դարի 30-ականների վերջերից մինչև 70-ականների սկիզբը Քարահունջի այլազգիների փոքրաթիվ երեխաները հայերի մեծաքանակ երեխաների հետ մեկտեղ նույն դպրոցն էին գալիս (Չափարի արդի դպրոցը): Այնուհետև հայ աշակերտների քանակը սկսեց կտրուկ նվազել, իրենցն աճել: Խորհրդային կարգերից առաջ ու հետո ոչ մի ազգային կառույց չունեին: Նախախորհրդային կարգերում, այդ մի բուռ քոչվորականները հայերի մոտ իրենց թեկ էին կոչում, որը զարմանալի էր. մի տեղանքում քանի<sup>o</sup> թեկ կլինի (Երևի ոչ կախյալ քաղաքացի լինելու անձի ինքնուրույնությունը հաստատող փաստաթղթային քաղաքավարական արտահայտություն էր, ինչպես՝ քաղաքացի, պարոն, որը ունանք շփոթում են թեկ տիտղոսի՝ ազնվականի հետ, ինչպես թուրքերենում՝ աղա. Բյազիջ/նց դյուզ տեղանքը շատերը կարծում են թե դրանցն էր, նրանք այն ժամանակ հող չէին մշակում, մինչդեռ Բյազիջն Սաղուն ավագ տղան էր ու այդ տեղանքը նրա արտատեղն էր): Նրանք հետո այնքան շատ ավելացան (Երկու կին պահելը և յոթից ավելի երեխա ունենալը սովորական երևոյթ էր), որ 70-ականներից նոր դպրոց կառուցեցին: Այդ կառույցի քարերը հիմնականում Մարտակերտից գնված սպիտակ կրաքարային ուղղանկյուն երկարավուններն էին՝ կուրիկ (կուրիկ՝ ռուսերեն՝ խորանարդ): Գոյապայքարի ժամանակ դրանք լրիկ կործանվել են, և այդ քարերը մասամբ գործածվել են Չափարի ավերված տները վերականգնելիս: Քրահունջը հայերեն սովորական բառ է, առաջացել է Քարե կամուրջ կապակցության արտակարգ հնչյունափոխությունից: Քարե մեծ կամուրջ է եղել Պղտորագետի ընկուզենիների թափուտում, որից ոչինչ մնացած չկա: Քանի որ այդ գետն ընդգրկում է Մօռվի ու Մանանասարի գգալի լանջերը, ուստի ուժեղ տեղատարափների ժամանակ ահավոր չափերով վարարում է, և կամուրջը բարձր չինելով, տապալվում էր, այդպես նաև բազմաթիվ ջաղացներ է քշել: Քրահունջ տեղանուն կա նաև Հաթերքի արևմտյան մասում, որն այս տեղանքի հետ կապ չունի (սովորական երևոյթ է միևնույն անվանումը բազմազան պատճառներով տարբեր տեղեր գործածելը):

Պղտորագետի գետաբերանի մոտ է նորակառույց Գետավանը, որը Գետի// Կյետի՝ Տրտուի՝ Վաղուհաս գետի ու Պղտորագետի խառնվելու տեղանքին կից, ձախակինյակում եղած Փայտամշակման գործարանի պատճառով կառուցված բնակավայր է (կամուրջի մոտ՝ աջափնյակում՝ Վաղուհասի հանդամասում ևս մի քանի տներ ու կիսավեր կառույցներ

կան): Որպես գյուղ՝ հիմնվել, զարգացել է նախորդ դարի երկրորդ կեսում, չափարշիների անասնապահական ծմեռանոցների՝ խորհրդային կարգերում համայնացնելուց հետո՝ ին Կարմունջ՝ Կամուրջ, Կյետ //Գետ տեղանունը դարձնելով հնչելով գետավան (մինչև նախորդ դարի կեսը չափարշիների համար գետ // Կյետ հասկացությունը Տրտուն ու նրա հովտի հանդամասերն ու անասնապահական տեղանքներն էին նշանակում): Միջնադարում Շոփյանների կողմից կառուցված նախկին կամուրջը քանդվել էր (մի քանի մետր վեր՝ մի մասի մնացորդը մինչև հիմա երևում է ժայռակտորի վրա): Ներկա կամուրջի կառուցումն ավարտվել է 1942թ.՝ աշղեկը չափարշի Մարտիրոսյան Զալալին էր, որն էլ հենց ընտանիքով տեղափոխվում է այդտեղ՝ Զափար գյուղում իբր նոր կառուցվելիք բնակարանի տեղ չունենալով (այդ ժամանակից էլ երբեմն ռուսերեն անվամբ էին գործածում՝ Մոստ): Փայտամշակման գործարան ունեցող այս տեղանքը, գտնվելով հանրապետական արժեք ունեցող մայրուղու վրա, շատ էր բանուկ ու Տրտուի՝ Թարթառի՝ Կյետի հովտի ամենալայն մասի մոտ էր: Այդ տեղանքն առաջ Ցաքյուտ՝ Մացառուտ հանդամաս էր կոչվում, որը թարթառամերձ, ոռոգովի ու շատ տաք տեղն էր, և դրա կեսը խոտիարքի, կեսը՝ բանջարանոցի, հետո էլ ծխախոտի մշակման տեղանք էր ծառայում: Զաղացն այդ ժամանակ արդեն լուծարված էր: Դեպի Զափար բարձրացող ճանապարհի աջ կողմում հիմա դպրոցն է, որի մոտ դեռ մնում է նախորդ դարի Զափարի կոլտնտեսության վերջին անասնապահական ծմեռանոցի ֆերման: Վարչական կենտրոնը սկզբից Զափարի հետ էր, բայց Արցախյան գոյապայքարի ժամանակ առանձնացավ, իսկ տիպային դպրոցը կառուցվել է նախորդ դարի 80-ականին: Ընդհանրապես այդ դպրոցի մոտի բրից սկսած՝ մինչև Փարսուց կամ Կոտրած Եխծեն, Օթաղեն քարը՝ ժայռախուցը, ճանապարհին կից տեղադրված են եղել չափարշի գերդաստանների մեջ մասի անասնապահական ծմեռանոցները, որը գոյատևել է մինչև նախորդ դարի 30-ականները՝ հանրայնացման տարիները:

Գետավանի տները, տնամերձ հողամասերը, դպրոցը, հանդամասերը Զափարի՝ Թարթառի բարեբեր հովտի հանդամասերի հաշվին է առանձնացվել, ու բնակչության մեջ մասը չափարշիներ են, որոնց գերակշռող մասը Եկեղեցու մոտի հին թաղամասից նախորդ դարի 60-ականներին տեղափոխվածներն են, նոր թաղամասից քիչ են տեղափոխվել:

Արցախյան գոյապայքարի ժամանակ այստեղ ևս ձերբակալություններից տուժածներ, նահատակներ, անհայտ կորածներ եղան, որոնց մեծ մասն էի չափարցիներ էին: Օրինակ՝ Օթաղի քարի՝ ժայռախուցի մոտի՝ Զագունանց տեղանքում թյոթուզի բողազումը, եղած միջադեպից՝ ազերիների երթուղային ավտոբուսի պայթեցումից հետո՝ ազերիների դրդմանք, ռուսական բանակի զինվորները Արթուր Միշայի Թամրազյանին ձերբակալեցին, Աղդամ, հետո Բաքու տարան, երկի որպես ռուսական գրանցում ունեցողի ու ռուսերն լավ ինցողի, ցանկացել էին շատ լուրեր կորզել. այդ երիտասարդը գազանաբար հոշոտվել է, իսկ չորս հոգու՝ Միշա Դադաշի Թամրազյանին (Արթուրի հորը, տարիքով, աշխույժ, կատակասեր, կուզիկ մարդ, որը հետո Երևան-Ստեփանակերտ փոքր ինքնարիոի վթարի ողբերգական զոհերից դարձավ՝ ազերիները հրթիռակոծել էին չվերթի ժամանակ), Գարիկ Զավենի Գրիգորյանին, Ագոն// Մելսիկ Սամվելի Արշակյանին և Էլիսան Պողոսի Դանիելյանին (վերջին երկուսը Զափարում էին ու են բնակվում): Նրանց բանտարկել էին և ուղարկել Ստեփանակերտ: Արկադի Վոլսկու միջամտությամբ այս մարդկանց ազատեցին անլուր խոշտանգումներից: Երկու անգամ ևս Գետավանը բռնազարդվեց ու թափով զարգացումը հետաձեց (դեպի արևմուտք կառուցված վերջին տները՝ տնջրու՝ սոսու՝ չինարու մոտ, հասնում էին Ներքե Շենի թաղամասին ու խորհրդային կարգերում այդտեղ պատրաստված Զափարի գոմեշների ծմեռանցին ու հավերի ֆերմային, իսկ հիմա այդ նորակառուց տների մի մասն ավերակ է): Գետավանի միջով ձգվում է ասֆալտե ուղին՝ դեպի Քարվաճառ: Ասֆալտից Զափար բարձրացող խճապատ ուղին Մեծ Ճանապարհի աջ կողմից է թեքվում՝ կենցաղի տան ու դպրոցի շենքի մոտից, որի անկյունում տնկած ճանապարհանիշը վաթսունվեց է՝ հիմա պոկված է (Սարտակերտից այդտեղ եղած հեռավորությունը 66 կմ է): Զափարցի հերոս տանկիստ նահատակ Վիտյա// Վլադիկ Գրիշայի Սարգսյանը Վաղուհասի կողմում գտնվող ազերիներին այդտեղից կրակահերթի տակ պահողն էր (երեք տանկ շարքից հանել էր ու ռացիայով հայտնում էին՝ «Վիտյան վածունվեցան թխըմ ա»): Այդ մասը պատերազմի ժամանակ նաև կոչում էին ու հիմա էլ երբեմն կոչում են Վաթսունվեց ու հիշում նշված միջադեպը: Գետավանով անցել ու կարծ գործ է ձեռնարկել նաև լեզենդար Ավեն՝ Մոնթ Մելքոնյանը: Գետավանի և այդ ձորակի երկորորդ ազատագրմանը հիմնականում մասնակցել է Սեյրան Օհանյանի

գլխավորած վաշտը: Դպրոցի մուտքի սրահում նահատակների անկյունն է՝ հուշատախտակին փակցրած նկարներով, որոնց մեջ մասը չափարցիներ են:

Պղտորագետի ավագանի նշված բնակատեղիներում եղել են եկեղեցիներ, որոնցից անհուշ է մնացած Քարահունջի Եկեղեցին, իսկ Ճղցտերի գերեզմանոցի մատուռը հիմնահատակ քանդվել է նախորդ դարի վաթունականին՝ ծխախոտի պլանտացիան տրակտորով մշակելիս:

Գետավանից դեպի Հաթերք գնացող ուղու վրայի՝ փոքր կամուրջից հինգ հարյուր մետր դեպի արևելք, հեթանոսության շրջանից մնացած Փռուշնուտի հնամենի սրբատեղիում քրիստոնեության ժամանակ վանք էր վերակառուցվել, որը կոչվել է Մովսես Խորենացու անվամբ՝ Մյասունց վանք: Ըստ ավանդության, իբր այդտեղ եղել է Մովսես Խորենացին, որը նաև տեղի ջաղացի ամենաարդար աշխատողն է ճանաչվել (այդ ջաղացն իբր վանքապատկան էր, բայց նաև չափարցիներին էր՝ նրանց անասնապահական ձմեռանցների արանքում էր, երբեմն վաղուհասցիք առնում էին). Խորհրդային կարգերում վերջին ջաղացպանը չափարցի կարգաթող տերտեր Հայրապետ // Երվանդ Խաչատուրի Մինայանն էր՝ տողերիս համեստ ծառայի պապը. այդ ջաղացի վկեկները ոչնչացվել են նախորդ դարի կեսերին. իհմա տեղը բանջարանոց է՝ Պղտորագետի աջակինյակի վերջին տների մոտ): Այդ վանքում ու ջաղացում եղել է նաև Միսիթար Գոշը՝ իշխանանիստ Հաթերքում հյուրընկալվելիս ու Դադի վանք Երթևեկելիս: Մյասունց վանքից, որը նաև իջևանատուն է եղել, մնացած պատերն իսպառ ոչնչացվել են նախորդ դարի յոթանասունականներին, իբր ճանապարհը բարեկարգելիս ու ընդլայնելիս խանգարել է, իսկ փոռւշնուտի՝ սուրբ ծառ համարվող բռնչենիների թփուտներն առ այսօր էլ աճում են ճանապարհի վերին եզրի խճախառը տեղանքներում՝ Բռուշի տափարակի՝ մեծ դաշտի ներքեւ ծայրում՝ Պղտորագետի աջակինյակում:

Պղտորագետի ավագանը հարուստ էր ջաղացների քանակով: Ավանդությունը պատմում էր, որ Տրտուի հովտի ամենաջաղացաշատ վտակը Պղտորագետն էր: Քաղաքատեղից մինչև Տրտուն յուրաքանյուր քայլի վրա ջաղաց կար, որոնց երբեմն քշում էր ահավոր հեղեղներից հորդացած, ափերից վայրագորեն ելած Պղտորագետը, բայց փոխարենը նորից ավելի լավն էին կառուցում: Ամենաորակյալ նախագծով ջրանցք անկացնել տվողը եղել է չափարցի Խորթանց Դավիթը՝ Դավիթ Սարգսի Դանիել-

յանը, որին կուլակաթափության տարիներին անհարկի բռնադատեցին: Այդ ջրանցքն այնպիսի բարձրությամբ էր Պղտորագետից վերցված ու Մանանասարից արևելք ծգված բազուկի արևելյան գառիթափ լանջով անցկացված, Չափար գյուղի Գետամիջով բերած, Արիքլի գետակին խարնած, որ Երկիարկանի ջաղացներ էին աշխատում (վերջին Երկիարկանի ջաղացները նախորդ դարի վարսունականին ու ութսունականներին են լուծարվել՝ խանութները պատրաստի այսուհի պարկերով ապահովելուց հետո. Չափարում ութսունականին էլեկտրաղաց էր կառուցվել, բայց այսուրը անորակ էր ստացվում, ուստի այդտեղ անասնակերպին արդուն էին աղում, իսկ ջաղացում՝ հացի այսուրը):

Արցախյան գոյապայքարի հաղթանակից հետո Չափարում վերականգնվեց ներկայիս միակ ջաղացը՝ նախկին Երկիարկանիի տեղում՝ դպրոցից ներքև, գյուղամուտ Ճանապարհի Եզրին, որը հիմա հազվագյուտ է գործում (այն աշխատում է Դանիելյան Դավթի նախագծած ջրանցքով բերվող ջրով):

## РЕКА ПХТОРАГЕТ И ЕГО БАССЕЙН

Сильва Минасян

Резюме

Река Пхторагет- Гярак будучи вторым притоком Трту берет начало с западных склонов горы Мрав и имеет большой бассейн. Его притоки Ариклу и Акнаджур – Дагнак сливаются у нового жилого квартала села Чапар. Оба названия этой реки имеют армянское происхождение.

В статье дается географическая характеристика реки и приводятся исторические сведения и этимология местностей, расположенных в его бассейне.

## THE RIVER PGHTORAGET AND ITS BASIN.

Silva Minasyan

Summary

River Pghtoraget-Gyarak being the second influx of Trtu originates from the western slopes of Mount Mrav and has a large swimming pool. Its tributaries Ariklu and Aknadzhur-Dagnak merge with the new residential area of the village of Chapar. Both names of this river are of Armenian origin.

The article provides information with the geographical description of the river, the historical background and etymology areas located in its basin.

## ԱՐՑԱԽԸ ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆԱՍԱԿ ՆՈՅԻՆ» ՊՈԵՄՈՒՄ

### Սուլրատ Խանյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
ԱրԴՀ

Լուս են ընծայվում բանաստեղծական ժողովածուներ, որոնց էջերը հենց առաջին ընթերցումից ներկայացնում են հեղինակային մտահղացումների ամբողջական երանգը և ակիամեջ դնում այն գեղագիտական իդեալները, որոնց հետապնդել է բանաստեղծը: Սակայն գրքեր էլ կան, որոնց էջերը ծայրեծայր հագեցած են դարակազմիկ զաղափարներով՝ արտահայտամիջոցների այնպիսի փայլատակումներով, որ մնում է ընթերցելուց հետո փակես աչքերդ և հոգուդ խորխորատներում մտքիդ աչքերով տեսնես այն բարդ ու իրական աշխարհը, որ գեղագետի հմտությամբ բացել ու հրամցրել է բանաստեղծը: Նման ժողովածուներից է անվանի բանաստեղծ Արտեմ Հարությունյանի «Նամակ Նոյին» մատյանը, ուր գետեղված է «Նամակ Նոյի» պոեմը, որտեղից էլ գրքի վերնագիրը: Նման ժողովածուն պատիվ կարող է բերել ոչ միայն հայրենի գրականությանը, այլև համաշխարհային մշակույթին:

«Նամակ Նոյին» ժողովածուն հեղինակը նվիրել է իր ծնողների՝ բանաստեղծ Միքայել Հարությունյանի և մանկավարժ Շամիրամ Զաքարյանի սուրբ հիշատակին: Ավելորդ չենք համարում նշելու այս վերաբերմունքը, ընդհակառակը, անհրաժեշտ ենք գտնում այն առումով, որ գրքի հենց առաջին էջում Արտեմը գետեղել է իր անմոռանալի հոր հանրահայտ բանաստեղծությունը՝ «Զվարթ Երգ» խորագրով, որ մի շարք պոետների՝ Ղարաբաղին նվիրված բոլոր բանաստեղծությունների շարքում սրտերի հետ խոսող լավագույն երգերից է՝ Աստծո թելադրանքով հորինված օրիներգերից մեկը, որ նպատակահարմար ենք գտնում բերել ամբողջությամբ.

Ինչ որ լավ է այս աշխարհում,  
Բոլորն էլ կա՝ Ղարաբաղում,  
Բոլորն էլ կա և ավելին,  
Սար չի հասնի մեր սարերին...  
Ինչպես մայրն իմ ողջ աշխարհի  
Սայրերից էլ լավն է, բարի:  
Այնպես հողն իմ Ղարաբաղի  
Քաղցր է, և թող Աստված պահի,  
Եվ կպահի, մի՛ կասկածի,

### *Աստված էլ է ղարաբաղցի...<sup>1</sup>*

Այս բանաստեղծության մեջքերումը մեր կողմից հետապնդում է մի կարևոր նպատակ, որը կապված է այս գիրք-հայտնության բոլոր շարքերի մեջ ընդգծված այն սեր-տագնապին, սեր-հայարտությանը, սերցավին, սեր-հույսին, որոնք վերաբերում են բանաստեղծի ծննդավայր Արցախին, որի սրբացած գերեզմանոցներում ննջում են նրա նախնիները, նրա պապն ու տատը, և որոնց հոգիները Վերին Երուսաղեմից օրինում են Արցախի գոյությունը, շշնջում սերունդների ունկերին, որ Արցախը և օրրան է, և պատիվ, և ապագա, և աշխարհի սիրտը շոյող երգ:

Նշենք, որ գրքի տպագրությունը հովանավորել է Հայաստանի միջազգային գիտական հիմնադրամը: 1994 թվականին «Նամակ Նոյին» ժողովածուն լույս տեսավ անգլերեն՝ Նյու Յորքում և ամերիկյան մի շարք համալսարանների կողմից ներկայացվեց Նորեյան մրցանակի: Այս փաստն ինքնըստիմքան խոսում է գրքի գաղափարական հագեցվածության և գեղարվեստական բարձր առանձնահատկությունների մասին:

«Նամակ Նոյին» ժողովածուն լայն արձագանք գտավ հայ և օտարազգի գրաքննադատների շրջանում: Գիրքն արժանացավ Հայաստանի պետական մրցանակի: Նման բարձր գնահատականը արժանի էր ամենախստ մոտեցումների պարագայում: Ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը գրել է. «Արտեմ Հարությունյանը 20-րդ դարի «հոգևոր պատմության» առասպեկտ է արարում վաղորդայնի նորոգության արձագանքների հուշը տանելով դեպի ղարաբառյան գոյսների, ձայների ընբռստ ժայթքումը, ուր հատվում են պատրանքի և իրականության ստվերագծերը: Եվ միանգամայն հասկանալի է նրա բանաստեղծական աշխարհի փոխանուումը քաղաքական լիրիկայի դժվարին ասպարեզ և հայտնության ու տեսիլքի հրաշեկ միասնություն»:<sup>2</sup>

Ուշագրավ է նաև գրականագետ Էդվարդ Թոփչյանի գնահատականը. «Արտեմ Հարությունյանի պոեզիայում, - գրել է նա, - ինձ միշտ զարմացրել են մաքուր բանաստեղծության և կոշտ, նյութականացած առլրայի համատեղումն ու ներթափանցումը: Մայլով երկնային ոլորտներում՝ նա կարողանում է համարձակ դիպչել և իր գուտ բանաստեղծի շիտակ ու անսրող հայացքով նայել առօրյայի և ժամանակի յուրաքանչյուր հրաշեկ

<sup>1</sup> Հարությունյան Ա., Նամակ Նոյին, Երևան, 1977, էջ 3:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 5:

գալարումին, 20-րդ դարի բանության ծեսերին: Նա կարողանում է համատեղել Բարին ու Գեղեցիկը, և ազատ երևակայության սյուրռեալ թռիչքը չի խանգարում նրան տեսնել երկրի վրա ամեն մի իրեշավոր անարդարություն՝ լինի այն Ղարաբաղում թե Վիետնամում: Սա տեսիլքի պոեզիա է:<sup>1</sup> Իսկ ամերիկացի բանաստեղծ Հեյդն Գերութն արտահայտվել է այսպես. «Մոտ 70 տարի գիտեինք հայերին ու նրանց պայքարի մասին՝ ընդուն բնաջնջման: Այդ հատվածը մեր ժամանակների պատմության սև էօերից է, ու չնայած լսել էինք ամերիկահայ զաղութից հրաշալի ճայներ, բայց մինչև այսօր չգիտեինք ժամանակակից հայ պոեզիան: Այժմ ապրող մեծագոյն բանաստեղծներից մեկը թարգմանաբար մեզ է ներկայացված, ու մենք ներքին երախտագիտությամբ ենք վերաբերվում նրա գրքին: Այն հզոր է, կենսական, վառ և խորապես նշանակալից: Այն սյուրռեալիստական է պատմական արսուրդի ընդհանրացմամբ՝ տեսոր և ցեղասպանություն: Գիրքը հոյակապ է, այն հավերժորեն ահազնացող է, ահազանգող».<sup>2</sup>

Նման բարձր կարծիք են հայտնել նաև ամերիկահայ բանաստեղծ Արա Բալիկյանը, Փիթը Պալաքյանը: Իսկ սփյուռքահայ հոչակավոր գրականագետ Երվանդ Ազատյանը իր գրախոսականում Արտեմ Հարությունյանին համարում է արևելյան և արևմտյան պոեզիաների քաղաքացի՝ առանց աշխարհագրական սահմանների: Նման գնահատականը պատահական չէ, որովհետև Արտեմը խորապես յուրացրել է համաշխարհային գրականության լավագույն ավանդույթները, դրանք օծել հայ դասական և ժամանակակից պոեզիայի ոսկեփոշով, իր հոգու շերտերում դարձրել ծիածան և ընթերցողին ներկայացրել որպես յուրատիպ մի գոբելեն: Տիրապետելով անգերենին, գերմաներենին, ֆրանսերենին, ռուսերենին՝ նա ըմբոշնել է աշխարհի մեծերի գրական արժեքները և աստվածանվեր իր տաղանդի ու արցախածին տքնանքի շնորհիվ ներկայացել միանգամայն ինքնատիպ խոսքով: Այստեղից էլ ԱՄՆ «Ուաֆթ» ամսագրի խմբագիր, Քլիվլենդի համալսարանի լեզվաբանության և գրականության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Զոն Գրեիինի անմիջական խոսքը. «Արտեմ Հարությունյանն այն բանաստեղծն է, որին միայն ինքը կարող է իշխել և ղեկավարել, միայն ինքը: Եվ նրա բանաստեղծական տեսիլքն իրական է ու

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 5:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 5:

մարդասիրական»:<sup>1</sup>

\* \* \*

Համաշխարհային գրականության մեջ հայտնի են մի շարք մեծություն-ներ, որոնք իրենց դարաշրջանների իրական պատկերը ներկայացնելու համար դիմել են Աստծուն՝ նրանից հայցելով օգնություն՝ մարդկանց մեղքերը քավելու, չար ու ազահ անհատներին դարձի բերելու, ազգամիջյան ընդհարումների առաջն առնելու, սոցիալական պատշաճ արդարություն հաստատելու միտումով։ Այս առումով հատկանշական է նաև Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» անմահ պոեմը, որն արդեն հնչում է աշխարհի շատ լեզուներով։

Արտեմ Հարությունյանն իր գեղագիտական իդեալի հրամայականով դիմել է ոչ թե Տիրոջը, այլ Նոյին։ Ինչո՞ւ Նոյին։ Ա. Հարությունյանը, ելելով իր ապրած ժամանակաշրջանի քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային, բարոյահոգեբանական խմորումներից, եկել է եզրակացնության, որ Աստծո ստեղծած աշխարհի աղտոտված է, վտանգված, մարդկությունը ծուռ ձանապարհի վրա է, այն փրկել է պետք։ Իսկ Աստծո արարածների առաջին փրկիչը եղել է Աստվածաշնչյան առասպելի հերոս Նոյը, որը կարողացել է Աստծո հրաշքը փրկել ջրհեղեղից։ Բացի դրանից, Նոյ Նահապետի աշխարհափրկիչ խիզախությունը կապված է Արարատ սարի հետ, որը բանաստեղծի ավանդական հայրենիքի խորհրդանիշն է։ Այստեղից էլ այն անմիջական սրտացավությունը, որ Հարությունյանը գեղարվեստական փայլուն հնարանքներով ընդգծել է պոեմում։ Դա, հիրավի, սովորական պոեմ չէ, այլ տագնապից, ցավից, հոյսից ծնված մի ստեղծագործություն, որ խոսում է մարդկության անունից՝ Աստծո սիրով, հանուն նրա հրաշգործության հավերժական տրոփի։

Պարույր Սևակը Գ. Նարեկացու «Մատյանը» համարել է մարդերգություն։ Ա. Հարությունյանի պոեմը ևս կարող ենք համարել Նարեկացու Աղոթքի շարունակություն՝ դարձյալ հանուն մարդու։

Նոյ Նահապետը համաշխարհային աստվածաբանության և գեղարվեստական գրականության հոլոված կերպարներից է։ Սակայն Ա. Հարությունյանի ստեղծագործական աշխարհում Նոյը հանել է նաև ավելի հարազատ գունավորումով։ Պատահական չէ, որ Հայոց պատմահայրը՝ Քերթողահայր Մովսես Խորենացին, հաստատում է, որ Նոյի սերնդից է

<sup>1</sup> Նոյն սեղում, էջ 13։

ծագել հայ ժողովուրդը: Իսկ այդ միտում-փաստը երկրորդական չի կարելի համարել: Մ. Խորենացին հայերին համարում է Նոյի ժառանգներից Հաբեթի շառավիղը: Նա գրում է. «Հաբեթը սերում է Գամերին: Գամերը սերում է Թիրապին: Թիրապը սերում է Թորգոնին: Թորգոնը սերում է Հայկին: Հայկը սերում է Արամանյակին: Արամանյակը սերում է Արամայիսին: Արամայիսը սերում է Ամասիային: Ամասիան սերում է Գեղամին: Գեղամը սերում է Հարմային: Հարման սերում է Արամին: Արամը սերում է Արա Գեղեցիկին»:<sup>1</sup>

Այս թվարկումից հետո Պատմահայրն ավելացնում է. «Եվ որ սա ծշնարիտ է, ոչ ոք թող չկասկածի, որովհետև այս բաները մեզ պատմուն է շատ բաներում վստահելի Աբյուդենոսը»: Ապա շարունակում է, որ Հայկը դուրս եկավ Բելին հակառակորդ և միաժամանակ նրա կյանքին վերջ դնող»:<sup>2</sup>

Միանշանակ կարող ենք եզրակացնել, որ Ա. Հարությունյանը դիմել է Նոյին՝ որպես Փրկիչի, մի կողմից նկատի ունենալով աշխարհի ծուռն ու թերին, մյուս կողմից՝ իր ժողովրդի, նրա պատմական մի մասը կազմող իր ծննդավայր Արցախի Ճակատագիրը: Արյունքում պոեմը վերածվել է համամարդկային ցավի և պոետի՝ սեփական ժողովրդի ազգային տագնապի գեղարվեստական խնդրագրի, որի արժեքը ընդհանրական ու բարձր է՝ ռեալիստական սերուցքի և գեղարվեստական երանգավորման շնորհիվ:

«Նամակ Նոյին կամ հույսի ահազնացում» պոեմը բաղկացած է նախաբանից և 9 մասից: Պոեմը տեսիլքային սկիզբ ունի: Դա տարօրինակ պատմություն է: Նոյն այցելում է բանաստեղծին, այն Նոյը, որ առաջինն է արարել լաստանավը՝ մարդկային ցեղը փրկելու համար: Ուշագրավն այն է, որ հեղինակի նկարագրած տեսիլքը երևացել է Արցախյան շարժմանը նվիրված ցուցից հետո: Հենց առաջին հայացքից սկսվում է մտերմիկ գրուցք բանաստեղծի և Նահապետի միջև:

Ճիշտ է, գրուցք կարծես վերաբերում է Նոյի նախաջրիեղեյան ժամանակաշրջանին, սակայն բանաստեղծի ակնարկներն ընթերցողի առջև բացում են 1988 թվականից սկիզբ առաջ ընթոստության պատկերը: Արցախյան շարժումն այստեղ համեմատվում է ջրհեղեղի նախօրյակի հետ: Չնայած ջրհեղեղը նոր էր սկսվում, ջրի վրա արդեն տմբտմբում էին գաղափարներ, քաղաքներ, հավաքույթներ, անտուն մարդկանց հառաջանքի

<sup>1</sup> Խորենացի Մ., Պատմություն հայոց, Երեւան, 1968, էջ 76:

<sup>2</sup> Հարությունյան Ա., Նշվ. աշխ., Երեւան, 1977, էջ 77:

փղծկուն տոպրակներ: Մյուս կողմից էլ՝ հաօնել էին Հիմալայների պես ցցուն, բյուրոկրատական սեղաններ, ցեղասպանությամբ կնքված թուրքական յարադաններ: Եվ ցավալին այն է, որ այդ ամենի մոտ դատավորների կեղծամներն էին, ուր իշխում է փողը և վխսում են գերեզմանի որդերը:

Բանաստեղծը դիպուկ ընդհանրացումներով վրձնում է ստալինյան նողկալի դարաշրջանը, ուր գնդակահարություններից լայն բացված աչքեր էին, որոնք բացի մարդասպանի ճտքավոր կոշիկներից, ոչինչ չէին տեսնում: Հեղինակն ընդգծում է հարազատի այն զգացումը, որ տածում է Նոյն իր հանդեպ:

Ող աշխարհը թամբել էր ջրհեղեղը՝ ինչպես ծի  
(միակ փրկվելու միջոցը անհուն մեղքերից հետո)  
և շարժվում էր անհայտ Արարատի ուղղությամբ,  
բայց ես դեռ նստած եմ Նոյի տապանից  
սարքած սեղանի մոտ,  
որ Նոյը իսկույն ճամաչեց որպես իրենը  
և կոչ արեց շտապ ճանապարհվել:<sup>1</sup>

Պոեմի առաջին գլխից էլ հենց սկսվում է Նոյի ժամանակաշրջանի ջրհեղեղը հիշեցնող Արցախյան ազգային-ազատագրական պայքարի պատկերումը: Ա. Հարությունյանի յուրաքանչյուր տող ահարկու մի պատկեր է: Իր հույսը կապելով բարի Աստծո հետ, հավատալով Նոյի փրկիչ ուժին ու արարքին՝ բանաստեղծը սյուրտեալիզմի ընձեռած հնարանքներով պատկերում է 20-րդ դարավերջի երկու տասնամյակների փոթորկաշունչ իրողությունները՝ հանդես բերելով երկու հակադիր աշխարհներ: Մի կողմից, թերթերը պատկերում են բարբարոսի ծեռքով մոխրացած մարմիններ, իսկ մյուս կողմից անտարբեր իշխանությունն է, որ ունի իր ուղին ու ուժը: Կարծես աշխարհում ոչ մի չարիք տեղի չի ունեցել և չի էլ ունենում: Ինչո՞ւ,

Որովհետև ցեղասպանությունը դեռ տևում է  
և ծգվում-հասնում մեր օրերը,  
և վիրավոր կատվի համար լաց լինող թրքուիհն  
չի ուզում լսել  
իր թուրք նախնիների կողմից խոշտանգված  
միլիոնավոր հայերի մասին,

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 39:

և ամեն ինչ բարեհաջող է այս աշխարհում,  
և միայն Զոհին է,  
որ անվերջ աղմկում է մեր ներսում՝  
չունենալով ելք ու մուտք։<sup>1</sup>

Ա. Հարությունյանը սովետահայ գրողներից առաջիններից էր, որ խի-  
զախեց ներկայացնելու քաղաքական այն ճնշումներն ու անօրեն արարք-  
ները, որոնց արդյունքում զոհ գնացին միլիոնավոր ազնիվ մարդիկ։ Նա,  
խախտելով ավանդական դարձած յոթանասունամյա գրամարզանքները,  
խիստ խարազանեց ստալինյան դաժանությունները, որ դեռևս  
շարունակվում էին անհատի պաշտամունքի քննադատությունից հետո։  
Նա առաջատար դեր խաղաց գրողների այնպիսի աստղաբույլում, որի  
մեջ մտնում էին Հենրիկ Էդոյանը, Հովհաննես Գրիգորյանը, Արմեն  
Մարտիրոսյանը, Դավիթ Հովհաննեսը, Հովհիկ Հովեյանը և այլք, որոնք  
ժխտեցին կատարվածը։ Ինչպես գրում է ամերիկահայ գրականագետ  
Վեհանուշ Թեքեյանը, նրանք մեծ գործ կատարեցին. «Այս մրոտ ու  
քարոտ տասնամյակներեն ետք՝ վարսունական թուականներուն  
կատարուեցավ էական շրջափոխում մը՝ յայտնուեցավ սերունդ մը՝ որ  
ժխտումն էր կատարուածին, դիմադրեց իր ճակատագրին, թօթափեց  
կաղապարներու բեռը և պատմեց իր ճանչցած օրը, իր ապրած  
ժամանակը, իր մոխիրն ու մեղքը, իր լուսի կաթիլն ու խավարումի  
ծալքերը»։<sup>2</sup>

Հիրավի, ճիշտ դիտարկում։ Ա Հարությունյանի պոեմը անհրաժեշտ է  
արժեքավորել ոչ միայն իր ստեղծագործության տեսադաշտում, այլև  
ամբողջ հայ գրականության համապատկերի վրա։ «Նամակ Նոյին»-ը  
այս առումով իրենից ներկայացնում է որպես սրտի հրկիզում՝ հանուն  
լուսի և արդարության, հանուն մարդու և հասարակության ազատ  
կյանքի։ Արտեմը ափ հանեց ոչ միայն քաղաքական, այլև բարոյական  
քայլայումը, տեսավ ժողովողի դեռևս արնահոսող վերքը, զգաց, որ  
«չարը և բարին» գոտեմարտում են, բակում հոգնած մի Աստված ինչ-որ  
բան է բաժանում երեխաներին և ժպտում։

Բանաստեղծի տեսած իրականությունը փոթորկում է նրա հոգին,  
վերածվում ցասման և իմաստուն խորհրդի.

...Թող Նոյը իմանա, թե ում էր փրկում

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 43։

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 339։

և Ստամբուլ մտնի շքեղ առևտրի համար,  
բայց նախքան այցը թող տեսնի  
հայերի ուկորների ֆուֆորը Ղեր Չորում  
և մյուս ցեղասպան անապատներում,  
թող թերթ առնի և կարդա Արցախի մասին,  
թող մտնի դեղատուն, և սարսափը մեղմող դեղ առնի...<sup>1</sup>

Սակայն ցավը չի մեղմանում: Բանաստեղծը աստիճանավորում է ցասումի պատկերը, և Նոյզ, որպես կերպար, դառնում է պոետի վշտակիրը և արդարության խորհրդանիշը: Այստեղ արդեն բանաստեղծը հայտարարում է իր ազգային պատկանելությունը, խոսում հայի անունից, որի վիշտը ստանում է համամարդկային բնույթը:

Բանաստեղծը ուղղակի ճշում է, որ Նոյզ իրեն չթողնի «այս աշխարհի խելազարանոցում», որ ինքը նոր տապանի տոմս ունի՝ Արարատից մինչև Գրանդ Քենյոն մեկնելու...

Հիասթափված արդի աշխարհի քաղաքական կեղծ գործիչներից՝ բանաստեղծը, հանձին Նահապետի, տեսնում է սպասելիք բարի գործչին.

Նոյ, իմ բարի քաղաքական գործիչ.  
Ես հույսը չունեի քո այցի,  
թույլ տուր հրաժեշտ տալ հարազատներիս,  
Արարատը մոտենում է, իսկ ջուրը՝ բարձրանում,  
ջրերից այն կողմ ոչինչ չեմ տեսնում,  
բայց ես տրամադիր եմ ապրելու,  
Ես պետք է հասնեմ Լեռան այն կողմը,  
որից այն կողմ՝ էլ ոչ մի լեռ:  
Նոյ, ես հրում եմ քո Տապանը դարաբաղյան ամուր  
իմ ուսերով դեպի բաց ջրեր,  
դեպի ջրհեղեղը Նոր Միրո...<sup>2</sup>

Պոեմի կառուցվածքը շիկանում է քնարական հերոսի հույսի ահագնացմամբ, որն առնչվում է աշխարհում տեղի ունեցող երևոյթների վայրիվերո ընթացքին: Իսկ քնարական հերոսը՝ բանաստեղծը, որ հասակ է առել ու հասունացել 20-րդ դարի երկրորդ կեսին, ականատես եղել ան-

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 42:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 42:

հատի պաշտամունքի քննադատությունից հետո դեռևս շարունակվող կոմունիստական տոտոալիտար ծավալումներին ու կեղծիքին, ինչ-որ տեղ հույսեր փայփայել, սակայն հուսախաբվել, ակնկալիքներ պարզել ու համոզվել, որ իր իդեալական կացութաձևը դեռևս հեռու է, շատ է հեռու։ Ուստի այդ եղած-չեղած, կիսատ-պրատ իրական վերափոխումների ալեկոծումների մեջ ձեռքը կարկառել է Նոյին՝ որպես փրկության խորհրդանիշ, որին դեռևս հավատում է։ Ա. Հարությունյանը լավատեսի դեր չի խաղում, նա ձգտում է լավն ու լույսը տեսնել կյանքի ակնկալվող վերափոխումների մեջ, որտեղ Նոյը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, քանզի և Մարդամ Աստվածածինը, և փրկության կարոտ երեխաները, և բանաստեղծն ու նոյնիսկ ինքը՝ Նոյը, դեռևս փորձությունների մեջ են։

*Նոյ, սմունդ և փափուկ բարձեր մեզ պետք չեն,  
չնայած երկուսին ուղին լի է վտանգներով,  
կսնվենք միայն երեխա-զազանների հայացքով,  
որ շուտ են զգում մարդու բարի-չար լինելը,  
և թռչուն կդառնամ՝ եթե նեղացնենք։  
Նոյ, իմ ձեռնարկումը նոյնքան իրական է,  
որքան քո արարումը ազգերի,  
մեր լաստը կդառնա նոր մայրցամաք,  
ուր ամեն ոք կունենա  
երջանկության դրամատնային հաշիկ  
և անմահության կանխավճար...<sup>1</sup>*

Մարդկային-հուսավառ այս խնդրանքը գնալով դաշնում է ազգային ցավի ձիչ, որովհետև բանաստեղծն իրավացիորեն իրեն համարում է մարդկության մի մասնիկը՝ իր ժողովորդի դիմագծով ու ճակատագրի խարանով։ Նա տառապում է, որովհետև «աշխարհը փորձում է երես թեքել հինավորց ազգից», որովհետև մեր հինավորց ու դասական ժողովուրդը չունի «նավի ոչ մի բիծ», որը, ցավոք, հիմնաքար է հանդիսանում չինական ռեստորանում ճաշող նավթի ընկերակցության մեծափոր ջոջերի համար։

Ճշմարտացիորեն ներկայացնելով նենգափոխված ջոջերի աշխարհը՝ բանաստեղծը չի հուսալքվում, նա քաղաքացիական ակտիվ դիրքորոշմամբ պատրաստ է հաղթահարելու կյանքի մամռուտ գայթակղության

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 43:

ժայռերն ու օվկիանոսները, դառնալ բարու և լուսի մարտիկ.

Կմտնեմ ամուր քայլերով ամեն ինչ սրբագործող  
ջրհեղեղից հետո հսկա քաղաքների  
գաղջ հյուրասենյակը  
և մեռնող քավարանատիա արվարձանները  
(ուր խոհանոցը ռազմատենչ լուրերը  
ընտանի դարձմելու միակ վայրն է):<sup>1</sup>

Հավատում է բանաստեղծը, որ Նոյի և իր բիբլիական թռիչքը կարող է ճեղքել և անցնել ռադարները, ճպոտ աչքը և Նիազարա ջրվեժից մարդու բարձր անկումը:

Ա. Հարությունյանի ստեղծած առասպելական ու տեսիլքային պատկերները միև ու արյուն են ստանում՝ առնչվելով տիպական պայմաններում ծփացող իրողություններին: Բանաստեղծը չի խուսափում կոնկրետ վայրերի, երկրների, փողոցների, ընկերությունների անունների նշումից: Դրանով իսկ նա շոշափելի է դարձնում գաղափարների և ճգնումների այն տեսիլքային փունջը, որից և ցավ է արձակվում, և լուս: Նրա զրոյցի մեջ ալիքվում են ջրահարսերի բաժանման կարոտի երգերի թրիխները, երևում են Միսաք Մեծարենցի իրեշտակները, զգացվում է մեր բիբլիական լեռան տանջող քաղցրությունը: Սակայն ցավի ահազնացումն ավարտ չունի: Բանաստեղծը համամարդկային ասպարեզից հետքայով հասնում է իր պապերի մասունք-հողը՝ Արցախ, և ի լուր աշխարհի՝ դիմում Նոյին.

և իրենց ժաղկունքը եւս պահած  
Արցախի լեռնային ծաղիկները կսպասեն,  
որ վտանգը գնա-անցնի,  
ավաղ, ուշ կլինի հետո:  
Չափից շատ հիմա փաթռցավոր ոստիկանական  
շներ կան փողոցում,  
երազիս նրանք պատառոտում էին  
քրիստոնյա մի անօգ կմոց, իսկ օրվա ընթացքում  
հեռուստացույցի վերջին լուրերը ցույց տվին  
պահը  
որպես իրողություն: <sup>2</sup>

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 44:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 44:

Ա. Հարությունյանի պոետական մտածողությունը դառնում է պատկերների հզոր հորձանուտ, որպես Հայոց կորուսայլ հայրենիքը և Հայոց անանցանելի վիշտը ցուցադրող մի կինոնկար: Նրա ներկապնակի երանգները պատրանքի ձևով ցուցադրում են լաստի տակ արտացոլվող արյունոտ կարմիր մի տարածք, որոնք ներկայացնում են հայկական վեց վիլայեթները՝ ներկված ցեղասպանության արյունով: Մի կողմից ազգային ցավը, մյուս կողմից՝ վիեժի զգացումը փոթորկում են քնարական հերոսի հոգին, զգացումն ու ասելիքը իրար են խառնվում, խենթանում է նաև արտաքրում.

*Նոյ, Եթե կարող ես՝  
լաստովդ կանգնեցրու ժամանակը,  
ես իրեշի ատամները պետք է հաշվեմ,  
բայց սպասիր, Նոյ,  
թունավոր մշուշը գնայով խտանում է,  
իսկ փրկության Արարատը չեմ տեսմում:*<sup>1</sup>

Զգացումներն իրար հալածող ալիքների պես հանգիստ չեն առնում, լաստը հակառակ ուղղությամբ է գնում, հեռվում նկատվում է «զինված ազգերի դոփապարը, փոքր ազգերի ոսկորներից սարքած պարահանդեսում»: Բանաստեղծը գտնում է, որ Նոյն ու ինքը սխալ գործեցին, լավ չէ՞ր լինի մետրոյով անցնեին Ճանապարհը նոր սար գտնելու գործում, այլապես կրկին կմնան նույն գերին:

Պոեմի Զ գլխում բանաստեղծը ներկայացնում է խառնաշփոթ մի իրականություն, որտեղ «շուն, կատու և գծեր» են անվերջ, որոնք «ծյուն են ուտում կերակրի փոխարեն»: Սիմվոլիկ պատկերն ընթերցողին տանում է դեպի ռուսական անտառներ, որտեղ սկյուռներն են շարժվում, որպես ջրեղեղից փրկվածներ: Սակայն այստեղ ևս բանաստեղծին հանգիստ չի տալիս իր ժողովրդի դարավոր ցավը, իր նախնիների ավանդական օրրանը, որը ոտքի է ելել վերամիավորվելու մայր Հայաստանին, սակայն նորաթուխ Աղրբեջանը պարտադրել է պատերազմ: Քնարական հերոսի խնդրանքը դառնում է հարազատ որդու տագնապ, օգնության կանչ.

*Նոյ, Եթե կարող ես Արցախը նույնապես  
վերցրու լաստիդ վրա:*

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 45:

Նոյ, ես դարաբաղջի եմ և հուսով եմ՝  
խնդրանքս չես մերժի,  
ապուպապերիս պապերից մեկը,  
ես նկարդ եմ տեսել պապիս իին տան պատին,  
կանաչ դրախտում՝ Շուշիում,  
որ իինա ազատության Տապանն է տիեզերքում,  
չնայած ջրհեղեղը վաղուց է չքվել։<sup>1</sup>

Հետաքրքիրն այն է, որ բանաստեղծը կատարում է մի անցում խնդրողից՝ պահանջատիրոջ և խոսում իենց Արցախի անունից: Նրա այդ խոսքը ինչում է որպես ցասումնալից բողոք ծովածավալ դաժանության դեմ, միաժամանակ հավաստիացնելով, որ ինքն ի վիճակի է «քարքարոտ-մարդատյաց հասարակությանը կանաչապատել օվարթ թթենու շուքով»: Իսկ թթենին Արցախի խորհրդանշն է, մի աշխարհի, որի բանաստեղծ որդին դառնում է մարդկության սրտացավ որդին և ազդարարում.

Նոյ, իինա աշխարհում հազար անգամ ավելի  
մարդ կա, քան թե անձնաթուղթ  
(նոր ջրհեղեղ է սպասվում),  
ավելի շատ բանտ, քան բնակելի շենք,  
ավելի շատ փուշ, քան թե՝ վարդ,  
ավելի շատ սեղզուկատիպ արյունոտ յաթաղան,  
քան եկեղեցի և խաչ,  
ավելի շատ կարկատած ծակ գրպան, քան թե փող։<sup>2</sup>

Եվ այս համապատկերի վրա բանաստեղծ-քնարական հերոսը խոստովանում է իր ներաշխարհը պահել անձեռնմխելի և պայքարել իր վերջնական նպատակի համար:

«Նամակ Նոյին» պոեմը լայն ընդգրկումներ ունի ժամանակի և տարածության առումով: Բանաստեղծի տեսադաշտը հորիզոններ է ծալծալում, միտքը թևածում է երկրագնդի բոլոր ծայրերում, խոսքը շիկացնում է ոչ միայն իր ժողովրդի, այլև ամբողջ մարդկությանը հուզող հիմնախնդիրներից: Երկի է գլխում բանաստեղծն իրեն ներկայացնում է Քիլիլենդի իր գրասենյակում՝ շրջապատված բարձրաձակատ ամերիկացի պրոֆեսորներով», որոնց համար անգիտական իին գրականությունից զատ ուրիշ բան աշխարհում գրյություն չունի»:

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 46:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 47:

Այս պատկերում նկատի է առնվում մարդկության մի մասի անտարբերությունը մյուսի հանդեպ, որը ևս չարիքի աղբյուր է, և որի դեմ ևս մարտնչում է քնարական հերոս՝ չհաշտվելով կրավորական գործի հետ: Բանաստեղծը չի շրջանցում ամերիկյան այն շրջապատը, ուր «ձյան թոնի վրա ավելի սևացած սևամորթ ծեր կանանց տանջվածխորշոնած, բայց հպարտ դեմքեր» են: Ամեն դեպքում բանաստեղծի ուշքն ու միտքը, անանցանելի ցավն իր ազգի ճակատագիրն է, և դա բնական է.

*Նոյ, մենք պետք է դիմանանք ազգի փորձությանը,  
Մեր սրտերում քանի՛-քանի տապաններ կան լողացող,  
Հնայած հոգնած ծովերը նոյն երազն են տեսնում,  
Վիրկված մարդկությունը Արարատի գագաթին:*<sup>1</sup>

Բանաստեղծը ազգայինց կրկին գնում է դեպի համամարդկային ցավի եզերք: Նա, դիմելով Նոյին, ընդգծում է, որ տապան-լաստը բոլորին է, որ լաստի այս ձևը սիրո նշան է զուսպ և ամուր, բայց և այնպես, չի շրջանցում այն հանգամանքը, որ սիրո լաստը բոլորին տանում է դժվար մի աշխարհ, «ուր քամին և ժամանակը միասին են թափառում, ձեռք-ձեռքի տված, ցնցելով հողմացույցը դժբախտության»: Ցավն ու տագնապը չեն մեղմանում, հաշնում են 9-րդ ալիքի ննան: Ահավորն այն է, որ աշխարհում ամեն օր մեկը մյուսին բանտ է նետում, աղավնու պես գիշերը դունդունում են ոստիկանական մեքենաները, բայց առավոտյան դաժան մառախուղն ավելի է խտանում:

Պոեմում ընդգծվում է նաև աշխարհի փրկությանը հայ ժողովորի մասնակցության գաղափարը: Դիմելով Նոյին՝ բանաստեղծ-քնարական հերոսը գոհունակությանը շեշտում է, որ լաստը կապողների մեջ ինքը տեսնում է հայ ընկերներին, որոնք իիմա կռվում են Արցախում: Կամրջելով անցյալը ներկային՝ բանաստեղծը խիստ խարազանում է մեծ պետությունների երես առած զավակներին, որոնք ռազմանավեր են վարում և «ընդունակ են ամեն ինչի», ուստի դեռևս փրկություն է պետք, աշխարհը դեռ ծուռ է.

*...ոչ ոք չուզեց մեզ ճանաչել,  
Արարատը, որ միշտ մեր կողքին էր,  
Հարժվում էր մեզ հետ կամ էլ հայտնպում  
Հեռու-հեռուներում՝ որպես միրաժ,*

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 47:

հանկարծ չքվեց-անհետացավ...<sup>1</sup>

Արարատն այնուիետև համենատվում է Փոքր Մհերի հետ, իսկ նրա ժառանգորդ-բանաստեղծն այսօր պառկում է ծովերի մեջտեղում «և երազում ծովից ծով Հայաստան»:

Դիմելով Նոյին՝ Ա. Հարությունյանը գտել է հայ ժողովրդին հուզող առօրեական խնդիրներն ու հարցերն արտահայտելու հաջող հնարանք, որի անունից հարազատ որորու անմիջականությամբ ներկայացնում է իր ցանկությունը.

*Նոյ, գրիր ինձ մի քանի տոռ  
և վերցրու ինձ Քսանմեկերորդ դարի  
անձնակազմի համար,  
իիշեցրու, որ ես դեռ կամ Մասիսի սառած  
փեշերի մոտ,  
իիշեցրու, որ դեռ կարող եմ քեզ հետ ճամփա ընկանել  
աստոմային ջրհեղեղից հետո,  
Հասցես,-*

*Ջրհեղեղի վիրկիչ-կենտրոն՝ Արարատ,  
Քլիվենդում մի պահ հայտնված,  
անանձնագիր-անգրինքարտ  
(որի համար երեք ամիս աշտարակ-բանտ)՝  
Արտեմ Հարությունյան,  
Ցպահանջ...<sup>2</sup>*

Ա. Հարությունյանի «Նամակ Նոյին» պոեմը իր ազգային-համամարդկային անցած-ներկա ցավերի և տագնապների, կորուստների և ակնկալիքների ինքնատիպ ու հզոր մի պատկեր է, որի արժեքը միշտ դեպի իրեն է ձգելու գալիք սերունդներին...

АРЦАХ В ПОЭМЕ АРТЕМА АРУТИОНЯНА “ПИСЬМО НОЮ”  
Сократ Ханян

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 48:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 49:

## Резюме

В данной статье разобрана и оценена поэма талантливого поэта Артема Арутюняна „Письмо Ною«, которая является новым явлением в мировой поэзии. Подчеркивается, что поэт с одной стороны изображает судьбу Арцаха, с другой - современную жизнь человечества, которая, к сожалению, нарушена в социальных и политических областях.

Обращаясь к Ною, поэт объявляет, что жизнь человечества находится под угрозой, спасателем которого явился сам Ной Патриарх.

Одновременно поэт отмечает, что сам он уроженец Арцаха и готов помочь Ною в деле спасения мира, в том числе и своей отчизны.

### ARTSAKH IN THE NOVEL OF ARTEM HARUTYUNYAN'S “A LETTER FOR NOY”.

Sokrat Khanyan  
Summary

In the given article the poem of a talented poet, Artyom Haroutunyan “A Letter to Noah”, which is a new phenomenon in the world poetry, is discussed and evaluated.

It is pointed out, that the poet describes the fate of Artsakh on the one hand, and the modern life of humanity, which is violated in the social and political spheres - on the other. Addressing Noah, the poet informs the life of humanity is in danger, the savior of which was Noah himself.

At the same time, the poet points out, that he himself is a native of Artsakh and is ready to help Noah to save the world, including his motherland.

## ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԾՐ

(*Ըստ Խաչիկ Ղաշտենցի արձակի*)

Սիրուն Բաղդասարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
ԱրՊՀ

Ավանդույթի ուժը այս ստեղծագործության մեջ գործում է պատմական և բանահյուսական նյութի, կյանքի ու իրականության, ժողովրդական լեզվի ու ասքապատումների բազմաճյուղ և բազմաձայն գեղարվեստական մտածողության շրջանակներում:

Ղաշտենցը պատմում է մի շարք ժողովրդական սովորությունների ու հնուց եկած ավանդությունների մասին: Բայազը գաղթի դժվար ճամփաներով Հայրենիք է հասցնում իրենց ամուսնական բարձր: Այդ մասին Հովհ. Թումանյանն ահա թե ինչ է գրում. «...Եվ ինչպես այսօր կախարդանքների ժամանակ գիր, շորի կտոր, մազ և այլ կախարդական գորություն ունեցող իրեր ու գրեր դնում են բարձի մեջ ու տակ, որ բարձի վրա քննող կախարդովի:»

Հին մեծերն ու իշխաններն ունեին իշխանական բարձեր: Այդ բարձերը նրանց մեծության աստիճանն ու հարգն էին որոշում ու իրանց այս բարձը նշանակությամբ համարվում էին սրբարան, որոնք և պետք է ժամանակի օրինությամբ ու կախարդանքներով կրոնի տեսակետից ապահովված ու գորացած լինեին: Իշխանի բարձը գողանալը նույնն էր, թե գողանալ նրանց գորությունը: Այս է, որ ասել են Գողթան երգիչներն առասպելաբանելով, իբրև թե սիրահարված Սաթենիկը տենչում էր ձեռք բերել Արգամի բարձերից արտախուր խավարտ ու տից խավարծի, այսինքն նրա սերը<sup>1</sup>: Ուրեմն՝ Բայազը, քաջ գիտակցելով բարձի մեծ նշանակությունը, որ այն պատվի, հզորության հավասարագոր, անսովոր առարկա է, մեծ դժվարություններով այն հասցնում է Հայաստան:

«1873 թ. Գ. Սրբանձտյանցը մի գրուց է գրի առել այն մասին, որ ժայռի մեջ, Միերի դռան ետևում է բախտի անիվը: Միերն անդադար հետևում է անիվի պտույտին: Երբ այն կանգ առնի՝ այդ օրը Միերը դուրս կգա զնդանից ու կկործանի աշխարհը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Թումանյանը քննադատ, Երևան, 1939, էջ 31:

<sup>2</sup> «Սասունցի Դավիթ» (հայկական ժող. էպոս), Երևան, 1990, էջ 56:

Հայ ժողովուրդը սպասում է իր բախտի անիվի պտույտին, որի սկիզբն արդեն դրվել է Արցախի գոյամարտի հաղթանակով...

«Խոդեղան» վեպում նկարագրված շատ ավանդություններ կապված են Սասմա ծերի անվան հետ. չէ՞ որ էպոսի հերոսների ծննդավայրը Սասուն է: Օդինակ՝ «Իրիցանքը», որ Սև լեռան նշանավոր վայրերից է, եղել է գառնարած Դավթի սիրած տեղերից մեկը: Ավանդությունը պատմում է, որ իր մի անգամ, Դավթի անտառում մրսելով, մի արևոտ տեղ է փնտրում տաքանալու համար: Հանդիպելով մի արևկող բացատի, բացականչում է. «Եստեղ տաք է, հորեղբայր, իրիցանք (Վառվեցինք): Այդ օրվանից այդ վայրը կոչվել է Իրիցանք:

Ծովասարի անվան բացատրությունն այսպես է բացատրում վիպասանը. լեռան գագաթին մի թասաձև լիճ կար, որի ջուրը վճիտ էր ու մաքուր: Դրա համար էլ կոչվում է Ծովասար:

Արդեն նշել ենք, որ ըստ ավանդության՝ Մուշ անունը կապված է Աստղիկ ոիցուիու հետ, որ լողանալիս մշուշով էր պատում գետն ու դաշտը, որ ծածկվի իրեն տեսնել ցանկացողներից: «Հայոց պատմություն» գրքում կարդում ենք Մշո դաշտի և նրա բնակիչների մասին Վրթանես Փափազյանի գովական խոսքը. «Պետք է տեսնել այս դաշտը, ուսումնասիրել այդ դրախտանան տարածության բնակիչների արգավանդ արդյունքը, ծծել սքանչելի օդը, խմել անուշահամ ջուրը, աչքի առաջ միշտ այստեղ բնակվող ժողովորդի առողջ, պարթև հասակը, լայն թիկունքը, արևակեզ, սակայն հրատոշոր աչքերով գեր դեմքը, նրա տաժանելի կյանքը, նրա ցավերը լսել...»<sup>1</sup>:

Երկում հաճախ է պատահում, որ հերոսները սքանչանում են բնության իրաշագեղությամբ: Առաջին անգամ խոդեղանը տեսնում է, թե ինչպես են սպիտակ մշուշներ փաթաթվում ծառերի կատարներին և սահելով ցած՝ ցնդում: Քիշոն նրան բացատրում է, որ երկի էլի մարդ է գնացել լողացող Աստղիկին տեսնելու: Զարմացած հովվին քիշոն հանգիստ բացատրում է. «Երբ Աստղիկն իմանում է, որ անտարի ծմակներից իրեն մարդիկ են նայում, նա ջրի փրփուրները գունդ-գունդ շպրտում է նրանց երեսին: Եղ փրփուրներն են, որ Սև սարի վրայով գլորվելով՝ հասնում են մինչև Բանաշեն: Մի մասն էլ Մաքնիկի սարով թափվում է Մշո դաշտ» (էջ 83):<sup>2</sup>

<sup>1</sup> Փափազյան Վ., «Հայոց պատմություն», Երևան, 2000, էջ 95:

<sup>2</sup> Դաշտենց Խ., Տխոդեղան, Երևան, 1960:

Հինավուրց այս հավատալիքը ժողովրդի մեջ կենդանի էր երկար դարեր, և վերոհիշյալ «մշուշի» հետ է կապվում Մուշ, Մշո անվանումների բացատրությունը: Մուշ անվան այս բացատրությանը հանդիպել ենք նաև «Տիգրան Մեծ» դրամայում: Գրականագետ Լ. Սկրտչյանը հաստատում է Մուշ անվան այլ բացատրություն. արաբական աղբյուրներում պատմվում է, որ հայոց արքայադուստր Տարոնն ուներ շատ փեսացուներ, բայց սիրահարվում է Սանասարի որդուն՝ Մուշին: Տարոնի հորեղբոր որդին՝ Բակուրը, Մուշի կերպարանքով ներկայանում է Տարոնին և փախսնում, անցնում արաբների կողմը, ընդունում մահմեդականություն և անուսնանալով Տարոնի հետ, նրան էլ ստիպում է Վարվել նույն ձևով:

Թեպետ արաբների հովանավորության տակ Բակուրը լավ կյանք էր վարում, Տարոնը փախչում է նրանից, Վերադառնում հոր մոտ և անցնում քրիստոնեական կյանքին: Որոշ ժամանակ անց Տարոնը ամուսնանում է իր սիրեցյալ Մուշի հետ: Այս վայրերը, ուր նրանք ապրում էին, սկսեցին կոչվել Տարոն, իսկ տեղի գլխավոր քաղաքը՝ Մուշ: Եվ, հավանաբար, այդ քաղաքի մոտ գտնվող դաշտն էլ նույնպես կոչվել է Մուշ:

«Խորեղան» վեպում հիշատակվում է նաև հավատալիքների մասին: Օջախը, թռնիրը հնուց ի վեր պաշտամունքի օբյեկտ է Եղել հայ ընտանիքներում: Հիշենք, թե ինչպես է այրի Ոսկեհատը, Խորեղանի հարսանիքի ժամանակ, նորահարսի և նորափեսայի հետ պտտվում թռնրի շուրջ, որից հետո են միայն նստում հարսանեկան սեղանի շուրջ:

Սակայն որոշ հավատալիքներ թողնում են շինձու, անբնական տպավորություն: Դրանցից է այն, երբ առաջին երեխայի ծնունդից հետո Ոսկեհատը երեք անգամ հարցնում է.

- Ե՞ս եմ թեթև, թե՞ դու:

Բայազը երեք անգամ դրական է պատասխանում, և միայն դրանից հետո է պառավ գեղջկուիին նրան օրինում՝ «թեթևությունով անցնի»: Նման տպավորություն է թռնում նաև այն հավատալիքը, երբ մոր կրծքից արդեն ութ տարեկան երեխային կտրելու համար, եզդի Մստոն խորհուրդ է տալիս. «Քուրո՛ ջան, էդ երեխային պետք է լողացնել Արազի ջրով կամ պետք է նրա հայրը Նեմրութի կողմից եկող մի դուշ բռնի, քերեցիկը հանի տա երեխային՝ ուտի, որ մոր կրծքից կտրվի» (էջ 599):

Նշեցինք որ, «Խորեղան» վեպը անսպառ նյութ կարող է տալ ազգագրությամբ գրավողներին. ազգային սովորություններ, ավանդություն-

ներ, հայկական էպոսի բազում դրվագների հիշատակություններ, ծեսեր, տոներ, անգամ՝ հագուստ, նիստ ու կաց:

Վեպում նկարագրված են նաև մասսայական տեսարաններ: Օրինակ՝ Թարգմանչաց վանքում կազմակերպվող տոնախմբությունները, մրցությունները, Խոդեղանի հարսանիքը, Վարդավառի տոնը և այլն: «Խոդեղանը» որոշ իմաստով կարելի է կոչել նաև ազգագրական վեպ, որտեղ ընթերցողը կգտնի մի յուրահատուկ աշխարհ, մի ժողովուրո՞ւ՝ իր ինքնատիպ ազգային սովորություններով, ապրելակերպով, հասարակական կենցաղով, սասունցիներին բնորոշ հատկություններով:

Այս, ինչ կարծում է հայ անվանի վիճասան Դ. Ղեմիրջյանը վեպ գրողի մասին, Վերաբերում է նաև Ղաշտենցին, որ փայլուն կերպով է իրականացրել իր գրական մտահղացումը: «Իմ կարծիքով՝ գրողը նախօրոք կազմած սիեմաներով չափությունը է առաջնորդվի, նա պարտավոր է նախ խորապես ուսումնասիրել իրեն հետաքրքրող նյութի, թեմայի պատմական ժամանակաշրջանը, փաստերը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, նշանավոր դեմքերը, կենցաղը, սովորույթները, այն ամենը, ինչ կապվում է տվյալ ժամանակաշրջանի հետ: Ապա՝ առաջնորդվելով ռեալիզմի սկզբունքներով, նա պետք է հրապարակ բերի այնպիսի գործ, որը նոր աստիճանի կրաքարացնի գրականությունը և նոյնիսկ պատմությունը: Գրողը պատմություն չպետք է գրի, ինչպես կարծում են որոշ մարդիկ, այլ պետք է պատմության հոգին վեր հանի քեղարվեստական երկի ձևով»<sup>1</sup>:

Ղաշտենցն իր «Խոդեղան» վեպին տվել է էպոսային գույներ՝ այն մոտեցնելով ժողովրդի նոր կյանքի կառուցման ձգտումներին:

«Ղանչպարների կանչը» վեպը մի անգամ ևս ցուցադրեց Ղաշտենցի գեղարվեստական մտածողության ինքնատիպությունը: Նրա տաղանդի ուժը ամենից առաջ պետք է փնտրել ժողովրդի սրտում, նրա էթնիկական հոգեբանության և բնաշխարհի խոր ինացության մեջ, որոնք ուժեղ նստվածքներ են տալիս նրա կերպարների ներաշխարհում՝ պայմանավորելով նրանց բնականությունն ու ամբողջականությունը: Վիպասան ընթերցելիս, թվում է, թե գործ ունենք աշխարհագրագետ գիտնականի հետ, ով ուսումնասիրել, դասդասել, անգիր է արել տվյալ տեղանքի քարտեզը, աշխարհագրական անունները, որպեսզի մանրամասն

<sup>1</sup> «Հրական ստեղծագործության վերլուծության ուղիները և սկզբունքները», Երևան, 1983, էջ 323:

Աերկայացնի իր ունկնդիրներին՝ բաց չքողմելով ոչ մի մանրութ, ոչ մի ձոր ու վանք, սար ու գյուղ, դաշտ ու բարձունք. «Ամեն սարի ու սարավանդի վրա մի բերդ կամ բերդամրոց կար: Մշո հովտի վրա շինված էր Մուշեղի բերդը: Մոկնաց հովտի մեջ երևում էր Մոկնաց բերդի ավերակները: Ավարտինջի մոտ՝ Պստիկ բերդը: Բերդակի դաշտահովտի մեջ՝ Խասպուղի վերևում՝ խոյանում է առեղծվածային Սմբատաբերդը» (Էջ 35):<sup>1</sup>

Սասմա մարդիկ դիմացկուն ու կորովի, քաջ են ու դյուցազնական: Կարծես՝ այդպիսին են նաև ջրերը: Ավանդավեպը պատմում է, որ Սասմա գետին դիմանալու համար ամուր կամուրջ էր պետք շինել: Հայտնի վարպետ Բաթմանը մի քանի անգամ կառուցում է, բայց կամուրջը չի դիմանում Մարաթուկից ու Ծովասարից սկիզբ առնող գետի հովանում: Բաթմանին երազում երևում է մի ծերունի և խորհուրդ է տալիս, որ եթե ուզում է, որ իր շինած կամուրջն ամուր լինի, առավոտյան առաջին հանդիպած շնչավորին դնի հիմքում և որմը նրա վրա շարի: Առավոտյան Բաթմանին հանդիպում է սիրած կինը՝ Փրեշան՝ կերակուրը ծերքին: Տիսրում է Բաթմանը: Կինը հարցնում է տիսրության պատճառը, և վարպետը պատմում է տեսած երազը: Կինն ասում է. «Մահը մահ է, շինի՛ք կամուրջը»: Բաթմանը կնոջը դնում է շինվածքի հիմքում և պատը շարում: Իսկ երբ կամուրջը պատրաստ էր, ինքն էլ է նետվում ջուրը: Այդ օրվանից կառույցը կոչվում է Փրե-Բաթմանի կամուրջ՝ վարպետի և իր կնոջ անունով: Հայ ժողովրդական էպոսում նույնաես փոքր Միերը դեռ պատանի կամուրջներ էր շինում:

Բնության մեջ յուրաքանչյուր բերդ, ջրվեժ, կամուրջ, գյուղ ունի իր անունը, իսկ անուններն էլ՝ իրենց բացատրությունները. «Մի խով ու խոր շառաչ է գալիս Զանգակ սարի կողմից: Ես այդ ծայնը առել էի Բարձորի տակով անցնելիս: Որքան մոտեցա Կարմիր ծառին, այնքան այդ գոռողը ուժեղացավ: Վերջում հիշեցի, որ դա Գուռգուռա կոչվող ջրվեժի գոռոցն է Արածանու վրա՝ Խոզմոն սարի տակ, որի թնդյունը լսելի էր շատ հեռուներից, մանավանդ՝ պարզկա գիշերներին և վաղ առավոտյան: Արաբոն նրա մասին ասում էր. «Եղոր համար կըսեն Գուռգուռ, որովհետև ձեն կիտա ու իր ձեն երեք օրվա ձամփա կերթա» (Էջ 39):

Ստեղծագործության պատանի հերոսը ինչ ձանապարհներով որ անցնում է՝ գրողը հանձարեղ իրագեկությամբ նկարագրում է ուղին.

<sup>1</sup> Դաշտենց Խ, Ռանչպարների կանչը, Երևան, 1984:

«Միայն մի տեղ կանգ առա. այդ Սողոմոն էր, հօչակված իր սոխով և անուշահամ շաղամով։ Այդ գյուղի մոտակայքում իմ հայրենի քաղաքի գետակը գալիս միանում էր Մեղրագետի ջրերին։ Այդտեղ հասնելով՝ նա սպառում էր իր կյանքը՝ խառնվելով ավելի մեծին, դարձնալով անձանաչելի ու անընթացնելի։

Իմ կյանքն էլ այդ գետակի նման էր։

Ես գնում էի դեպի Խար՝ հեռանալով իմ ծննդավայրից և խառնվելով ավելի մեծին ու անձանորին։ Եվ, արդյոք, երբեկցե վերադարձ կլինե՞ր դեպի Մուշ» (էջ 41)։ Կամ՝ «Շեկ Դավիթը Մանազկերտի լեռների միջով մեզ առաջնորդեց դեպի Զեռնակի լանջերը... Մոտենում ենք Կայենի ծառերին և Աբելի աղբյուրին... Գիշերով հասանք Խաչմելիք գյուղի տակ» (էջ 210)։

Դաշտենցը ոչ միայն գիտե տեղանքը, այլև անունների ծագման վերաբերյալ ավանդությունները։ «Լսել էի, որ այսուցիները զվարք ժողովուրդ են, ունեն ձկուն խելք և առատ գինի։ Որ առաքյալներից մեկը առաջին անգամ այդտեղ հասնելով և այդ վայրի գինին խմելով՝ բացականչել է. «Այլ ո՞ւր երթանք, եղբայր, սրանից էլ լավ տե՞ղ», և այդ օրվանից այդ գյուղի անունը մնացել է Այլուր, որից հետո աղավաղվելով՝ դարձել է Ալուր կամ Այլուր» (էջ 194)։

Ազգային ավանդույթը, աշխարհագրական միջավայրի զգացողությունը, ժողովրդի կենսամտածողությունից եկող բնության պաշտամունքը մի ուրույն դրսնորում ունի «Ուանչպարների կանչը» վեպում։ «Նեմրութ լեռան տիրակալը մի անբարտավան իշխան է եղել։ Նա թրով հարձակվել է աստծո վրա, որ նրան հաղթի և իրեն հայտարարի աստված։ Գոռոզ իշխանը Վանա ծովի ավազները ուղտերին բարձած բերել է տալիս դեպի Նեմրութ, որ իր գահը բարձրացնի, երկինք հասնի և թրի մի հարվածով վայր գլորի աստծուն ու նստի նրա տեղը։ Երկնավորը, զայրացած, իշխանի ավազով բերնված ուղտերի քարավանը քարացնում է դեպի Շամիրամ գյուղը շարժվելու ձանապարհին, իսկ Նեմրութին անիծելով՝ որոտմունքով ցցում է հիմքից, գագաթի քարաժայթերն ու փոշին շպրտելով ստորոտների վրա և տեղը գոյացնելով մի հսկայական փոս, որից մինչև այսօր դեղին գոլորշիներ են բարձրանում» (էջ 42)։ «Ուանչպարների կանչի» նյութը ավանդական է, ինչպես բնության ինքնակրկնվող տարերքը, բայց և նոր, ինչպես նոր բացվող օրը, ինչպես սպասված ամեն մի կատարյալ հերոսապատում։

## ТРАДИЦИИ, ОБЫЧАИ И ИСТОРИЧЕСКИЕ МЕСТА

Сиран Багдасарян

Резюме

В статье рассматриваются упоминания, которые нашли свое место в прозе Хачика Даштенца, который рассказывает о традициях, обычаях и исторических местах.

Будучи писателем исторического типа Даштенц своей прозой представился как эстет, который прекрасно описывает страну Сасун, его разговоры и его знаменитые имена. Подчеркивается, что национальные традиции, места, чувства и взгляды людей, защита природы по разному отражаются в работе Даштенца.

## TRADITIONS , HABITS AND HISTORICAL PLACES. (ACCORDING TO KHACHIK DASHTENTS' PROSE)

Sirun Baghdasaryan

Summary

In article is observed and examined the mentions which had taken place in the prose of Khachik Dashtents which told about traditions, habits and historical places.

But detailed analysis of this work has brought us to the conclusion that "Mystery of Karabagh" contains diversive historical documents concerning the periods of Artsakh peoples` struggle against Persian invasions in the XIX and in the beginning of the XX centuries; historical, and other interpretations of Russian-Armenian-Artsakh relationships; opens and elucidates the development of the scientific thought in Artsakh.

Thus, the material under investigation provides a modern and scientific view point.

## «ԶՐԱԲԵՐԴ» ԱՄՌՈՑՈ

Սլավա Սարգսյան

ԼՂՀ

Հնուց ի վեր Թարթառի հովիտը եւ այն շրջափակող անտառապատ ու բարձրաբերձ լեռնալանջերը (Մռավ լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թթղի եւ Թարթառ գետերի ծախս եւ Կուրակ գետակի աջ ափերի մեջ)<sup>1</sup> կազմել են Արցախ նահանգի Մեծկուենք (Մեծկողմանք) գավառը:

Հնագիտական հետազոտությունները վկայում են, որ մարդն այստեղ ապրել ու ստեղծագործել է հնագույն ժամանակներից: Այն Հայաստանի ամենախիտ բնակեցված վայրերից էր: Հայտնի է նաև, որ հետագայում, մասնավորապես արարական տիրապետության ընթացքում, Մեծկուենքը ընդգրկվում է առեւտրական ակտիվ գործառնության ոլորտի մեջ եւ Դվին-Պարտավ տարանցիկ առեւտրական ճանապարհով, որի վրա ստեղծվել էին մի շարք կայաններ, այդ թվում Հարերքի եւ Կաղանկատույքի կայանները<sup>2</sup>, կապվում էր Հայաստանի կենտրոնական շրջաններին:

<sup>1</sup> Բարիստարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 24:

<sup>2</sup> Մանանյան Հ. Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեյտինգերյան քարտեզի, Երեւան, 1936, էջ 202:

Գավառի պաշտպանությունը կազմակերպվում էր մի շարք հենակետերի միջոցով, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Զրաբերդ՝ միջնադարյան Հայաստանի ամենահզոր ամրոցներից մեկը:

Զրաբերդ լիակատար եւ համակողմանի ուսումնավորության չի ենթարկվել: Ամրոցի մասին ամենավաղ հիշատակությունը վերաբերում է Խաչեն ներխուժած խազարների 620-ական թվականների վերջերի ասպատակություններին եւ դրանց դեմ Աղվանից կաթողիկոս Վիրոյի ձեռնարկած միջոցառումներին, որի մասին հաղորդում է Մ. Կաղանկատվացին՝ մանրակրկիտ նկարագրելով վայրենասուն ու թափառական ծիավորների պատճառած սարսավիներն ու վայրագությունները:<sup>1</sup> Կողք-ազարակ կոչված գյուղից փախչելով Զարաբերդ (Զրաբերդ) ամրոցը՝ Աղվանից կաթողիկոսն իր շուրջն է հավաքում «...զամենայն գլխավորս զորդիս թագաւորազանց մեծաց աշխարհիս, զգաւառապետս եւ զգիլապետս, զերիցուն եւ զսարկաւագուն եւ զդայիրս...»<sup>2</sup>, որ ամենքը բերեն իրենց հարստությունները՝ ոսկի, արժաք, հագուստներ եւ այլն, որպեսզի դրանցով հնարավոր լինի կաշառել անագորույն թշնամուն<sup>3</sup> եւ երկիրը զերծ պահել նախճիրներից:

Ուտիի դաշտում բանակած խազարների զորակրամանատար Շաթը, ընդունելով նվերները, խոստանում է չասպատակել Հայոց Արեւելից Կողմանքը եւ գերիներին շնորհել ազատություն<sup>4</sup>:

Ամրոցը հիշատակվում է նաև Կ. Գանձակեցու<sup>5</sup>, Ստ. Օրբելյանի<sup>6</sup> պատմություններում:

Խնդրին անդրադարձել են նաև Ղ. Ալիշանը<sup>7</sup>, Հ. Հյուբշնանը<sup>8</sup>, Մ. Բարխուտարեանցը<sup>9</sup>, Լեռն<sup>10</sup>, Հ. Մանանյանը<sup>11</sup>, Բ. Ուլուբարյանը<sup>12</sup> եւ ուրիշներ:

<sup>1</sup> Կաղանկատվացի Մ. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983, էջ 156-158: Ուղուարյան Բ., Դրվագներ Հայոց արեւելից կրողմանց պատմության, Երեւան, 1981, էջ 206-233:

<sup>2</sup> Կաղանկատվացի Մ., էջ 157:

<sup>3</sup> Լեռ, Հայոց Պատմություն, հ. 2, Երեւան, 1967, էջ 262:

<sup>4</sup> Արմամաօ Մ., Օչերկ ծրեանեաց աշխարհագրական պատմության, Լենինգրած, 1936, էջ 62-63:

<sup>5</sup> Գանձակեցի Կ., Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 359:

<sup>6</sup> Օրբելյան Ստ., Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 392:

<sup>7</sup> Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 387, նույնի՝ Արցախ, «Քազմակեա», 1988, N 1-4, էջ 253:

<sup>8</sup> Հիհրշման Հ., Հին Հայոց Տեղիոյ անունները, Վիեննա, 1907, էջ 397:

<sup>9</sup> Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 240:

<sup>10</sup> Լեռ, Հայ հերոսներ. Զրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը, Երեւան, 1920, էջ 5-24, Վերջին վերքեր, մաս 1-ին, Թիֆլիս, 1891, էջ 13-16, Իմ հիշատակարանը, Ծուշի, 1890, էջ 252-264:

<sup>11</sup> Մանանյան Հ., Երկեր, հ. 9, Երեւան, 1977, էջ 153, 230:

<sup>12</sup> Ուղուարյան Բ., Խաչենի հշխանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 119, 120, 190, 400:

Այսուհանդերձ, VII դ. կեսերից մինչեւ XI դ. Զրաբերդը չի հիշվում մեր պատմության մեջ: Եթե XI դ. երկրորդ կեսից Արցախն ընկնում է սելջուկ - թուրքերի տիրապետության տակ, Զրաբերդը, այլ ամրոցների հետ անցնում է Գանձակի գավառի թուրքմենների հսկողության տակ<sup>1</sup>, որոնց գլխավորում էր Խուլհուլիտին: Վերջինս, նպատակ հետապնդելով ընդարձակելու իր տիրապետության սահմանները, հարձակումներ է գործում Արցախի ամրությունների, այդ թվում Զրաբերդի վրա (1142թ.): 1143- 44թթ. Խաչենի կողմերն է ասպատակում Չավլի ամիրան, որը գրավում է ամրոցները, քանդում Եկեղեցիները, այրում վանքերը<sup>2</sup>: Ս. Անեցին նույն անցքերի մասին գրում է, որ. «Ոճևե. ի ՇՂԲ. ամին Չոլի առնու զամուրսն Խաչենոյ Խաբէութեամբ եւ Երդմամբ յինքն յանկուցանելով զսիրտս իշխանացն...»<sup>3</sup>: Նույն փաստն է Երկրորդում նաեւ Մ. Այրիվանեցին<sup>4</sup>: Սելջուկ ցեղախմբերը հայկական գյուղերն ու տարածքները նվազում էին ինչպես բռնությամբ, այնպես էլ խնամիական կապերի միջոցով:<sup>5</sup> 1147-48 թթ. Խոխանաբերդի իշխան Գրիգորին փեսայացել էր «որդի Դարին Տալդան անուն, իշխան աշխարհին Ճառաբերդոյ եւ նորին դղեակին...»<sup>6</sup>, որն այնքան էր անբարտավան դարձել, որ ցանկանում էր գրավել նաեւ շրջակա գավառները: Սակայն Տողանը իր նպատակներն իրագործելու համար պետք է հաղթահարեր որդու՝ սելջուկ մեծ սուլթան Չախր-շահի ընդդիմությունը, որը հաստատվել էր Զրաբերդի մասուցներում եւ ձգտում էր իրեն ենթարկել եւ հարկատու դարձնել հորն ու նրա աներոցը:<sup>7</sup>

Սկսած XII դ. կեսերից, Արցախ երկրամասը հակասելուկյան պայքարի մեջ էր, իսկ դարավերջին՝ գործուն դեր էր կատարում Զաքարյան իշխանների ռազմա-քաղաքական ձեռնարկումներում<sup>8</sup>: Ինչպես վկայում են աղբյուրները<sup>9</sup>, 1211-12թթ. Զաքարյան իշխանները մեծ ջանքերի գնով սելջուկ թուրքերից ազատագրեցին Հայոց երկրները՝ Արանից մինչեւ Ներքին Բասեն, Բարկուշատից Մժնկերտ, որոնց մեջ էին

<sup>1</sup> Մանանդաց Հ., Եղիշե, ի, գ, էջ 106-107:

<sup>2</sup> Ալիշան Դ., Հայապատում, էջ 386: Մեկ այլ արթիրով Դ. Ալիշանը (Աղօսին, «Բազմավեպ», 1988, N 1-4, էջ 269) նշում է, որ Զալիխ կրկին անգամ հարծակվերով (1146-47թթ. – U. U.) «զամրոցն ոչ կարոց առնուլ, բայց զգաւառն զամնայն իսպառ աւերեր»:

<sup>3</sup> Անեղի Ս., Հայաբնունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 132:

<sup>4</sup> Այրիվանեցի Մ., Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 63:

<sup>5</sup> Ուղարքայան Բ., Խաչենի իշխանությունը, էջ 120:

<sup>6</sup> Ալիշան Դ, Հայապատում, էջ 387, նույնի Արցախ, «Բազմավեպ», էջ 253-254.

<sup>7</sup> Ուլուբարյան Բ., Խաչենի իշխանությունը, էջ 120:

<sup>8</sup> Ուղարքյան Բ., Խաչենի իշխանությունը, էջ 124:

<sup>9</sup> በየተገኘው ሁሉ, እንደሆነ, ተጋ 391-392:

նաեւ Գարդմանը, Պարտավն ու Զրաբերդը: Սակայն, թուրք սուլթան Զալալ-ադ-Ղինի (1227- 30թթ.), իսկ հետո՝ մոնղոլական արշավանքների հետեւանքով հայկական իշխանությունների հետագա ճակատագիրը ստացավ նոր ընթացք: Զրաբերդն ընկավ սկզբում Զալալ-ադ-Ղինի, իսկ հետո՝ մոնղոլների իշխանության ներքո: Զալալ-ադ-Ղինի անձնական քարտուղար ան-Նասավի մի տեղեկությունից պարզվում է, որ սուլթանը Զրաբերդում ամրոցի վալի Սախիլան Սալուկբեկի միջոցով ծերբակալում է իր իսկ զորահրամանատար Շարաֆ ալ-Մուկքին, որի հետ սրվել էին հարաբերությունները՝ կապված հատկապես գանձատան գումարների շռայլումների հետ:<sup>1</sup>

Զրաբերդը ակնարկվում է նաեւ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում, երբ իր հայրենական իշխանության սահմանները վերականգնելու նպատակով 1246թ. Բաթուի եւ նրա որդի Սարթախի մոտ մեկնեց ներքին Խաչենի Հասան Զալալ իշխանը: Վերջինին ընդունեցին մեծարանքով եւ հրամայեցին վերադարձնել հայրենական կալվածքները՝ «իւր զԶարաբերդ եւ զԱկանա եւ զԿարկառն»<sup>2</sup>, որ առաջներում խլել էին թուրքերը<sup>3</sup>:

XVI դ. հայ ժողովրդին բերեց նոր ու դաժան փորձություններ: Պարսկաստանն ու Օսմանյան Թուրքիան միմյանց դեմ պատերազմներ էին մղում, որոնց թատերաբեմը Հայաստանն էր:

1557թ. օսմանյան զորքերը մտնում են Զրաբերդ գավառի դաշտաբերանի գյուղերը<sup>4</sup>, որտեղ հանդիպելով հայերի լուրջ դիմադրությանը, տալիս են 700 զոհ:<sup>5</sup> Թուրք-պարսկական պատերազմը հայոց հողի վրա վերսկսվում է Մուհամմեդ Խուլդարանդայի՝ 1578թ. պարսից շահ հրչակվելուց հետո: 1579թ. թուրք արյունարբու զորապետներից Օսման Յուզեմիրը, հավաքելով կովկասյան ավարառու լեռնականներին, ասպատակ սփրեց Գանձակից մինչեւ Պարտավ ու Զրաբերդ, Խաչենից Վարանդա եւ Ղիզակ, ընդհուար մինչեւ Արաքս գետը, գերելով ու կոտորելով բազմաթիվ անմեղ մարդկանց:<sup>6</sup>

<sup>1</sup> Шихаб ад –Дин Мухаммад ан–Насави, Жизнеописание султана Джалал ад –Дина Манкбурны, Баку, 1973, էջ 276, 280-281:

<sup>2</sup> Գանձակեցի Կ., Պատմութին Հայոց, էջ 359:

<sup>3</sup> Սոյն տեղում:

<sup>4</sup> Բարիսուտարեանց Ս., Պատմութին Աղուանից, Բ, Թիֆլիս, 1907, էջ 23:

<sup>5</sup> Բարիսուտարեանց Ս., Արցախ, էջ 213-214:

<sup>6</sup> Ղավիթեցի Ա., Պատմութին, Վաղարշապատ, 1896, էջ 608, Ս. Զամյանց, Հայոց

Պատմություն, Գ, էջ 530-531, Վ. Հակոբյան, Սանր ժամանակագրություններ, հ. 2, Երեւան, 1956, էջ 242, 252, Սատենարարան, ծեր. 173, էջ 95 ա:

Այս դեպքերից հետո, Վերջին դարերում, իին նախարարական տների փոխարեն ասպարեզ եկան մելիքները, որոնց իրավասությունները կանոնակարգվեց Շահ Արասի ժամանակ (1603թ.): Այլասեռ ժողովուրդներին իրենց ներկայացուցիչների միջոցով կառավարելու նպատակով շահը հայ իշխանների մեջ հաստատեց «Մելիք» տիտղոսը՝ վարձահատույց լինելով այն ծառայությանը, որ կատարեցին հայերը օսմանյան թուրքերի դեմ մղված կրիվներում: Արցախի իինգ մելիքություններից մեկը՝ Զբարերդի մելիքությունն էր, ուր իշխում էին Մելիք-Խորայելյանները: Մելիք Խորայելի որդի Եսային 1687թ. ջարդում է խանական զորքերին, գրավում Կուանք կոչվող ձորը, ինչպես նաև՝ Ոմբոստյան լեռներից մինչեւ Դյուտական գյուղը:<sup>1</sup>

XVIII դ. սկզբներից սկսած՝ Ղարաբաղի մելիքները պայքարում են թթափելու պարսից լուծը եւ հիմնելու անկախ պետություն։ Այս ժամանակ-ներից էլ սկիզբ է առնում հայ ժողովրդի պատմության ազատագրական շարժումների նոր ժամանակաշրջանը։ Ղարի 20-ական թվականներին ակտիվացան նաեւ Օսմանյան թուրքերը, որոնք, տեսնելով ռուսների առաջխաղացունը իրենց սահմանների նոտակայքում<sup>2</sup> եւ քաջատեղյակ լինելով Պետրոս Առաջինի աշխարհակալական ծգություններին, իրենց հերթին գրավեցին սահմանակից պարսկական նահանգները եւ մոտեցան Ղարաբաղի մելիքների տարածքներին, որոնց սպառնում էր նաեւ լեզգիների եւ պարսից խաների հարձակումների վտանգը։ Թշնամու դեմ պայքարելու եւ երկիրը զինված հարձակումներից զերծ պահելու նպատակով Զրաբերդի եւ Պարտավի հայ զորահրամանատարները իրենց պաշտպանական ամրությունները դարձրին հենակետային կենտրոններ։<sup>3</sup>

1722թ. ապրիլի 20-ին լեզգի լեռնականները «... ի Կարկառ գետոյն մինչեւ ի Դըրդուական գետն եւ յերկիրն Չարաբերդու, միահաղոյն ասպատակ սփրեցան ընդ լերինս եւ ընդդաշտու»:<sup>4</sup> Գերելով ու թալանելով բնակչությանը ավարառուները «բանակեցան ի Վերայ գետոյն Դըրդու, զոր այժմ թարթառ կոչեմք... ի Վերայ կամորթին, որ Ղառի-քօրփի ասեն»:<sup>5</sup>

<sup>1</sup> Րաֆֆի, Խամսայի մելիքություններ, հ. 10, Երեւան, 1959, էջ 175:

<sup>2</sup> 1722-23թք. ռուսները նկածեցին մերձկասլյան պարսկական տիրույթները՝ Ղերբենտը, Գիլանը, Բարուն եւ այլն:

<sup>3</sup> Армяно-русские отношения в первой трети XVIII в., т. 2, ч. 1, Ереван, 1964, введение XXXIX.

<sup>4</sup> Παπαδημητής Λαζαρίδης Κωνσταντίνος, «Η περιόδος της αναγέννησης στην Ελλάδα», σε Συλλογή Αρθρών για την Επανάσταση της Ελλάδας, Βιβλιοθήκη της Εθνικής Βιβλιοθήκης, Αθήνα, 1989, σ. 11-12.

*N 1-4, t2 200-201:*  
§ 1 o f o r m e § 1 o f 17-20 (Quelle: [www.law-expert.de](http://www.law-expert.de) - Urheber: U. H.)

Սակայն լեզգիները «ոչ կարացին այնքան վճարել երկրին Չարաբերդու եւ Պարտայու... Քանզի նոքա յառաջազգած լեալ ի յամուր տեղիս լերանց հիրեանց ամրացեալք էին, մանաւանդ թե երիտասարդը ոմանք ընդդիմանային եւս, որ եւ զբագումս հարին ի թշնամեացն»:<sup>1</sup>

XVIII դ. 20-ական թվականներին (մասնավորապես 1722թ. դեկտեմբերին) հայ ինքնապաշտպանական ուժերը Զրաբերդի մելիքներ Սարգսի Եւ Շիրվանի, Գյուլիստանի մելիք Եսայի հարյուրաբետի, իմազես նաև Գանձակի մելիք Հովսեփի գլխավորությամբ պայքարում են ոչ միայն լեզգի լեռնականների, այլև թուրքերի դեմ՝ պաշտպանելով Ղարաբաղի մատուցները Շամախու թուրքերի առաջնորդ Հաջի Ղաուդի գորախմբերից:<sup>2</sup> Պարբերաբար կրկնվող թշնամական գործողություններին վերջ տալու նպատակով 1723թ. մարտին Գանձասարի Ներսես Կաթողիկոսը նամակ է հղում Պետրոս Մեծին<sup>3</sup>, խնդրում օգնել եւ հայ քրիստոնյա ազգն ազատել մահմեդական նվաճողներից: Նույն թվականին Պետրոս Առաջինին են դիմել Ղարաբաղի չորս մելիքները (այդ թվում՝ Զրաբերդի) եւ խնդրել օգնություն՝ լեզգիների եւ թուրքերի դեմ մղվող չկանխվող պայքարում. «Ժ եւ մեկ տարի է, որ երկիրս Աղուանից գերի է ծեռս լազգուց, նոքայ կոտորելին եւ եսիրն տանելին, եւս մնացածն տեղոյս թռնակալաց թուրքերն այրելով... հարկս բահանջին, ամենն թախտու թայան լափշտակ էին»:<sup>4</sup>

1724թ. հունիսին, ռուս-թուրքական պայմանագրի կնքումից հետո, թուրքերը, հարմար պահ ընտրելով, գրավեցին Լոռին, Թիֆլիսը, Ղազախը եւ այլ շրջաններ ու մտան Գանձակ։ Ղարաբաղի իշխանությունները մերժեցին հպատակության մասին Ումար փաշայի սպառնալից դիմումը եւ թուրքական հրամանատարությունը գործերը շարժեց Արցախի վրա (1725թ. գարուն)։<sup>5</sup> Մելիքները դարավոր թշնամու դեմ միասնական ձական ստեղծեցին։ Ինքնապաշտպանությունն ու հայ ժողովրդի ազատագրական պայքարը, ընդհուած մինչեւ 1729թ., դեկավարում էր Ավան հարյուրապետությունը։<sup>6</sup> Մեծ աշխատանք են կատարում Եսայի կաթողիկոսն ու Իվան Կարապետը, որո գարի կողմից Ղարաբաղ էր ուղարկվել ուրեմն 1723թ. ուկտեմբերին։<sup>7</sup>

### **ԴԱՏԱԿԱՆ ՄԵԽԱՆԻՍՄԸ:**

<sup>2</sup> Армяно – русские отношения ..., 8. 2, ч. 2, дршշը, 1967, ԴՏՍ. 177, էջ 29:

<sup>3</sup> Эзов Г., Сношения Петра Великого с армянским народом, СПБ, док. 221, лл. 344-345.

<sup>4</sup> Արևի սեպուհ. էջ 341:

<sup>5</sup> Ընդհանուր է, թշ 347.

<sup>6</sup> Արքահայան Ա, Առ Էջ Ամդրկովկասի ժողովուրդների եւ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, էջ 114, 116:

<sup>6</sup> Армяно – русские отношения во второй тридцатилетии XVIII в., т. 3, ч. 2, Ереван, 1978, § 3, 358.

<sup>7</sup> Աբրահամյան Ա., Աշվ. աշխ., էջ 32:

1726թ. ընթացքում Ղարաբաղի բնակչությունը շարունակում էր պայքարը թուրքերի դեմ:<sup>1</sup> 1726թ. գարնանը թուրքերը հարձակվեցին Խաչենի Եւ Զրաբերդի հայկական գյուղերի վրա, բայց պարտություն կրեցին: Ավան Եւ Օհան հարյուրապետների 1726թ. նոյեմբերի 14-ի՝ ռուսական արքունիքին հղած նամակից<sup>2</sup> պարզվում է, որ օսմանյան բանակը Սարու-Մուստաֆա փաշայի գլխավորությամբ հարձակվելով իրենց վիճախների վրա՝ պարտություն է կրում: Թուրքերը տալիս են 800 զոհ Եւ, ծանր հակահարված ստանալով, նահանջում Գանձակ:

Այդուհանդերձ, ուժերն անհավասար էին Եւ մելիքները Եսայի Հասան Զալայանի գլխավորությամբ, նամակով դիմում են վրաց Վախրանց թագավորին, խնդրում արագացնել սպասվելիք օգնությունը: Դիմումի մեջ նշվում է, որ թուրքերը «հիմա տուս են Եկել մեզ Վերայ կրիւ Են անում: Ինչպես որ յունիս ամսոյ Ժ (10)-ումն Գանջու դոշումն (Գանձակի թուրքական զորքը-Ս. Ս.) Եկին Խաչինու վերայ՝ Ղազանչի, Ղապարթու, Չանկաթաղ անուն գեղարանքն չափմիշ արիմ՝ կոտորեցին, Եսիր ապրանքն տարան: Մենք Էլ տուս Եկինք նոցա վերայ, աստուծով, կոխեցինք, կոտորեցինք Եսիրն, ապրանքն թափեցինք, փախցրինք. Էլ նոր շատունք գալու Են մեզ Վերայ...»:<sup>3</sup>

Չորս օր հետո, չափասելով վրաց թագավորի պատասխանին, Եսայի Հասան Զալայանը դիմում է իվան Կարապետին Եւ նրան հասկանալ տալիս, որ ինքը, Եկնելով Ղարաբաղի բնակչության ֆիզիկական գոյությունը պահպանելու շահերից, ստիպված է հրաժարվել թուրք թռագրավիչներին դիմադրելուց<sup>4</sup>, քանի որ իրեն հայտնի է դարձել, որ համաձայն Կոնստանդնուպոլիսի՝ ռուս-թուրքական դաշնագրի, Երկու տերությունների միջեւ անցկացվող սահմանազատման գժի հաստատման նպատակով, Շամախում արդեն հանդիպել են ռուսական (Ալեքսանդր Ռումյանցեր) Եւ թուրքական (Հաջի Մուստաֆա փաշա) ներկայացուցիչները:<sup>5</sup>

1727թ. թուրքերը նվաճում են Ղարաբաղը: Զրաբերդի մի հիշատակարանում կարդում ենք. «Մեր Երկիրը օսմանցիների իշխանության տակ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 122:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 257: № 76 փաստաթուրք Եւ էջ 125:

<sup>3</sup> Արմանո – русские отношения ве второой тридцатилетии XVIII в... т. 2, ч. 2, док. 344, չз 285:

<sup>4</sup> Արմանո – русские отношения..., т. 2, ч. 1, введение LXXXVII, док. 345, էջ 285-286:

<sup>5</sup> Նույն տեղում:

է»:<sup>1</sup> Այս իրադարձություններից հետո, աստիճանաբար սկսվում են քայլայվել հայոց սխնախները, Ավան հարյուրապետը հեռանում է Ռուսաստան (1729թ. – Ս. Ս.) եւ Ղարաբաղում վերականգնվում է նախկին վիճակը՝ վերածվում անջատ մելիքությունների:<sup>2</sup> Իրադրությունը կտրուկ փոխվում է դարի կեսերին, երբ Վարանդայի

Մելիք Շահնազարը, իր մոտ իրավիրելով Փանահ խանին, դավաճանությամբ նրան է հանձնում Շուշիի բերդը:<sup>3</sup> Հայրենի հողի համար կռվող մյուս մելիքները (մասնավորապես Ալլահ Ղուլին եւ մելիք Հարամը, որոնք տիրուն են Վերին Խաչենին, Հավքախաղաց, Հանդաբերդ, Հաթերք, Ավանա եւ Զրաբերդ ամրոցներին) չհանդուրժեցին այս դավաճանությունը եւ անզիջում պայքար ծավալեցին ինքնակոչ խանի դեմ: Անպարտելի հերօսի համբավ էր վաստակել Զրաբերդի մելիք Ալլահ Ղուլին (մելիք Եսայու հաջորդը),<sup>4</sup> որին խաբեությամբ կալանավորում եւ սպանել է տալիս Փանահ խանը: Սպանված եղրորդ փոխարինած մելիք Հարամը, Գյուլիստանի մելիք Հովսեփի հետ միասին, շարունակում է պատերազմը խանի դեմ: Հաստատվելով Զրաբերդ անարիկ ամրոցում<sup>5</sup>, նա շուրջ մեկ տարի ոհմադրեց իրոսակներին, որից հետո, գործը դուրս բերելով ամրոցից, նահանջեց Գյուլիստան, իսկ այնտեղից՝ Գանձակի կողմերը:<sup>6</sup> Այստեղ մնալով շատ տարիներ մելիք Հարամը բաց չէր թողնում առիթը՝ հարձակումներ ծերնարկելու Ղարաբաղի թուրքերի դեմ, ընդհուած մինչեւ Շուշի:<sup>7</sup> Իսկ երբ մեռավ ինքնակոչ խանը, մելիք Հարամն ընդունեց նրան փոխարինած իբրահիմ խանի՝ հաշտության մասին առաջարկությունը, վերադարձավ իր հայրենիք Զրաբերդը եւ մինչեւ կյանքի վերջը (1783թ.) պահպանեց իր սեփականատիրական իրավունքները:<sup>8</sup>

Զրաբերդը հայտնի է նաեւ այլ քաջարի հերոսներով: Դրանցից էր Դալի Մահրասան (իսկական անունը՝ Ավագ), նրա ընկեր Թիովի Արզումանը, որոնք իրենց ջոկատներով հալածում ու կոտորում էին թուրքերին, սարսափ տարածում Զրաբերդից Ասկերան, Ասկերանից Շուշի:<sup>9</sup> Նրանցից հետ չէր մնում նաեւ Զալաղան Յուզբաշին

<sup>1</sup> Թօվիշեան Յ., Ցուցակ ծերագրաց Խաչիկ Վարդապետի Դադեան, մաս Ա, 1898, Վաղարշապատ, էջ 70:

<sup>2</sup> Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, Երեւան, 1973, էջ 253-254:

<sup>3</sup> Ներսիսյան Մ., Իз истории русско-армянских отношений, книга 1, Ереван, 1956, էջ 96.

<sup>4</sup> Արցախ, էջ 122:

<sup>5</sup> Ահմեդ-բեկ Ջխեմանշիր, Օ политеческом существовании Карабахского ханства, Шуша, 1901, էջ 11.

<sup>6</sup> Լեռ, Հայ հերոսներ, Զրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը, էջ 12:

<sup>7</sup> Նոյն տեղում, էջ 13, Լեռ, հ. 3, էջ 273:

<sup>8</sup> Նոյն տեղում:

<sup>9</sup> Նոյն տեղում, էջ 16: Այս հերոսների գերեզմանները գտնվում են Գանձակի Հայոց Եկեղեցու գավթում, ինչպես նաև՝ Դաստակերտի Եղիշ Արաբյալ կամ Զրվշտիկ վանքի երրորդ մասուոր մուտքի մոտ (Աղցախ, էջ 28, 236):

(հակիշտակող հարյուրապետ) եւ ուրիշներ: Զրաբերդի վերջին իշխանապետը Մելիք Մեծլումն էր՝ Մելիք Հաթամի որդին: Գործում էր Գանձակում: Նա զինեց վրացիներին, բանակցեց Վրաստան եկած ռուսական պաշտոնատար անձանց հետ, համագործակցեց Աղա Մահմեդ խանի հետ, միայն թե ոչնչացներ Շուշիում որչացած իբրահիմ խանին:<sup>1</sup>

Զրաբերդը վերջին դարերում խաղաղ ժամանակներում գրեթե անբնակ է եղել: Բայց երբ սկսվել են ռազմական ընդհարումները, ժողովություն անմիջապես պատսպարվել է ամրոցում, կազմակերպել դիմադրություն: Վերջին անգամ, համաձայն աղբյուրների<sup>2</sup>, շրջակա գյուղերի բնակիչներն այստեղ են պատսպարվել 1793թ., երբ Պարսկաստանի երբեմնի գերիշխանությունը Անդրկովկասում վերականգնելու նպատակով Ղարաբաղ է արշավում պարսից զրապետ Սուլեյման Շահօղադամ:

Ամրոցը տեղակայված է Թարթառ (Տրտու) գետի ձախ ափին, Երից մասնակաց վանքից մոտ 3 կմ հարավ-արեւելք, ծովի մակերեւույթից 675 մ բարձրության վրա: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40 14 21.5, E 46 40 00.5:

Հայ մեծանուն պատմաբան Լեոն գեղեցիկ ու պատկերավոր է ներկայացնում ամրոցի տեղադրությունը. «Մռավի առջեւով խրոխստ ձորերի մեջ պտույտ տալով, հոսում է Թարթառը: Մի տեղ ... նրա մեջ է թափվում Մռավի կրծքից բխող մի գետակ՝ փրփուր թրղին: Խառնուրդի տեղում բարձրանում է մի ահարկու սեպացած ժայռ, որի կուրծքն ու կատարը շրջափակված են հաստ պատերով: Մարդ վիթխարի եւ աննատչելի ժայռը բերու է դարձել եւ անվանել Զրաբերդ»:<sup>3</sup> Այնուհետև շարունակվում է. «Երկու կողմից, արեւմուտքից եւ արեւելքից այս հոկա ժայռը կազմում է վիթխարի բնական պատեր, որոնք կախ են ընկած թրղու եւ Թարթառի վրա: Իսկ երրորդ, հարավյախն կողմը մի դժվար եւ թեք զարիվայրով իջնում է դեպի Թարթառը... Միայն ժայռերը չեն ամրացնում այդ բերդը, միայն խոր ձորերը չեն, որ կտրում են նրա չորս կողմը անմերձենալի խրամատների պես: Երեք կողմից նրան շրջապատում են անհանգիստ արնախում ջրեր... ջրերի այդ բերդիցն է ամբողջ գավառը Զրաբերդ կոչվում»:<sup>4</sup>

<sup>1</sup> «Ազատամարտ», N 42, 1991:

<sup>2</sup> Սաստենաղարան, ձեռ. 2734:

<sup>3</sup> Լեռ, Հայ հերոսներ. Զրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը, էջ 5:

<sup>4</sup> Լեռ, Վերջին վերջեր, մաս 1-ին, էջ 13: Իրոք, ամոցի անվանումը համապատասխանում է մրատեղադրությանը՝ Երկու գետերի միախառնման տեղում, կապվելով ջրի հետ: Սակայն, այստեղ կա մի ոչ Երկորդդական հանգամանք. պատմական աղբյուրներում (Կաղամկատվացի, Գանձակեցի, Օրբելյան եւ ուրիշներ) ի սկզբանե ամրոցը ներկայացվում է «Զրաբերդ» անվամբ, ողը հիմք է

Ճանապարհամերձ կողմից (հյուսիսից) ամրոցակալ ժայռի բարձրությունը մոտ 40 մ է, որի գագաթնամասում ամրոցապատն է՝ աշտարակ-ներով: Մյուս երեք կողմերից, մասնավորապես հարավային եւ արեւմտյան հատվածներում 100 - 150 մ է:

Ամրոցը, որ կազմում է երկու գետերի միախառնման ամբողջ ժայռագանգվածը, զբաղեցնում է ավելի քան 10800 քառ. մ տարածություն (միջին չափերը՝ 60 x 180 մ): Այստեղ կան բազմաթիվ ավերակված բնակարաններ, պաշտպանական խցեր, գետնափոր շինություններ, պահեստներ եւ այլն: Վերնամասը մեծավանամբ խորդութորդ է: Միակ հարթ տարածքը կենտրոնական մասում է, որի արեւելակողմ եւ հարավային հատվածներում տարածվում են տարբեր նշանակության շինությունների ավերակները: Այստեղ է գտնվում կիսակլոր հատակագծով, մասամբ գետնափոր, թաղակապ, 3 x 2 մ չափերի մի շինություն, որն ըստ էության օգտագործվել է որպես պարենի կամ մթերքների պահեստ: Այն կառուցված է անտաշ քարերով ու կրաշաղախով՝ հարավային եւ հարավ-արեւմտյան կողմերից հարմարեցված ժայռաքարին: Նշված շինության հարավ-արեւելյան կողմում տեղակայված են երեք կցակառուց-սենյակներ: Դրանցից հյուսիսային կողմինը՝ կառուցված խառը քարերով ու կրաշաղախով, ունի 4,5 մ երկարություն եւ 2,8 մ լայնություն: Մուտքը (0,77 մ լայնությամբ) հարավից է, պահպանվող պատի բարձրությունը՝ 1,6 մ: Այս շինությանը կից սենյակներից մեկը բավականին լավ է պահպանվում: Պատերի միջին բարձրությունը 2 մ է, արեւելյան կողմից՝ ավելի քան 4 մ: Մուտքը հարավ-արեւելյան կողմից է: Արեւելքից կամարածեւ (1,17 մ միջին լայնությամբ) խորանն է, որի եզրամասերը շարված են կարմիր աղյուսով:

Միջնաբերդը տեղակայված է ամրոցի հարավակողմ բարձրադիր վայրում եւ վերաբերում է XVII-XVIII դդ.: Այն իրականում մի ամրոց-ապարանք է՝ բաղկացած մի շարք սենյակներից<sup>1</sup>: Արեւմտյան սենյակաշարում երկայնական պատերով երեք կցասենյակներ են (հյուսիսակողմ եզրամասում գտնվողը՝ 4,8 x 3,6 մ չափերի, մյուս երկուսը՝ 3,4 x 5,5 մ), որոնք ունեն մեկական պահպանախորշ-պտրիաններ, բուխարիներ եւ

տայիս ամպանումը ստուգաքարնել այլ կերպ. «Չալր»-ն ունի նաև անօրեն ու խոտորեալ նշանակությունը (Նոր բարգիր հայկագետն լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 563), իսկ վերջինս՝ մոլոր, ծուռ, զարտուի իմաստը (Ույն տեղում, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 969):

<sup>1</sup> Պույան Ա., Արցախի եւ Սյունիքի մելիքական ապարանները, Երեւան, 2001, էջ 82-84:

մեկական մուտք միջանցքից: Պատերի բարձրությունը 2 – 4 մ է, հաստությունը՝ 90 սմ: Ավելի լավ պահպանված եզրային առաջին սենյակում (մուտքից աջ) ուշագրավ է մթերքների (այուրի, ցորենի կամ ընդեղենի) պահպանության համար նախատեսված հորը կամ ամբարը, որ ներկայում կիսովին լցված է հողով: Երեք կցասենյակներին հարավային կողմից հաջորդում է մի ընդարձակ շինություն (չափերը՝ 8,2 x 6 մ), որը դահլիճի տպավորություն է թողնում: Այստեղից մուտք-անցումները տանում են 2,5 x 8,3 մ չափերի, դեպի հարավ սուր անկյան տակ նեղացող սենյակը եւ հարավ-արեւելյան կողմում գտնվող խուց-կացարանը: Դահլիճից անցում է կատարվում նաեւ ամրոց-ապարանքի հարավ-արեւմտյան կողմով տարածվող պարսպապատին հարող աշտարակը (չափերը՝ 2 x 2 մ):

Միջնաբերդ - գագաթնամասում հարմարեցված սենյակ-կացարանների թիվը հասնում է յոթի, չորս շինություն- կցակառուցներ եւ տեղակայված են դրանցից հարավ-արեւելք, թեքաղիր վայրում, որոնք կազմում են ամրոց-ապարանքի հարավ-արեւելյան սենյակաշարը: Արեւմտյան կողմի վերնամասում գտնվող շինությունը՝ 2,2 x 5,8 մ չափերի, դրանից ներքեւ՝ պտրիհամով եւ հյուսիս-արեւելյան կողմից բացվող պատուհանով շինությունը՝ 3 x 8,7 մ չափերով եւ մինչեւ 5 մ բարձրությամբ պատերով, 2,5 մ բարձրությամբ պատերով 3,8 x 6,3 մ չափերի շինությունը եւ ժայռին հպված սենյակը՝ 2,6 x 5,3 մ չափերի: Ըստ պահպանված հետքերի՝ բոլոր սենյակների ծածկերը եղել են փայտաշեն՝ հարթ հողածածկ տանիքով:

Բացի վերոհիշյալ շինություններից, ամրոցի եզրամասերում պահպանվում են բնակելի տների փլատակներ, որոնք ավելի հին են, քան ներկայացված (XVII - XVIII դարերի) շինությունները: Ամրոցի վերնամասում շրջագծով անց էր կացվել պարսպապատ, որը բազրիքի դեր է կատարել: Հարավ-արեւելյան եւ արեւմտյան կողմերից պարիսպներն ունեին դիտակետեր: Պարսպապատերը բավականին լավ պահպանվում են ամրոցի հատկապես հարավ-արեւելյան եւ հարավ-արեւմտյան կողմերում, ինչպես նաև հյուսիսային հատվածներում: Դրանց միջին հաստությունը 1 մ է: Հյուսիսային կողմի պարսպաշերտի վրա, գագաթնամասում, հյուսիս-արեւելյան եւ հյուսիս-արեւմտյան հատվածներում կառուցված են երկու աշտարակներ, որոնք հսկողության տակ են պահում ամրոցամերձ ճանապարհը: «Իհարկե,

այսպիսի մի ամրություն անհնարին էր պատերազմական գործողություններով գրավել, ուստի պաշարողները համբերությամբ նստել են նրա շուրջը, հեռվից նայել, մինչեւ որ կամ մի դավաճան կմատնե բերդը, կամ թե սովը կակսէ պաշարուածներին գոռել: Ավանդությունը պատմում է, թե մի անգամ այսպիսի սով է ընկնում բերդի մեջ, բայց գտնվում են քաջեր, որոնք չեն թողնում, որ սովը մարդկանց գերության դուռը տանի: Նրանք դուրս են թափում բերդի շինությունների համար ամբարած կիրը, փռում են, սկսում քամել մաղերով: Պաշարող թշնամին տեսնում է այդ, կարծում է թե կիրը այսուր է, որ դեռ երկար ժամանակ պիտի պահէ պաշարուածներին եւ հուսահատված քաշվում է, հեռանում»:<sup>1</sup>

Զրաբերդ ամրոցն ունի միայն մի մուտք պարսպի պատով:<sup>2</sup> «Թրղի գետի ժայռոտ ձորի կողքով, ճանապարհի գլխին, ժայռի մի ահազին բեկորի վրա երեւում է բերդի դուռը», - գրում է Լեռն:<sup>3</sup> «... Բայց որովհետեւ բերդումս չկայ ջուր, վասն որոյ բերդիս միջից դեպի թարթառ գետն կտրած են վիճակիոր ականներ, որոնց միջի սանդղաձեւ աստիճաններով երթեւեկելով ջուր մատակարած են բերդիս պաշարման ժամանակ: Թարթառն գործ դնելով իւր մշտագործ գործիները, վերստին փորած և իշեցրած է բավականին իւր յատակը, այս պատճառաւ ականների արտաքին բերաններն բարձր մնացած են գետի երեսիցն»:<sup>4</sup>

Ամրոցի խիստ բուսականությունը (ծառեր, թիեր, մացառուտներ) հնարավորություն չտվեց առավել ամբողջական ու մանրակրկիտ ուսումնասիրություն կատարել: Կարծում ենք, որ պեղման-մաքրման աշխատանքների միջոցով միայն կարելի է բացահայտել այս նշանավոր ամրոցի պատմությունը, փաստացի տվյալներով որոշել նրա գոյատեւման ճշգրիտ էտապներն ու ճարտարապետական, ամրաշինական յուրահատկությունները:

**КРЕПОСТЬ “ДЖРАБЕРД”.**  
Слава Саргсян  
Резюме

<sup>1</sup> Լեռ, Իմ հիշատակարանը, էջ 264:

<sup>2</sup> Արցախ, էջ 240: Երիցմաննկանց վանք տանող ճանապարհի կողմից, ամրոցի տակով 20-րդ դ. 50-ական թվականներին երկրաբանական-հետախուզական արշավախումբը փորել է թունել, նպատակ ուժնալով հիդրոէլեկտրակայան կառուցել: Այդ թունելից դրուս գաղով, ավելի հեշտությամբ կարելի է մտնել ամրոցի տարածքը:

<sup>3</sup> Լեռ, Իմ հիշատակարանը, էջ 253:

<sup>4</sup> Արցախ, էջ 240:

На основе сопоставления исторических источников и результатов исследования на месте описывается одна из известных крепостей Хачена, которая оставила значительный след в истории Арцаха. Вместе с краткой историей крепости и описанием основных строений комплекса, показаны роль и значение этого единственного в своем роде оборонительного узла в нижней долине реки Тартар.

### THE FORTRESS “JRABERD”.

Slava Sargsyan

Summary

Based on the comparison of historic sources and research results on the spot one of the most famous fortresses of Khachen is described which left a significant mark in the history of Artsakh. Together with the brief history of the fortress and the description of the main buildings of the complex, the role and importance of this unique defensive unit in the lower valley of Tartar are shown.

### ԱՐԵՎԵԼԱՀԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԳԼԱԶՈՐԻ ԵՎ ՏԱԹԵՎԻ ՀԱՍԱՍՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ոռնա Բալայան

Պատմական գիտությունների թեկնածու, դրցենս

ԱրԴՀ

Հայ ժողովրդի դպրավոր պատմության ընթացքում կրթական օջախների առավելապես համալսարանների հիմնադրումը կարևոր նշանակություն են ունեցել երկրի տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի զարգացման գործում:

XII–XIV դարերի միջնադարյան Հայաստանի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունները բեղմնավոր գործունեություն են ծավալել հայ դպրության, մշակույթի և ավանդույթների անաղարտ պահպանման համար:

XIII դարի 20-ական թվականներից սկսած մոնղոլական արշավանքները լրջորեն խոչընդոտել են Հայաստանի հասարակական մտքի զարգացմանը: Սակայն ազգային մշակույթի արժեքները շարունակել են գերակայող դեր կատարել ազգի հոգևոր կյանքում: Այդ արժեքները հարստացել ու պահպանվել են ամենից առաջ կրթօջախներում:

Սոնդուների ավերածություններից գերծ է մնացել պատմական Սյունիքը, որտեղ և համեմատաբար բարենպաստ պայմաններ են ստեղծվել

Սյունիքի Օրբելյան և Խաղբակյան տոհմերի իշխանների ազգանպաստ ձեռնարկումների համար: Նրանց ուշադրության կենտրոնում է գտնվել հայ ժողովրդի մշակութային-մտավոր պահանջների բավարարումը: Ստեղծագործական մտքի նոր կենտրոնների ստեղծման անհրաժեշտությունը առնչվում էր նաև հայ Եկեղեցու շահերի հետ, ունիթորության դեմ Վճռական պայքարի գործում:

Բարձր կարգի դպրոցներ են հիմնադրվել Անիում, Հաղպատում, Սանահինում, Գլաձորում, Տաթևում և այլուր:

Մեծ Հայքի Սյունիքի նահանգի Վայոց ձոր գավառում թանաղե վանքում, Խաղբակյան Պոռշ իշխանի նախաձեռնությամբ և Օրբելյան իշխանական տան աջակցությամբ հայ մտավոր կյանքի գլխավոր կենտրոններից մեկն է դարձել Գլաձորի համալսարանը: Այն տարբերվել է Միջնադարյան Հայաստանում եղած մյուս ուսումնա-կրթական օջախներից իր կայացման մակարդակով, հասարակական-քաղաքական կյանքում կատարած դերով և ստեղծած բարձրարվեստ գործերով:

Համալսարանում ձևավորված գիտնականների տաղանդավոր սերունդը հայ ժողովրդի համար փորձության տարիներին կարողացել է կորստից փրկել նախնյաց ժառանգությունը, ազգային արժեքները և փոխանցել հաջորդ սերունդներին:

1282թ. գարնանը Վայոց ձոր են տեղափոխվել քրոների հարձակումներից Քաջբերունիքում ապաստանած Սշո Ս.Աքաքելոց վանքի ուսումնականները րաբունապետ Ներսես Մշեցու գլխավորությամբ: Պառշյանները տրամադրել են նրանց Գլաձորի վանքը (նույնացվում է Թանաղե վանքի հետ): Ներսես Մշեցին ձեռնամուխ է եղել Գլաձորի համալսարանի կազմավորմանը, ձեռնարկել է նյութական պայմանների ստեղծման, աշակերտների ընտրության, դասախոսների կազմի համալրման, ծրագրերի, ձեռնարկների ստեղծման գործընթացը: Նրա ձեռնարկումներին աջակցել են Սյունյանց թեմական իշխանությունները: Համալսարանը գտնվել է շրջահայաց ու հեռատես սյունեցիների ուշադրության կենտրոնում, օգնում էին նյութական միջոցներով, հպարտանում՝ համալսարանի իմաստասեր գիտնականներով, սիրում ու պաշտում էին սեփական ազգային բարձրագույն կրթական օջախը: Դա երևում է համալսարանի շրջանավարտ ուսանողների ավարտական ատենախոսություններից: Դրանցից մեկում շրջանավարտը իր ուսուցչին

համեմատում է «հոգևոր հացի սեղանի» հետ, որից նա առատորեն բաշխում էր բոլորին:<sup>1</sup>

Սյունիքի Վայոց ձոր գավառում բարձրագույն դպրոցի կազմակերպումը ունեցել է իր նախադրյալները: Հայոց գորերի գյուտը հզոր մշակութային վերելք է առաջ բերել Հայաստանում, այդ թվում՝ Սյունիքում, Արցախում և Ուտիքում: V դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցը իր մի խումբ աշակերտների հետ մեկնել է Արցախ, քարոզել է քրիստոնեությունը, աջակցել կրթական գործի և գրավոր մշակույթի զարգացմանը: Իրենց ստեղծագործություններով անմահացել են պատմության, փիլիսոփայության, մաթեմատիկայի, տոնմարագիտության, տիեզերագիտության և այլ ոլորտներում այնպիսի տաղանդավոր մտածողներ, ինչպիսիք են Մովսես Խորենացին, Ղավիթ Անհաղթը, Անանիա Շիրակացին և ուրիշներ:

Գլածորի համալսարանը հիմնվել էր Սյունիքի կրթության և դպրոցական գործի հին ավանդույթների, ազգային հարուստ ժառանգության հիմքերի վրա:

Համալսարանը գործում էր ներքին կանոնադրություն, կար ուսումնագիտական աստիճանավորում: Ուսումնական ծրագրերում առաջնակարգ տեղ էին հատկացնում աստվածաբանության, փիլիսոփայության, քերականության, Ճարտարապետության, աստղագիտության, թվաբանության, Երկրաչափության, Երաժշտության դասավանդմանը, ուսումնասիրում էին անտիկ և վաղ քրիստոնեական շրջանի մտածողների՝ Պլատոնի, Արիստոտելի, Փիլոն Ալեքսանդրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Աստվածաբանի, Ղավիթ Անհաղթի, Մովսես Քերթողի, Ներսես Շնորհալու, Վահրամ Ռաբունու և այլոց փիլիսոփայական-հասարակագիտական հայացքներն ու տեսությունները:

Ուսումնական ծրագրերում լայն տեղ է տրվել ազգի պատմությանը: Ղասավանդվել են Մովսես Խորենացու, Ազաթանգեղոսի, Փավստոս Բյուզանդի, Ղազար Փարպեցու, Սեբեոսի, Մովսես Կաղանկատվացու ստեղծագործությունները: Ուսանողները պարտավոր էին ուսումնասիրել նաև հունական, հռոմեական և ասորական դպրության աշխատություններ:

Համալսարանում ուսումնասիրվող առարկաների համակարգում առանձնահատուկ տեղ է հատկացվել տիեզերագիտությանը: Առարկայի ուսումնասիրությունը անհրաժեշտ էր նաև քրիստոնեական տոնների ճիշտ

<sup>1</sup> Արքահամյան Ա., Գլածորի համալսարանը, Երևան, 1983, էջ 22:

հաշվարկումների համար: Վերոհիշյալ առարկայի համար հարուստ աղբյուր է ծառայել հայ ականավոր տիեզերագետ Հովհաննես Երգնկացու «Յաղագս երկնային շարժման» մասին աշխատությունը, որտեղ մեկնաբանվել են տեղեկություններ՝ աստղագիտության և տոմարագիտության վերաբերյալ: Ճշգրիտ գիտություններից առավելագույնը տրվել է մաթեմատիկային: Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքն ու խնդրագիրքը ծառայել են որպես դասագրքեր: Ուսանողները մեծ հետաքրքրություն են հանդիս բերել Շիրակացու «Մղննաչափ», «Օդաչափ», «Աշխարհացույց» և այլ աշխատությունների նկատմամբ: Բարձր դրվածքի վրա է գտնվել նաև երաժշտության և մանրանկարչության դասավանդումը: Արվեստի հետ անխգելիորեն կապված է եղել քերականությունը: Որպես քերականության դասագրքեր օգտագործվել են Մովսես Քերթողի (ՎԴ.), Գրիգոր Մագիստրոսի (Խլդ.) գրքերը:

Գլածորի համալսարանն իր ուսումնական ծրագրերով, դասավանդվող առարկաների դրվածքով ու բազմազանությամբ չի տարբերվել միջնադարյան եվրոպական համալսարաններից, նույնիսկ չի զիջել ամենահեղինակավոր գիտական մտքի կենտրոններից մեկին՝ Փարիզին:

Գլածորի և եվրոպական համալսարանների ուսումնական ծրագրերում եղած ընդհանությունները օրինաչափ են, քանի որ դրանք առնչվում են քրիստոնեական ուսումնական ավանդույթի հետ: Բայց եվրոպական համալսարանները կազմակերպվել են այն ժամանակ, երբ այդ երկրները թևակրոխել են վերածննդի դարաշրջանը, իսկ Հայաստանը գտնվում էր օտար կեղեքիների լծի տակ: Հայաստանում ուսուցումը տարվում էր մայրենի լեզվով, իսկ եվրոպական համալսարաններում՝ լատիներենով:

Գլածորի համալսարանը նշանավոր ազգային-եկեղեցական, գիտական հայրենասիրական կենտրոն էր, որը պատրաստում էր գիտությամբ զբաղվող անհատներ, կյանքի տարբեր բնագավառների մասնագետներ՝ գիտական աստիճաններով ու կոչումներով:

Ուսումնագիտական այս կենտրոնում լայն աշխատանք են ծավալել Ներսես Մշեցին, Եսայի Նշեցին, Թորոս Տարոնացին, Մխիթար Սասնեցին, Վարդան Կիլիկեցին, Դավիթ Սասնեցին և ուրիշներ: Ուսումնառության տևաղությունը եղել է 7-8 տարի: Իր կոթական, մշակութային և գիտական գործունեության ընթացքում անգնահատելի է

համալսարանի ավանդը գիտության, մշակույթի, հասարակական կյանքի մյուս բնագավառներում: Այդ կենտրոնում գործող րաբունիներն ու րաբունապետերը ժամանակի կրթված, բարձրագույն կրթական գործի գիտակ, ջանասիրությամբ աշխատող մանկավարժ-գիտնականներ էին: Պատահական չէ, որ Գլածորի համալսարանը ձեռք բերած վաստակի համար կոչվում էր «Երկրորդ Աթենք», «Գերահոչակ համալսարան» անվանումներով:

Ներսես Մշեցու մահից հետո Գլածորի համալսարանի րաբունապետությունը ստանձնել է նրա շնորհաշատ աշակերտ Եսայի Նչեցին: Նա ծնվել է Սասունի Նիշ ավանում: Բարձրագույն կրթություն ստացել է Գլածորի համալսարանում: Նրա ուսուցչապետության շրջանում (1284-1338թ.) համալսարանի փառքը տարածվել է ամենուրեք: Նրան աշակերտել են բազմաթիվ ուսանողներ, որոնք խոր մեծարանքով են գնահատել մեծ գիտնականի վաստակը, տալով նրան «Տիեզերական րաբունապետո», «Քաջահանձար փիլիսոփա», «Սուրբ և Մեծ վարդապետ» տիտղոսները: Հայտնի են մեծ մտածողի աստվածաբանական-դավանաբանական, փիլիսոփայական և քերականական բնույթի աշխատությունները: Նրա արժեքավոր ուսումնասիրություններից է «Մեկնություն մարգարենության Եզեկիելի», որը գրել է Սյունիքի հոգևոր առաջնորդ Ստեփանոս Օրբելյանի առաջարկով: Եսայի Նչեցին կազմել է նաև քերականության դասագիրք, անդրադարձել է լեզուների ծագման, հոլովման և քերականական այլ հիմնահարցերի վերլուծություններին: Դավանաբանական աշխատություններում հեղինակի ուշադրության կենտրոնում են գտնվել գաղափարական անողոք պայքարը միարարական շարժման դեմ՝ հանուն ազգային ավանդույթների պահպանման:

Գլածորի համալսարանը ազգային մտածելակերպի ակտիվ դիրքորոշում է ընդունել ունիթորության դեմ պայքարում: Ինչպես ընդգծում է Հ. Մանանյանը, Մոնղոլների տիրապետության ժամանակ ունիթորական կամ միարարական շարժման միջոցով Վատիկանը նպատակ էր հետապնդում դավանավորիս անել հայ ժողովրդին և հայոց Եկեղեցին ենթարկել պապական իշխանությանը:<sup>1</sup> Դավանավորության քաղաքականությունը իրագործելու նպատակով, ունիթորները գործում էին թե՝ բանավոր քարոզությամբ, թե՝ գրավոր: Նրանք Արևմուտքի սխոլաստիկական

<sup>1</sup> Մանանյան Հ. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.գ., Երևան, 1952, էջ 342:

գրականությունը, կաթոլիկ ոգով գրված գրքերը, քարոզները տարածում էին Հայաստանում:<sup>1</sup> Ուստի անհրաժեշտություն էր դարձել պայքարը ունիթորության, դավանափոխության պապական ծրագրի դեմ, որը հայ ժողովրդի համար ծովալման վտանգ էր դաշնում: Պայքար տարփում էր նաև Երկրի ներսում լատինամետ տարրերի դեմ: Կաթոլիկ Եկեղեցուն հարելու հակում են ունեցել ինչպես Կիլիկիայում, այնպես էլ բուն Հայաստանում, գլխավորապես, հասարակության բարձր խավերը:<sup>2</sup>

Հայ ժողովրդի ավանդույթների պաշտպանությամբ բանավիճական բնույթի աշխատություններով հանդես եկավ Եսայի Նչեցին: Նա գրել ու տարածել է ժողովրդի մեջ շրջաբերականներ, որտեղ արտահայտել է իր ազգայնանպաստ ակտիվ դիրքորոշումը ունիթորության դեմ պայքարում:

1307թ. Կիլիկիայի Սիս մայրաքաղաքում Կոստանդին III Կեսարացի կաթողիկոսը Վատիկանի պահանջով դավանափոխության պապական ծրագրին օրինականացնելու նպատակով հրավիրել էր ազգային Եկեղեցական ժողով Կիլիկիայի հոգևորականության ներկայացուցիչների և արքունի մի քանի իշխանների մասնակցությամբ: Ժողովին ներկա է Եղել նաև Լևոն IV թագավորը (1301-1308): Դավանափոխության պապական ծրագրին կողմնակից էին Կիլիկիայի հայոց արքունիքն և կաթողիկոսությունը, որոնց Ճնշման տակ ժողովը ընդունել է որոշում հայ ժողովրդին հավատափոխ անելու մասին: Սակայն ժողովի որոշումը ի կատար ածել չի հաջողվել:

1316թ. Կիլիկիայի Արքանա քաղաքում լատինամետ կաթողիկոսը Հովհաննես 22-րդ պապի հանձնարարությամբ կրկին հրավիրում է ժողով դավանափոխության հարցով ժողովին մասնակցել են 17 Եպիսկոպոս՝ իիմնականում Կիլիկիայից: Ներկա էր նաև Օշին թագավորը (1308-1320): Ժողովը ընդունել է 2 Եկեղեցիների միավորման մասին որոշում, որը դարձալ մնացել է անկատար:

Գլածորի համալսարանը ամենայն վճռականությամբ շարունակել է պայքարը ունիթորների դեմ: Սակայն ժողովի որոշումը հայտնի դարնալուց հետո Սյունյանց հոգևոր առաջնորդ Հովհան Օրբելը, նրա Եղբայրը՝ Ստեփանոս Տարսայիծը, Եսայի Նչեցին, Դավիթ Սասմեցին իրենց ստորագրությամբ բողոքագիր են ուղարկել լատինամետ Կոստանդին Կեսարացի կաթողիկոսին, դատապարտել են նրա որդեգրած դավանափոխու-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 339:

<sup>2</sup> Արքահամյան Ա. Գլածորի համալսարան, Երևան, 1983, էջ 35-36:

թյան գիծը: Նույն վճռականությամբ գլածորցիները անողոքաբար քննադատության են Ենթարկել Հակոբ II Անավարդեցի կաթողիկոսի, թագավորի և նրանց հետևորդների անհեռատես ձեռնարկումները<sup>1</sup>:

Գլածորի րաբունապետ Եսայի Նչեցու և Գրիգոր Տաթևացու աշխատություններում տեղ են գտել հասարակական-քաղաքական և մանկավարժական բնույթի իիմնախնդիրներ, որոնց հանդեպ յուրովի մոտեցում են դրսնորել համալսարանի ուսումնականները: Ընդունելով իշխանավորների անխախտ իրավունքները, համալսարանականները միևնույն ժամանակ պահանջում էին, որ նրանք խորհրդականներ ունենան և առաջնորդվեն նրանց խորհրդով: Հասարակության խավերի համակարգում նրանք կարևորում էին գյուղացիության դերը, առանց որի պետությունը չի հարատևի: Կարևորում էին նաև արհեստավորների գործունեությունը: Բացասական կարծիք ունեյին առևտրակների մասին, որոնք ըստ նրանց, հասարակության մեջ ամենից ազահ մարդիկ են, որքան հարստանում են, ցանկանում են էլ ավելի հարստանալ:

Ուսումնառության բնագավառում առաջնակարգ դերը հատկացրել են մանկավարժին, որին դասել են սրբերի և առաջյալների շարքը: Նրանք առաջնորդվել են «Պլատոնի՝ «Ուսուցիչ եմ կոչում ոչ թե նրան, որը բացում բաներ գիտի, այլ նրան, որը մաքուր վարք ունի» սկզբունքով: Ուսուցչից պահանջվել է, որ նա կատարելապես տիրապետի իր դասավանդած առարկային. «Նախ ինքը ուսաց պետք է լինի, ապա ուրիշին սովորեցնի». «Մեկը, որ քիչ բան գիտի, ուրիշին ոչինչ տալ չի կարող»<sup>2</sup>:

Գլածորի ուսումնականները քննադատել են իրենց ապրած ժամանակներում տարածում գտած հասարակական մի շարք բացասական երևոյթներ՝ ավագակությունը, գողությունը, շողոքորթությունը, քծնանքը, գրպարտությունը, չարախոսությունը: Շանր հանցանք է համարվել հատկապես անբարոյականությունը:

Նրանք քննադատում էին այն մեծատուն հարուստներին, որոնք արհանարիում էին աղքատներին և աշխատում նրանց հեռու պահել իրենցից:

Գլածորի համալսարանն ունեցել է համահայկական նշանակություն և հոչակ: Այստեղ սովորելու են եկել Կիլիկիայից, հայկական գաղթա-

<sup>1</sup> Մանաւոյան <, Նշվ. աշխ., էջ 340:

<sup>2</sup> <http://plato.spbu.ru/TEXTS/PLATO/new/Platon2pdf>.

Վայրերից, Հայաստանի տարբեր շրջաններից և քաղաքներից, Տարոնից, Շիրակից, Արցախից, Արարատից, Գուգարքից, Երզնկայից, Նախիջևանից և այլ վայրերից:

Գլածորի համալսարանի ավանդույթները շարունակվել են Սյունիքում ստեղծված հայ դպրության և մշակույթի նոր կենտրոնում՝ Տաթևի համալսարանում, որի հիմնադիրն էր Գլածորում համալսարանական կրթություն ստացած Հովհան Որոտնեցին:<sup>1</sup>

Վերջինս եռանդուն գիտամանկավարժական գործունեություն է ծավալել, բարեկիութել է ուսումնական ծրագրերն ու կանոնակարգը, մեծ վաստակ է ներդրել փիլիսոփայական և աստվածաբանական գիտությունների բնագավառում: Իր քարոզներում խիստ կշտամբել է ունիթորների արարքներն ու վարդապետությունը:

Սյունիքի հասարակական-քաղաքական կյանքին իր ակտիվ մասնակցությամբ Որոտնեցին նպաստել է հայրենի կրթագիտական օջախների պահպանմանն ու բարգավաճմանը, իգուր չէ, որ ժամանակակիցները մեծարել են նրան «Եռամեծ փիլիսոփա» կոչումով:

Նրա բեղմնավոր գործունեությունը շարունակել է Գրիգոր Տաթևացին՝ Որոտնեցու ամենատաղանդավոր սամն ու նրա գործի արժանի հաջորդը: Վերջինս գրել է բազմաթիվ մեծածավալ աշխատություններ, մեկնություններ հունական փիլիսոփաների երկերի վերաբերյալ: Հայտնի է նրա «Հարցման գիրքը», «Քարոզգիրքը», որոնցում տրվել են արժեքավոր տեղեկություններ ժամանակաշրջանի հայ իրականության մասին:

Գրիգոր Տաթևացին խոր ու կայուն գիտելիքներ է ծեռք բերել ոչ միայն Հին ու Նոր Կտակարանների և կրոնական բնույթի այլ երկերի իմացության ոլորտում, այլև ուսումնասիրել էր իմաստասիրական և աշխարհիկ գիտություններ, որոնցով զինված նա մեծ հնտությամբ պայքար էր մղում ունիթորական շարժման դեմ:<sup>2</sup> Նա կարևորել է բնության օրինաչափությունների իմացությունը, ընդունել մարդուց անկախ օբյեկտիվ աշխարհի գոյությունն ու ձանաչելիությունը: Հայրենասեր գիտնականը հստակ գիտակցում էր, որ հայ ժողովրդի համար ստեղծված ոչ բարվոր պատմական պայմաններում, օտար բռնակալներին դիմակայելու գրեթե միակ միջոցը ազգային արժեքների պահպանումն ու զարգացումն է:

<sup>1</sup> Մամանդյան Հ, Նշվ. աշխ., էջ 341:

<sup>2</sup> Նոյն տեղում:

Գրիգոր Տաթևացին մեծարվել է «հանրագիտակ գիտնական», «վարժ մանկավարժ», «շնորհալի նկարիչ» և այլ պատվանուններով:

Միջնադարյան Հայաստանում ստեղծված հայ դպրության և մշակույթի բարձրագույն կրթության կենտրոնները անգնահատելի գիտական ժառանգություն են թողել հայոց պատմության մեջ: Գլածորի, Տաթևի և այլ համալսարաններում գործող տաղանդավոր մտավորականության գործունեության շնորհիվ այդ փառավոր կրթօջախները դարձել են ժամանակի խոշորագույն գիտամշակութային կենտրոններ, որտեղ ձեռք են բերվել համաշխարհային չափանիշի գիտական նվաճումներ:

Ունենալով ազգային-հասարակական հսկայական կշիռ՝ այդ բարձրագույն կրթօջախները օտար բռնակալների տիրապետության ծանր շրջանում հալածանքների են Ենթարկվել, նույնիսկ հարկադրված թափառական կյանք են վարել, բայց երբեք չեն արատավորել իրենց անունները, շարունակել են ազնվորեն ծառայել ժողովրդին՝ հավատարիմ մնալով հայոց հավատքին և ավանդույթներին:

**РОЛЬ ВОСТОЧНО-АРМЯНСКИХ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫХ  
ЦЕНТРОВ -УНИВЕРСИТЕТОВ ГЛАДЗОРА И ТАТЕВА, В ДЕЛЕ  
РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ОБЩЕСТВЕННОЙ МЫСЛИ**

Рона Балаян

Резюме

В статье рассматривается роль Гладзорского и Татевского университетов в деле развития армянской интеллектуальной и общественно-политической мысли.

Особое внимание автор обращает на деятельность видных ученых этих образовательных центров, направленных против вероисступничества во имя сохранения национальных традиций.

**THE ROLE OF THE EASTERN ARMENIAN ACADEMIC CENTRES OF  
GLADZOR AND TATEV UNIVERSITIES IN THE DEVELOPMENT OF  
ARMENIAN PUBLIC THOUGHT.**

Rona Balayan

Summary

The given article examines the role of Gladzor and Tatev Universities in the development of Armenian Intellectual and sociopolitical way of thinking.

The author pays special attention to the activities of the prominent scientists of these educational centres against apostasy in the name of retaining national traditions.

## ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐՑԱԽՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

**Վահրամ Բալայան**

Պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր  
ԱրԴՀ

Այսրկովկասը Ռուսաստանին միացնելուց հետո ցարիզմը ձեռնամուխ եղավ նաև նրա տնտեսական յուրացմանը: Ցարական կառավարությունը ձգտում էր Այսրկովկասը դարձնել իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների իրացման շուկա:

Դրան հասնելու համար ցարական կառավարությունը իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք շատ թե քիչ սկսեցին աշխուժացնել տնտեսական կյանքը: Առաջին հերթին անհրաժեշտ եղավ պարզել և ճշտել, թե ինչ եկամուտներ էր ստանում խանը Ղարաբաղից, որոնք հետագայում պետք է մտնեին պետական գանձարան: Այդ նպատակով 1822-23թթ. Երկրամասում անցկացվեց աշխարհագիր, ցուցակագրվեցին բոլոր բնակավայրերը, ընտանիքի անդամները, հավաքվելիք հնարավոր տուրքերի չափը<sup>1</sup>:

Նոր գրավված տարածքների տնտեսական հնարավորությունները օգտագործելու համար 1836թ. ստեղծվեց «Կովկասյան արդյունաբերական ընկերություն»<sup>2</sup>:

1861թ. փետրվարի 19-ի կանոնադրությամբ Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացումից հետո, 19-րդ դարի 60-70-ական թվականներին ցարական կառավարությունը կայսրության ծայրամասերում անցկացրեց նաև գյուղացիական բարեփոխումներ:

Արևելյան Հայաստանում, այդ թվում նաև Ղարաբաղում, գյուղացիական բարեփոխումը անցկացվեց 1870 թ. մայիսի 14-ի օրենքով: Նոր օրենքով վերացվեց հողերի օգտագործման համայնական եղանակը և

<sup>1</sup> Լիսիցյան Ստ., Ձանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 50:

<sup>2</sup> Обозрение Российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, Топографическом и финансовом отношении», Москва, 1836, ч.1, стр. 63.

այն փոխարինվեց անհատական եղանակով: Հստակեցվեց յուրաքանչյուրի հողաբաժնը, իրավունք տրվեց գյուղացիներին վաճառելու, նվիրելու կամ գրավ դնելու իրենց հողակտորներն ու այգիները: Որոշ բնատուրքեր վերածվեցին դրամականի: Այս ամենը նպաստեց ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը: Ապրանքային դարձավ առաջին հերթին հողագործությունը: Դարաբաղը մնում էր որպես հետամնաց ագրարային երկիր, որտեղ արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր: Տարեցտարի ընդարձակվում են մշակովի հողատարածությունները: Երկրագործության մեջ գերակշիռ տեղ ուներ հացաբույսերի մշակությունը: 1883 թվականից մինչև 1896 թվականը Ելիզավետպոլի նահանգում հացազգիների ցանքատարածություններն ու բերքատվությունը ավելացավ 2-ից մինչև 2,5 անգամ<sup>1</sup>: Եթե Շուշու գավառում հացահատիկի մշակաբույսերից 1886 թ. ստացել են 424,566 քառորդ բերք, ապա 1895 թ. դա հասցել է 620,700 քառորդի<sup>2</sup>, որի մեծ մասը սպառվել է քաղաքի շուկաներում:

Ներքին շուկայի ընդլայնումը և Ռուսաստանում արդյունաբերության զարգացումը խթանում էր Այսրկովկասի տարբեր գավառների գյուղատնտեսական ապրանքների արտադրության մասնագիտացմանը: Եթե Շուշու գավառում ավելի շատ զարգացած էր շերամապահությունը, ապա Զիվանշիրի գավառում՝ բամբակագործությունը և խաղողագործությունը:

Շուշու գավառում 1890 թ. ստացվել է 2,138 փութ բոժոք, իսկ 1894 թ.՝ 17,000 փութ, որից 4,300 փութը ուղարկվել է արտասահման<sup>3</sup>:

Երկրագործական մշակաբույսերի համար կարենություն էր ներկայացնում ոչ միայն ցանքատարածությունների ընդարձակումը, այլև հումքի որակի բարձրացումը և հողագործության կատարելագործումը: Ուստի երկրամասում մեծ ուշադրություն դարձվեց ոռոգման ցանցի կատարելագործմանը, առանձնապես քահրիզների կառուցմանը: Համարյա Դարաբաղի բոլոր գյուղերում նման ջրագծեր կառուցվեցին, որոնք առայսօր օգտագործվում են:

Հանդես եկան կազմակերպություններ, որոնք արտասահմանից ներ էին մուտքում բարձրորակ սերմեր՝ խաղողի և բամբակի՝ Բրազիլիայից, Հյուսիսային Ամերիկայից, Եգիպտոսից, Հնդկաստանից, տեխնիկական

<sup>1</sup> История Азербайджана, т.2, Баку, 1960, с. 164.

<sup>2</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, 1897, էջ 81:

<sup>3</sup> «Ազգագրական հանդես», էջ 91-92:

մշակաբույսերի վերամշակման համար մեքենաներ՝ Հյուսիսային Ամերիկայից, Ֆրանսիայից:

Անասնապահությունը ևս շարունակում էր մնալ բնակչության գրադարձի հիմնական տեսակներից մեկը:

1891թ. Շուշիի գավառում եթե պահում էին 69,161 գլուխ խոշոր և 144 865 գլուխ մանր եղջյուրավոր անասուն, ապա 1895 թ համապատասխանաբար՝ 76,180 և 164 080 գլուխ<sup>1</sup>:

Առաջընթաց կատարվեց նաև գյուղատնտեսական արտադրանքի մշակման գործում: Դեռևս 60-ական թթ. վերջերից սկսեց զարգանալ օղու և գինու արտադրությունը: Շուշու գավառում գինեգործական կենտրոններ են համարվում Գիշի և Ղզղալա գյուղերը: Գավառում 1884–1894 թվականներին գինու արտադրությունը 95,406 դույլից հասավ 186000 դույլի<sup>2</sup>:

Դարաբաղի թթի այգիներից ստացվում էր մեծ քանակությամբ օղի:

1872թ. տվյալներով Ելիզավետապոլի նահանգում գործում էր 3624 օղու թորման գործարան, որտեղ տարեկան արտադրվում էր 75000 դույլ օղի<sup>3</sup>: Այս բնագավառում Ելիզավետապոլի նահանգը ամբողջ Անդրկովկասում առաջին տեղն էր գրավում: Միայն Շուշու գավառում 1895 թ. թորվել է **300000** դույլ օղի: Գինու և օղու արտադրանքից Շուշու գավառում ստացվել է 1323270 ռուբլու եկամուտ<sup>4</sup>, որը բավականին մեծ գումար էր:

Հայ դրամատերերից շատերը սկսեցին իրենց միջոցները տեղափոխել արտադրության առավել շահավետ ոլորտներ՝ ստեղծելով զանազան գործարաններ ու ֆաբրիկաներ: 1880-ական թթ. Աղդամում մեծահարուստներ խորթարյաններն ու Սողոմոնյանները հիմնում են սպիրտի գործարաններ: Դրա հիմքերի վրա Աղդամում ստեղծվում է նաև կոնյակի փոքր գործարան<sup>5</sup>:

19-րդ դարի վերջին տասնամյակներում ռուսական կայսրությունում շուկայական հարաբերությունների զարգացման և տնտեսության բուռն վերելքի պայմաններում հայկական գյուղը իր նահապետական սովորություններով հանդերձ, ներքաշվեց ընդհանուր համառուսական շուկայի մեջ:

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 89:

<sup>2</sup> «Ազգագրական հանդես», գլոր P, էջ 86:

<sup>3</sup> История Азербайджана ёт т.2 ё с. 227.

<sup>4</sup> «Ազգագրական հանդես», 1897, էջ 87:

<sup>5</sup> История Азербайджана ёт т.2 ё с. 227.

Անձրևից հետո ածող սնկերի նման, Ղարաբաղի բնակավայրերում մեկը մյուսի ետևից երևան էին գալիս մասնավոր նոր ձեռնարկություններ: Այդ գործարանների զգայի մասը զբաղվում էր մետաքսի արտադրությամբ: Մետաքսի մեծ ճանապարհին մոտ լինելով, Ղարաբաղի հայությունը հնուց ի վեր զբաղվում էր շերամապահությամբ: Այն նոր ընթացք ու թափ ստացավ 19-րդ դարի 80-90-ական թվականներին: Շերամի հունոր Ղարաբաղ է հասել մի շարք երկրներից, տարբեր ճանապարհներով:

Մինչև 1890 թ. Ղարաբաղում լայն տարածված էր ճապոնական դեղին ցեղի մասը բոժոք ունեցող հունդը, որին տեղացիները յապոն էին անվանում: Այս ծովային ճանապարհով Չինաստանից տեղափոխվել է Հունաստան, իսկ այնտեղից Ղարաբաղ<sup>1</sup>: 19-րդ դարի վերջերին Անդրկովկասում հունդի աճեցման և տարածման գործը կենտրոնացված էր Յընտանիբների ձեռքում, որոնցից մեկը՝ Տեր-Գրիգորյանները, ղարաբաղցիներ էին:

Սկզբնական շրջանում շերամապահ գյուղացիները ոչ միայն բռժոտ էին արտադրում, այլ տանը պարզունակ եղանակով ոտնաչարխով մանում էին թելը: Տեղացի վաճառականները արտադրանքը արտահանում էին արտասահմանյան քաղաքներ: Ղարաբաղի բնական մետաքսը բարձր է գնահատվել միջազգային մի շարք տոնավաճառներում: 1882 թ. Մոսկվայում կազմակերպված տոնավաճառում Հռնաշեն-Հադրութի մետաքսն արժանացել է բրոնզե մեդալի, իսկ մեկ տարի անց՝ ԱՄՆ-ի Ֆիլադելֆիա քաղաքում՝ ոսկե մեդալի: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի վերջերին Արցախի մետաքսից են պատրաստվել Փարիզի Ելիսեյան պալատի վարագույրները<sup>2</sup>:

19-րդ դարի 50-ական թվականներին Ղարաբաղում գտնվող մետաքսագործարանները տնայնագործական տիպի մասր ձեռնարկություններ էին՝ խարսխված բացառապես ձեռքի աշխատանքի վրա: Միայն 1868թ. Շուշու գավառում կար 490 մետաքսակարժական արհեստանոց, որտեղ թողարկվում էր 76 000 ռուբլու արտադրանք<sup>3</sup>:

Արդյունաբերական եղանակով մետաքսաթելի արտադրության առաջին փորձերը Ղարաբաղում կատարվել են 19-րդ դարի կեսերին: Ղարաբաղցի Աղաբարա և Գրիգոր Խաչատրյաններն ու Կարապետ Շահմուլովանո 1856-1857թթ. Ստեփանակերպում հիմնադրեան մետաքսի

<sup>1</sup> Արաքելյան Ա., Ծերամապահությունը Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզում, Ստեփանակերտ, 1939, էջ 12:

<sup>2</sup> Ակրտյան Շ. Արցախ, Երեւան, 1991, էջ 46:

<sup>3</sup> История Азербайджана т. 2 ё с. 237.

ֆաբրիկա, որտեղ աշխատում էին Նուխուց եկած 25–30 հայ բանվորներ: Նույն դարի 60-ական թվականներին շուշեցի վաճառականները, լինելով Մարսել, Լիոն, Միլան, Վենետիկ, Զենովա քաղաքներում, արտասահմանից օրինակում են մանարանը, մետաքս ոլորող մեքենան և միաժամանակ «ցելիվսի» եղանակով սկսում են ստանալ առողջ սերմ: Առաջին անգամ Ղարաբաղի մետաքսագործի կիսանահապետական աշխատանքին փոխարինելու եկավ շոգու աշխատանքը: Այս հանգամանքը նպաստում է, որպեսզի երկրամասում զարգանա շերամապահությունը:

1873 թ. Շուշեցի առևտրական Գ. Հարությունյանցը քաղաքում հիմնեց մետաքսաղորման առաջին ֆաբրիկան, որտեղ Ռուսաստանում առաջին անգամ կիրառվեց բոժոժ չորացնելու հատուկ մեխանիկական սարքավորում:

Գ. Հարությունյանցի ֆաբրիկան սերտորեն կապված էր «Ա և Վ. Սապոժնիկովներ», «Ա. Իլին որդիների հետ և Կ.», «Ե. Ա. Սոկոլիկովա» մետաքսի առևտրով գրաղվող խոշորագույն ընկերությունների հետ<sup>1</sup>:

Վարանդայի գավառում 1890թ. արտադրվող 2138 փութ բոժոժից, 1895թ. հասցեց 9000 փթի, որից 4300 փութ արտահանվել է Եվրոպական երկրներ<sup>2</sup>: Նման պայմաններում անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկվեց Ղարաբաղում նոր մետաքսագործարանների կառուցման ուղղությամբ: Ժամանակակիցի վկայությամբ 1888թ. Արցախում կար 18 մետաքսագործարան, որոնք պատկանում էին հայերին: Դրանք տեղակայված էին Շուշի քաղաքում, Ստեփանակերտում, Կրկժան, Քարին տակ, Սղմախ, Չանախչի, Ղարաբոլախ, Ղշլաղ, Թաղուտ, Տող, Հադրութ, Շոշ, Բալութա, Խանածախ, Գիշի գյուղերում<sup>3</sup>: Դրանց տերերը հիմնականում տեղացի կապիտալիստներ էին՝ Հարունովներ, Ներսեսովներ, Տեր-Գրիգորյաններ, Տեր-Մկրտչյաններ, Քանայյաններ:

Արդեն 1896թ. Լեռնային Ղարաբաղում 26 մետաքսագործական ֆաբրիկա կար<sup>4</sup>, իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին դրանց թիվը հասավ 36-ի<sup>5</sup>: Շուշին հանդիսանում էր բոժոժի խոշոր շուկա Այսրկովկասում: 1894թ. Շուշիում հիմնադրվեց Կովկասյան մետաքսագործական կայանի մասնաճյուղը: Այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի 85

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 224:

<sup>2</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 91-92:

<sup>3</sup> Гулишамбаров Ст. Обзор фабрик и завод Закавказского края. Тифлисъ 1894 е с. 320.

<sup>4</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 99:

<sup>5</sup> Առաքելյան Ա., Նշվ. աշխ., էջ 15:

բնակավայրերում շերամապահությամբ զբաղվում էին մոտ 12000 տնտեսություններ, որը կազմում էր բոլոր տնտեսությունների 45 տոկոսը: Վերոհիշյալ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղում բնական մետաքսի արտադրության բուռն վերելքը պայմանավորված էր մի շարք բարենպաստ գործոնների առկայությամբ. տարանցիկ առևտորական ձանապարհների հանգուցակետում գտնվելը, Լեռնային Ղարաբաղի վաճառականների գործարանատերերի սերտ կապերը Եվրոպայի, Ամերիկայի և Ասիայի երկրների գործարար շրջանների հետ, այս բնագավառում հնուց եկած ավանդույթները, որին գումարվեց նաև ղարաբաղցիների աշխատավորությունը և հակումը դեպի արհեստը, էժան և որակյալ աշխատուժի գոյությունը, վառելամյութի՝ անտառների մոտ լինելու հանգանանքը:

Լեռնային Ղարաբաղի մետաքսաթելը մեծ համարում ուներ Եվրոպայի և Ասիայի երկրներում: Մինչև 1888թ. երկրամասում արտադրված թելը ուղարկվում էր Մարսել, հետագա տարիներին առավել շատ Մոսկվա, իսկ ֆրիզոնը՝ Ֆրանսիա<sup>1</sup>:

Մետաքսի արտադրությամբ Ռուսաստանի երկրամասերի մեջ Ղարաբաղը բռնում էր 2-րդ տեղը և տալիս էր Այսրկովկասի մետաքսի արտադրության 35 տոկոսը<sup>2</sup>:

20-րդ դարի սկզբին ստեղծվեց Գ. Հարությունյանցի Կովկասի մետաքսագործական և մետաքսաոլորման արդյունաբերական ընկերությունը, որը միավորեց 6 մետաքսագործարան, 2 մետաքսաոլորման և 3 բոժոժ չորացման ֆաբրիկաներ:

Քաղաքական գործընթացները սակայն շուտով ընդհատեցին շերամապահության և մետաքսագործության զարգացման բնականոն ընթացքը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ ազգամիջյան ընդհարումների հետևանքով ավերվեցին Լեռնային Ղարաբաղի մետաքսագործարանները: Խաթարվեցին Եվրոպական և Ասիական երկրների հետ տնտեսական կապերը: Ճանապարհների անապահովությունը դժվարացրին գործարանների արտադրած թելի սպառումը: Անտառներից փայտ բերելու խնդիրը կապված էր կյանքի վտանգի հետ և որպես վառելափայտ օգտագործում էին թոխմաշարի տունկը:

<sup>1</sup> «Մշակ», 1888, հա. 100:

<sup>2</sup> Заря востока՝ N 1527, 1927.

Այս ամենից բացի Շուշի քաղաքում 1895 թ. կենտրոնացված էր 6 կաշվի, 4 օճառի, 10 ներկարարական և 2 աղյուսի գործարաններ<sup>1</sup>:

Շուշին առավել շատ հայտնի էր, որպես արհեստավորական կենտրոն: Այս ժամանակահատվածում էլ արհեստավորները կազմակերպված էին համքարությունների մեջ և դեկավարվում էին նախկին ավանդույթներով:

Առանձնապես հայտնի էին Շուշեցի գորգագործները, ոսկերիչները, արծաթագործները, պղնձագործները, բրուտագործները, դարբինները, հյուսները, քարտաշներն ու կոշկակարները: Նրանց արտադրած ապրանքները մեծ համարում ունեին Եվրոպայում, Ռուսաստանում և Արևելքի երկրներում:

Բրոկհաուզ և Եֆրոնի հանրագիտական բառարանում կարդում ենք. «Շուշին Կովկասում գորգագործության ամենախոշոր կենտրոնն է, որի արտադրությունը սպառվում է նահանգի սահմաններից դուրս շատ հեռու և հասնում է Մոսկվա ու Պետերբուրգ: Մետաքսի գորգերի աշխատվածութուրը է գնում, որը համարյա բացառապես գտնվում է տեղի հայերի ձեռքին<sup>2</sup>:

1895թ. տվյալներով Շուշիում 1000 բնակչի վրա հաշվում էր 22 արհեստավոր<sup>3</sup>: Նույն ժամանակահատվածում քաղաքում կար 500 տեսակ արհեստ<sup>4</sup>:

Ցարական կառավարությունը Այսրկովկասը տնտեսապես ու քաղաքականապես Ռուսաստանին ենթարկելու, իր ազդեցությունը հարևան Երկրների վրա տարածելու նպատակով հովանավորում էր առևտրականներին: Եվ պատահական չէր, որ բազմաթիվ միջոցառումներով խրախուսում էր առևտրական դասին ու նրա գործունեությունը:

1821թ. հոկտեմբերի 8-ի օրենքով Այսրկովկաս ներմուծվող ապրանքներից գանձվում էր 5 % մաքս, իսկ Պարսկաստան առաքվող ապրանքների համար հաստատվում էր անմաքս տրամադրություն: Պատահական չէ, որ Այսրկովկասում արտաքին առևտրի ծավալները 1822-1870 թթ. ընթացքում 1289108 հասավ 15399969 ռուբլու<sup>5</sup>:

<sup>1</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 98:

<sup>2</sup> Энциклопедический словарь Брокгауз и Ефроня, 1909, книга 79, т. 40, с. 25.

<sup>3</sup> «Ազգագրական հանդես», գիրք Բ, էջ 98:

<sup>4</sup> Սլյան Վ., Շուշի, Երևան, 1991, էջ 54:

<sup>5</sup> „Документы и материалы по истории Армянского народа, социально-политическое и экономическое положение восточной Армении после присоединения к России(1830-1870), Ер., 1993, с. 34.

Մաքսային նման քաղաքականությունը խթան հանդիսացավ նաև Շուշիի առևտրականների աշխույժ գործունեության համար: Արդեն 30-ական թթ. ցարական պաշտոնական աղբյուրները հաստատում էին այն իրողությունը, որ հայ առևտրականներն իրենց ձեռքն են առել «Թիֆլիսի և ամբողջ Անդրկովկասի առևտուրը»<sup>1</sup>:

Մինչեւ 250000 տարեկան շրջանառություն ունեցող առևտրականները հիմնականում հայեր էին: Դրանցից հայտնի էին Շուշեցի Թառումյանների և Հախումյանների ընտանիքները:

1808 թ. Բաքվի տուրքերը 4 տարով տրվել էին Բաքա Թառումյանին<sup>2</sup>: Նրա ծեռքին էր գտնվում նաև Կասպից ծովի նավթի, ձկան, աղի ար-տադրության կապալը:

Զոհրապ և Մարկոս Թառումյանները իրենց միջոցներով կառուցեցին Ազուեցոց Եկեղեցին:

Մարկոս Թառումյանը մահվանից առաջ Էջմիածնին և մնացածներին վերադարձնում է պարտամուրիակները և երկու քսակ ոսկի բաժանում աղքատներին:

Թարումյանի մահվանից հետո նրան թաղում են մեծ պատվով, ինչպես Արտաշես Արշակունի թագավորին, գրում է Մեսրոբ Թադիալյանը<sup>3</sup>:

Երեք վաճառական հայ ընտանիքներ Շուշիի սարահարթից հսկում էին մի մեծ առևտուր, որի միջոցով իրար էին կապվում աշխարհի չորս ծայրերը Զինաստանից մինչև Արևմտյան Եվրոպա, Հնդկաստանից մինչև Ուսւաստան և Սկանդինավյան երկրներ: Գերմանական «Ալգեմայն ցայտունգ» թերթը 1846թ. նոյեմբերի 15-ի համարում գրում է. «Ղարաբաղի գլխավոր քաղաքը՝ Շուշին առանց չափազանցության կարելի է համարել Կովկասյան Ձիբրայլարո»<sup>4</sup>:

1880թ. տվյալներով Շուշիում կային 952 առևտրական և արդյունաբերական ձեռնարկություններ<sup>5</sup>:

Ծուշին 19-րդ դարում առևտրական բազմաթիվ թելերով կապված էր արտասահմանյան երկրների հետ: Ղարաբաղի և Այրակովկասի սահմանները ներ ներ էին շուշեցի առևտրականների համար: Նրանք առևտրական

<sup>1</sup> Российских владений за Кавказом" ё ч. 1 ё СПБ. ё 1836 ё с. 199.

<sup>2</sup> *LdP*, h.5, ff 268:

<sup>3</sup> Θωτηματική απόστολη στην Καρπάθο, 1847, τόμος 324-326.

<sup>4</sup> „*Allgemeine Zeitung*“: 15 November, 1846.

<sup>5</sup> „Argentinische Zeitung“, 15 November, 1848.

գործառնություն ծավալեցին Ոտսաստանում, Իրանում, Եվրոպական երկրներում:

Չուշեցի մեծահարուստներ Հախումյանները նշված երկրներում ունեին իրենց գործատները և Ոտսական կայսրության բանկերում ունեին մոտ մեկ միլիոն ռուբլի<sup>1</sup>:

Առևտրի զարգացմանը խթանում է նոր ճանապարհների կառուցումն ու փոխադրական միջոցների կատարելագործումը: Կառուցվեցին և խճապատվեցին Չուշի-Եվլախ, Չուշի-Գորիս-Նախիջևան-Երևան ճանապարհները: Չուշիում գործում էին «Նադեժդա» և «Ռոսիա» ընկերությունների գրասենյակները, որոնք կազմակերպում էին ապրանքների փոխադրումը<sup>2</sup>:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ 19-րդ դարի 2-րդ կեսին և 20-րդ դարի սկզբներին ներկայիս Աղրբեջանի, հատկապես Բաքվի առևտրական և արդյունաբերական կապիտալի գերակշիր մասը գտնվում էր ղարաբաղի, ինչպես նաև արևելահայ մեծահարուստների ձեռքին: Բաքվում հրատարակված ռուսերեն լեզվով Աղրբեջանի պատմության մեջ հետաքրքիր տեղեկություններ կան վերոհիշյալի մասին: Այսպես, օրինակ Բաքվի Խոշորագույն նավթահորերը գտնվում էին Մանթաշյանի, Լիանոգովի, Ղուկասյանի, Փիթուկի, Մահյանի, Արամյանցի, Թաղևոսյանի, Ծատրյանի, Միրզոյանի մետաքսի արտադրության գործարանները՝ Մերոբյանի, Գյանջումյանցի, Հարությունյանցի, Քամայյանի, Ներսիսյանի, Զուրաբյանի ծկնաարդյունաբերությունը՝ Լեանոգովի, Ղուկասյանի, Մահյանի, Փիթայանի առևտուրը՝ Արամյանցի, Անանյանի, Մահյանի, Հովհաննիսյանի, Առաֆեյյանի(Արաֆելով), Ղովլաթյանի, Զանհոլադյանի, Աֆրիկյանի ձեռքում:

Հայերն էին տնօրինում գինեգործական, ծխախոտագործական արդյունաբերությունը: Նրանց ձեռքին էր կենտրոնացված Աղրբեջանի քիմիական արդյունաբերության 10 տոկոսը, մեխանիկական արտադրության 22 տոկոսը: Ոչ լրիվ տվյալներով 1900թ. Բաքվի նահանգի արդյունաբերական ձեռնարկությունների 29 տոկոսը պատկանում էր հայերին, 27 տոկոսը՝ ռուսներին, 18 տոկոսը՝ աղրբեջանցիներին և 13 տոկոսը՝ օտարերկրացիներին<sup>3</sup>:

<sup>1</sup> Են, Պատմութիւն Դարաբաղի Հայոց մեմական հոգեւոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 68.

<sup>2</sup> «Ազգագրական համեմատ», գիրք Բ, էջ 112:

<sup>3</sup> История Азербайджана, т. 2, стр. 256-257.

Առևտրա-արդյունաբերական կապիտալի հայ ներկայացուցիչները իրենց գործունեությամբ դարձան հասարակության առաջնորդիչ ուժը: Լեռն իրավացիորեն գրել է. «Այն ժամանակվա մեր կյանքում այդ դասակարգն էր, որ հոգևորականությունից հետո կատարում էր խոշոր հասարակական դեր»<sup>1</sup>:

19-րդ դ 2-րդ կեսին սոցիալ-տնտեսական տեղաշարժերը որոշակի պայմաններ էին ստեղծում կրթա-մշակութային կյանքի զարգացման համար: Նոր տնտեսական հարաբերությունները պահանջ են դնում ունենալ ուսյալ մասնագետներ: Հայ մեծահարուստները միջոցներ չեն խնայում իրենց զավակներին և, ինչու չէ, նաև տաղանդաշատ հայրենակիցներին ուսում տալու հայրենի երկրում և արտասահմանում:

Քննարկվող ժամանակահատվածում Շուշիում գործող դպրոցների մեջ մասը պահպում էր մեկենասների միջոցներով:

1898թ. թեմական դպրոցի նոր շենքը կառուցվել է հանգանակությունների միջոցով հավաքված փողերի միջոցով: 1908թ. ռեալական դպրոցը Մովսես բեկի տնից տեղափոխվեց առևտրական բարերար Արաֆեյյանի կառուցած հիասքանչ շենքը:

Մարիամյան օրիորդաց դպրոցը գործում էր նրա ամուսնու՝ Համբարձում Հախումյանի նվիրած սեփական տան մեջ: Շուշեցի մեծահարուստ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյան եղբայրները, իրենց հանգուցյալ քրոջ հիշատակը հավերժացնելու նպատակով, Ամենայն հայոց կաթողիկոսի տրամադրության տակ են դնում երկու հարյուր հազար ռուբլի և Շուշիում գտնվող իրենց սեփական տունը «Մարիամ Ղուկասյան» անունով օրիորդաց դպրոց հիմնելու համար:

Շուշիի թեմականի 75-ամյա տարեդարձի կապակցությամբ մոսկվայաբնակ մեծահարուստ Բաղդասար Արզումանյանը դպրոցին նվիրեց 200 000 ռուբլի, որից ստացված տուկոսներով պետք է հոգային դպրոցի կարիքները: Միաժամանակ դպրոցին տրվեց Պոկրովկա, Զիստը պրուտը քաղաքում գտնվող սեփական պալատը, միայն մի պայմանով, որ ամեն տարի մեկենասի ծննդավայրից՝ Զարդանաշենից չքավոր մանուկներից երկու հոգու ձրիհաբար սովորեցնեն դպրոցում: Նույն տարեդարձի կապակցությամբ Միքայել Արամյանը Շուշիում գտնվող

<sup>1</sup> Լեռ, հ.3, էջ 523:

30 000 արժողությամբ իր տունը նույնպես նվիրեց դպրոցին: Այս ցուցակը կարելի է շարունակել:

Այսպիսով, 19-րդ դարում ցարական կառավարությունը նպատակաւորված քաղաքականությամբ փորձում էր Այսրկովկասը այդ թվում Արցախը տնտեսապես յուրացնել, տարածաշրջանը դարձնելով իր հումքային կցորդը և արտադրված ապրանքների իրացման շուկա:

Այդ ամենով հանդերձ ձեռնարկված միջոցառումները նպաստեցին Երկրամասում ապրանքադրանական հարաբերությունների ձևավորմանն ու տնտեսական զարգացմանը:

**СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ  
В АРЦАХЕ В XIX ВЕКЕ**  
**Ваграм Балаян**

Резюме

В XIX веке царское правительство целенаправленной политикой пыталось экономически подчинить себе Закавказье, в том числе и Арцах, превратив его в свой сырьевой призрак и рынок сбыта товаров.

Вместе с тем, проводимая царским правительством политика способствовала развитию товарно-денежных отношений в регионе и экономическому подъему края.

**SOCIO-ECONOMIC STATE IN ARTSAKH IN THE 19<sup>TH</sup> CENTURY.**

Vahram Balayan

Summary

In the 19th century, the imperial government with targeted policies tried to subordinate economically to Transcaucasia, including Artsakh, turning it into a raw materials appendage and market goods.

At the same time, the policy pursued by the imperial government promoted the development of commodity-money relations in the region and economic rise of the country.

## ՑԱՐԱԿԱՆ ՈՌԻՍԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆԻԹՅՈՒՆԸ ԴԱՐԱԲԱՂՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

### ՆԵԼԻ Բաղդասարյան

Պատմական գիտությունների թեկնածու

ԼՂՀ, Մեսրոպ Մաշտոց Համալսարան

1804 թ. սկսած ռուս-պարսկական պատերազմն ավարտվում է 1813 թ. հոկտեմբերի 12-ին՝ Ղարաբաղի Գյուլիստան բերդավանում կնքված պայմանագրով, որի համաձայն Պարսկաստանը ճանաչում է մի շարք տարածքների, այդ թվում՝ Ղարաբաղի խանության միացումը Ռուսաստանին<sup>1</sup>:

Ռուսական տիրապետության սկզբնական շրջանում մինչև 1822 թ.՝ Ղարաբաղի խանության վերացումը, Ղարաբաղի կյանքում թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական առումներով շատ բան չփոխվեց: Գործում էր նաև նախկին հարկային համակարգը: Ղարաբաղի խան Մեհսի Ղուկին շարունակում էր խանությունը ղեկավարել մահալների բեկերի օգնությամբ: Տարբեր խանություններում մահալների բեկերը տարբեր իրավունքներ ունեին, բայց, ընդհանրապես, նրանց պարտավորությունները հետևյալն էին՝ 1) խանի կողմից ողջ մահալի համար որոշված տուրքը բաժանել գյուղերի վրա, 2) ստիպել գյուղացիներին՝ անթերի վճարելու հարկերը և այլն<sup>2</sup>:

Ղարաբաղի բնակչությունը բաժանված էր երկու հատվածի՝ հարկատու և ոչ հարկատու: Բնակչության ոչ հարկատու հատվածի մեջ մտնում էին որբերը, այրիները, չքավորները, հոտաղները, ռանչպարները, ինչպես նաև բեկերը, մաաֆները և հոգեորականությունը<sup>3</sup>: Հարկատու բնակչությունը՝ նստակյաց և քոչվոր, ուներ աշխատանքային, բնամթերային և դրամական հարկային պարտավորություններ:

Ղարաբաղի խանության նստակյաց և քոչվոր բնակչությունից տարբեր հարկեր էին գանձվում: Նստակյաց բնակչությունը, հօգուտ խանական դիվանի, հողի օգտագործման համար վճարում էր հետևյալ հարկերը. «մալուցահար» (նշանակում է՝ բերքի մաս), հացահատիկի և հացա-

<sup>1</sup> Բալյայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 204, Ազատյան Հ., Բախտորոշ պայմանագրեր, Երևան, 2002, էջ 27-31:

<sup>2</sup> Անձնուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հ. I, Բաքր, 1916, էջ 25:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 56, գ. 4, գ. 1097ա:

հատիկային մյուս մշակաբույսերի 1/10, ինչպես նաև մետաքսի 1/5-ի չափով, «սալյանե»<sup>1</sup>՝ գանձվում էր բնամթերքով (ցորենով և գարով):

Ղարաբաղի բնակչության կողմից վճարվող հարկերից էր «բառբաշխն»՝ այգիներից և «չորաշին»՝ արոտավայրերից հավաքվող հարկ<sup>2</sup>:

Հարկերի հաջորդ խումբը հավաքվում էր զորքին և աստիճանավորներին պահելու համար. «միրզայանա» կոչվող հարկը գանձվում էր խանական գրասենյակի համար, «որովուղ փուլու»<sup>3</sup>, «թահվիլանի» և «դարղալը», որոնք գանձվում էին խանական պաշտոնյաների ծառաների և զորքի վարձատրության համար, «քալանթարլը» կոչվող տուրքը գանձվում էր առավել ցածր պաշտոններում ծառայողների օգտին: «Ատարապասի»՝ գարու հարկ էր, որը գանձվում էր խանական կամ բեկական ձիերի համար:

Գոյություն ունեին հարկեր, որոնք գանձվում էին պարտադիր նվիրատվությունների ձևով՝ հօգուտ ավատատերերի և աստիճանավորների. «բայրամլը»՝ նովրուգ-բայրամի տոնի և հարսանիքի համար վճարվող հարկ, որը կազմում էր 6 ռուբ. 40 կոպ.-10 ռուբ., իսկ առանձին գյուղեր այս հարկի դիմաց նաև փայտ էին տալիս<sup>4</sup>: «Թոյ-փայի» տասանորդ էր «դատական նեղությունների» համար. Երբ կողմերը հաշտվում էին վեճի նյութ դարձած առարկայի շուրջ, գանձվում էր վեճի առարկայի արժեքի տասներորդ բաժինը: Դատարանում գողոնի առգրավումից կամ տուգանքի ենթարկվածներից գանձվում էր «ջերմա»: Հարկաբաշխության ժամանակ, եթե ժողովուրդը նախօրոք համաձայնության էր գալիս տնային պարտավորության հարցում, ապա նայիրի կամ դարդայի (հարկահավաքի) օգտին հավաքվում էր դրամական ընծա, որը կոչվում էր «օթաղ-խարջի»՝ տան-փող<sup>5</sup> վճարվում էր ցորենով և գարով, երբեմն էլ՝ դրամով:

«Կիր-խանա-խարջին» ևս իրենից ներկայացնում էր պարտադիր նվիրատվություն, ծխերից հավաքվող հարկ՝ խանի սեղանի համար:

<sup>1</sup> Петрушевский И., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, 1949, с. 272.

<sup>2</sup> 1847 թ. թվագրված մի վավերագրում հանձնարարվում է Մուսայել թեկ Շոյուխանովին և Մեսրոպ Թառումանին՝ «Նարապաղու թագաւորական տեղեաց գօպաշին» հավաքել և հասցնել Ծուշի<sup>2</sup>: Այս մասին տես՝ Վակերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան, գիրք թ. Հայ Արաքելական Եկեղեցու Արցախի թեմը (1813-1933 թթ.), Երևան, 2000, էջ 156:

<sup>3</sup> Եւոն Վարդան, Հարկերը Օսմանեան եւ Պարսկական Կայսրութիւններուն մէջ, ժԵ-ի դար, Ա-ի, Երևան, 2004, էջ 229:

<sup>4</sup> Колониальная политика российского царизма в Азербайджане в 20-60-х гг. XIX в. Ч. I, Феодальные отношения и колониальный режим 1827-1843, М.-Л., 1936, с. 11.

<sup>5</sup> Անանուն Դ., Աշվ. աշխ., էջ 51:

Նստակյաց բնակչությունն այն վճարում էր ցորենով, գարով և երբեմն՝ յուղով, իսկ քոչվորները՝ յուղով, ոչխարներով և թռչուններով<sup>1</sup>: 1827 թ. Ղարաբաղի գավառի բնակչության կիր-խանա-խարջիի գումարը պետք է կազմեր 1244 ռուբ. 50 կոպ.<sup>2</sup> արծաթով:

Բացի բնամթերային հարկերից, Ղարաբաղի բնակչությունը պետք է կատարեր նաև *աշխատանքային պարհակներ*. «ղուլլուղ»՝ պարտադիր աշխատանք տիրոջ համար, «իլսիչի»՝ ռայաթներ էին հատկացվում խանի ձիերի պահնան համար, ինչպես նաև «զորգերով հարկ»<sup>3</sup>:

Վերոնշյալ հարկերից բացի, 1805 թ. կցվելով ցարական Ռուսաստանին, Ղարաբաղի խանությունը պարտավորվեց վճարել ամենամյա հարկ՝ 8000 չերվոնեց: Հարկի հավաքումը պետք է վերահսկեր պրիստավը<sup>4</sup>: Ղարաբաղի գյուղերից, ըստ ծխերի, գանձվող հարկն իրենք՝ գյուղացիները կոչում էին «ոսկի՝ ըստ ծխի»<sup>5</sup> կամ չերվոնեցներով հարկ, որը գանձվում էր ինչպես քոչվոր, այնպես էլ նստակյաց բնակչությունից: Այս հարկի հավաքումը հետագայում տեղիք տվեց չարաշահումների. 8000 չերվ. հարկը, ինչպես նաև փոստառաքման և փայտի պարտավորությունը, կատարում էր միայն հայ արքունական գյուղացիությունը, քանի որ բնեկերից շատերը նախկին խանի թուլությունից և թողտվությունից օգտվելով, չէին մասնակցում այդ պարտավորության կատարմանը:

Սկսած 1823 թվականից՝ գավառական դատարանը հաստատել էր ծխահարկը, որը նույնն էր յուրաքանչյուր ծխի համար: Այն հաստատվել էր նաև ռազմաշրջանային դեկավարի կողմից: Հետագայում ծխահարկի բաշխման իրավունքն անցավ մահալային նայիբներին, որոնք կատարեցին ծխահարկի վերաբաշխում՝ կախված արդեն յուրաքանչյուր ծխի տնտեսական վիճակից: Հարկահավաքներն իրենք էին որոշում հարկաչափը, որը, կախված բերքի չափից, ամեն տարի փոխվում էր<sup>6</sup>: Նման համակարգը պատճառ եղավ մեծ չարաշահումների:

<sup>1</sup> Исаиац-заде Д., Из истории кочевого хозяйства Азербайджана первой половины XIX в., «Исторические записки», N 66, 1960, с. 130, 96-136.

<sup>2</sup> Гаджиева З., Гарабагское ханство: социально-экономические отношения и государственное устройство, Баку, 2008, с.50.

<sup>3</sup> Тунян В., Административно-экономическая политика самодержавия России в Закавказье 1-й пол. XIX в., Ереван, 2003, с. 116.

<sup>4</sup> Թաղող գյուղի մասին պատուղ Այութք պահպում է ԼՂՀ Հաղորդի շրջանի պատմաերկրագիտական թանգարանում:

<sup>5</sup> Бахтадзе И., Податное обложение государственных крестьян Закавказского края, Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, (СМИЭБГКЗК), Тифлис, 1887, т. I, ч. 3, с. 28.

Գավառը վճարում էր նաև փայտի հարկ՝ Շուշիում տեղակայված ռուսական գորքերի համար, կատարում բեռնակրային պարտավորություն՝ բանվորներ և բեռնակիրներ, ինչպես նաև բանող անասուններ տրամադրելով խանական, իսկ հետագայում՝ ռուսական վարչակազմին և գորքին՝ շինարարական աշխատանքների համար:

Ղարաբաղի նկատմամբ կիրառվող հարկային քաղաքականությունը էական փոփոխություններ չկրեց՝ մինչև 1816 թ. Ա. Երմոլովի Կովկասի կառավարչապետ նշանակվելը: Պաշտոնում նշանակվելուն պես՝ վերջինիս հետաքրքրությունների կենտրոնում հայտնվեց Ռուսաստանի անդրկովկասյան տիրույթների իրական հնարավորությունների բացահայտումը և ըստ այդմ՝ նա ուշադրությունը բներեց հարկային համակարգի վրա: Ղարաբաղից հավաքվող հարկերի մասին առաջին փաստաթությը վերաբերում է 1817 թ. մարտի 4-ին, որը Ա. Պ. Երմոլովի գեկուցն էր՝ ուղղված ռուսաց կայսեր՝ Ալեքսանդր 1-ինին, հարկերը չհավաքելու խնդրանքով: Երմոլովը պարզել էր, որ 1805-1817 թթ. Ղարաբաղի խանության ընդհանուր հարկերը կազմել են 88 հազ. չերվ., որից 53128 չերվ. ծախսվել էին բանակի կարիքների, խանական ընտանիքին ու աստիճանավորներին վարձատրելու համար: Դրանից 34872 չերվ. խանությունը պարտը էր մնացել: Այդ առիթով Ա. Երմոլովը դիմել էր Ալեքսանդր 1-ինին՝ խնդրանքով՝ չեղյալ համարել պարտը: Նա մատնանշել էր այն հանգամանքը, որ Պարսկաստանի հետ պայմանագրի կնքումից հետո 4000 դարաբաղյան ընտանիքներ են տեղափոխվել, և իր կողմից կատարված մարդահամարի արդյունքում պարզվել էր, որ Ղարաբաղում 1817 թվականի դրությամբ ապրում էր 7872 ընտանիք, այն էլ՝ լրիվ աղքատ վիճակում: Նա նշում էր, որ 10000-անոց բնակչության համար սահմանված հարկն արդեն թվաքանակով քիչ բնակչությունը չէր կարող տալ<sup>1</sup>:

Ալեքսանդր 1-ինը մեծ նշանակություն տվեց Ա. Երմոլովի այս գեկուցին, ինչի մասին է վկայում նրա՝ 1817 թ. հուլիսի 4-ի՝ ֆինանսների նախարարին ուղղված գրությունը, որտեղ նա թույլատրում է վերջինիս՝ չգանձել Ղարաբաղի խանության ապառքը: Այդ առիթով նա գրել է. «...Նրանց վիճակի բարելավման և արտասահմանում մնացած դարաբաղյիների նախկին բնակավայրերը վերադառնալը խրախուսելու համար ես թույլ եմ տալիս վերոհիշյալ ապառքը՝ 34872 չերվ., նրանց ներել՝

<sup>1</sup> Присоединение Восточной Армении к России, сборник документов, т. II (1814-1830), Ереван, 1978, с. 34.

այդ մասին հայտարարելով ամբողջ Ղարաբաղին, մի կողմից՝ որպեսզի բնակիչները ամբողջությամբ զգան կառավարության ուշադրությունը, մյուս կողմից՝ որպեսզի խանը նրանցից պարտքը իր օգտին չպահանջի»<sup>1</sup>: Ցարն այս գիծումը կատարել էր պայմանով՝ որ խանը պարտավորվի 1817 թ.-ից հետո հարկերը վճարել լրիվությամբ, իսկ հարկերի անկորուստ հավաքնան վերահսկողությունը հանձնարարում էր Երմոլովին: Սակայն իրադարձություններն այլ հունով զարգացան. ինչպես վերը նշվեց, խանական վարչաձևը տապալելու ուղղությամբ Ա. Երմոլովի ծեռնարկած հետևողական քայլերը հասցրին նրան, որ 1822 թ. նոյեմբերին Ղարաբաղի վերջին խան Մեհտի Ղուլին փախավ Պարսկաստան: Նրա փախուստի մասին 1822 թ. դեկտեմբերի 14-ին Ալեքսանդր 1-ինին գրած իր գեկուցում Ա. Երմոլովը գրում է. «Խանության բնակիչները, ծերդ կայսերական մեծության շայլությունը՝ մի քանի տարվա ապառքը չվճարելու մասին, ստանալուց հետո, այս ողորմածությունից չեն օգտվել, քանի որ խանը հարկերը գանձարան չի ներկայացրել, բայց բնակիչներից հարկ է հավաքել»: Այնուհետև նա գրել է, որ Ղարաբաղի խանության մեծաքանակ հարկերը գանձարան մուտքելու համար անհրաժեշտ էր համարում վերացնել «մահմեդական կառավարումը», որից հետո բնակչությունը, տեսնելով տիրող կարգապահությունը, հավատարիմ կլինի իր հանդեպ «բարեգործ» գտնված կառավարության նկատմամբ<sup>2</sup>:

Ա. Երմոլովը Ղարաբաղի իրական հնարավորությունները բացահայտելու և տեղում տիրող հարկային համակարգին ծանոթանալու նպատակով Ղարաբաղ է ուղարկում ռուսական պետական պաշտոնյաներ Պ. Ի. Մոգիլևսկուն և Պ. Ն. Երմոլովին: Նրանց երկարատև աշխատանքների արդյունքում պարզվում է, որ Ղարաբաղի խանության շրջանի հարկային համակարգը բավականին խարը տեսք ունի, հարկահավաքման գործը գտնվել և գտնվում է խանի, նրա մերձավորների ձեռքում: Շատ հաճախ մեկ ապրանքից մի քանի տեսակի հարկ է գանձվել: Ինչպես վերը նշվել է, խանական գանձարանի եկամուտների մեջ բաժինը բերում էր մարսային համակարգը՝ ռահեղարք:

Խանական Եկամուտների Երկրորդ աղբյուրը կապալային համակարգն էր, որից ստացված Եկամուտները խանությունների անուղղակի

<sup>1</sup> Առյան տեղում, էջ 40:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 111:

հարկերն էին<sup>1</sup>: Ղարաբաղի խանը մենաշնորհի կարգավիճակ ունեցող առևտրարդյունաբերական ձեռնարկությունները վարձակալության կարգով տալիս էր իր հարազատներին ու բարեկամներին: Կապալառուն (Վարձակալ) կանխիկ դրամ<sup>2</sup> գումար մուծելով խանի գանձարան՝ ազատորեն տնօրինում էր տվյալ գործարանը: Կապալային համակարգը բավականին պարզունակ ձև էր, որը բացասաբար էր անդրադառնուն տնտեսության զարգացմանը:

Հարկահավաքությունը գտնվում էր տարբեր անձանց ձեռքբերում, որոնց նշանակել էր խանը: Ընդ որում, երբեմն մեկ ապրանքից գանձվում էին ամենատարբեր անվանումներ ունեցող հարկեր, օրինակ՝ մեկ մանր կամ խոշոր եղջերավոր անասունից մինչև քաղաք հասցելը չորս անվանում ունեցող հարկ էր գանձվում<sup>3</sup>:

Պ. Մոգիլսկին և Պ. Երմոլովն առաջարկում էին հարկահավաքությունը կամ Վարձակալության իրավունքը փոխհատուցմամբ վերցնել առանձին անհատներից և հանձնել աետությանը: Գեներալ Ա. Երմոլովի կարգադրությամբ՝ հարկահավաքությունը հավաստող փաստաթղթի առկայության պարագայում, այդ իրավունքը հարկահավաքի ձեռքից վերցնելու դեպքում՝ վերջինս պետք է փոխհատուցում ստանար, այլապես գրկվում էր դրանից:

Հետևելով վերոնշյալ կարգադրությանը՝ 1823 թ. մայիսի 2-ին Ա. Երմոլովին ներկայացվեց Պ. Մոգիլսկու և Պ. Երմոլովի գեկույցը Ղարաբաղի եկամուտների մասին: Պետության կողմից փոխհատուցման չենթարկված և փոխհատուցված վարձակալական հոդվածները, որոնք այդուհետ գանձվելու էին ցարական գանձարանի օգտին, հետևյալ աղյուսակային պատկերն էին ներկայացնում<sup>4</sup>: (Աղյուսակ 1)

Փոխհատուցման չենթարկված վարձակալական հոդվածներ	Խանական դրամ		Ուստական արձաթ	
	Ռուբլի	Կոպեկ	Ռուբլի	Կոպեկ
Մեհմի-Դուլի խանին պատ- կանող հարկեր				
1) Ձերար-խանե կամ դրամա-	47,165	-	-	-

<sup>1</sup> Անանուն Դ., նշվ. աշխ., էջ 67:

<sup>2</sup> Տүնյան Բ., *Политика самодержавия России в Закавказье XIX- нач. XX вв. Часть третья, 1836-1844 гг.*, Ереван, 2006, с. 66.

<sup>3</sup> *При соединение Восточной Армении к России, т. II, с. 112-113.*

<sup>4</sup> Նոյն տեղում, с. 121-122.

հատության իրավունք				
2) Միզանի (ապրանքի արտահանման իշխունք) և մարենի հարկ	-	-	1,428	57
3) Ներկահարկ	-	-	4,444	44
4) Տոմսահարկ	-	-	4,020	-
5) Օճառահարկ	1,400	-	-	-
6) Կաշվեհարկ	500	-	-	-
7) Ագիներ՝ Մեհսի-Ղուլի խանին և Զաֆար-Ղուլի աղային պատկանող	- 1,000	- -	1,000 -	- -
8) Հարկ՝ կրպակներից	424	-	-	-
9) Հարկ՝ մետաքսագործ վարպետներից	236	-	-	-
10) Մորթահարկ՝ Ասաղ-բեկի մորթարանից	6,000	-	-	-
11) Տոմսահարկ, որը պատկանում էր Ողուստամ-բեկ և Հաջի-Աղալպար-բեկ եղբայրներին	10,000	-	-	-
66,725 ռ. խանականով կազմում է	66,725	-	10,893	1
	-	-	10,591	35
Ընդամենը			21,484	36
Փոխհատուցման ենթարկված վարձակալական հոդվածներ				
12) Ուհեղար, որը պատկանում էր Խանլար-աղային	50,000	-	-	-
13) Տոմսահարկ՝ պատկանում էր Գյուլ-Մամեդ-բեկին	3,300	-	-	-

14) Կապան՝ պատկանում էր խանի քրոջը Ազատ-բեգյումին	3,500	-	-	-
15) Ծխախոտահարկ՝ պատկանում էր խանի քրոջը Ազատ Բեգյումին	400	-	-	-
16) Շիրա-խանե՝ օղեհարկ, պատկանում էր Բեհրամ-բեկին	-	-	500	-
17) Տոմսահարկ՝ պատկանում էր Ալի-բեկին	1,000	-	-	-
18) Դարգա-բազար՝ պատկանում էր խանի քրոջը՝ Գոհեր աղային	6,000	-	-	-
19) Ներկահարկ՝ պատկանում էր Հաջի-Բեգյար-բեկին	1,600	-	-	-
65,830 ռ. խանականով կազմում է	65,830	-	500	-
	-	-	10,449	25
<b>Ընդամենը</b>	-	-	<b>10,949</b>	<b>25</b>
<b>Վարձակալական հոդվածներից ստացվող շահույթը՝ ընդամենը</b>			32,433	61

Դարաբաղի Եկամուտների հաշվառման ընթացքում Պ. Ի. Մոգիլևսկին և Պ. Ն. Երմոլովը բախվել էին հետևյալ իրողությանը. բնակչության թվի, հարկերի մասին նրանք տեղեկություններ ստացել են հիմնականում մահալների բեկերի, գյուղերի տարեցների բանավոր պատմություններից, ուստի, բնակչության թիվը միտումնավոր կերպով նվազեցվել կամ ավելացվել է: Պաշտոնյաները մատնաշում էին, որ մաաֆները, խանի ծառաները և Վարսավիրները հարկեր չեն վճարում և առաջարկում էին այդ իրավունքը հավաստող փաստաթղթեր ներկայացնել՝ հակառակ դեպքում պետք է ենթարկվեին հարկատվության<sup>1</sup>: Ուստի աստիճանավոր-

<sup>1</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 120.

ների դիտարկման արդյունքում Ղարաբաղի գավառից սպասվող եկամուտները հետևյալ քանակությունն էին կազմում<sup>1</sup>: (*Աղյուսակ 2*)

	Ընտանիքներ		Հայտնի առևտինությունը	Հերկոնեց		Խանական արժաք		Շուսական արժաք	
	Կառավարություն	Ոչ հարկածություն		8000 ՀՆՎ.	Կայուն	Օթար-իսպանց	Վարժ	Կրտսեր	Վարժ
1	2	3	4	5	6	7	8	9	10
Շուշի	192	1,270	260	560	230	1,204	-	191	14
Խանական ընտանիքին պատկ.	914	1,350	234	564	4	487	90	77	48
Գյուլ-Մամեդ-բեկ	133	115	105	147	35	988	25	156	89
Սիսիանի մահալ	87	116	20	29	7	5,221	98	828	97
Ղեմուրչի հասանլի մահալ	335	132	220	388,5	114,5	5,113	80	811	73
ՈՒղուրլուր-բեկի կալվ.	304	116	-	104	-	107	10	17	0,5
Քյուփար-բեկի մահալ	34	22	-	22	3	1,950	64	309	66
Մաղաթ-վի կալվածք	1,245	-	-	338	-	-	-	-	-
Խսմայիլ-բեկի կալվածք	95	97	-	35	-	-	-	-	-

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 122-123:

Հաջի-Աղալար-բեկի կալվածք	155	427	-	50	-	-	-	-	-
Սեֆեր-Ակի-բեկի կալվ.	183	50	-	-	-	-	-	-	-
Բարզուշատի կալվ.	-	146	-	5	-	-	-	-	80
Բաղաբերդի մահալ	-	243	-	-	-	-	-	-	-
Խանլարադայի կալվ.	378	370	465	650	-	-	-	104	-
Ռուստամ-բեկի կալվ.	218	219	-	50	-	-	-	-	-
Մամեդ-Ակի-բեկի կառավարման տակ գտնվող թերերինի մահալի մի մասը	248	284	194	276	90	3,055	83	485	2
Տաթևի մահալ	508	190	589	737,5	221	46,531	70	7,385	99
Ասադ-բեկի կալվածք	237	153	-	45	20	984	-	156	21
Միրզա-Ակի-բեկի կառավարման տակ գտնվող թերերինի մահալի մի մասը	164	214	49	110	25	666	97	105	91
Զիվանշիրի մահալ	370	326	250	443	129	5,017	83	796	50

Թալիշի մահալ	143	102	100	85	29	3,546	40	1,472	98
Խաչեմի մահալ	99	131	176	175	47	3,506	78	556	65,5
Քոլանցին Եր կոչվող մահալ	203	259	140	198	45	1,429	-	226	91
Զրաբերդի մահալ	127	74	120	130	55	2,205	-	350	5
Խուրդակի արա- Ղիզակի մահալ	129	89	241	197,5	56,5	10,351	74	1,642	95,5
Սիսիանի մահալ	55	832	20	25	15	1,470	50	233	45
Ղիզակ- Զիվանշի- րի մահալ	285	332	202	253	73	2,852	31	452	78,5
Օքուզ-իքի մահալ	381	241	274	487	102	3,571	85	566	99,5
Իգիրմի- դորդի մահալ	85	70	135	133	38	2,711	75	430	46
Կարաչոր- լուի մահալ	294	244	400	372	128	8,712	80	1,382	73,5
Վարան- դայի մահալ	297	328	230	369,5	40,5	17,429	82	2,766	72
Ղիզակի մահալ	110	178	143	187	27	6,360	2	982	57
Զաֆար- Ղուլի- աղայի կալվածք	792	430	392	766,5	-	25,237	12	3,922	56
Մեստի- Ղուլի- խանին պատկա- նող կալվածքի բաժին	231	315	28	43	5	21,533	30	3,418	4,5

Աջնան- թյուրքի մահալ	42	25	-	30	11,5	3,344	49	530	93
Ընդա- մենը	9073	9490	4987	7955,5	155 1	185592	88	30364	10,5

Պ. Մոգիլսկու և Պ. Երմոլովի վերոնշյալ դիտարկումները տեղ են գտել «Ղարաբաղի գավառի նկարագրությունը» մեծարժեք աշխատության մեջ<sup>1</sup>: Իր աղբյուրագիտական մեծ նշանակությամբ հանդերձ, այն ունի նաև թերի կողմեր.

ա) Ցուցակներում ամփոփված են միայն հարկատու բնակչության հարկերը, սակայն պարտավորությունների մասին բավարար տեղեկություններ չկան:

բ) Լրիվ չափազանցված է բեկերին պատկանող գյուղերի և քոչատեղիների թիվը: Դա բացատրվում է նրանով, որ Պ. Երմոլովը և Պ. Մոգիլսկին տեղանքին, լեզվին, սովորույթներին, հոլասիրության ձևերին ծանոթ չլինելու պատճառով մեծապես օգտվում էին բեկերի ցուցմունքներից: Օգտվելով արիթից՝ բեկերն իրենց էին վերագրում երբեք իրենց չպատկանող գյուղերը: Ցարական աստիճանավորներն արդարացիորեն գտնում էին, որ անհրաժեշտ է կատարել Ղարաբաղի գավառի նոր դիտարկում և նոր բաժանում՝ մահալների: Առաջարկը հիմնավորում էին հետևյալ պատճառներով. Ղարաբաղն անկանոն բաժանված էր մահալների, որոշ մահալներ երբեմն անվանական բնույթ էին կրում, քանի որ դրանց բնակչությունը ցրված էր այլ տարածքներում<sup>2</sup>:

Վերը ներկայացված խանական շրջանի հարկային ժառանգությունը, ցարական պաշտոնյաների դիտարկումների արդյունքում ակնկալվող եկամուտներն իրենց անհամակարգվածությամբ չեն կարող բավարարել ռուսական կառավարությանը, որովհետև մահալային նայիբների և բեկերի միջոցով շարունակվող հարկահավաքության դեպքում հարկերը ռուսական գանձարան էին հոսում նվազագույն չափով: Չնայած նոր հարկային համակարգի անհրաժեշտությունն արտահայտված էր իր ամբողջ սրությամբ, այնուամենայնիվ, այս ուղղությամբ կատարվող քայլերը դանդաղ էին. Ռուսաստանը դեռևս ծանոթանում էր իր

<sup>1</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 241, վագ. 206:

<sup>2</sup> Присоединение Восточной Армении к России, т. II, с. 120.

անդրկովկասյան տիրույթներին և այս ուղղությամբ որոշակի քայլեր կատարվում են 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո:

## НАЛОГОВАЯ ПОЛИТИКА ЦАРСКОГО ПРАВИТЕЛЬСТВА В КАРАБАХЕ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XIX В.

Нелли Багдасарян  
Հայոց Կամաց

В статье освещено налоговое поле, имеющее место в Карабахе в 1-й чет. 19 века. По подписенному в 1813 г. Гюлистанскому договору персидское покровительство Карабаха сменяется русским. С начального периода русского покровительства, до 1822 г., разложения Карабахского ханства, с экономической и политической точки зрения в Карабахе не произошло значительных изменений. Существовала также прежняя налоговая система. После разложения ханской системы и начало русского административного правления главноуправляющий Кавказом А.Ермолов, с целью раскрытия действительных возможностей и ознакомления с местной системой налогового управления, отправляет в Карабах П.И.Могилевского и П.Н. Ермолова. Последние проводят исследования и в последствии представляют налоговое наследство Карабаха. Несмотря на то, что стоит острыя необходимость проведения новой налоговой системы, все же шаги проведенные в этом направлении незначительны. Россия все еще продолжает ознакомления со своими закавказскими владениями.

## THE TAX POLICY OF IMPERIAL RUSSIA IN KARABAKH IN THE FIRST QUARTER OF 19<sup>TH</sup> CENTURY.

Nelli Baghdasaryan  
Summary

The article illustrates the tax sphere of Karabakh in the first quarter of the 19<sup>th</sup> century. By the Gyulistan Agreement of 1813 Persian subjugation of Karabakh was replaced by Russian one. Not so many things had changed in Karabakh's life, neither in economic, nor in political aspects at the beginning of Russian rule, before 1822, i.e. before abolition of Karabakhy khanate. The previous tax system was valid. After khanate rule had disappeared and Russian regime had come to power the governor of

the Caucasus A. Yermolov sent to Karabakh some Russian officials, P. I. Mogilevskiy and P. N. Yermolov, in order to get acquainted with the local tax system and to elucidate the real possibilities of Karabakh. As a result of observations of the latter Karabakh tax system heritage of khanate period was displayed. Although the necessity of a new tax system was expressed by all its sharpness, nevertheless, the steps made in this direction were slow; Russia was still becoming acquainted with its Transcaucasian territories.

## **ГЕНЕРАЛ В.Г. МАДАТОВ И ДОНСКИЕ КАЗАКИ В БИТВЕ ПОД ШАМХОРОМ 3 СЕНТЯБРЯ 1826 Г.**

**Алексей Захаревич**

*Россия*

В этом году исполнилось 185 лет со дня начала русско-персидской войны 1826-1828гг.

В боевых действиях этой войны активное участие приняли донские казачьи части, которые снова проявили яркие образцы своего воинского мастерства, способствуя победоносному для России ее окончанию.

Не менее видную роль в войне с Персией сыграл, руководя частями русской армии, замечательный сын армянского народа, уроженец Карабаха, Валериан (Ростом) Григорьевич Мадатов (1782-1829 гг.). На момент начала войны он был генерал-майором. Наш герой родился в арцахском селении Аветараноц. Он участвовал в русско-турецкой 1806-1812 гг., Отечественной войне 1812 г. и заграничных походах 1813-1814 гг., а затем, в 1815 г. находился во Франции, командуя

гусарской бригадой в составе оккупационного корпуса русских войск во Франции. После войны с Наполеоном В.Г. Мадатов удостоился высокой чести, которую получили избранные – быть изображенным английским художником Д. Доу на портрете в Военной галерее Зимнего дворца в Петербурге.

Но с 1816г. начался новый этап жизни и деятельности князя В.Г. Мадатова, принесший ему славу героя Кавказской войны. Генерал А.П. Ермолов, назначенный командующим Отдельного Грузинского (с 1821г. – Кавказского) корпуса, востребовал Валериана Григорьевича к себе и поручил ему войска, находившиеся в Карабахе, а затем и в соседних Ширванском и Нухинском ханствах. На Кавказе Мадатов пробыл 11 лет, будучи одним из наиболее деятельных помощников А.П. Ермолова. Он руководил боевыми действиями русских войск против ханов Каракайтыхского и Казикумыкского, жесткой рукой пресекая выступления воинственных и непокорных горцев. После покорения Северного Дагестана, В.Г. Мадатов занялся благоустройством вверенных ему ханств, улучшением дорог, разведением шелковичных садов, улучшением конских заводов. В это счастливое время 42-летний генерал-майор в 1824г. женился на фрейлине императрицы Елизаветы Алексеевны, жены царя Александра I, дочери генерала Софье Александровне Саблуковой.

Необходимо заметить, что действия генерала В.Г. Мадатова в кампанию 1826г., и в частности в Шамхорской битве, имеют в отечественной историографии уже солидную нишу, заполненную трудами как дореволюционных, так и советских историков.<sup>1</sup> В них давался общий очерк участия в действиях генерала В.Г. Мадатова, но не рассматривалась проблема его руководства в Шамхорской битве и предшествующих ей схватках донскими казаками.

Необходимо начать с того, что 16-18 июля персыяне массированно атаковали русские границы, ворвались на территории Карабаха, Пам-

---

<sup>1</sup> Зубов П., *Персидская война в царствование имп. Николая I*. Изд. 2-е. СПб. 1837; Потто В. *Кавказская война. Т. 3. Персидская война 1826-1828гг. Ставрополь. «Кавказский край», 1993; Князь Щербатов. Генерал-фельдмаршал князь И. Паскевич. Т. II. СПб. 1890; Ибрагимбейли Х.-М. *Россия и Азербайджан в первой трети XIXв. (Из военно-политической истории)*. М. 1969; Ованесов Б. *Роль армянского населения Российской империи в развитии Северного Кавказа. Ставрополь. 2008 – с. 271-273; Ованесов Б., Судавцов Н. Военно-административная деятельность армян в Российской империи на Кавказе. Ставрополь. 2008 – с. 74-83; Лесин В. Генерал Ермолов. Великие исторические персоны. Москва, Вече. 2011, с. 428-439 и др.**

бака Шурагела и других пограничных районов России. Донские полки Андреева 1-го и Молчанова 1-го, находившиеся в составе отрядов войск, стоявших на границе, приняли активное участие в оборонительных боях, опираясь на армянские отряды ополчения, стихийно создававшиеся в ходе персидской агрессии.<sup>1</sup> Ярчайшим эпизодом русско-армянского боевого братства этой поры было 48-дневная оборона крепости Шуши.

К моменту нападения врага В.Г. Мадатов поправлял свое здоровье на Кавказских минеральных водах, поручив командование полковнику И.А. Реуту, которому и пришлось принять первый удар и возглавить оборону Шуши.

А.П. Ермолов, по получении известий о начале войны, дал распоряжение В.Г. Мадатову прервать лечение и явиться в Тифлис. Там он приказал ему собрать войска и двинуться в сторону Елисаветполя (Гянджи).

Пока В.Г. Мадатов добирался до Тифлиса, в Елисаветполе произошли события, усложнившие общую обстановку в регионе. Персы, отделенные Аббас-Мирзой от основных сил, осаждавших Шушу, не встречая сопротивления, заняли город со всем округом. Это произошло потому, что им способствовало, так же как и в Карабахе, местное мусульманское население, поднявшееся на борьбу с русской администрацией, используя момент вторжения.

События развивались следующим образом. По получении известия о вероломном вторжении врага, А.П. Ермолов приказал окружному начальнику Елисаветпольского уезда Симонову, чтобы он немедленно вывел из Елисаветполя в Тифлис малочисленный гарнизон, захватив с собой денежную казну и административные дела. А.П. Ермолов опасался восстания мусульман. Выполняя его распоряжение, Симонов вызвал к себе две роты, находившиеся в Зурнабаде. Но пока они подходили, восстание мусульман уже началось. Когда татары узнали, что

<sup>1</sup> Захаревич А., Донские казаки и армянское население в обороне русских границ от персидских войск в начальный период кампании 1826г. //Армяне Северного Кавказа. Вып. 2. Краснодар. Studia Hontocaucasica. 1995 – с. 108-128; Он же. Донской казачий полк Молчанова 1-го в обороне Шуши в 1826 году. // Россия и армяне Нагорного Карабаха в прошлом и настоящем. Отв. ред. Черноус В.В. Южнороссийское обозрение. Вып. 67. М.- Ростов-на-Дону – Степанокерт. Социально-гуманитарные знания. 2011, с. 174-189

войска покидают город, 27 июля, на 11-й день войны, они поголовно вооружились саблями и кинжалами, ворвались в крепость и направились к тюрьме, чтобы освободить заключенных. Они это сделали, перебив караул. Затем восставшие овладели казначейством, взяв несколько мешков с медными деньгами. В городе в ночь с 27 на 28 июля многие русские были вырезаны.

В это время к Елисаветполю подходили вызванные Симоновым две роты пехоты. Командовавший ими капитан Шнитников выслал вперед поручика Габаева с 12 донскими казаками предупредить Симонова о своем прибытии. Встретившиеся Габаеву армяне рассказали о случившемся в городе и посоветовали вернуться. Но тот захотел сам во всем убедиться, въехал в город и был взят в плен вместе с казаками. Не ожидая Габаева, капитан Шнитников подошел к Елисаветполю, вошел в черту города, но засевшие в домах татары встретили его кинжалным огнем. Шнитников пытался пробиться на Тифлисскую дорогу, потеряв одного офицера и 32 солдата убитыми. Положение было критическим, но в это время к пробивавшимся ротам явился Габаев со своими казаками, освобожденные местными армянами из плена. Уроженец Елисавеполя, отлично знавший расположение городских улиц, Габаев провел роты там, где, по показаниям армян, татары не успели возвести завалы и устроить засады.<sup>1</sup>

С уходом отряда Шнитникова татары стали хозяевами города, а затем его заняли персияне, занявшиеся грабежом окрестностей. Неприятель выдвинул часть своей конницы в Шамшадильскую дистанцию и присоединил к своим силам до 2000 вооруженных татар. С этим отрядом прибыла и часть конницы из Эривани для сопровождения в Грузию царевича Александра, посланного персиянами для поднятия восстания в Кахетии.<sup>2</sup> Это дело царевичу было знакомо, т.к. он им занимался с 1801г., будучи одним из зачинателей долгой Кавказской войны...

Прибывший к этому времени в Тифлис В.Г. Мадатов принял за создание отряда. Сначала его задачей являлось прикрытие Кахетии. В его состав включили все, что к этому времени было в Тифлисе: 8

---

<sup>1</sup> Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе. Т. VI. СПб. 1888 – с. 655-656.

<sup>2</sup> Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе. с. 656.

батальонов пехоты, 14 орудий и Донской казачий полк Костина 4-го.<sup>1</sup> А. П. Ермолов усилил отряд формированиями из грузин и осетин. Не полагаясь на стойкость этой милиции и способность ее к разведывательной службе, В.Г. Мадатов просил Ермолова прислать ему хотя бы немного казаков, однако тот отказывал, сообщая, что они ему самому нужны, а также, что непосредственно в его распоряжении в Тифлисе осталось пехоты только 400 чел.

В.Г. Мадатов понимал, что долго собирать отряд невозможно: нужно действовать. Поэтому уже 4 августа собранные войска выступили из Тифлиса. Сначала они шли без командира, князь 9 августа спешно догнал их у Красного моста, и не мешкая, направился к Елизаветполю (Гяндже).<sup>2</sup>

13 августа отряд В.Г. Мадатова соединился с войсками, стоявшими под командой графа Симонича на реке Акстафе. Полковник Симонич оказался в Казахской дистанции 30 июля, приведя с Лезгинской линии батальон Грузинского полка, сотню Донского полка Сысоева 2-го под командованием воинского старшины Князева и 4 орудия. Шамшадильская и Казахская дистанции были охвачены восстанием мусульман (татар) 30 же июля полковник Симонич оказался в Шамшадиле, став на реке Таузе. 31 июля уже была перестрелка с восставшими. 1 августа татары явились уже в значительных силах и пытались даже отрезать фуражиров, но попали между двух огней: с одной стороны ударили сам Симонич с ротой грузинских гренадеров, с другой – атаковали донцы воинского старшины Князева. Последний, в порыве храбрости, занесся слишком далеко и был ранен, один из всего отряда. Восставшие татары были отброшены с большой потерей. 2 августа была опять перестрелка, а 3-го отряд графа Симонича передвинулся опять в Казахскую дистанцию, на речку Акстафу, заняв важное в стратегическом смысле Диличанско-ущелье (ворота в Грузию – А.З.). Прибытие В.Г. Мадатова с отрядом на Акстафу произвело большое впечатление на татар, всегда склонных становиться на сторону сильного. Они совсем не рассчитывали увидеть В.Г. Мадатова, т.к. персияне,

---

<sup>1</sup> Захаревич А., Участие донского казачества... - с. 5.

<sup>2</sup> Раффи. Меликства Хамсы. Перевод с армянского Казаряна Л.М. Ереван. «Наури». 1991 – с. 30, 173; Потто В., Указ. соч. – с. 109.

зная его влияние на местное население, распустили слух, что он отзван в Россию. Теперь приезд В.Г. Мадатова так сильно поразил татар, что они толпами приходили в лагерь, чтобы убедиться, что он снова здесь.<sup>1</sup>

Когда персияне овладели Елисаветполем, небольшой отряд их войск, под командованием старшего сына принца Аббас-Мирзы, Мамед-Мирзы, и Эмир-хана сардара, был расположен на реке Шамхоре, близ селения такого же названия. Татары из Шамшадильской и Казахской дистанций, враждебно настроенные против русских, подстрекаемые персиянами и царевичем Александром, надеясь на их помощь, собирались в числе нескольких тысяч конных между реками Таусой и Дзегамом и провозгласили своим предводителем царевича Александра. Узнав об этом, В.Г. Мадатов выступил в ночь на 14 августа с частью своего отряда и на рассвете напал врасплох на противника и рассеял его. Татары рассыпались в разные стороны, а царевич Александр скрылся у джарских лезгин.<sup>2</sup>

Распоряжения от А.П. Ермолова шли, но обоз с провиантом все не приходил, а следовательно В.Г. Мадатов и не мог выступить к ЕлиСаветполю. Лишь в 20-х числах августа он стал получать подкрепления: из Царских Колодцев прибыл Нижегородский драгунский полк.<sup>3</sup>

Перед тем как совершить прямой марш на Елисаветполь, В.Г. Мадатов решил провести разведку боем, для чего послать армянские отряды добровольцев. 22 августа конный отряд Григора Манучарянца в окрестностях Шамхора стремительным ударом разгромил персидский отряд под командованием Зураб-хана.<sup>4</sup>

Но вопрос о подкреплениях именно казаками все еще не был решен, а судя из рапортов В.Г. Мадатова он их ждал больше всего: „Полк Иловайского, в коем питаю себя надеждой найти лучших лошадей, еще доселе не прибыл; здешние же казаки, в особенности полка Костина, будучи в числе только 330-ти человек, имеют еще и крайне

---

<sup>1</sup> Потто В., Указ. соч. – с. 108-109.

<sup>2</sup> Захаревич А., Участие донского казачества, ... - с. 6.

<sup>3</sup> Захаревич А., Участие донского казачества..., - с. 5.

<sup>4</sup> Агаян Ц., Роль России в исторических судьбах армянского народа. (К 150-летию присоединения Восточной Армении к России). Москва, 1978 – с. 206-207

изнуренных лошадей, от которых персидская кавалерия может быть в совершенной безопасности... б.<sup>1</sup>

Обоз, судя по переписке В.Г. Мадатова и А.П. Ермолова, прибыл в Гуссейн- Бегли только 26 августа. Сопровождая его, прибыли во главе с полковником Поповым батальон Херсонского полка, 2 роты Грузинского гренадерского, 6 орудий и Донской казачий полк генерал-лейтенанта В.Д. Иловайского 3-го,<sup>2</sup> который назывался на Кавказе Атаманским, т.к. В.Д. Иловайский 3-й с 1823г. был здесь походным атаманом донцов. Но в это время он находился еще в Москве, куда был вызван с Кавказа на коронационные торжества Николая I. Поэтому Ермолов и нашел возможным отдать полк в распоряжение В.Г. Мадатова. В своем рапорте о прибытии обоза с провиантами В.Г. Мадатов сообщал А.П. Ермолову, что его мысль об оставлении на реке Акстафе батальона Ширванского полка, 4 орудий и сотни казаков под начальством подполковника Грекова уже не актуальна, т.к. все азербайджанцы, потерпев поражение 14 августа, уже вернулись и настроены не так воинственно. Поэтому таких крупных сил оставлять не надо, а достаточно во главе с подполковником Пацовским оставить 3 роты 41-го егерского полка, 3 роты Херсонского, 4 орудия и сотню казаков, чтобы сохранять на казахцев и шамшадильцев нравственное влияние их поражения.<sup>3</sup>

28 августа В.Г. Мадатов рапортовал А.П. Ермолову о том, что взамен полка Иловайского 3-го он отправил в Тифлис на тех же подводах обоз с ранеными во главе с войсковым старшиной Князевым и командуемым им полком Сысоева 2-го, подчинив ему роту пехоты и 4 орудия. Всех казаков вместе с Князевым насчитывалось 156 чел., да в числе раненых находились служившие в полку Костина 4-го войсковой старшина Поздеев и 7 казаков.<sup>4</sup> Еще из общего числа казаков, числившихся в отряде Мадатова, пришлось на Акстафе оставить сотню из полка Костина 4-го. Итого получилось, что бывали с обозом 164 казака, в отряде майора князя Меликова находилось 140 казаков и

<sup>1</sup> Рапорт № 112 от 28 августа 1826г. // Кавказский сборник. Вып.ХХIV – с. 184,

<sup>2</sup>. Рапорт № 130 князя Мадатова генералу Ермолову. 26 августа 1826г., № 24. // Там же – с. 203-204,

<sup>3</sup> Там же – с. 204,

<sup>4</sup>. Рапорт № 138 князя Мадатова генералу Ермолову. 28 августа 1826г., № 48. // Там же – с. 208-210.

<sup>2</sup> Протоиерей Саркис Максимаджян приводит «некоторые из главнейших отличий Армянской Церкви от Римско-католической»: 1) в догматическом отношении: учение об исхождении Духа Святого от Отца и Сына, вопреки исповеданию веры на Втором Вселенском св. Константинопольском Соборе (381 г.), что Дух Святой исходит от Отца; учение о непричастности Богоматери первородному греху или о непорочном зачатии св. Анной Божией Матери; учение о главенстве и непогрешимости папы в делах веры; учение о чистилище, где, по учению католиков, умерший грешник, каясь после смерти, очищается от грехов; учение об индульгенциях (известный взнос в церковную сокровищницу за отпущение грехов); 2) в обрядовом отношении: крещение совершается не через погружение, а через окропление и обливание; последнее допускается в Армянской Церкви в виде лишь исключения для тяжких больных; миропомазание совершается только епископами и не вслед за крещением младенцев, а по достижении ими известного возраста (между 7-2 годами); при употреблении у них опреснока вино на проскомидию разбавляется водой; причащение преподается под одним видом хлеба; разрешение на сыр и яйца в постные дни; 3) в управлении церковном: безбрачие духовенства; учреждение неизвестного в древности сана кардиналов; кардинал диакон почитается выше епископа, не имеющего кардинальского звания; запрещение мирянам читать Библию; 4) в обычаях: открытые алтари; одновременное служение месс (литургий) на разных престолах в одной и той же церкви и некоторые другие. См.: Максимаджян С., Краткий очерк вероисповедания Армянской Церкви, Ростов-н/Д, 1899.

Подводя первые итоги, попытаемся обозначить причины, обусловившие переход (а не принятие) части армян в католическое вероисповедание.

1) *Физическая защищенность.* В Османской империи первой и главной причиной перехода армян в армяно-католическую конфессию, обусловившей все остальные стало стремление сохранить свою христианскую веру при большей физической защищенности со стороны католической Европы. Магда Нейман в своей книге „Армяне“ отмечала, что армяне „приняли католичество“ не для того, чтобы отказаться от своей нации, а в первую очередь для того, чтобы оставаться армянами.

2) *Католицизм как способ сохранения своей этничности.* Как уже отмечалось, Греческой церкви еще в византийский период удалось широко распространить среди армян „халкидонскую веру“, что привело к отрыву значительной массы армян от материнского этноса в пользу греков и грузин. В районах, где халкидониты („грекизированные“ и „грузиненные“ армяне) доминировали (например, Тайская область), ААЦ оказалась неспособной противостоять напору греческой и находящейся под ее покровительством грузинской (ивирской) церквей. Переход в армяно-католическую веру позволял отдельным армянским анклавам, имея поддержку Рима, выступать на равных в этом противостоянии и тем самым сохранять свою этничность (например, в Артвинском регионе). Тем более что византийские императоры и патриархи и до Флорентийской унии вступали в неравный союз с папой Римским.

Таким образом, борьба между апостольскими армянами и халкидонитами создавала благоприятные условия для деятельности католических миссий.

3) *Экономический фактор.* Торгово-ремесленное население городов Армении и армянской диаспоры (например, Крыма, Константинополя, Исфагана и др.), располагавшихся вдоль „транснациональных“ магистралей, в раннебуржуазную эпоху становится самым активным экономическим посредником во взаимоотношениях между Востоком и Западом. Принадлежность к католицизму благоприятствовала деятельности армянских предпринимателей в Европе.

4) *Насильственное окатоличивание.* Оно имело место не в самой Армении, а в диаспоре, например, в Речи Посполитой, где навязывание католицизма являлось формой ,полонизации. Быть в Польше католиком означало быть поляком. Поэтому лидеры многочисленной армянской общины Польши (главным образом на территории нынешней Западной Украины), отказавшись от полной ,латинизации (прямой полонизации), приняли компромиссную ,униатскую конфессию. Но так как ,франгиты оказались более предрасположены к процессу ассимиляции, нежели приверженцы ААЦ, постепенно произошла латинизация духовенства, а вслед за этим – большинства армян-католиков, что привело к полной ассимиляции армян в моноконфессиональной польской и западноукраинской среде.

5) *Униатство как культурологический выбор в пользу более привлекательной западной цивилизации.* Армянский мир в период до и после Рождества Христова, несмотря на сложную геополитику, являлся самоценным и самодостаточным. Западная Европа после гибели античной цивилизации с помощью христианского Рима медленно переходила от варварства к цивилизации. И наоборот, до того утонченный эллинистический Ближний Восток, в результате непрерывной экспансии кочевников (арабы, тюрки, монголо-татары, турки) все больше и больше варваризировался. Между ними находились Византия и Армения, цивилизационно близкие друг к другу, но все же разные. Более сильная Византия поставила перед собой задачу поглотить армянский мир, не допуская равноправного союза, способного превратить греко-армянский мир в мощную силу, способную выдержать удары и давление ,Молота и Наковальни Востока и Запада. Гибель Византии позволила Западной Европе выступать главной наследницей всей античной и арийской цивилизации. Это нашло выражение в феномене Ренессанса. Армянскому народу, христианскому и индоевропейскому, предстояло сделать культурологический выбор между прогрессирующей западной цивилизацией и агрессивным Востоком, где эллинизм был начисто стерт исламом. Стать частью мусульманского Востока означало слиться с арабским, тюркским или ,новоиранским миром. Принять католицизм – соединиться с прогрессирующей цивилизацией Запада. Остаться апостольс-

кими армянами, было равносильно взятию на себя Груза, ведущего на кровавую армянскую Голгофу.

Сторонниками культурологического выбора в пользу западной цивилизации стали армянские интеллектуалы – западники, испытавшие воздействие идей европейского Возрождения. Будучи выходцами больше из духовной, нежели светской среды, они мыслили свое западничество в рамках армяно-католической конфессии. Таким образом, деятельность мхитаристов и других групп армянских интеллектуалов-западников стала важной причиной, способствовавшей проникновению униатства.

6) Униатство как протест отдельного человека против всей общины. Это обыденный уровень, являющийся причиной перехода в иные конфессии значительных групп людей. Личная неудовлетворенность, игнорирование большинством, неразделенная любовь, проявленная несправедливость, невнимание со стороны семьи, духовного отца, порождало у отдельных людей желание уйти в иную среду, где было бы ему комфортнее. Католицизм в армянской среде в прошлом являлся своеобразной сектой, вылавливавшей такие отверженные души. Кто подсчитал сегодня количество армян – адептов различных сект, ловящих душ? Их наверняка значительно больше, чем 5% нынешних приверженцев АКЦ.

Вышеперечисленные причины – далеко не все факторы, обусловившие возникновение значительной конфессиональной группы армян-католиков. Их нельзя рассматривать изолированно друг от друга, они взаимосвязаны. Другое дело, какие из них стали решающими в тот или иной период, в том или ином регионе Армении и в диаспоре, в том числе российской.

Возникает еще один вопрос: армяне-франги – это отдельный этнос, субэтнос армянского народа или этнографическая группа, которая отличает одного брата-близнеца от другого одеждой и другой внешней атрибутикой? Аарат Петросян характеризует армян-католиков как устойчивую этноконфессиональную группу.<sup>1</sup> Такая точка зрения имеет право на существование, если брать за основу только те черты,

<sup>1</sup> См.: Петросян А., Франги: историко-этнографическое исследование. [http://www.mashots.ru/archive/history\\_6.htm](http://www.mashots.ru/archive/history_6.htm).

которые отличают франговъ от их апостольских соотечественников. Однако если рассмотреть то, что объединяет тех и других, то отмеченные различия покажутся совершенно несущественными. В известном смысле к устойчивой этноконфессиональной группѣ можно отнести армян ,моноконфессиональныхъ (франгскихъ), тем более тюркоязычныхъ, селений западной части Джавахка. Вспомним, что немало тюркоязычныхъ армян-католиков не смогли отстоять свою этничность и целыми селами буквально на глазахъ несколькихъ поколений ,огрузинились. Однако большинство армян-католиков РФ не только не являются субэтносом армянского народа, но и вряд ли представляют собой особую этнографическую группу. Тем более разговор об отдельном этносе не только абсурдный, но и провокационный, имеющий конкретныхъ политическихъ заказчиков.

В целом, распространение католицизма среди армян в значительной степени носило (предвидим возможную критику) ,искусственныйъ, ,конъюнктурныйъ характер. А последнее предполагает, как это ни звучит утилитарно, достижение ,выгоды. В этой связи возникают вопросы, требующие ответов.

В какой степени католицизм обезопасил армян-франгов Османской империи в годы геноцида?

Действительно, в Турции армянам, принявшим католицизм, гарантировалось такое же покровительство со стороны европейскихъ государств, как и ,кореннымъ подданнымъ этихъ государств, проживавшим в этой империи лжи и зла. Но эти гарантии давали европейцам турецкие султаны, которые руководствовались правилом, в соответствии с которымъ договор ,правоверного с ,гяуромъ не может быть действительным. В самый ответственный момент, а именно в годы тотального Геноцида 1915-1923 гг., турецкие бashiбузуки не выясняли, кто оказался перед их кровавым ятаганом: католики или апостольские армяне. Насильники не выясняли конфессиональную принадлежность девушек, а грабители – кому принадлежал дом и имущество. Из 150 тысяч армян-католиков чудом спаслись лишь 20 тысяч человек. В числе погибших были 1 архиепископ и 10 епископов, 169 другихъ

священников, а также 61 сестра милосердия. Турецкое правительство, пощадило только патриарха АКЦ.<sup>1</sup>

Но, может быть, вернувшись в Киликию, под гарантии Французской Республики, остатки западных армян получили защиту от государства-опекуна? Нет, французы любезно возвратили туркам своих католических единоверцев вместе со всей благословенной землей Киликии.

Но, может быть, католицизм позволил армянам-католикам, оказавшимся на Западе, отгородиться от всепожирающей ассимиляции? Действительно, часть католиков-армян в странах Запада стали прихожанами АКЦ, что позволило несколько оттянуть неизбежную в диаспоре ассимиляцию; но большинство других, окропляясь латинской РКЦ, успели в течение двух-трех поколений забыть свое происхождение и из франгов превратиться во французов и т.д.

Или, может быть, католические государства из-за сострадания к своим единоверцам (не только католическим) предотвратили геноцид армян во втором турецком государстве на рубеже ХХ-ХХI вв., осудили его агрессию против народа НКР, поспешили признать его безукоризненно провозглашенный суверенитет? Нет и еще раз нет. Этой чести удосужились косовские албанцы-мусульмане.

Безусловно, армянский католицизм является свершившимся фактом. Он занял свою нишу в странах Ближнего Востока, Запада и в ряде районов Джавахка. Однако резервы численного роста католических приходов в армянской диаспоре Ближнего Востока, Запада и Латинской Америки исчерпаны. Это подтверждается данными официальной статистики Ватикана, где представлена численность наиболее крупных епархий (кроме Восточно-европейской) АКЦ.<sup>2</sup>

Епархии / годы	1990	2000	2005	2007	2008
----------------	------	------	------	------	------

<sup>1</sup> Оставшись без своей паствы, Синод АКЦ, собравшийся в Риме в 1928 г., постановил вновь перенести патриархат в Бейрут, оставив в Стамбуле архиепископию для обслуживания чудом сохранившейся немногочисленной константинопольской общины. См.: Аронян С.В. Краткая история армянской католической церкви <http://patmaban.com/index.php?name=news&op=view&id=64&pag=2&num=1>; Робертсон Рональд. Церкви, отделившиеся от древних восточных церквей. Армянская Католическая Церковь <http://vselenskiy.narod.ru/vostok.htm>; Селицкий А.И. Из истории армяно-католиков на Северном Кавказе. <http://www.mashots.ru/istoriya-armyan-kubani/nauchnye-raboty/iz-istorii-armiano-katolikov-na-severnom-kavkaze>

<sup>2</sup> Симаворян Арестакес. Армянские католические общины сегодня // Ноев Ковчег. № 9 (144), сентябрь, 2009.

Патриаршество, Бейрут, Ливан	15000	12000	10000	12000	12000
Архиепископосат в Аллепо, Сирия	15000	17000	17000	17000	17500
Парижский епископосат Франция	30000	30000	30000	30000	30000
Епископосат Лат.Амер. и Мексики	30000	12000	12000	12000	12000
Буэнос-Айресский епископосат	16000	16000	16000	16000	
Епископосат США и Канада	34000	36000	36000	36000	36000

Стремительное сужение сферы деятельности РКЦ вынуждает ее руководство максимально пополнить свои ряды новыми adeptами, в частности за счет армянского населения, проживающего на постсоветском пространстве, то есть там, где происходит возрождение деятельности ААЦ.

В бывших советских республиках атеистическая власть, успешно очищая религиозное сознание людей, не смогла уничтожить их национальное сознание. В значительной степени благодаря последнему возрождается деятельность традиционной, национальной ААЦ. Ее прихожанами становятся не только армяне, чьи предки относились к апостольским приходам. Общая судьба кардинальным образом повлияла на консолидационные процессы внутри армянского народа, объективно способствуя стиранию внутриконфессиональных различий между разными группами армянства. Не только в Северной Армении, Джавахке, но и в армянонаселенных регионах России, в частности на Северном Кавказе, происходит интенсивная реинтеграция франгов в их традиционной национальной конфессии. Там, где имеются церкви и приходы ААЦ, франгиты становятся их прихожанами, то есть возвращаются в лоно материнской Церкви.

И вот это постсоветское пространство вновь становится объектом прозелитизма РКЦ в лице Восточно-европейской епархии АКЦ.<sup>1</sup> При этом католическая церковь нацелилась не только привлечь в свои приходы бывших армян-католиков, но и новых adeptов.<sup>2</sup> Об этом

<sup>1</sup> 13 июля 1991 г. папская курия учредила ordinariatum для армяно-католиков в Восточной Европе с центром в г. Гюмри (Армения). В ноябре 1992 г. в Риме собрался Синод армяно-католических епископов, рассмотревший нужды Церкви в новой ситуации. В июне 1997 г. Синод принял решение подготовить новый устав АКЦ. В феврале нынешнего года папа Бенедикт XVI своим решением назначил главой армян-католиков в Армении, Грузии и Восточной Европеprotoархимандрита Ваана Оганяна – члена Конгрегации Мхитаристов. Перед ним поставлена задача коренным образом интенсифицировать деятельность епархии в Армении, Грузии и в России.

<sup>2</sup> Отметим, что еще большей проблемой армянства стала деятельность многочисленных около- и псевдохристианских сект, вовлекающих в свои ряды множество наших соотечественников. Однако это предмет отдельной темы.

свидетельствует беспрецедентный рост численности армян-католиков, прежде всего за счет приходов Восточно-европейской епархии. Так, если в 2007 г. численность армян-католиков в мире определялась цифрой в 375,1 тыс. (причем ежегодный рост был незначительным), то по данным Ватикана на 2008 г. 94 прихода АКЦ охватывали уже 539,6 тыс. человек. То есть за один год численность армян-католиков возросла на 164,5 тыс. исключительно за счет Восточно-европейской епархии.

Однако такой ,оптимизмъ роста РКЦ разделяют далеко не все специалисты, занимающиеся конфессиональными процессами внутри армянской диаспоры.<sup>1</sup>

Вторжение католической церкви в регионы, где действуют приходы ААЦ, способно спровоцировать межконфессиональное противостояние. В результате могут пострадать общенациональные интересы, такие как укрепление государственности двух армянских республик, включая пока непризнанную НКР; признание Геноцида и ответственности стороны, его осуществлявшей; сохранение национального очага в Джавахке; поиск механизмов поддержания национального самосознания и культуры в диаспоре и др.

Предвидя такой сценарий, выдающийся сын армянского народа, блаженной памяти Католикос всех армян Вазген I в ,Патриаршем слове к армянскому народу от 30 августа 1992 г. говорил: ,Армянская Апостольская Церковь как исторический факт признает существование Армянской Католической и Армянской Евангелической Церквей и с братской любовью приветствует их деятельность. В этом смысле мы находим естественной их деятельность в служении своей пастве. Ожидаем, что и Они, уважая подлинный дух, духовенство, традиции и миссию (предназначение) Армянской Апостольской Церкви как духовной Матери армянского народа на протяжении многих веков, будут во всем сотрудничать с ней, со Святым Эчмиадзинским

<sup>1</sup> В период с 1990 по 2007 г. Ватикан ежегодно определял численность армян-католиков Восточно-европейской епархии стабильной цифрой в 220 тыс. А в 2008 г. их «неожиданно» стало 390 тыс. Или это сознательная подтасовка, или то же самое – двойная бухгалтерия, когда одних и тех же прихожан «нечаянно» считали и в Армении, и в России... О том, насколько эти цифры объективны, свидетельствует следующий факт: в 1993 г. Ватикан определил численность католиков в Армении цифрой в 180 тыс. Однако по данным посольства США в РА, их число не превышало 100 тыс. См.: Кардинал Бертоне в Армении: надежда католиков. Интервью со священником Петросом Есаяном. <http://www.wwjd.ru/news/catholic/Kard-Bertone-v-Armenii-na/>, 07.03.2008

Престолом, тем способствуя ей в духовно-религиозном, миссионерско-воспитательном, общественном служении, будут всячески избегать создания таких параллельных или соревнующихся структур, которые вызывают лишь ненужное замешательство среди верующих, становятся причиной смены конфессии и вероотступничества, что не нужно ни Церкви Христовой, ни нашей Отчизне, тем более в наши времена, когда наш народ и Отчизна внимают призывам о единении.<sup>1</sup> [13].

Для недопущения ,латинизации армян-католиков ряд политиков и ученых предлагают всемерно поддержать процесс возрождения ,национальной АКЦ. В этих предложениях содержится обоснование прозелитизма в ,улучшенной упаковке. Так как в России действуют ,латинские приходы РКЦ, а не национальная АКЦ, приобщение армян-католиков к ним не столько реанимирует их ,франгское самосознание, сколько ускорит ликвидацию армянского самосознания. АКЦ подотчетен папе (сегодня это Бенедикт XVI) – главе государства Ватикан. А есть ли уверенность в том, что папа также искренне, как и Католикос Всех Армян, заинтересован в осуществлении национальных задач армянского народа? Ответ предсказуем. У армян не та геополитика, которая позволяет ,расслабиться, даже в такой возвышенной сфере, как конфессиональная.

Но если не поддерживать, то бороться? Да, если имеет место явный прозелитизм. Нет, если АКЦ, памятая слова из приведенного выше ,Обращения, будет активно участвовать в решении общенациональных задач.

И самое важное – это миссия самой ААЦ. А она, помимо обслуживания религиозных потребностей, предполагает активное миссионерство. Идти в народ, а не ожидать его прихода. Диаспора нуждается в настоящих подвижниках – национально ориентированных настоятелях, способных своим интеллектуализмом, энергией, в хорошем смысле одержимостью, стать духовными поводырями своего

---

<sup>1</sup> Цит. по нашей книге «Армянская апостольская церковь на Ставрополье и Тереке». Пятигорск, 2000. С. 15.

народа, смело вести свою паству навстречу острым современным вызовам.

**ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԻՐԿԸ ԱՅԼԱԴԱՎԱՆ ԻԱՅԵՐԻ ՎԵՐԱԴԱՐձԻ  
ԻԱՐԺԻՇՈՒԹՅ (ԹՈՒԱԻԱՅ-ՖՌԱՆԳՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Վ.Հակոբյան

Անվիուհուն

Հոդվածում դիտարկվում է իայերի առանձին խմբերի «վերադարձ» կամ «վերականգնումը» (վերահնտեղումը) դեպի ավանդական ազգային դավանանքներ, որոնց նախնիները ճակատագրի թերումով պատմական իայրենիքում ստիպված էին ընդունել կաթոլիկություն:

**THE ISSUE ON THE RETURN OF DISSENTER ARMENIANS INTO THE TRADITIONAL CHURCH.**

**Victor Hakobyan**

**Summary**

The article views the return or restoration (reintegration) of the separate groups of Armenians into traditional national beliefs whose ancestors had to accept Catholicism in their historical homeland.

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ**

**Լյուբա Կիրակոսյան**

*ԵրՊՀ*

Ժամանակակից ճարտարապետությունն իր պատմականությամբ ավելի մեծ հնչեղություն է ստանում համամարդկային մշակույթի մեջ: Այն ներկա հասարակության կեցության գիտակցությունն է և նրա առաջադիմության ցուցանիշը: Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքաշինական մշակույթը ծևավորվել է պետականության և տարածաշինական մտածողության փոխապայմանավորվածության առկայության պայմաններում: Քաղաքների առաջացումն ու զարգացումն, անշուշտ, կայացած պետականության արգասիք է: Մեր ժամանակների համար կարելի է ավելացնել նաև, որ քաղաքային մշակույթը կերտվում է ներկային հասարակության առանձնահատկություններին և թելադրանքին

համապատասխան, որոնցով պայմանավորված քաղաքաշինական միջավայր միշտ չէ որ ներդաշնակ է: Ժամանակակից քաղաքաշինական գործընթացներն Հայաստանում ընթանում են համաշխարհային օրինակների արհեստական ընդօրինակման և տեղայնացման մեխանիկական ձանապարհով, որի արդյունքում մենք այսօր ունենք այն խառնաշփոթ պատկերը, որը բնորոշ է երկրի համարյա բոլոր քաղաքներին: Ավելին, այդ միտումներն, ակնհայտորեն, ավելի փոքր մասշտաբներով առկա են նաև Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում:

Հայաստանի արդի քաղաքաշինական մշակույթը կազմավորվում է հնի և նորի պայքարի և հակադրության պայմաններում: Ավաղ մեզանում այս ամենը շատ պարզունակ և ուղղակիորեն է հասկացվում և իրագործվում, որն էլ հանգեցնում է քաղաքների համար անվերադարձ կորուստների: Դեռևս աշխարհահռչակ ճարտարապետ Կ. Տանգեն գտնում էր, որ պետք է «ավերել», «հաղթահարել» ավանդույթը ոչ այնպես, որ բացառել այն ժամանակակից ճարտարապետության մեջ, այլ հասնել նրա էությանը, ներթափանցել և հասկանալ այն, նրա ձևագոյացման գործընթացներն ու կառուցվածքը և զարգացնել արդեն նորովի՝ ծիկ և բովանդակության միասնության մեջ: Մինչև վերջ հասկացված, վերծանված և ստեղծագործաբար վերափոխված ավանդույթը ճարտարապետի ձեռքում դառնում է ստեղծարար: «Որպեսզի ավանդույթը վերածվի ինչ-որ ստեղծարարի, այն պետք է ենթարկվի բացասան», - գտնում էր ճարտարապետը:<sup>1</sup>

Որոշակիորեն ողջ ազգային ճարտարապետությունը նույնպես ավանդույթ է, բայց ոչ որպես միանշանակ հասկացվող, ոչ որպես առանձին ձևի կամ մանրամասնի փոխանցում «անցյալից» «ներկային»: Միասնական ազգային ավանդույթը յուրօրինակ ավանդույթների հանրագումար է, որը թափանցելով ազգային մշակույթի բոլոր շերտերը, բարձրանում է դեպի նրա կառուցման կերպարանշանային, արխիտեկտոնիկ սկիզբ և տարածության փոխազդեցություն: Նորարարությունն այստեղ ոչ միայն ավանդույթը հաղթահարելու մեջ է, այլև ավանդույթի ընտրության, խմբագրման և վերջապես նորի ստեղծման: Ավանդապաշտների և նորարարների, կամ ինչպես համաշխարհային պրակտիկայում է ընդունված ասել՝ գլոբալշատների և ռեգիոնալիստների միջև մշակութային վիճաբանություն-

<sup>1</sup> Տանգե Կ., *Архитектура Японии, М., Прогресс, 1976.*

ները միշտ էլ եղել են աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Դրանք հատկապես թեժ էին 20-րդ դարի 20-ական թվականներին: Այժմ մենք նորից կանգնած ենք այդ խնդրի առաջ: Ավանդականի և նորարարականի փիլիսոփայական միասնությունը պետք է դառնա ազգային ճարտարապետության հիմքը:<sup>1</sup>

Ավաղ, մեզանում այս բացարձակ ճշմարտությունը շատ հաճախ արհամարիվում է: Մեզ համար հարազատ դարձած քաղաքային միջավայրը, որն առաջնահերթ ձևավորված էր տարածական կառուցապատման մեջ, օտարանում է, քանզի քաղաքաբնակներիս համար վերանում է նաև քաղաքի կերպար հասկացությունը: Քաղաքային միջավայրը գործուն մասնակցություն ունի մարդու հոգեկերտվածքի ձևավորման և զգայական ընկալման վրա: Ժամանակի մեջ ամբողջացած այդ հոգվիճակը կտրուկ փոփոխությունների և ձևափոխման պայմաններում ենթակա է խեղաթուրումների: Արդյունքում, մենք մեր տանը հայտնվում ենք օտարացման մեջ: Չենք հասցնում անգամ ինտեգրվել նորաստեղծ տարածական միջավայրին, քանզի այս ամենը կատարվում է տարերայնորեն, տարածաժամանակային կապի բացակայության պայմաններում: Բայց, չէ՞ որ քաղաքը մարդկային կյանքի նյութական միջավայր է, որի կազմակերպմանը պետք է մասնակցություն ունենան ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի և ապագայի տարրերը: Ժամանակակից քաղաքներում առկա են նախորդ սերունդների աշխարհայացքի և գեղարվեստական մտածողության արդյունքներ՝ մարմնավորված առաջին հերթին ճարտարապետական հուշարձաններում: Հենց այս հուշարձաններն են, որ քաղաքին տալիս են կերպարային հնչեղություն և նրանց դարձնում առանձնահատուկ: Ավելին, քաղաքներում միաժամանակ ապրում են երեք սերունդների մարդիկ, որոնց գոյության տիրույթն է քաղաքային միջավայրը, որը պետք է ապահովի այդ մարդկանց բնականոն կեցությունն այդ միջավայրում: Հուշարձանների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանումը, բնականաբար չի ենթադրում քաղաքի զարգացման կասեցում: Քաղաքը կենդանի՝ ապրող, շնչող օրգանիզմ է, որն անխուսափելիորեն պետք է զարգանա և վերափոխվի ժամանակի պահանջներին համապատասխան: Քաղաքները՝ չդարձնելով թանգարաններ բաց երկնքի տակ և պահպանելով պատմական ճարտարապետության շնորհիվ ստեղծած նրա կեր-

<sup>1</sup>Балян К., Современная национальная архитектура Армении, Ереван, 1987, с 187.

պարզ, կարելի է առանձնացնել տվյալ քաղաքի եզակիությունը և կարևորությունը համաշխարհային մշակույթի հաճակարգում: Կարևորագույն հարց է այդ հուշարձանների շուրջը ներդաշնակ տարածական միջավայրի ստեղծումն ու քաղաքաշինական իրավիճակի կարգավորումը: Լավագույն տարբերակն այս դեպքերում հակադրության մեջ ներդաշնակ և «համագործակցող» միասնություն ստեղծելն է: Համաշխարհային ճարտարապետության մեջ այդպիսի օրինակներից են Մուսկվայի «Նովի Արբատ» փողոցի վրայի բազմահարկ շենքի անմիջապես առջևում գտնվող փոքրիկ եկեղեցին, Լուվրի մուտքը կազմակերպող ապակե բուրգը (նկ.1): Իտալիայի փորձն այս հարցում ավելի քան ընդօրինակելի է: Իտալական քաղաքներն իրենց պատմականության մեջ ապրում են նորօրյա շնչով: Ֆլորենցիայում վերածննդի և գորիկայի ժամանակաշրջանի պատմական շենքերի և ճարտարապետական համույթների կողքին շատ նրբորեն և սահուն կերպով ժամանակակից կառուցապատումն իրականացված է այնպես, որ պահպանելով հանդերձ պատմաճարտարապետական միջավայրը, հնարավոր է դարձել հասնել նաև ծավալատարածական ամբողջականության (նկ.2): Երևանում, մասնավորապես, նույնպես կան պատմամշակութային արժեքներ, որոնց շուրջը կարելի էր կազմակերպել նորօրյա կառուցապատումը: Այդպիսի կազմակերպման համար դոմինանտի դեր կարող են կատարել ասենք, Շենգավիթի, Թեյշեբահնիի և Էրեբունիի անդրոցները, Ավանի վաղքրիստոնեական տաճարը, Կաթողիկե եկեղեցին, Կոնդի որոշ հատվածներ: Մեր սերնդի համար հարազատ և պատմամշակութային արժեք են նաև Խորհրդային շրջանի շատ շինություններ, որոնցից շատերը նույնպես ժամանակակից խառը, շիոթ զարգացումներում վնասվեցին, նույնիսկ վերացան: Խորհրդային շրջանի բարբարությունը, որն ուղղված էր նաև նախորդ դարաշրջանների գաղափարական բովանդակությունն ամփոփող ճարտարապետական կառուցների ոչնչացմանը (Պողոս Պետրոս և այլ եկեղեցներ),<sup>1</sup> շարունակվեց նաև մեր օրերում: Նույնպիսի գործողություններ իրականացվեցին նաև հետխորհրդային շրջանում: Սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում, ներդրողների քմահաճույքին և գրպանին ենթակա Երևանում կատարվեցին կառուցապատումներ, որոնց իրականացման ձանապարհին ավերվեցին արժեքավոր շինություններ (Քաղաքային խորհրդարանի շենքը Շահում-

<sup>1</sup> Ղառարյան Մ., *Արխիտեկտուրա Երևանի XIX հաշվարկական աշխատանքներ*, Երևան, 2008, с 200.

յան իրապարակում, «Շիրակ» հյուրանոցը, Հանրապետության, Արամի, Փավստոս Բուզանդի, Տերյան փողոցների 19-20-րդ դարի կառույցները), փոխարեն բարձրացան անձաշակ և գեղարվեստական արժեք չունեցող շինություններ: Լայնածավալ շինարարությունը մեծ վնասներ հասցրեց նաև Երևանի իրապարակներին: Մի շարք իրապարակների շրջակայքում կառուցվեցին և շարունակում են կառուցվել բարձրահարկեր (Հանրապետության, Ազատության, Շահումյան, Ազնավուրի), էստակադաներ (Բարեկամության), ստորգետնյա ավտոկայանատեղեր (Ազատության), տարածքներում գործում են ճարտարապետական միջավայրին չհամապատասխանող բազմաթիվ սպասարկման օբյեկտներ (Ազատության) (նկ.3): Այս ամենի արդյունքում խաթարվում է իրապարակների տարածքային ամբողջականությունը: Այդ հարցում դերակատարում ուներ նաև արձանների ապամոնտաժումը (Հանրապետության, Աշխատանքի): Ի դեպ, արձանների ապամոնտաժում կատարվեց նաև հանրապետության համարյա բոլոր քաղաքներում, ինչպես նաև Ստեփանակերտում: Մասնավորապես, նախկին Լենինի անվան ուղղանկյուն իրապարակում ապամոնտաժվեց Լենինի արձանը: Երևանում՝ Հանրապետության իրապարակում, կատարվեց վատրարագույնը՝ ապամոնտաժվեց ոչ միայն Լենինի արձանը, այլև պատվանդանը, որի տեղում ժամանակավորապես բարձրացվեց մետաղական գովազդային մի տախտակ, որի ապամոնտաժումից հետո այդ տեղը թափուր է մնացել: Հետագա բոլոր փորձերը այդ տեղը լցնելու՝ ձախողվեցին, քանզի չգտնվեց որևէ մի նախագիծ, որը մասշտաբային և գեղարվեստական առումով համապատասխաներ համույթին և վերականգներ իրապարակի խաթարված ամբողջականությունը (նկ.4).<sup>1</sup> Է, որ ստեղծում է քաղաքաշինական և գեղարվեստական նոր որակ: Երևանում այդպիսի փորձեր կատարվել են՝ Զորագյուղ թաղամասը, որը հին Երևանի մի պատահիկն էր, 80-ական թվականներին մտադրություն կար վերականգնելու՝ օրգանապես դարձնելով քաղաքի մի գողտրիկ պատմական անկյուն: Այն ժամանակ, եթե այստեղ դեռ պահպանված էին բնակելի-տնտեսական կառույցները, հնարավոր էր ունենալ պատմաճարտարապետական միջավայրը վերականգնող մի ամբողջական օրինակ: Սակայն գործը կիսատ մնաց և այսօր այդ տեղում վեր են

<sup>1</sup> Рашидян Г., Главная площадь Еревана во времени и в пространстве, Ереван, 2007, с 155.

խոյանում մեկը մյուսի հետ մրցող ռեստորանային համալիրների ծավալ-ները, որոնք իրեց կերպարով անհարիր են պատմական միջավայրին և բոլորովին ուրիշ գործառույթ են իրականացնում:

Համաշխարհային ճարտարապետության մեջ կան օդինակներ, երբ հուշարձանը պահպանվում է նույնիսկ մասամբ՝ ներառնվելով նոր շենքի կառուցվածքի մեջ: Այս փորձը լավագույնս կիրառել են իտալացիները: Երևանում ևս որոշ շենքերի ճակատներ պահպանվել են նոր կառուցապատման մեջ (նկ. 5): Ընդհանրապես ոչ թե ազգային ճարտարապետության հուշարձանների նմանակումներն են խրախուսվում, այլ ժամանակի ոգուն և ժամանակակից ձևերով լուծված, մասշտաբայնությունը չխախտող նոր շինուալիյունները, որոնք իրենց ներդաշնակ համակեցության մեջ նույնիսկ կընդգծեն պատմական հուշարձանների արժեքը:

Երևանն այսօր անխուսափելիորեն մոտենում է համաշխարհային ստանդարտներին՝ ձեռք բերելով 21-րդ դարի ճարտարապետությանը հատուկ էկլեկտիկություն, մինչդեռ ժամանակին այն սրտաբաց ու վարդագույն քաղաք էր, իսկ հիմա «բազմագույն» անդեմություն:

Բարեբախտաբար, Ստեփանակերտը առայժմ գերծ է մնացել այն արտաքոց երևույթներից, որ առկա են Երևանի քաղաքաշինական զարգացումներում: Կառուցապատման ժամանակակից ձեռնարկումները հիմնականում չեն խաթարում քաղաքի նախնական նախագծային մտահղացումը: Ինչպես նախկինում արված բոլոր (1938թ.-ի Սլորուժանիկի, 1968թ.-ի Բ.Դադաշյանի) նախագծերում, այնպես էլ ժամանակակից դրսնորումներում, պահպանվում է քաղաքի կառուցապատման Ա.Թամանյանի 1926 թ.-ին մշակած համակարգը:<sup>1</sup> 1929-30-ական թթ. կազմակերպված քաղաքի շրջանաձև հրապարակից ճառագայթաձև սկիզբ են առնում գլխավոր փողոցները: Հրապարակից դեպի հյուսիս տարածվում է քաղաքի կենտրոնական կասկադը: Ստեփանակերտում զգալի են փոքր ճարտարապետական ձևերով ու քանդակներով համակառույցները: «Կանաչ այգում», որ ժողովուրդն անվանում է Վերին գրոսայգի, հպարտ կանգնած է արծովը՝ որպես ազատության, իշխանության, անմահության, հեռատեսության և ուժի խորհրդանիշ: «Երեք քանալի» աղբյուր-քանդակը, Փափազյանի անվան դրամատիկական թատրոնի հարևանությամբ, հոգու երեք վիճակներ է

<sup>1</sup> Яралов Ю.С., Таманян, Москва, 1950.


ցուցում՝ ուրախություն, մտորում և տիրություն: Ստեփանակերտը այն եզակի քաղաքներից է, որ առանձնանում է իր փողոցների և հրապարակների մաքրությամբ և կանաչապատ դիմագծով (նկ. 6): Այն նաև զարգացող քաղաք է, և քաղաքաշինական ժամանակակից զարգացումների մարտահրավերներին պատվով է դիմակայում: Արդիական շնչով կառուցված նոր շենքերը հիմնականում ներդաշնակված են արդեն գոյություն ունեցող կառուցապատմանը և չեն խաթարում պատմաճարտարապետական միջավայրը (նկ. 7): Հավակնություն չունենալով հանձնարարականներ տալ, այնուամենայնիվ գտնում ենք, որ ճարտարապետական ժառանգության պահպանությունը շատ կարևոր է քաղաքի կերպարային ընկալման տեսակետից: Քաղաքների դիմագիծը պահպանելու համար պետք է կարևոր տեղ հատկացնել նրա կերպարը ձևավորող շենքերին և նրանց շուրջը ներդաշնակորեն կազմակերպել տարածական միջավայրը:



Նկ. 1. *Փարիզ, Լուվր*



Նկ.2. Ֆլորենցիա. Քաղաքի ընդհանուր տեսքը:



Նկ. 3. Օպերան երեկ և այսօր:



Նկ.4. Երևանի Հանրապետության հրապարակ:



Նկ.5. Երևան, Արքյան փողոց, շենքի ճակատ:



Նկ. 6. Ստեփանակերտ. քաղաքի ընդհանուր համայնապատկերը:



Նկ.7. Ազգային ժողովի շենքը:

## **СОХРАНЕНИЕ АРХИТЕКТУРНОГО НАСЛЕДСТВА В ПРОЦЕСАХ СОВРЕМЕННОГО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА**

**Люба Киракосян**

Резюме

Архитектура-предмет гордости любой страны. Армянское архитектурное наследство значительно. Для армян, архитектура всегда была приоритетной сферой культуры, чья защита долг каждого поколения.

Современные градостроительные процессы в Армении очень часто имели тенденции, которые искажали историко-архитектурную среду. Синтез традиционного и новаторского составляет основу национальной архитектуры. Осуществленная такоú философиеú архитектура даст возможность нашим городам, в частности, Еревану вместо сегодняшней эклектической безликости восстановить свой некогда приветливый и розовый облик. К счастью это не относится к Степанакерту, так как новые здания в основном гармонируют с существующей застройкой и не искажают историко-архитектурную среду.

### **THE PROTECTION OF ARCHITECTURAL HERITAGE IN THE CONTEMPORARY TOWN-PLANNING DEVELOPMENTS.**

**Lyuba Kirakosyan**

Summary

Architecture has been the pride of the countries in all times. Especially for us, for Armenians, it is more important direction, because we have a serious architectural heritage, the protection of which is the responsibility of all generations. Modern urban processes in Armenia have such developments that very often historical-architectural environment is spoiled, but it is known that the basis of the national architecture is the philosophical unity of tradition and innovation. Only such an architectural direction, which carries this philosophy will give Armenian cities, especially Yerevan, the opportunity to restore open-hearted and pink feature, which it used to have instead of eclectic neutrality, which dominates nowadays. But this isn't typical for Stepanakert, because in the capital of Kharabakh modern buildings are in harmony with old ones and don't spoil the historical-architectural environment.

## ԱՐՑԱԽԱԿԱՅ ԳՈՐՎԱՐՎԵՍԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԵԶԱՆՈՒՄ Մելանյա Բալայան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարան

Հայ կիրառական արվեստի մի առանձին հետաքրքրություն ներկայացնող ճյուղերից է գորգագործությունը, որը լայն տարածում է ունեցել նաև Արցախում:

Արցախի տարածքում հայտնաբերվել են հնագույն գորգագործական գործիքներ՝ կտուտիչներ, որոնք պատրաստված են ոսկորից: Հնագետների կարծիքով այդ կտուտիչները պատկանում են թ.ա. 2-1-ին հազարամյակներին և վկայում են ընդհանրապես Հայաստանում և մասնաւորապես նաև Արցախում մանածագործության ու հատկապես գորգագործության, վաղագույն ժամանակներից ի վեր, գոյության մասին:

Միջնադարից սկսած գորգագործությունը թևակոխել է միանգամայն նոր փուլ, որն աչքի է ընկնում թե՛ իր կատարման որակով և թե՛ զարդանախշերի բազմազանությամբ ու կատարելությամբ: Ուշագրավ է այն փաստը, որ պահպանված հայկական վիմագրերում գորգի մասին առ այսօր ամենավաղ հիշատակությունը հանդիպում է հենց Հայոց արևելից կողմներում: Այսպես, Հայոց արևելից կողմանց Ուտիք նահանգի Տավուշ գավառի (Մեծ Հայքի Ուտիք նահանգի Տավուշ գավառի մեծ մասը, ներառյալ թուրքերի կողմից «Թոռուզ» վերանվանված հին հայկական Տավուշ բնակավայրը, ներկայումս բնազավթված է Աղրբեջանի կողմից - Ս.Բ) Կապտավանք Եկեղեցու 1242-43թթ. վիմական արձանագրության մեջ հիշատակություն կա «գորգ»-ի մասին: Որոշ հետազոտողների կարծիքով այն «գորգ» անվանման առաջին հիշատակությունն է<sup>1</sup>: Տեղին է նշել նաև, որ քաղաքական հանգամանքների բերումով, հատկապես 5-րդ դարից սկսած, հին հայկական Արցախ և Ուտիք նահանգները գրեթե միավորված են հանդես Եկել, որի համար հիմնական պատճառներ են հանդիսացել վարչա-քաղաքական, կրոնական ու էթնիկական գործոնները:

<sup>1</sup>Հակոբյան Հ., Արցախի միջնադարյան արվեստը, Երևան, 1991, էջ 21:

Ըստ հայկական գորգագործության խորագիտակ ուսումնասիրողներից Վ. Թեմուրձյանի՝ Հյուսիսային Արցախի Բանանց գյուղում է գործվել հիշատակագրություն ունեցող հայկական հնագույն գորգերից մեկը: Գորգի վրա կատարված արձանագրության մի մասը խունացած և անընթեռնելի է, բայց և պահպանված մասը վկայում է, որ գորգը գործվել է ի հիշատակ Հրիփսիմեին Կիրակոս Բանանցու կողմից և թվագրված 1202<sup>1</sup>: Այն արցախյան «Եռախորան» տիպին պատկանող գորգ է՝ հետաքրքիր գունային երանգներով ու անցումներով և ներկայումս պահպանվում է Վիեննայի արդյունաբերության պատմության թանգարանում: Նրա մասին մեզ հայտնի առաջին հրատարակողը համարվում է հայտնի արևելագետ Ալիկ Ռիգլը/1895թ./:<sup>2</sup>

Երուսաղեմի Ս.Հակոբի եկեղեցում է պահվում Գանձասարի Հայ Աղվանից Ներսես կաթողիկոսի պատվերով 1731թ. Արցախի Զրաբերդ գավառի Չարեքի վանքում գործված և հայերեն «յիշեցեք մաքրափայլ յաղոթս ձեր Ներսես մեղապարտ կաթողիկոս Աղուանից է պատճառ սմին /արված/ լոյս ընկալ Չարեքու սր անապատին ՈՃԶ թվին»<sup>3</sup> հիշատակագրություն ունեցող գորգը:

19-րդ դարի երկրորդ կեսերից և հատկապես 20-րդ դարի սկզբներից հայ ժողովրդի շրջանում վերստին նոր վերելք ապրեց գորգագործությունը և համաշխարհային շուկայում դարձավ ամենաեկամտաբեր ու մեծ պահանջարկ վայելող ապրանքներից մեկը, ինչն էլ իր հերթին նպաստեց հայկական գորգերի լայնամասշտաբ տարածմանը:

Տարբեր ուսումնասիրողներ եկել են այն Եղրակացության, որ ամենագեղեցիկ կարպետներն ու գորգերը հանդիպում են Արցախում, Զանգեզուրում և Հայաստանի լեռնային մյուս շրջաններում: Ընդհանրության մեջ կարելի է նշել, որ հայկական ծագման գորգերը աչքի են ընկնում իրենց առանձնահատուկ հյուսվածքով, գործվածքի խտությամբ, խավի բարձրությամբ ու ողորկությամբ և, իհարկե, նաև ոճական առանձնահատկություններով: Դա նախ և առաջ դրսնորվում է գունային համադրությունների ու անցումների մեջ: Գեղեցիկ ձևավորումներով կատարված պատկերներն այնքան իմաստնություն ու բազմազանություն են պարունակում, որ կարծես լուսավորում են շրջապատը, միաժամանակ թափանցելով մարդու ներաշխարհ՝ ստեղծում հեքիաթային տրամադրություն: Հայ կնոջ կողմից գրեթե բոլոր

<sup>1</sup> Թեմուրձյան Վ.Ս., Գորգագործությունը Հայաստանում, Երեւան, 1955, էջ 67:

<sup>2</sup> Սովոր տեղում, էջ 9:

<sup>3</sup> Տես՝ Ղավթյան Ա. Դրվագներ միջնադարյան Հայաստանի կիրառական արվեստի պատմության, Երեւան, 1977, էջ 128-129:

ժամանակներում գորգերում արտացոլված ու ամենասիրված պատկերներից է կյանքի ու բնության հավերժությունը խորհրդանշող «կյանքի ծառը», որով նա ավանդում էր սերունդներին իր հոգու ցանկություններն ու երազանքները: Դա միաժամանակ վկայություն է անգամ ամենածանր վիճակում հայտնված ժողովրդի անսահման լավատեսության, հույսի ու հավերժության գաղափարի առկայության մասին: Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի գորգերի և կարպետների հավաքածոյի մեջ զգալի թիվ են ներկայացնում «կյանքի ծառի» տարաբնույթ ձևավորումներով ձեռագործները:

Աղբյուրները վկայում են, որ հատկապես Շուշի գավառում բավական զարգացած էր գորգագործությունը, իսկ Շուշիում նույնիսկ բացվել էր հատուկ դպրոց՝ գորգագործական արհեստը բարձր մակարդակով ուսուցանելու նպատակով: Երվանդ Լալայանը գրում է, որ Շուշիում «թէս առանձին գործարաններ չկան, բայց շատ տներում գործում են գորգ, կարպետ, ծիու չուլ և այլն»<sup>1</sup>: Ազգագրագետի վկայությամբ բուրդ զգող, թել մանող և կարպետագործ կնոջ օրավարձը 19-րդ դարի վերջերին կազմում էր 10-20 կոպեկ<sup>2</sup>: Պարզապես կարելի է նշել, որ գորգագործությունը արցախի կնոջ սիրած արհեստն է եղել, իսկ գորգը կամ կարպետը՝ յուրաքանչյուր հայ ընտանիքի կենցաղի կարևոր մաս: Կատարման որակով և զարդարակարի բարդությամբ ձեռագործ գորգերը անգերազանցելի են, այդ պատճառով էլ նրանց արժեքը միշտ էլ բարձր է եղել: Այդ է պատճառը, որ գորգարվեստի գիտակները գորգագործական մշակույթը հրավամբ համարում են հայ բազմադարյան մշակույթի և ազգային ժառանգության կարևորագույն մաս:

Բոլոր ժամանակներում գորգագործությամբ բացառապես զբաղվել են հայ կանայք: Զարդանախշերի համար հատուկ գծագրեր գոյություն չունեին: Զարդանախշերը հիմնականում կանանց ստեղծագործ մտքի ու ձաշակի արյունք էին հանդիսանում, որոնք փոխանցվում էին սերնդից սերունդ: Բայց և միաժամանակ այդ փոխանցումները կատարվում էին առավել կատարելագործվելով և նոր որակներ հաղորդվելով: Հմուտ գորգագործների մոտ շատ դեպքերում զարդանախշերը ծնվում էին հենց դազգահի առաջ՝ աշխատանքի ընթացքում: Երբեմն զարդանախշերի ընտրության վրա որոշակի ազդեցություն են ունեցել նաև ձեռքի տակ

<sup>1</sup> Լալայան Ե. «Ազգագրական հանդէս», Բ գիրք, Թիֆլիս, 1897, էջ 96:

<sup>2</sup> Նոյն տեղում:

Եղած թելերի գունային երանգները: Դրանք հատկապես կարևոր էին դաշտի գունային ընտրության հարցում: Արցախի ոչ միայն տարբեր բնակավայրերում գործված գորգերն են իրարից տարբերվում, այլև նոյն բնակավայրում տարբեր գորգագործների գործածները: Դա իհմնականում բացատրվում է նրանով, որ զարդանախշերի ընդհանուր տիպը պահպանելով հանդերձ, յուրաքանչյուր, հատկապես հմուտ գորգագործ, իր նորամուծություններն ու մտահղացումներն է արտացոլել, որի արդյունքում ստեղծվել են նոյն խմբին պատկանող, բայց և զարդանախշերի բազմազանություն ու բազմերանգություն ունեցող գորգեր:

Մեծ թիվ են կազմում նաև հայերեն հիշատակագրություն ունեցող գորգերն ու կարպետները, որոնք ամենավառ վկայությունն են դրանց հայկական ծագման մասին: Որպես կանոն՝ գործվում էր գործելու թիվը և գորգագործի անունը, իսկ որոշ դեպքերում արտացոլվում էր գորգի հասցեատիրոջ անունը: Վերջիններս իհմնականում այն գորգերն են, որոնք գործվել են որպես նվեր կամ հիշատակ: Հաճախ այդպիսի հիշատակագրությունները կատարվում էին համառոտ, նշելով միայն անուն-ազգանուն առաջին տարերը: Հայերեն հիշատակագրություն ունեցող գորգերը թերևս լավագույն պատասխանն են գորգարվեստի յուրացման մոլուցքով տառապող ադրբեջանցի հեղինակների կողմից բոլոր տեսակի խեղաթյուրումներին:

Արցախյան գորգերին բնորոշ են նաև բուսական ու կենդանական յուրօրինակ ոձավորումներով պատկերների բազմազանությունն ու միաժամանակ դրանց ներդաշնակությունը: Դրանք իրենց զարդանախշերի ոձական առանձնահատկություններով արտահայտում են հայոց ավանդական ծիսապաշտամունքային պատկերացումները կյանքի, բնության հավերժության և, ընդհանրապես, հայի հավատքը, որ միանշանակ տարբեր է եկվոր թուրթ-թաթար ցեղի հավատքից ու ավանդական սովորույթներից:

Սակայն այդ ամենով հանդերձ, ստիպված ենք ցավով արձանագրել, որ հայ ժողովրդին, այդ թվում և արցախահայությանը պարտադրված քաղաքական պատմությունը ոչ միայն նպաստավոր չի եղել, այլև լեցուն է եղել քաղաքական արհավիրքներով՝ այլադավանների արշավանքներով, սպանություններով ու թալանով, որի արդյունքում մեր ժողովուրդը զրկվել է բազում դարերի ընթացքում իր իսկ ստեղծած հոգևոր ու նյութական ժառանգությունից: 1921թ. խորհրդային

Աղբեջանին թռնակցվելուց հետո Արցախում շարունակվել է մշակութային թալանն ու ջարդը: ԼՂԻՄ-ում, ինչպես նաև քաղաքական նկատառումներով հայկական ինքնավար մարզից դուրս թողնված պատմական Արցախ և Ուտիք նահանգների, այսինքն Լեռնային ու դաշտային Ղարաբաղի հայկական գյուղերում պահպանված ձեռագործ գորգերը հավաքագրելու նպատակով Բաքվից հատուկ հրահանգներով ուղարկված առանձին գործակալներ շրջել են Ղարաբաղի հայկական բոլոր գյուղերն ու բնակչությունից հավաքել իին ձեռագործ գորգերը՝ դրանց դիմաց հանձնելով իրենց գորգագործարաններում արտադրած «նոր» ու առանձնակի արժեք չներկայացնող գորգեր: Նման «փոխանակությունը» ավելի ճիշտ խաբեության և թալանի ակնհայտ դրսնորում էր: Հենց այդպիսի քաղաքականության պատճառով էլ այսօր Բաքվում ստեղծվել է գորգի թանգարան, որով Աղբեջանը այսօր ներկայանում է աշխարհին, որպես թե իին մշակույթ ունեցող ժողովուրդ, իսկ Արցախում, որտեղ եթե մինչև 1920-ական թվականները գրեթե ամեն ընտանիքում առկա էր առնվազն մեկ, իսկ շատ դեպքերում՝ մեկից ավելի ձեռագործ գորգեր, կարպետներ, ապա ներկա դրությամբ անզամ կան բնակավայրեր, որտեղ այլևս գոյություն չունի թեկուզն որևէ մեկ նմուշ:

Ավելին, թուրք «մասնագետները» այստեղ էլ կանգ չեն առնում իրենց «նվազողական» ծրագրերի առջև և, խեղաթյուրելով իրականությունը, բնիկ հայ ժողովրդի բազում դարերի ընթացքում ստեղծած ու իր հիմքով քրիստոնեական գաղափարաբանություն պարունակող մշակույթի մի մասը ոչնչացնելուց, իսկ մյուս մասը «սեփականաշնորհելուց» հետո, ամեն կերպ փորձում են Արցախում և Ուտիքում քրիստոնյա հայերի ձեռքով գործած գորգերն ու կարպետները ևս «սեփականաշնորհել», դրանց «սելջուկյան» կամ ընդհանրապես «թուրքական» ծագում վերագրելու միջոցով: Թուրք մշակութաբաններ օքտայ Ավանապան, Նեյաթ Դիարբեքիրին, Բալքիս Բալքինարը, Լյաթիֆ Քերիմովը և ուրիշներ իրենց իսկ կողմից հորինած տեսությունը իիմնավորելու նպատակով սելջուկ-թուրքմենական վաչկատուն ցեղերի ներթափանցումը Փոքր Ասիա, այդ թվում և Հայաստան, ներկայացրել են որպես տեղում որոշ արհեստների և հատկապես գորգագործության սկզբնավորման ու գարգացման հիմնական գործոն, մոռանալով այն պարզ ճշմարտությունը, որ թուրքական ռազմատենչ ու ավարառու ցեղերը, միայն 14-րդ դարից վերջնականապես հաստատվելով Փոքր Ասիայում, ոչ միայն չեն զարգացրել, այլև կասեցրել են դրանց զարգացումը: Նման հիմնագուրկ

տեսակետները, բնականաբար հետապնդում են զուտ քաղաքական նպատակներ:

Այս իմաստով ուղղակի հակագիտական և, ընդհանրապես, թյուրիմացություն պետք է համարել նաև Լ. Քերիմովի «Ծագրության Ազգային ՍՏՀԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» բազմահատոր աշխատությունը: Աշխատությունը ոչ միայն գորգագործական-մշակութաբանական տեսանկյունից է թյուրիմացություն, այլև պատմաքաղաքական:

Աշխատության երկրորդ հատորում, մեջբերումներ կատարելով անգլիացի հայտնի արևելագետներ Կ.Վիլսոնի և Ա.Պոռուաի, ընդ որում թերանում հրատարակված աշխատություններից, որոնցում հեղինակները խոսում են իրանական բարձրարժեք նյութական մշակույթի մասին, միանգամայն անհասկանալիորեն Լ. Քերիմովը դրանք ներկայացնում է որպես ներկայիս Ադրբեյջանի ժողովրդի մշակույթը:<sup>1</sup> Սակայն իրանական բրոնզեդարյան մշակույթը թե ի՞նչ կապ ունի միայն 15-րդ դարից հետո Իրանի Աստրապատականի տարածքում հայտնված աղկոյունլու և կարակոյունլու թուրքմենական ծագմամբ ցեղերի հետ, որոնք միայն 1936 թվականից սկսեցին իրենք իրենց անվանել ադրբեյջանցի, բոլորովին անհիմն ու անհասկանալի է: Ի դեպ, ներկայացնելով աղկոյունլու և կարակոյունլու միջինասիական թուրքական ծագում ունեցող ցեղերի 15-րդ դարում Իրանում հայտնվելու և իրենց տիրապետությունը հաստատելու ժամանակաշրջանը, Լ. Քյարիմովը անթաքույց ուրախությամբ նշում է, որ «... սկզբում կարակոյունլուների, իսկ հետո աղկոյունլուների կառավարման շրջանում մեծ ծաղկում է ապրել ադրբեյջանական մշակույթը և այդ շրջանում երկրի մայրաքաղաքը եղել է Թավրիզը»<sup>2</sup>: Եվ ընդհանրապես, գոքի շարադրանքի նշված հատվածում մեծամասամբ նկարագրված է Իրանի մշակույթը, բայց վերագրված «ադրբեյջանականին»: Բառացի մեջբերելով 16-րդ դարի անգլիացի ճանապարհորդ Ուչչարդ Հակլուտին, որը գրել է. «... Իրանում դու կտեսնես գորգեր, գործված կոպիտ բրդից ու մետաքսից: Դրանք աշխարհի լավագույն գորգերն են: Եվ գոյսներն են նրանց չափազանց գեղեցիկ...»<sup>3</sup>, Լ. Քյարիմովը նույն մեջբերման վերջում փակագծում ավելացնում է, թե «գորգագործ վարպետը ադրբեյջանցի էր»:

Պատմության այդ աստիճան խեղաթյուրման պատճառով թուրք հեղինակը մի կողմից սեփականաշնորհում է Իրանի պատմությունը և մշակույթը, իսկ մյուս կողմից, սիրահոժար օգտվելով հայ մատենագիրների երկերից, նույնը վարվում նաև հայկական մշակույթի հետ: Այսպես,

<sup>1</sup> Կյրիմով Լ., Ազերբայջանսկու կովեր, տ. 2, Բակու, 1983, ս. 10.

<sup>2</sup> Կյրիմով Լ., Աշվ. աշխ., էջ 26:

<sup>3</sup> Նոյն տեղում էջ 39:

աշխատության նույն երկրորդ հատորում, օգտվելով իայ պատմագիր Սեբեսի հաղորդած տեղեկություններից, որոնք վերաբերում են 628թ. Բյուզանդիայի կայսր Հերակլի Գանձակ կատարած արշավանքին ու այստեղից տարած գորգերին, այժուհետև առանց հիմնավորելու, եզրակացություններ է կատարում, ավելացնելով, որ «արաբները անընդհատ արշավանքներ կատարելով Աղրբեջանի վրա, իրենց հետ տանում էին մեծ թվով ընտիր գորգեր ու գործվածքներ»<sup>1</sup>: Սեբեսի պատմության մեջ «Աղրբեջան» տերմինը չի գործածված, փոխարենը անշուշտ, «Աստրպատական» տեղանունն է հիշատակված, իսկ ակնհայտ փաստ է, որ Աստրպատականը Պարսկաստանի վարչական խոշոր միավորներից է եղել: Նոյն ձևով է վերաբերվում նաև Մ. Կաղանկատվացու հայտնի աշխատության հետ: Պատմական կարևոր նշանակության երկում, որ բնականաբար գրված է գրաբար հայերենով, ընդհանրապես գոյություն չունի «Աղրբեջան» տերմինը՝ միանգամայն հասկանալի պատճառով: Սակայն աղրբեջանցի «հայենասեր գիտնականը», իբրև թե մեջբերելով Մ.Կաղանկատվացու երկից գրել է. «Աղրբեջանի հյուսիսային նասում գործել են մետաքսե կտոր և բազմագույն գորգեր»<sup>2</sup>: Նախ հարկ է նշել, որ Մ.Կաղանկատվացին չի օգտագործել «գորգ» տերմինը, այլ զուտ հայկական ծագման «կապերտ» բառն է գործածել, իսկ ինչ վերաբերում է «Աղրբեջանի հյուսիսային նաս» հասկացությանը, ապա նոյնպես նպատակային հորինվածք է: Բայց և հիշելով սեփական ազգային արմատները, հեղինակը գրել է. «Մինգեչառի տարածքում իրականացված հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են գորգերի, կարպետների մնացորդներ, որոնք հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու այդ ժամանակների արվեստի և ոչխարաբուծության զարգացման մասին: Թաղումների ժամանակ գերեզմանոցում գորգի կամ կտորի օգտագործումը եղել է ալթայան թուրքերի սովորույթը»<sup>3</sup>: Այն, որ իրենք «ալթայան թուրքեր» են, այդ մասին որևէ առարկություն չկա, բայց նաև անվիճելի և համաշխարհային պատմության մեջ ընդունված փաստ է, որ «ալթայան թուրքեր»-ը Այսրկովկասում առաջին անգամ հայտնվել են միայն 11-րդ դարում, իսկ հեղինակը տվյալ պարագայում նկարագրում է 3-5-րդ դարերի դամբարանները:

Իսկ այնուհետև իր աշխատության մյուս հատվածներում թուրք «արվեստագետը» ջանք ու եռանդ չի խնայել անգամ հայատառ գործություններով ու քրիստոնեական խորհրդանշաններով և, բնականաբար, իայ կանանց ձեռքով գործած գորգերը նոյնպես ներկայացնելու «աղրբեջանական»: Այսպես, նկարագրելով կարպետների վրա հաճախակի կիրառվող հայկական «Տ» տառը, Լ. Քերիմովը գրել է. «Ղարաբաղյան և

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 14-16:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 13:

<sup>3</sup> Կարմոս Լ., Նշվ. աշխ., էջ 12:

Ղազախյան (իին հայկական Գարդման - Մ.Բ.) գորգագործական կենտրոններին բնորոշ էին վիշապների պատկերումը, որոնք հիշեցնում են լատինական «S» տառը<sup>1</sup>, իսկ ակնհայտ մեծ խաչանախշերով գորգերին միանգամայն տալիս է անհասկանալի անուններ, կարծես չնկատելով շատ պարզ ու հստակ պատկերված քրիստոնեական խաչերը:

Աշխատության երրորդ հատորում հեղինակը փորձել է «հիմնավորել» Մոլխանքը որպես «աղբբեջանական» տարածք, սակայն անգիտակցաբար տվել է նաև տարածքի որոշակի ճիշտ բացատրությունը. «... տարածքը ինչ-որ ժամանակ անվանվել է «Գյաբրիստան, ... գործածելով թուրք ժողովուրդների մոտ կիրառվող «օյավուր», արաբերեն՝ «քյաֆիր» (անհավատ- Մ.Բ.) ... հանրապետության տարածքով հոսում է «Գյավուրարիս» գետը, որի անունը, անկասկած, կապված է «օյավուր» բառի հետ»: Իսկ այնուհետև այս ամենից եզրակացրել. «Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ մեր կողմից նկարագրվող տարածքը հնուց ի վեր ապրել է Երկու տարբեր հասարակական-քաղաքական ու հոգևոր-կրոնական էտապներ: Առաջին էտապում այն անվանվել է «Գովստան կամ Գյավստան», իսկ երկրորդ էտապում հայտնի է դարձել «Գյաբրիստան» անունով»<sup>2</sup>: Իսկ, որպես ասվածի «Վառ վկայություն», նույն էջում տեղադրել է զուտ հայկական զարդանախշերով ու կենտրոնում խաչի պատկերով գորգի լուսանկարը, մոռանալով, որ թուրքերը երբեք խաչապաշտ չեն եղել: Հեղինակը դրանով ևս ինքնաբերաբար փաստել է հենց իր իսկ լեզվով ասած այն տեսակետը, որ Մոլխանքում ապրել են «անհավատներ», իսկ ակնհայտ փաստ է, որ այդպես իրենք մշտապես անվանել են քրիստոնյաներին, տվյալ դեպքում՝ հայերին:

Այսպիսով, թուրք մշակութաբանների հայկական գորգարվեստի «թուրքական» ծագում վերագրելու տեսակետները ոչ միայն հիմնագուրկ են, այլև հակագիտական: Դրանք ակնհայտորեն ծառայեցված են Եկվոր վաչկատուն թուրքական ցեղերի մշակույթի ուժացման ու պատմական Հայաստանի տեղական ազգային մշակույթի յուրացմանը, ինչն էլ հետապնդում է զուտ քաղաքական նպատակներ:

## ПОЛИТИКА ПРИСВОЕНИЯ АРЦАХСКОГО КОВРОВОГО ИСКУССТВА В АЗЕРБАЙДЖАНЕ

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 60:

<sup>2</sup> Қяримов Л. Азербайджанский ковер, т. 3, Баку, 1983, стр. 19-20.

## **Меланя Балаян**

**Резюме**

Стилистические особенности узоров Арцахских ковров выражают армянские традиционные представления о жизни, природе, бесконечности и, в целом, верования армян. Турецкие культурологи утверждают, что искусство армянского ковроткачества имеет “туркское происхождение”. Однако все их утверждения беспочвенны и преследуют политические цели.

## **THE POLICY OF ASSIMILATION OF ARTSAKHYAN CARPET MAKING ART IN AZERBAYJAN.**

**Melanya Balayan**

**Summary**

The characteristic patterns of the carpets of Artsakh and its stylistic peculiarities reflect the traditional Armenian ritual and cult images of life, nature and eternity. In general the Armenian carpets reflect the belief of the Armenians which is absolutely different from that of the alien Turk-Tatar tribe, their traditions and customs.

The Turk experts of culture ascribe “Turkish origin” to the Armenian art of carpet-making. However all their groundless standpoints pursue only political goals.

## **ԱՐՑԱԽԻ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁՈ**

**Կարողես Սաֆարյան**

*Պատմական գիտությունների թեկնածու, դրցենսու*

*ԱրԴՀ*

Կարասային թաղումները հայտնի են աշխարհի մի շարք ժողովուրդների մոտ: Կարասի մեջ թաղման ծեսը հանդիպում է հին Եգիպտոսում և Միջագետքում (մ.թ.ա. IV-III հազարամյակ), Փոքր Ասիայում (մ.թ.ա. III-II հազ), Եվրոպայում այն հայտնի է Միջերկրական ծովի ժողովուրդների մոտ մ.թ.ա. III հազարամյակում: Երկարաժամկետ ընդմիջումից հետո

2/2011

կարասային թաղումները նորից հայտնվում են Փոքր Ասիայի արևմտյան մասում, Միջերկրական ծովի կղզիներում: Բալկանյան թերակղզու հարավում տարածում են գտնում մ.թ.ա. VII դ. և այստեղ գոյատևում մինչև մ.թ.ա. III դ.:<sup>1</sup>

Ըստ հնագիտական տվյալների՝ կարասային թաղումները Հայկական լեռնաշխարհ մուտք են գործել Հյուսիսային Միջագետքից՝ ուրարտական ժամանակաշրջանում:<sup>2</sup> Մ.թ.ա. IV-III դր. սկսած դրանք տարածվում են լեռնաշխարհում՝ հյուսիսում մոտավոր սահման ունենալով Կուր գետը: Նրանց ամենալայն կենցաղավարման ժամանակը մ.թ.ա. վերջին և մ.թ. առաջին դարերն են, այսինքն ժամանակ, երբ վերջնականապես ձևավորվում է հայ էթնոտարածքը և մշակույթի էթնիկ դիմագիծը:<sup>3</sup> Հայաստանում կարասային թաղումներ հայտնի են մի շարք վայրերից՝ Արգիշտիհսինիի, Գառնի, Օշական, Արտաշատ և այլն<sup>4</sup>:

Կարասային թաղումները հետազոտված են Վրաստանում (Կողկիս, Իբերիա)<sup>5</sup>: Կողկիսի արևելյան մարգերում կարասային թաղումները տարածվում են մ.թ.ա. IV-III դր.,<sup>6</sup> և շարունակում են գոյատևել նաև I-IV դր. (գլուխեր Բանողա, Դզվերի, Սալիխե և այլն)<sup>7</sup>:

Կարասային թաղումներ հայտնի են նաև ներկայիս Ադրբեյջանի տարածքում՝ Միլի և Մուլանի տափաստաններում, Կասին Խամայիլովի, Աղջաբեղիի, Ժիանովի, Եվլախի, Բարդայի, Մինգեչառի, Կարյագինի շրջաններում,<sup>8</sup> Նախիջևանի տարածքում,<sup>9</sup> այսինքն Կուր գետի աջ ափին:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ կարասային թաղումներ ֆիքսվել են նաև ձախափնյա մի քանի շրջաններում՝ Շաքիի, Մինգեց-չառի շրջաններում, որտեղ վաղուց ի վեր բնակվում էին հայերը՝ պատ-մական Կամբեջանը ու Գարդմանը: Այս դամբարաններում դիտվում է աջ ափին նմանատիյա հուղարկավորման ծիսակատարություն, ինչը

<sup>1</sup> Нонешвили А., Погребальные обряды народов Закавказья (Кувшинные погребения VIII в. до н.э.-VIII в.н.э. Тбилиси, 1992, с. 3-4.

<sup>2</sup> Мартirosyan A., Arghishchiashvili. с.50-55; Хачатрян Ж.Д. Гарни V, Ереван, 1976, с. 23-28, его же: Арташат, Ереван, 1981, с. 32.

<sup>3</sup> ა» იწარებულ დ., მუნიციპალიტეტის მიერ, 1987, გ. 32.

<sup>4</sup> Древнейшие государства Кавказа и Средней Азии. В кн. - .Археология СССР, Москва, 1985, с.67,76.

<sup>5</sup> Նույն տեղում c.92,54,58,90-91.

Digitized by srujanika@gmail.com

7 լուսնի լոկոպ c.59

<sup>8</sup> Голубкина Т., Четыре кувшинных погребения из Мингечаура. Изв. АН Азерб. ССР, Баку, 1956, № 3, с. 73-87; Бунятов Т. Очерки азербайджанской археологии. Баку, 1960, с. 133.

<sup>9</sup> Древнейшее государства Кавказа и Средней Азии с. 101-106

վկայում է տվյալ մշակույթի կրողների էթնոմշակութային միասնության մասին:

Ուշագրավ է, որ դեռևս անցած դարի 60-ական թվականների սկզբին աղբեջանական հետազոտողները Կուր գետի աջ և ձախ ափերի բնակչության միջև նկատում և նշում էին սկզբունքային էթնոմշակութային տարբերությունը:<sup>1</sup> Միևնույն ժամանակ, նրանք եզրահանգում են, որ խոսքը տարբեր աղվանական ցեղերի խմբերի մասին է, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ հնագիտական նյութերը ցույց են տալիս Կուր գետի կտրուկ էթնիկական սահման լինելը:<sup>2</sup> Հարցը կայանում է նրանում, որ կարասային թաղումների մեծամասնությունը բացահայտվել է Կուր գետի աջ ափին, իսկ նույն ժամանակաշրջանի (մ.թ.ա. IVդ - մ.թ. առաջին դարեր) ձախ ափի նյութական մշակույթը ներկայացված է այսպես կոչված «յալոյլուտեփե» մշակույթով: Իսկ, ինչպես նշում են հունա-հռոմեական և հայկական աղբյուրները, Կուր գետից հարավ ընկած տարածքներն այդ ժամանակ կազմում էին Մեծ Հայքի մասը:

Այդ իսկ առումով (Կուր գետի ձախ ու աջ ափերի բնակչության էթնոմշակութային դիմագիծը պարզաբանելու համար) կարասային թաղումների ուսումնասիրությունը բացարձակ նշանակություն է ձեռք բերում:

ԼՂՀ տարածքում կարասային թաղումներ պատահական բացվել են հայտնի մի շարք վայրերում՝ Ստեփանակերտ, Արմենավան, Ճանկարաղ, Առաջաձոր, Ազոլս, Դահումյանի շրջան և այլն:<sup>3</sup>

Դեռևս 1998թ. նոյեմբերին Մարտակերտի շրջանի Ճանկարաղ գյուղի տարածքում, կապի գիծն անցկացնելու ընթացքում, պատահականորեն բացահայտվել են խոշոր կարասներ: Տեղանքի գննումը ցույց տվեց, որ Ճանկարաղ գյուղից երկու կմ հարավ-արևմուտք, «Մեղրակեր» կամ «Մեղրակեր» վայրում տեղակայված է կարասային թաղումներով մի դամբարանադաշտ, որը գրադարձնում է մոտ 600 քառ. մ տարածություն: Թաղման կարասները կողմնորոշված են արևելքից-արևմուտք՝ կարասների պսակը ուղղված է դեպի արևելք: Հանգուցյալը կարասի մեջ էր դրված կծկված վիճակում՝ գլուխը դեպի արևելք:

<sup>1</sup> Апіев К. Племена дреиней Кавказской Албании ( 1 в. до н.э. – 1 в. н.э.) аетореферат канд.дисс., Л.,1962,с.11 Նույն նշում են Զ.Խալիլովը և ուրիշները

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 11-12

<sup>3</sup> Այսպէս, 1939 թ. Ստեփանակերտ քաղաքի հարավ-արևմտյան մասում Յա. Հովնելի կողմից հետազոտվել են երեք կարասային թաղումներ, 1954 թ. միջին բրոնզին վերաբերող Ուգերլիկ-թեփեց բնակավայրի պեղումների ժամանակ Կ. Կուշարյովսկն հայտնաբերել է 4 կարասային թաղումներ, 1964 թ. Ստեփանակերտի հարավային ծայրամասում հայտնաբերվել են կարասային թաղումներ:

Թաղման կարասներից մեկը պատրաստված է ժապավենու եղանակով, ունի լայն վիզ (արտաքին տրամագիծը 50 սմ, ներսինը՝ 38 սմ), թեք կտրված պսակ, երկարացվող իրան և հարթ ու նեղ հատակ (Վերջինիս տրամագիծը 15 սմ է): Կարասը հավասարաչափ է թթված, գույնը կարմրավուն-վարդագույն, կավը ավագի խառնուրդով: Թաղման կարասի բարձրությունը 165 սմ է, առավելագույն տրամագիծը՝ 100 սմ, պատերի հաստությունը՝ 2-2,5 սմ: Լայն դուրս մղված պսակը ներքի մասում զարդարված է ճգնան եղանակով արված նախշով (Տախտակ I, 1): Կարասի առավել լայն մասով անցնում է ռելիեֆային զարդարված գոտի: Նմանատիպ կարասներ հայտնի են այնպիսի հուշարձաններից, ինչպիսիք են Գառնին, Օշականը և այլն:<sup>1</sup> Կարասը փակված էր ոչ մեծ սալով, որը գտնվել է նույն տեղում:

Դամբարանում հայտնաբերվել են արծաթե կլոր հայելու երեք բեկոր, գլանաձև ապակյա ուլունք, երկուն քարե ուլունք, բրոնզյա մատանի, սեղմենտաձև չմիացվող ծայրերով բրոնզյա ականջող, բրոնզյա շղթա վեց օղակներից (Տախտակ I, 6):

Երկրորդ դամբարանի վերազննման ընթացքում, թաղման կարասից ոչ հեռու բացահայտվել են հելլենիստական շրջանում տարածված «օյնոխոյա» տիպի երկու միականթ սափորներ (Տախտակ I, 3): Քննարկվող տիպի գունագարդ խեցեղենու օրինակները հայտնի են Արմավիրից, Արտաշատից, Գառնիից, Ղվինից, Հացավանից, Շիրակավանից, Կարձաղբյուրից, Գեղադիրից, Օշականից, Լուսակերտից և այլ վայրերից և թվագրվում են մ.թ.ա. II-I դդ.:

Ելելով կարասային թաղումների ուսումնասիրման կարևորությունից՝ մեր կողմից, 2006թ. աշնանը, Ճանկաթաղ գյուղի «Մեղրակեր» տեղամասում կարասային թաղումների դամբարանադաշտում իրականացվել են հնագիտական հետախուզական պեղումներ:

Պեղումներ են կատարվել ավերված կարասներից 2 մ հարավ ընկած տարածքում: Պեղվող քառակուսու հյուսիս-արևելյան անկյունում՝ 0,58 սմ խորությամբ, ջարդված կծուծի մեջ, և նրա կողքին գտնվել են տարբեր ուլունքներ՝ սարդիննե, պղնձե, ապակյա արծաթապատված, մածուկից (ընդամենը 79 հատ), ինչպես նաև երկաթյա մատանու կտոր:

<sup>1</sup> Древнейшие государства Кавказа и Средней Азии. В кн. - .Археология СССР, Москва, 1985, с.67,76

Հետաքրքիր են կավե ուլունքները, ազատից ուլունքը, ուլունքաշարը միացնող բաժանարարն (Տախտակ I, 4):

Պեղվող քառակուսում 0.8 մ խորությամբ բացվել է մեծ թաղման կարասը (Երկարությունը՝ 1.65 մ, տրամագիծը լայն մասում՝ 1 մ, պսակի տրամագիծը՝ 50 սմ): Կարասը կողմնորոշված է արևմուտքից-արևելք՝ պսակով դեպի արևելք: Թաղման կարասի կողքին նույն խորությամբ արձանագրվել է մոխրի հետքեր, այրված ընկույզ: Կարասի բերանը փակված էր մի ուրիշ, ավելի փոքր երկկանթ կարասի ներքին մասով (Տախտակ II, 1-2): Վերջինիս մյուս մասերը տեղադրված էին մեծ կարասի հատակի վրա և առավել լայն հատվածի ու պսակի տակ՝ բոլոր այն տեղերում, որոնք ճեղքեր ունեն. այդ հատվածներում մեծ կարասը ներսից սպաղված էր սպիտակավուն շաղախով՝ մոխրե ցեխով: Փոքր կարասի բերանի տրամագիծը դրսից 0.41 մ էր, ներսից՝ 0.34 մ, շուրջը ուղիղ է՝ դեպի դուրս թեքված, լայնությունը՝ 3.5 սմ, կարասի պատերի հաստությունը՝ 1.8-2.5 սմ:

Կմախքը կարասում տեղադրված էր խիստ կծկված վիճակում՝ աջ կողքի վրա, գլխով դեպի արևելք: Կարասում գտնվել են Երկաթյա միակողմանի դանակ, խաղող մշակելու փոքր երկաթե մկրատի մաս, չորս Երկաթյա օղակածն ձարմանդ, Երկու Երկաթե կլորավուն իր (կոճակ), Երկաթե մեխ ու ասեղ (Տախտակ II, 7):

Բացահայտված կարասից 3 մ հյուսիս դրվեց ոչ մեծ հետախուզական խրամատ /2 x 1 մ/: Արդեն իսկ 0.3 մ խորությամբ բացվեց մեծ կարասի Երկու խոշոր բեկորներով ծածկված մարդու կմախք՝ կծկված, աջ կողքին, գլխով արևելք, ծեռքերը Երեսի մոտ: Այդ կմախքից 0.8 մ արևելք նույն խորությամբ գտնվեցին ոչխարի ոսկորներ: Հաջորդ շերտը ոչ մի նյութ չէր պարունակում:

Պեղվող քառակուսուց մոտավորապես 60-70 մ հյուսիս-արևելք՝ հողի հանքի տարածքում տեղի բնակիչները հողային աշխատանքների ընթացքում գտել են հելլենիստական շրջանին պատկանող սավորներ, թասեր: Հետախուզական աշխատանքների արդյունքում այս տարածքի արևմտյան մասում, ներկա ձանապարհից 3 մ արևելք՝ բարձունքի վրա, 0,45 - 0,55 մ խորությամբ բացահայտվել են կարասի կտորներ, որոնց մոտ գտնվել են 12 ապակյա ուլունք և Երկու բրոնզյա զանգ-կախիկներ (Տախտակ II, 5): Այդ շերտի տակ բացվեց մայր հողը. հավանաբար հողահանքի օգտագործման ընթացքում մշակութային շերտի հիմնական մասը ավերվել է:

Ինչպես նշել ենք, կարասային թաղումներ են արձանագրվել նաև Մարտակերտի շրջանի Առաջածոր ու Հաթերք գյուղերի տարածքում:

Առանձին հետաքրքրություն են մերկայացնում Առաջածոր գյուղի միջնակարգ դպրոցի թանգարանում պահպանվող կարասի բեկորները, որոնք հավաքվել են գյուղի հյուսիսային մասում գտնվող «Պատեն կալ» կոչվող վայրում: «Պատեն կալ» տեղամասից մոտ 50 մ արևմուտք ընկած տարածքում, ևս հողային աշխատանքներ կատարելու միջոցին թաղման կարասներ են բացվել: Կարասներ հայտնաբերվել նաև հիշյալ տարածքից 150-160 մ հարավ: Այդ նույն տարածքում մեր կողմից արձանագրվել են հելլենիստական դարաշրջանով թվագրվող խոշոր կարասների բեկորներ:

2006 թ. ԼՂՀ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի «Փուլճաղակ» տեղամասում թրղի գետի հունը Սարսանգի ջրամբար տեղափոխելու ընթացքում բացահայտվել են կարասային ու հիմնահողային դամբարաններ: Տեղի գննումը ցույց տվեց որ նշված դամբարանադաշտը պատկանում է հելլենիստական ժամանակաշրջանին: Տեղում հավաքվել են կարասների բեկորներ, ամբողջական սափորներ, կծուճներ, թասեր, երկաթե տեգեր, պերճանքի առարկաներ: Կարասների չափսերը ամենար էր պարզել:

2011 թ. գարնանը, Ստեփանակերտ քաղաքի հարավ-արևմտյան ծայրամասում հողային աշխատանքների իրականացման ժամանակ խաթարվել են երկու կարասային թաղումներ: Առաջին կարասը տեղադրված էր հորիզոնական ոիրքում՝ կողմնորոշված հյուսիսարևմուտքից հարավ-արևելք: Կարասի բարձրությունը՝ 135 սմ, ամենալայն մասը՝ 105 սմ, պսակի տրամագիծը՝ 58 սմ, հատակի տրամագիծը՝ 19 սմ, պատերի հաստությունը՝ 3 սմ: Կարասի պսակը ծածկված էր կրաքարե բարակ սալով՝ 58X47 սմ: Համարյա ամբողջական պահպանված կմախքը՝ աջ կողքի վրա խիստ կուչ եկած, ձեռքերը ծալած գլխի տակ, գլուխը կարասի բերանի կողմը, դեմքով դեպի հարավ էր (Տախտակ III, 1): Անմիջապես գլխի տակ և վզի հատվածում գտնվել են ապակյա ուլունքներ՝ թվով 90 հատ: Կոնքոսկրի և ծալված ոտքերի արանքում գտնվել են երկու երկաթե նետասլաքներ (Տախտակ III, 2): Կարասի պսակի հարավային մասում դրսից գտնվել է օյնախոյա տիպի միականթ սափոր:

Երկրորդ կարասը գտնվում էր առաջին կարասի մակարդակից 80 սմ բարձր և 1, 5 մ հարավ-արևելք: Կարասի բարձրությունը կազմում էր 145 սմ, լայն մասը՝ 106 սմ, հատակի տրամագիծը՝ 19 սմ, պսակինը՝ 38-40 սմ: Կողմնորոշումը նույնն է:

### **Գտածոների նկարագրումը.**

**Կարասներ.** թաղման կարասները 135-165 սմ բարձրությամբ, հարթ, նեղ հատակով (տրամագիծը 12-19 սմ), ուռուցիկ իրանով, կարծ վզով, դուրս լայնացող հորիզոնական և ուղիղ կամ թեք կտրված պսակով (տրամագիծը 35-45 սմ), շուրջի ներքելի մասով ալիքածև կամ ատամնավոր նախշ է անցնում:

Կարծ վզից անմիջապես անցումը ուռուցիկ իրանին հայտնի է դեռևս մ.թ.ա. VI-IV դդ., և բնորոշ է դաշնում հելլենիստական կարասների համար:<sup>1</sup> Կարասների իրանի ամենից լայն մասով անցնում է ռելիեֆային պարանակություն զարդագոտի: Նմանատիպ կարասներ հայտնի են Անդրկովկասի մի շարք վայրերից՝ հարավ-արևելյան Վրաստան, Քարտլի, Մինգաչառ, Արմավիր, Արտաշատ, Գառնի, Օշական և ուրիշներ:<sup>2</sup>

**Սափորներ.** Միականթ մեծ գունագարդ սափոր Հաթերքից: Գնդածն իրանով, վիզը գլանածն երկար, պսակը երեքնուկածև, դեպի դուրս թեքված շուրջի եզրից իջնում է կտրվածքում կլոր աղեղնածև կանթ, հատակը հարթ ու նեղ է: Անորի վզին ուղղահայաց զիգզագածև նախշեր են արված: Սափորի ուսը զարդանախշված է երեք գուգահեռ կարմիր գծերով: Գունագարդումն արված է բավականին անփոփք, ինչը թույլ է տալիս թվագրել անորը մ.թ.ա. 1-մ.թ. 1 դդ.: Բարձրությունը 56 սմ է, պսակի տրամագիծը՝ 12 սմ, հատակի տրամագիծը՝ 12 սմ (Տախտակ IV, 1):

Առավել հետաքրքիր է փոքր միականթ անորը, որը գտնվել է Հաթերքում կարասային թաղումից (մ.թ.ա. I դ): Տանձածն (կոլբայածև) փոքր միականթ անոր է, հավանաբար, ծիսական: Երկար աղեղնածև կանթը սկսում է ուղիղ կտրած պսակից և հասնում ամենալայն մասին (բարձրությունը 18 սմ է, կանթի երկարությունը՝ 10 սմ, պսակի տրամագիծը՝ 2.2 սմ, բերանի բացվածքը՝ 1 սմ): Սափորիկը պատրաստված է դեղին, լավ հունցած կավից: Մինչև թրծումը անորի ամբողջ մակերեսը պատվել է

<sup>1</sup> Կարասպերան Ի., Հայաստանի նյութակամ մշակույթը մ.թ.ա. VI-IV դդ., Երևան, 2003, էջ 34

<sup>2</sup> Древнейшие государства Кавказа и Средней Азии, Археология СССР, Москва, 1985., 54, 58. 90-9, 1 с.92.

Կարմիր ներկով ու փայլեցվել: Հարթ հատակի վրա արված են 72 փոքր անցքեր (Տախտակ IV, 6): Նմանատիպ անոթներ մեզ հայտնի չեն:

Միականթ երեքնուկաձև պսակով գունազարդ սափոր Հաթեքից (բարձրությունը՝ 27 սմ, լայնությունը՝ 18 սմ, պսակի տրամագիծը՝ 11 սմ, հարթ հատակի տրամագիծը՝ 12 սմ): Պատրաստված է բաց դարչնագույն մանրահատիկ ավազախառն կավից: Պսակի շուրջը ներկված է կարմիր ներկով, կանթի ներքին եզրից սափորը բոլորում է 3 կարմիր գծերով բաղկացած գոտի: Սափորը դրսից անգորբապատ է (Տախտակ IV, 2):

Միականթ կլորավուն պսակով, երկար վզով, գնդաձև իրանով սափոր Հաթեքից (բարձրությունը՝ 30 սմ, լայնությունը՝ 22 սմ, նստուկի՝ տրամագիծը՝ 13 սմ, պսակի տրամագիծը՝ 9 սմ): Պատրաստված է բաց դարչնագույն կավից, լավ հունցած, մանրահատիկ, թրծումը հավասար: Կարմիր գույգ գծերով զարդարված է վիզը և կանթը (Տախտակ IV, 3):

Փոքր «օյնոխոյա» տիպի, երկկող իրանով միականթ սափոր ճանկաթաղից: Պսակը մի քիչ դուրս է թեքված: Աղեղնաձև՝ կտրվածքում կլոր, կանթը սկսվում է անմիջապես պսակից և իջնում է սափորի ուսին: Բաց վարդագույն ֆոնի վրա բռնակի հիմքից հեռանում են երեք գուգահեռ մուգ դարչնագույն գծեր: Նույն գույնի երկու ուրիշ գծեր զարդարում են սափորի վզի ներքին մասը: Նշված երկու գոտիները միացված են զիգզագաձև գծերով: Անմիջապես պսակի տակ, վզի ձգման տեղը ծեփածն եղանակով երկու կողքից կպցված են մեկական կոճակներ: Փոքր սափորի բարձրությունը՝ 16 սմ, տրամագիծն առավել լայն մասում՝ 14 սմ, վզի տրամագիծը՝ 6.5 սմ, հատակի լայնությունը՝ 8 սմ: (Տախտակ I, 2):

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Արցախի պետական թանգարանում պահպանվող անոթները: Առաջինը, մեծ «օյնոխոյա» տիպի միականթ սափորը (բարձրությունը՝ 34 սմ, լայնությունը՝ 24 սմ, հատակի տրամագիծը՝ 17 սմ, պսակի տրամագիծը՝ 11 սմ): Հարթ հատակով այս սափորը պատրաստված է խոշորահատիկ ավազախառն, վատ հունցած, անհավասար թրծած դեղնավուն կավից: Սափորի վիզը երկարավուն է, իրանը համարյա գնդաձև: Հայտնաբերման վայրը անհայտ է:

Մյուսը՝ փոքր «օյնոխոյա» տիպի սափորը, գտնված է Ստեփանակերտում (բարձրությունը՝ 21 սմ, լայնությունը՝ 17 սմ, հարթ հատակի տրամագիծը՝ 10.5 սմ, պսակի տրամագիծը՝ 7, երկարությունը՝ 11.5 սմ): Պսա-

կի շուրջը ներսից և դրսից կարմիր է ներկված, սեղման մասում մեկական կոճակ է արված: Վզով անցնում է գունազարդ գոտի, որը կազմված է երեք շրջանաձև կարմիր գծերից. նրանից 2 սմ ներքեւ անցնում է ևս մի գունազարդ գոտի՝ 4 կարմիր գծերից: Ամբողջ սափորը անգործապատ է: Պատրաստված է լավ հունցած, մանրահատիկ ավազախառն, բաց դարչնագույն կավից: Կանթի երկայնքով անցնում են 3 կարմիր գուգահեռ գծեր, որոնք միանում են իրանի գունազարդ գոտուն:

Մեծ «օյնոխոյա» տիպի սափոր՝ բարձրությունը՝ 34 սմ, լայնությունը՝ 24 սմ, հատակի տրամագիծը՝ 17 սմ, պսակի տրամագիծը՝ 11 սմ: Պսակի սեղման տեղում մեկական «կոճակ»: Միականթ, հարթ հատակով, խոչշրջահատիկ ավազախառն, վատ հունցած, անհավասար թթած դեղնավուն կավից: Սափորի վիզը երկարավուն, իրանը համարյա գնդաձև: Հայտնաբերման վայրը անհայտ է:

Այսպիսով, սափորները ներկայացված են տարբեր տեսակների ու չափսերի. լայնացող իրանով, կարճ վզով, կլոր, սուր կամ երեքնուկի ձև ունեցող պսակով, աղեղնաձև կանթով, որը մի եզրով կպած է պսակին, մյուսով՝ ուսին: Երեքնուկաձև շուրջերով սափորներն իրենց նախատիպերն ունեն ուրարտական խեցեգործության մեջ.<sup>1</sup> Ժ.Խաչատրյանը նույնապես գտնում է որ «օյնոխոյա» պսակով սափորների նախատիպը գալիս է ուրարտական շրջանից, միևնույն ժամանակ չի բացառում նաև հունական ու հելլենիստական ուղղակի ազդեցությունը:<sup>2</sup> «Օյնոխոյա» տիպի պսակով սափորներ հանդիպում են Հայաստանում ինչպես աքեմենյան ու հելլենիստական դարաշրջանում, այնպես էլ ավելի ուշ: Անոթների մակերեսը պատված է բաց կարմրավուն կամ թափանցիկ անգորով:

**ԿՃՈՒՃ.** Անկանթ, կարճ վզով, դուրս թեքված պսակով, կլոր շուրջով, մակերեսը դարչնագույն ներկով պատված կճուճ Հաթերքից: Շուրջի եզրից իջնում են ուղղահայաց գծեր, որոնք կճուճի ուսին սահմանվում են հորիզոնական գծով: Կճուճի ամենից լայն մասով անցնում են երեք գուգահեռ գծեր, իսկ երրորդ գծից ներքեւ իջնում են եռանկյունաձև (սլաքաձև) նախչեր: Գունազարդումը արված է դեղնավուն ներկով: Պատ-

<sup>1</sup> Пиотровский Б., Кармир – Блур II.Резульматы раскопок 1951-1953 гг. Ереван, 1955, с. 51; Мартirosyan A., Аргиштихинили. Ереван, 1974, с. 96

<sup>2</sup> Խաչատրյան ժ. Կրտաշալ II. Անտիկ դամբարանալաշը / 1971-1977 թթ. պեղումները / Եր., 1984, էջ 38, Տիրազն Դրевнеармянская керамика из раскопок Армавира (Опыт классификации и датировок), с.216

րաստված է վատ հունցած խոշորահատիկ կավից (Տախտակ IV, 4): Զուգահեռներ հայտնի են Արմավիրում<sup>1</sup>:

Հորիզոնական կանթով գունագարդ կճուճ Հաթերքից (մ.թ.ա. I դ.) (բարձրությունը՝ 22 սմ, լայնությունը՝ 19 սմ, հարթ հատակի տրամագիծը՝ 11 սմ, պսակի տրամագիծը՝ 11 սմ): Կանթը ուղղահայաց տեղադրված է լայն մասում: Պատկը կլոր, կլորավուն շուրջը դուրս թեքված, վիզը փոքր, իրանը գնդաձև: Կանթի մակարդակից կճուճը զարդանախշված է 3 կարմիր գուգահեռ գծերից կազմված գոտիով: Վերևի գիծը անցնում է նաև կանթով: Կճուճի ամբողջ մակերեսը անգորապատ է (Տախտակ IV,5):

**Թասեր.** Թաս-փիալա. բերանի բացվածքը 14 սմ է (եզրից եզր-15 սմ), հարթ՝ մի քիչ ներձկված հատակի տրամագիծը 8.5 սմ է, խորությունը 5 սմ: Ներս թեքված և ուղիղ կտրած շուրջը ներկված է կարմիր գույնով, կողերի վերին մասը զարդարում են 2 սմ երկարությամբ սեպաձև թեք գծերը: Պատրաստված է բաց դարչնագույն մանրահատիկ ավազախառն կավից: Թրծումը՝ հավասարաչափ: (Տախտակ V,1):

Թաս-փիալա. բերանի բացվածքը 14 սմ, հարթ՝ մի քիչ ներձկված հատակի տրամագիծը 8 սմ է, խորությունը՝ 4 սմ: Շուրջը կլորավուն ներս թեքված: Անոթը դրսից ներկված է կարմիր ներկով, պատրաստված է բաց դարչնագույն մանրահատիկ ավազախառն կավից: Թրծումը՝ հավասարաչափ(Տախտակ V, 2):

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Հաթերքում գտնված գունագարդ պնակը: Նման անոթներ հայտնի են Արտաշատից,<sup>2</sup> Գառնիից,<sup>3</sup> Ղվինից<sup>4</sup> և թվագրվում են մ.թ.ա. I դարով:

Պնակը պատրաստված է բաց դարչնագույն՝ լավ հունցած կավից, հաստապատ: Պնակի ներսում համակենտրոն շրջաններ են արված: Դրանք բաժանված են հետևյալ մասերի՝ կենտրոնում 3 փոքր շրջաններ՝ մեկը մյուսից մի քիչ մեծ: Հաջորդ գոտին բաղկացած է ևս 3 գծերից կազմված գոտիով, ընդ որում դրսի գծի վրա տեղադրված են ոճավորված ծառեր (10 հատ՝ խմբավորված երկու-երկու): Եվս 3

<sup>1</sup> Тирацян Г., Древнеармянская керамика из раскопок Армавира (Опыт классификации и датировки).” ИФЖ”, 1971, 1, с.216

<sup>2</sup> Խաչատրյան Ժ., Արտաշատ. Անտիկ դամբարանադաշտուր: (1971-1977 թթ պեղումները), Երևան, 1981, էջ 110; Խաչատրյան Ժ., Կանեցյան Ա. Արտաշատի VIII բլիղ շերտագրությունը, «ԼՀԳ», 1974, N 9, էջ 82

<sup>3</sup> Արակելյան Բ., Գարնի I, թէզըլութան բաշխութան աշխատանքները, «Երևան», 1951, с.41, рис.28.

<sup>4</sup> Քոչարյան Գ., Ղվինի հելենիստական դարաշրջանի խեցեղենը, «ԼՀԳ», 1974, N 5, էջ 91-92:

շրջանաձև գծեր կազմում են հաջորդ գոտին, որի վրա տեղադրված են 4 խումբ ուղղագիծ պատկերված զիգզագաձև գծեր, որոնք իրարից բաժանվում են մեկական ոճավորված ծառերով, դրանցից վերև սկսվում է մի նոր գոտի՝ բաղկացած արդեն 4 կարմիր գծերից: Եվ ի վերջո, դեպի ներս կլորացող շուրթը ներսից ու դրսից կարմիր նախշ ունի: Պնակի կողերը, աստիճանաբար թեքվելով, բարձրանում են: Պսակի տրամագիծը 31 սմ է, հարթ հատակինը՝ 28 սմ, բարձրությունը՝ 2.5 սմ (Տախտակ V,3):

Այսպիսով, կարասային թաղումներում հայտնաբերված խեցեղենը հիմնականում ներկայացված է գունազարդ փայլեցված տեսականիով: Անորմների ձևերը ներկայացված են տարրեր չափերի միականթ և անկանթ սափորներով, թասերով, կծուճներով, պնակներով: Հարդարված են հիմնականում անորմների շուրթերը, կանթերը, իրանների վերին մասը: Թասերի մի մասի մոտ հարդարված են ինչպես դուրսը, այնպես էլ ներսի մակերեսը:

Անորմների արտաքին մակերեսը պատված է դեղնաշագանակագույն, կարմրաշագանակագույն անգորով, մանրակրկիտ փայլեցված են, ապա զարդանախշված: Զարդանախշը երկրաչափական ու բուսական է:

Երկրաչափական նախշերը ներկայացնում են մի քանի հորիզոնական, երբեմն էլ ուղղահայաց, ուղիղ և ալիքավոր գոտիներ, եռանկյուններ, մի կետից ելնող ձարձագայթներ, շեղ շարված գծիկներ, ցանցեր (Տախտակ V, 5):

Բուսական նախշերը ներկայացնում են ծաղկաբերթիկ, ծարի ձյուռ, ծառ, եղևնազարդ և այլն:

Հաճախ են հանդիպում կանթերի և սափորների շուրթերին ամրացված վերադիր կոճակներ:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում գունազարդ սափորների բեկորները: Դրանք երեսպատված են բաց գույնի ներկով և պատկերազարդված մուգ դարչնագույն, դարչնագույն, շագանակագույն գույներով: Ուսումնասիրողների կարծիքով գունազարդման տեխնիկան Հայաստանում, ինչպես նաև հարևան երկրներում հայտնի է դեռևս մ.թ.ա. IV հազարամյակում, իսկ բաց ֆոնի վրա կատարված զարդանախշերով խեցեղենը լայն տարածում է ստանում սկսած մ.թ.ա. III դ.:<sup>1</sup>

<sup>1</sup> Խաչատրյան Ժ., Հայաստանում գունված գունազարդ խեցեղենի մի քանի նմուշներ (մ.թ.ա. V-մ.թ. I դդ), «ՊԲՀ», 1966, հ. 1, էջ 257-258:

Ճանկաթաղի և Հաթերքի նյութերը, գունազարդ անոթների մակերեսը լրիվ, մեկ կողմը, կամ անոթի վերին մասը պատած է բաց դարչնագույն, դարչնագույն, բաց կարմիր, գորշ քսուկով: Նոյն երանգներով են պատված Տիգրանակերտի հելլենիստական անոթների բեկորները: Հիմնականում փայլեցված են զարդարված մասերը, որը ուշ հելլենիստական խեցեղենի բնորոշ գծերից մեկն է:<sup>1</sup>

Քննությունը ցույց է տալիս, որ Արցախի կարասային թաղումներից հայտնաբերված խեցեղենը իր բոլոր տարատեսակներով կազմում է Հայաստանի հելլենիստական խեցեղենի անքակտելի մասը:

### Տախտակ I



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3

<sup>1</sup> Խաչատրյան Ժ., Արտաշատ II. Ամսիկ դամբարանադաշտ/1971-1977 թթ. պեղումները/Երեւան, 1984, էջ 98:



Նկ. 4



Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7

## Տախտակ II

Նկ. 1

Նկ. 2



### Տախտակ III



Ակ. 1



Ակ. 2

Ակ. 3

Տախտակ IV




Ակ. 1




Ակ. 2

Ակ. 3.



Ակ. 4



Ակ. 5



Ակ. 6

Տախտակ V



Ակ. 1



Ակ. 2



Ակ. 3



Ակ. 4



Ակ. 5



Ակ. 6

**ПЕРВАЯ ПОПЫТКА ИЗУЧЕНИЯ КУВШИННЫХ ПОГРЕБЕНИЙ  
АРЦАХА**  
**Вардгес Сафарян**

Резюме

В статье, на основе исследования материалов кувшинных погребений, обнаруженных на территории сел Атерк, Чангатах Мардакертского района НКР, а также в г. Степанакерте, делается вывод о том, что они составляют часть эллинистической культуры Армении.

**THE FIRST EXPERIENCE OF STUDYING ARTSAKH'S PITCHER  
BURIALS.**

**Vardges Safaryan**

Summary

In the article, based on the research materials of pitcher burials discovered on the territory of the villages of Haterk and Changatagh in Martakert region, NKR, as well as in Stepanakert, we come to the conclusion that they form part of the Hellenistic culture of Armenia.

## ԹՈՆԻ ՄԱՀՍԵԴԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԲԵԿՈՐՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՌՈՒՄ

Լեռնիկ Հովհաննիսյան

Արդի

Վերջին շրջանում մամուլում, գիտական հանդեսներում եւ առանձին մենագրություններով զանազան նյութեր են հրապարակվում Արեւմտյան Հայաստանում եւ ընդհանրապես թուրքական Հանրապետության տարածքում այժմ ապրող եւ իրենց ազգային ինքնությունը կորցրած, մահմեդականություն ընդունած եւ, հետեւաբար, թուրքացած ու քրդացած հայերի մասին:

Սակայն միայն Արեւմտյան Հայաստանում եւ նախկին Օսմանյան կայսրության տարածքներում չէ որ հայության այս կամ այն հատվածը ենթարկվել է բռնի մահմեդականացման եւ դրա արդյունքում՝ ինքնության կորստի: Համանման երեւույթներ տեղի են ունեցել նաև Արեւելյան Հայաստանում:

Ղարաբաղի խանության կազմավորումից հետո, տարածաշրջանի էթնոքաղաքական իրավիճակը խիստ բարդացավ. Վաչկատուն ցեղերի անընդհատ արշավանքները մի կողմից, մելիքների ու Ղարաբաղի խաների հականարտությունը նյուս կողմից, հայ ժողովրդին դրեցին աղետալի կացության մեջ: Այս առնչությամբ ահա թե ինչ է գրել Հարստիառութենք, «Սկած XVIII դ. այս գեղեցիկ երկիրը կրում է խոր անկման հետքեր և չի կարող արագ վերականգնվել, մասնավորապես բազմաթիվ էթնոդավանական հանրությունների առկայության պատճառով: Գերի տարված հայերի փոխարեն այստեղ են բերվել ծովյլ թաթարներ և թուրքեր, որոնք աստիճանաբար ավելանալով թվային գերկշռություն են ստանում տեղաբնիկների նկատմամբ»<sup>1</sup>:

Բացի Ղարաբաղի հայաթափումից եւ թուրքաքրդալեզու էթնիկ տարրերի ներթափականցումից, այդ շրջանում տեղի է ունենում հայության համար մեկ այլ աղետալի երևոյթ՝ հայ բնակչության մի մասի մահմեդականացում: Բռնի մահմեդականացված հայության հիմնական հատվածն ապրում էր գլխավորապես Հյուսիսային Արցախում, մասնավորապես՝ Գարդմանքում: Դրանք այրումներն են, որոնց ոճանք համարում են աղբեջանցիների ազգագրական խնճերից մեկը<sup>2</sup>: Այրումներն, ըստ XIX

<sup>1</sup> Հակոբյան Ա., Հայաստանի պատմություն, ՏՊ, 1857, 4, 1, 208-213.

<sup>2</sup> Народы мира, Историко-этнографический справочник, Под ред. Ю. Бромлея. Москва, 1988. с. 42.

դարի տվյալների, պահպանվել էին իհմնականում Գարդմանքում (ներկայիս Գետաբեկի, Ղաշքեսանի, Թովովոյի եւ ուրիշ շրջաններում, ինչպես նաև՝ ԼՂՀ Շահումյանի, Քարվաճառի շրջաններում), այսինքն՝ Աղարակ (Գյոյ-գյոյ) լճից մինչեւ Աղստել գետն ընկած տարածքում: Գանձակ գավառի լեռնակողմն, այնտեղ բնակվող այրումների շնորհիվ, մինչեւ XIX դարի սկզբները կոչվում էր «Այրումլու», բայց ռուսական տիրապետության օրոք այդ անվանման տակ հասկացվող տարածքն առավել սահմանափակվեց եւ սկսեց վերաբերվել միայն առանձին գյուղական հասարակությունների:

Այրումների մասին գրավոր աղբյուրները բավական սակավաթիվ են: Նրանց վերաբերյալ հայ իրականության մեջ առաջին տեղեկությունները հաղորդել է Ե. Լալայանն, ըստ որի. «Թուրքեր են համարվում նաև թափառական այրումները, որոնք իրենց Ռումից (Բյուզանդիա) գաղթած են համարում եւ իրենց կոչումն էլ մահմեդականներ են, շիա աղանդին պատկանող, խոսում են Աստրապտականի բարբառով, մի առանձին արտասանությամբ և ոչնչով չեն զանազանվում թուրքերից: Սրանք բնակվում են Ամիրվալ Աջի, Բիրգող, Այքենդ, Ղաստաֆուր, Ղամշալի, Գյունեյ, Ղամի, Զազա-Ղարասի, Ղարաբուլախ եւ Ղազախ Էջլիախ հասարակությունների մէջ»<sup>1</sup>:

Հայ ուսումնասիրողներից Հ. Վարդանյանը նշում է, որ. «Այրումների հետ մոտ ծանոթանալուց, ինչպես ասում են, նրանց ազգն ու տակը քրքրելուց յետոյ մարդը ակամայ համոզվում է, որ այդ խեղճ ու կրակ մահմեդականները ոչ այլ ոք են, եթե ոչ մեր Գարդմանաց Զորի անպարտելի քաջերի սերունդը: Մինչեւ այժմ այրումների մեջ մնացել են մի քանի հայկական խօսքեր, օրինակ՝ հանդ, հավալիք, (ավելուկ), հախչիս (աղջիկ) եւ այլն... այրում ոչ թէ կը նշանակէ «հայ-յոյն», և այդ խօսքը ուղղակի «հայրում» խօսքի աղավաղումն է: Նրանք բռնի կերպով են մահմեդական դարձել, որի պատճառով նրանք իրենց անուանում են «զլից մուսուլմանի», այսինքն սրի ույժով մահմեդական դարձածներ: Այրումները այն կրոնական մոլեռանդությունը չունեն, ինչ-որ ուրիշ տեղի մահմեդականները: Դէպի կրոնը և կրոնական ծեսերը շատ անտարբեր են: Նոյնիսկ ամբողջ գավառամասում աղօթատուն չունեն»<sup>2</sup>: Այրումներին բնիկ է համարում նաև աղրբեջանցի հետազոտող Ա.

<sup>1</sup> Լալայան Ե., Երկեր, հ. 2, 1988, էջ 329:

<sup>2</sup> Վարդանյան, «Մի քանի խոսք այրումների մասին», «Աշակ», 1914, հ. 154, էջ 2-3:

Ալեքպերովը: Ալեքպերովը նույնպես գտնում է, որ «այրում» էթնիկական անվանումը ծագել է «հայ» եւ «հույն» անվանումներից եւ դա կապված է այն իրողության հետ, որ 451-ի Քաղկեդոնի ժողովից հետո հայերի որոշ մասն սկսեց ընդունել քաղկեդոնականություն, եւ նրանց «հայ-հոռամներ» անվանեցին, այսինքն՝ հունադավան հայեր<sup>1</sup>: Ըստ Կորիչչի, 591թ. Հայաստանի երկրորդ բաժանումից հետո նրա մեծ մասն անցավ Բյուզանդական կայսրությանը, որի հետևանքով Բյուզանդական կայսրությանն անցած գավառների բնակչությանն սկսեցին կոչել «հայ-հոռոմներ», այսինքն՝ բյուզանդահպատակ հայեր<sup>2</sup>:

Իսկ այն հարցին, թե Գարդմանքում ե՞րբ է քաղկեդոնականությունը տարածվել: Ըստ Ս. Կարապետյանի, դա կարող էր տեղի ունեցած լինել բյուզանդասեր Եզր կաթողիկոսի օրոք՝ VII դարում կամ էլ Վրաստանի հզորացման շրջանում XII դարում<sup>3</sup>: Մեր կարծիքն այն է, որ դա կարող էր տեղի ունեցած լինել նաեւ բյուզանդական Հերակլ կայսեր ժամանակ-ներում, որը 622-623 թվականներին արշավել էր դեպի այդ երկրամասեր: Մերեսի պատմածի համաձայն՝ Հերակլին դիմագրավելու նպատակով պարսկական զորքը մտավ Գարդմանք, որը գրավել էր կայսրը և բանակ դրեց մյուս Տիգրանակերտում:

Կա նաեւ մյուս հարցը. Ե՞րբ են այրումներն ընդունել մահմեդականություն: Ըստ Ս. Կարապետյանի, այդ տեղի է ունեցել XV-XVI դարերում, ինչը քիչ հավանական է, կամ էլ 1720-ական թվականներին, ինչը տեղի է ունեցել նաեւ Շաքիի, Կապաղակի, Ղասանի, Շամախիի, Մուսկուրի եւ այլ բնակավայրերի հայերի մի զգալի մասի հետ՝ 1720-1750-ական թվականներին<sup>4</sup>: Ըստ Ալեքպերովի՝ թօնի մահմեդականացումը կատարվել է 18-րդ դարի սկզբներին՝ Արցախի ազգային-ազատագրական պայքարի անկումից հետո, երբ այս տարածաշրջան ներխուժած թուրքերը, տեղի թյուրքալեզու տարրերն անհանդուրժողական վերաբերմունք էին դրսեւրում հայերի նկատմամբ: Հատկապես անհուսալի էր Սեւանա լճից հյուսիս ապրող հայերի վիճակը:

<sup>1</sup> Алеқперов А., Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с. 87.

<sup>2</sup> Кобычев В., Айрумы (к вопросу происхождения этнического), Советская этнография, 1962, № 3, с. 148.

<sup>3</sup> Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երեւան, 2004, էջ 17:

<sup>4</sup> Նոյն տեղում, էջ 18:

Մահմեդականություն ընդունելով, նրանք փրկվում էին ֆիզիկական ոչնչացումից<sup>1</sup>:

Բռնի մահմեդականացման դեպքեր են տեղի ունեցել ոչ միայն Հյուսիսային Արցախում: Ղարաբաղի մյուս շրջանները եւս գերծ չեն մնացել այդ չարիքից, մանավանդ Իբրահիմ խանի ժամանակ: Ռաֆֆին համոզված էր. «Եթե այսօր հանդիպում ենք Ղարաբաղում ամբողջ գյուղերի հայմահմեդական բնակիչներով, եթե տեսնում ենք հայոց գյուղերում թուրք ընտանիքներ, որոնք խոստովանում են, թե իրանց նախնիքը հայեր են եղել,- այդ բոլորը Իբրահիմ խանի ժամանակների պտուղներն են»<sup>2</sup>: Իբրահիմ խանի վարած այս քաղաքականությունից չկարողացան խուսափել անգամ Ղարաբաղի մելիքական տները: Դիզակի մելիք Եսայի Սելիք Եզանյանի որդի Բախտամ բեկին եւ նրա որդիներին՝ Ապանին ու Վահանին, Իբրահիմ խանը բռնի կրոնափոխ է անում, սակայն չբավարարվելով այդքանով, սպանել է տալիս նախ Բախտամ բեկին, այնուհետեւ նրա որդի Սելիք Ապանին: Վահանի մասին տեղեկություններ չեն պահպանվել<sup>3</sup>:

Ռաֆֆին գրում է. «Տող բերդում, Սելիք-Ավան խանի պալատում բնակվում է մի Ֆարիհադ բեկ անունով թուրք ազնվական, որը պարծանքով հիշում է, թե ինքը Սելիք Ավանյանների նշանավոր տոհմի զավակներից է: Եվ իրավ, նա Բախտամ-բեկի թոռը և Սելիք-Ապանի որդին է: Իսկ Սելիք-Ավանյանների քրիստոնյա մնացած ժառանգները այժմ թշվար աղքատության մեջ բնակվում են նոյն Տող բերդում, թեւ ազնվականներ են համարվում»<sup>4</sup>: Սելիք Ապանի անունով այս տոհմի մահմեդականացած ժառանգներն հետագայում սկսել են կոչվել Սելիք-Ապանովներ: Այդ տոհմի մասին Լեռն գրել է. «Այդ մահմեդականացած հայերն այժմ Տող գյուղի բեկերն են և կրում են Սելիք-Ապանով և Սելիք-Եզանով հայկական ազգանունները: Բայց կրոնը մոռացնել է տվել հայ մելիքների այդ հեռավոր ժառանգներին ազգային ամեն մի պարտավորություն: Թեև նրանք շատ լավ գիտեն, որ հայեր են, բայց մահմեդական կրոնին պատկանող, այնուամենայիվ այնքան ենթարկված են ամբոխային հասկացության, որ կրոնն են համարում ազգության նշան, ուստի և ձուլվում են թաթար մահմեդականների հետ՝ հաճախ իրենց ազգակից հայերին դեմ գնալու համար: 1905-1906 թ.թ. հայ-թուրքական ընդհարումների ժամա-

<sup>1</sup> Αλεκπερος Α., Ιστορικά παραδείγματα αρχαιολογίας και επικρατείας της Αρμενίας, σ. 88.

<sup>2</sup> Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան 1964 թ, էջ 245:

<sup>3</sup> Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 281:

<sup>4</sup> Նոյն տեղում: էջ 281:

նակ այդ Մելիք-Ասլանովներից մեկը, որ պրիստավի պաշտոն էր կատարում Զանգեզուրի գավառում, անորակելի գազանություններ կատարեց հայերի նկատմամբ: Բարձրագույն ուսումն էլ չի կարողանում ազգության մասին ուղիղ գաղափար տալ Տողի Երեմնի հավատուրացների այժմյան սերնդին: Նույն Մելիք-Ասլանովներից մեկը, կրթությամբ ինժեներ, մինիստր էր 1918 թ. Աղրբեջանի մուսաֆաթական կառավարության մեջ, երբ Բաքվում, այդ կառավարության կարգադրությամբ, կոտորեցին մոտ 30 հազար հայեր»<sup>1</sup>:

1886 թվականի տվյալների համաձայն Տողում բնակվող 273 գերդաստաններից 33-ը կազմում էին մահմեդական հայերը<sup>2</sup>: Ավելի ուշ՝ Խորհրդային Աղրբեջանի վարած գաղութային քաղաքականության հետեւանքով, Տողում մահմեդականների թիվն ավելացնելու նպատակով, Աղրբեջանի Կոմկուսի Կենտկոմի հրահանգով 1943-1953 թվականներին Աղրբեջանի Իմիշլիի շրջանի Թալըբսանլու ղշլաղի թուրքերին տեղափոխում են Տող<sup>3</sup>: Արցախյան շարժման նախօյյակին արդեն Տողի 1412 բնակչից 811-ը կազմում էին թուրքերը<sup>4</sup>: Ըստ ականատեսների վկայության՝ Մելիք-Եգանովներն ավելի վատթար վերաբերնունք ունեին հայերի նկատմամբ քան եկվոր թուրքերը...

Ս. Զալայյանցը նկարագրելով Շուշիի մոտ գտնվող Ղայբալիշեն գյուղը նշում է, որ գյուղից երեք գերդաստան իբրահիմ խանի բռնությունների հետևանքով ընդունել են մահմեդականություն, սակայն գաղտնի կերպով դավանում էին քրիստոնեություն<sup>5</sup>:

Հակարի գետի ձախակինյա վտակներից մեկի վերին հոսանքում, Քաշաթաղի շրջանի Մեղի գյուղից մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվում էին Ճամբերախաչ, Քյոհնաքենդ, Ղշլաղ, Խումարթա, Եյրիկ եւ Ակիփանակի գյուղատեղերը, որոնց հետագայում սկսեցին կոչել Մուսուլմանլար հավաքական անվանումով: Ի տարրերություն շրջակա քուրդ բնակչության, XIX դարում այդ գյուղերի բնակիչները թուրքալեզու էին:

<sup>1</sup> Լեռ, Հայոց պատմություն, հ. 3, Երևան 1946, էջ 857-858:

<sup>2</sup> Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков. 1886 г., Тифлис, 1893, с. 516.

<sup>3</sup> Ակրտոյան Հ., Արցախում են ուրիշ պատերազմ տեսա: Երևան 1996, էջ 47:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>5</sup> Զալայեանց Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, հ.Բ, Տիկիսի, 1858, էջ 342:

Խումարթա գյուղի հարեւանությամբ, մեկ կիլոմետրի վրա, դեռ պահպանվում է սալատապաններով մի փոքրիկ հայկական գերեզմանատուն<sup>1</sup>:

Շուշիի շրջանի Մուսուլմանլարին (այժմ՝ Քիրսավան) մերձակա հայկական գյուղերի բնակչիների տեղեկությունների համաձայն, Մուսուլմանլարում բնակվողները մահմեդականացած հայեր էին: Շուշի քաղաքի թյուրքերն ու թյուրքական գյուղերի բնակչիները նրանց անվանում էին «էրմանիդան դյոմյու մուսուլմանլար», թյուրքերենով՝ «հայից սերված մահմեդականներ»: Թե եթք են նրանք մահմեդական դարձել, հայտնի չեն կան զանազան կարծիքներ դրա վերաբերյալ: Ոմանք գտնում են, որ սրանք հավատափոխ են եղել իբրահիմ խանի կառավարման տարիներին, ուրիշների կարծիքով՝ նույն դարի վերջին Աղա-Մահմադ խանի արշավանքների ժամանակ: Մուսուլմանլարցիներն արտաքինով խիստ տարբերվում էին իրենց շրջապատող թյուրքերից ու քրդերից: Նրանք շատ վախսվորած ու գգուշանալով էին խոսում իրենց ծագման շուրջ<sup>2</sup>:

1840-50-ական թթ. բազմաթիվ հավատափոխ եղած հայեր դիմում են Ամենայն Հայոց կաթողիկոսին և Հոգևոր սինոդին՝ նորից իրենց նախնիների դավանաքին վերադառնալու խնդրանքով: 1849թ. մահմեդականներ Հյուսեին Բահման թեկը և Զաֆար Մամեդ օղլուն դիմում են Վեհափառ հայրապետին նորից հայ առաքելական եկեղեցու դավանաքին վերադառնալու կապակցությամբ նշելով, որ իրեն հոր հետ միասին բռնի հավատափոխ են եղել իբրահիմ խանի ժամանակներում<sup>3</sup>: 1852թ. Հայոց հոգևոր սինոդին նմանատիպ խնդրանքով է դիմում Դիզակի թաղասեռ գյուղի բնակչ Հյուսեին թեկ Բիհմանբեկ օղլին: Արցախի թեմի առաջնորդին գրած խնդագրում նա նշում է, որ իր նախնիները հայեր են եղել և բռնությամբ թուրքացել են իբրահիմ խանի օրոք<sup>4</sup>:

Թուրքալեզու զավթիչները հաստատվելով հայկական միջավայրում փոփոխության են ենթարկել ոչ միայն բնակչության էթնիկական կազմը, այլեւ խեղաթյուրել պատմամշակութային արժեքներն ու էթնիկական տարբերությունները, ինչը վերջին հաշվով հանգեցրել է ազգային յուրահատկությունների կորստի եւ բնիկ հայության մի մասի ձուլման: Զուլված այդ հայությունն օտարի կողմին հավելյալ չարիք է դարձել հարազատ

<sup>1</sup> Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Աղրբեջանին բռնակցված շրջաններում: Երևան 1999, էջ 179:

<sup>2</sup> Տվյալներն հավաքված են մեր կողմից՝ Շուշի քաղաքում եւ շրջանի գյուղերում:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ.56.գ.1, գ.2449:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ.56.գ.1, գ.2958:

Ժողովրդի անխաթար մնացած մեծամասնության գլխին, տկարացրել հայության ուժը: «Հայոց Արեւելից կողմանքը» նույնպես չի խուսափել այդ աղետաբեր գործընթացներից:

## **ОСКОЛКИ НАСИЛЬНО ИСЛАМИЗИРОВАННЫХ АРМЯН В КАРАБАХЕ** **Лерник Ованнисян**

Резюме

В настоящей статье говорится об исламизированных армянах на территории Арцаха. Тюркоязычные завоеватели обосновавшись в Арцахе в армянской среде изменили не только этнический состав населения, но и исказили историко-культурные ценности и национальные отличия, что в конечном итоге привело к потере национальных особенностей и ассимиляции некоторой части армян Арцаха.

**FRAGMENTS OF FORCIBLY ISLAMIZED ARMENIANS IN KARABAKH.**

**Lernik Hovhannisyan**

Summary

This article refers to the Islamized Armenians on the territory of Artsakh. The Turkic-speaking conquerors settled in Artsakh in Armenian environment changed not only the ethnic composition of population, but also distorted the historical-cultural values and national differences that eventually led to the loss of national characteristics and assimilation of some part of the Armenians of Artsakh.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱԶԵՎԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒԹՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԺԱՆՐԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ Արմեն Սարգսյան .....	3
<b>ՊՈՏՈՐԱԳԵՏԸ ԵՎ ԻՐ ԱՎԱՋԱՆԸ</b> Սիլվա Մինասյան .....	16
<b>ԱՐՑԱԽԸ ԱՐՏԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆԱՄԱԿ ՆՈՅԻՆ» ՊՈԵՄՈՒՄ Սոկրատ Խանյան .....</b>	31
<b>ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ (Ըստ Խ. Դաշտենցի արձակի)</b> Միքայել Բաղդասարյան .....	45
<b>ԱՊՐԵՍ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱԲԱՂԻ-Ն ԵՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ XVIII ՂԱՐԱՎԵՐՁԻՆ ԵՒ XIX ՂԱՐԱՍԿՁԲԻՆ</b> (սկիզբ նախորդ (թիվ 1, 2010) համարում) Զինահիմա Առաքելյան-Բալայան .....	51
<b>«ԶՐԱԲԵՐԴ» ԱՄՐՈՑԸ Սլավա Սարգսյան .....</b>	75
<b>ԱՐԵՎԵԼԱՀՅ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ՝ ԳԼԱԶՈՐԻ ԵՎ ՏԱԹԵՎԻ ՀԱՄԱԼՍՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ Ոննա Բալայան .....</b>	86
<b>ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐՑԱԽՈՒ 19-ՐԴ ՂԱՐՈՒՄ Վահրամ Բալայան .....</b>	94

ՅԱՐԱԿԱՆ ՈՒԽԱՍՏԱՆԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՂԱՐԱԲԱԴՈՒ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ  
ՆԵԼԻ Բաղդասարյան ..... 104  
**ГЕНЕРАЛ В.Г. МАДАТОВ И ДОНСКИЕ КАЗАКИ В БИТВЕ ПОД  
ШАМХОРОМ 3 СЕНТЯБРЯ 1826 Г.**  
ԱնդՎրանիկ Զահարևիչ

ՎԱՆ-ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻՑ ԳԱՂԹԱԾ ՀԱՅԵՐԸ ԲԱՔՎՈՒ XIX  
ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՃԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ  
Գևորգ Ստեփանյան

**К ВОПРОСУ О ВОЗВРАЩЕНИИ В ЛОНО ТРАДИЦИОННОЙ  
ЦЕРКВИ ИНОКОНФЕССИОНАЛЬНЫХ АРМЯН (НА ПРИМЕРЕ  
РОССИЙСКИХ АРМЯН-ФРАНГОВ)**

Виктор Акопян

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՄ  
Լյուբա Կիրակոսյան

ԱՐՁԱԽԱՀԱՅ ԳՈՐԳԱՐՎԵՍԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԵՋԱՆՈՒՄ  
Մելանյա Բալայան

ԱՐՁԱԽԱՀԱՅ ՏԱՐԱԾՔԻ ԿԱՐԱՍԱՅԻՆ ԹԱՐՈՒՄՆԵՐԻ  
ՈՒՍՈՒՄԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ  
Վարդգես Սաֆարյան

ԲՈՆԻ ՄԱԿՄԵՂԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅՈՒԹՅԱՆ  
ԲԵԿՈՐՆԵՐԸ ՂԱՐԱԲԱԴՈՒ  
ԼԵՐՆԻԿ Հովհաննիսյան

## СОДЕРЖАНИЕ

### ОСОБЕННОСТИ НЕКОТОРЫХ ЖАНРОВ АРЦАХСКОГО ФОРМУЛЬНОГО ФОЛЬКЛОРА

Армен Саргсян ..... 3

### РЕКА ПХТОРАГЕТ И ЕГО БАССЕЙН

Сильва Минасян ..... 16

### АРЦАХ В ПОЭМЕ АРТЕМА АРУТЮНЯНА “ПИСЬМО НОЮ”

Сократ Ханян ..... 31

### ТРАДИЦИИ, ОБЫЧАИ И ИСТОРИЧЕСКИЕ МЕСТА

Сиран Багдасарян ..... 45

### КНИГА АПРЕСА БЕКНАЗАРЯНА И ПОЛИТИЧЕСКАЯ

### СУДЬБА КАРАБАХА В КОНЦЕ XVIII – НАЧАЛЕ XIX ВЕКОВ.

(НАЧАЛО В ПРЕДЫДУЩЕМ НОМЕРЕ N 1, 2010))

Зинаида Аракелян-Балаян ..... 51

### КРЕПОСТЬ “ДЖРАБЕРД”.

Слава Саргсян ..... 75

### РОЛЬ ВОСТОЧНО-АРМЯНСКИХ НАУЧНО-

### ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ЦЕНТРОВ -УНИВЕРСИТЕТОВ

### ГЛАДЗОРА И ТАТЕВА, В ДЕЛЕ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ

### ОБЩЕСТВЕННОЙ МЫСЛИ

Рона Балаян ..... 86

### СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ

### В АРЦАХЕ В XIX ВЕКЕ

Ваграм Балаян ..... 94

### НАЛОГОВАЯ ПОЛИТИКА ЦАРСКОГО ПРАВИТЕЛЬСТВА В

### КАРАБАХЕ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ XIX В.

Нелли Багдасарян ..... 104

**ГЕНЕРАЛ В. МАДАТОВ И ДОНСКИЕ КАЗАКИ В  
ШАМХОРСКОМ СРАЖЕНИИ**

(3 СЕНТЯБРЯ 1826 Г.).

Алексей Захаревич .....

117

**АРМЯНСКИЕ БЕЖЕНЦЫ ИЗ ВАН - ВАСПУРАКАНА В БАКУ В КОНЦЕ  
XIX ВЕКА И В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ**

Геворг Степанян .....

129

**К ВОПРОСУ О ВОЗВРАЩЕНИИ В ЛОНО ТРАДИЦИОННОЙ  
ЦЕРКВИ ИНОКОНФЕССИОНАЛЬНЫХ АРМЯН**

(НА ПРИМЕРЕ РОССИЙСКИХ АРМЯН-ФРАНГОВ)

Виктор Акопян .....

137

**СОХРАНЕНИЕ АРХИТЕКТУРНОГО НАСЛЕДСТВА  
В ПРОЦЕСАХ СОВРЕМЕННОГО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА**

Люба Киракосян .....

152

**ПОЛИТИКА ПРИСВОЕНИЯ АРЦАХСКОГО КОВРОВОГО  
ИСКУССТВА В АЗЕРБАЙДЖАНЕ**

Мелания Балаян .....

162

**ПЕРВАЯ ПОПЫТКА ИЗУЧЕНИЯ КУВШИННЫХ  
ПОГРЕБЕНИЙ АРЦАХА**

Вардгес Сафарян .....

170

**ОСКОЛКИ НАСИЛЬНО ИСЛАМИЗИРОВАННЫХ АРМЯН  
В КАРАБАХЕ**

Лерник Ованнисян .....

187

## CONTENT

### SPECIFIC FEATURES OF SOME FORMULA FOLKLORE'S GENRES IN ARTSAKHIAN FOLKLORE.

Armen Sargsyan ..... 3

### THE RIVER PGHTORAGET AND ITS BASIN.

Silva Minasyan ..... 16

### ARTSAKH IN THE NOVEL OF ARTEM HARUTYUNYAN'S "A LETTER FOR NOY".

Sokrat Khanyan ..... 31

### TRADITIONS , HABITS AND HISTORICAL PLACES.

(ACCORDING TO KHACHIK DASHTENTS' PROSE)

Sirun Baghdasaryan .....

45

### APRES BEKNAZARYAN'S "SECRET OF KARABAKH" AND THE POLITICAL FATE OF KARABAKH AT THE END OF XVIII AND IN THE BEGINNING OF XIX CENTURIES.

(the beginning is in the previous issue (N 1, 2010)

Zinaida Arakelyan-Balayan ..... 51

### THE FORTRESS "JRABERD".

Slava Sargsyan .....

75

### THE ROLE OF THE EASTERN ARMENIAN ACADEMIC CENTRES OF GLADZOR AND TATEV UNIVERSITIES IN THE DEVELOPMENT OF ARMENIAN PUBLIC THOUGHT.

Rona Balayan ..... 86

### SOCIO-ECONOMIC STATE IN ARTSAKH IN THE 19<sup>TH</sup> CENTURY.

Vahram Balayan ..... 94

THE TAX POLICY OF IMPERIAL RUSSIA IN KARABAKH IN  
THE FIRST QUARTER OF 19<sup>TH</sup> CENTURY.

Nelli Baghdasaryan

104

GENERAL MADATOV AND DON COSSACKS AT THE BATTLE  
OF SHAMKOR SEPTEMBER 3, 1826.

Aleksey Zakharevich .....

117

THE ARMENIANS MIGRATED FROM VAN-VASPURAKAN IN  
BAKU AT THE END OF 19<sup>TH</sup> CENTURY AND DURING  
THE YEARS OF WORLD WAR I.

Gevorg Stepanyan .....

129

THE ISSUE ON THE RETURN OF DISSENTER ARMENIANS INTO  
THE TRADITIONAL CHURCH.

Victor Hakobyan .....

137

THE PROTECTION OF ARCHITECTURAL HERITAGE IN THE  
CONTEMPORARY TOWN-PLANNING DEVELOPMENTS.

Lyuba Kirakosyan .....

152

THE POLICY OF ASSIMILATION OF ARTSAKYAN CARPET  
MAKING ART IN AZERBAYJAN.

Melanya Balayan .....

162

THE FIRST EXPERIENCE OF STUDYING ARTSAKH'S  
PITCHER BURIALS.

Vardges Safaryan.....

170

FRAGMENTS OF FORCIBLY ISLAMIZED ARMENIANS  
IN KARABAKH.

Lernik Hovhannisyan .....

187

ԱՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

(հոդվածների ժողովածու)

**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**  
(сборник статей)

**JOURNAL FOR ARMENIAN STUDIES**  
(collection of articles)

2

*Հարկածքը*

*և էջաղորումը՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ*

*Սրբագրիչ՝ Լ. ՍԱՀԱԿՅԱՆ*

Հանձնված է շարկածքի՝ 09.06.11 թ.:  
Ստորագրված է տպագրության՝ 05.12.11 թ.:

Ծավալը՝ 25 տպ. մամուլ:  
Տպաքանակը՝ 300:

ԱրՊՀ հրատարակչություն  
ք. Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5